

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
13 (2)**

Հայրուկ համար.

**«Թուրքական և ադրբեջանական հայատյացության ակունքները,
արդի վիճակը, միտումները (միջգիտակարգային մոտեցումներ)»**

Երևան 2025

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Նարինե Մարգարյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հայրուկ համարի հրավիրյալ խմբագիր

Շուշան Խաչատրյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Մելինե Անույան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոն, Չիկագոյի
համալսարան, ԱՄՆ

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան,
Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեհիսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շեմապյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարան,
Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Invited Editor of Special Issue:

Dr. Shushan Khachatryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Elke Hartmann, Free University Berlin, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Center for Middle Eastern Studies, University of Chicago, USA

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Цехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Заместитель главного редактора

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Приглашенный редактор специального номера

Шушан Хачатрян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, профессор, Свободный университет Берлина, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член Национальной академии наук Республики Армения, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам, Германия

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, Институт истории Национальной академии наук Республики Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Центр ближневосточных исследований, Чикагский университет, США

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Ցեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ:

Ցեղասպանագիտական հանդեսում տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար:

Ցեղասպանագիտական հանդեսն ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցիչ (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում:

Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tshitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Цехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”) (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом “Музей-институт Геноцида армян” (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в “Журнале исследований геноцида,” отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда “Музей-институт Геноцида армян.” Фонд “Музей-институт Геноцида армян” не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

“Журнал исследований геноцида” индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Շուշան Խաչատրյան

Ներածական 9

Սվետլանա Զախմախչյան, Էդիտա Գզոյան

Սահմանելով «ռասայական խտրականություն», «այլապայացություն»,
«արելության խոսք» հասկացությունները 12

Նարեկ Պողոսյան

Հայերի նկարումներ արելության բորբոքումը և բռնությունները Ռաֆայել Լեւնկինի
հեղազոտություններում 36

Շուշան Խաչատրյան

Օսմանյան քրիստոնյաների վերաբերմամբ կիրառվող «գյալիոր» պիրակը 49

Սոսե Ասատրյան

Հակոբ Պ. Պողոսյանի աշխատությունը որպես Հայոց ցեղասպանության առաջին
համակարգային ուսումնասիրության փորձ հոգեբանական գիտության մեջ 68

Էլեն Հակոբյան

Հայերի ջարդը Ագուլիսում 1919 թվականին և Նախիջևանի ադրբեջանական
ու թուրքական իշխանությունների դերը 83

Սեդա Պարսամյան, Հայաստան Մարտիրոսյան

Ջնշելով անցանկալի ինքնությունը. հայկական մշակութային ժառանգության
ոչնչացումը և/կամ փոխակերպումը թուրքական և ադրբեջանական
վարչակարգերի կողմից 107

Հայկ Հակոբյան

Ադրբեջանցիների էթնոգենեզի մարական և ադվանական տեսությունները
20-րդ դարի քաղաքական իրավիճակի փոփոխության համադրությամբ 130

Գոհար Խանումյան

Հակահայկականությունը Խորհրդային Ադրբեջանում.
Բանանց գյուղի «Արծիվ» հուշարձանի ավերման պատմությունը 146

Գայանե Հովհաննիսյան

Վերապրելով Սումգայիթը. հայ բնակչության ջարդերը ականատեսների աչքերով 168

Էթիկայի կանոններ 190

Ցուցումներ հեղինակներին 191

CONTENT

ARTICLES

Shushan Khachatryan

Introduction 9

Svetlana Chakhmakhchyan, Editia Gzoyan

Defining the Concepts of 'Racial Discrimination,' 'Xenophobia,' 'Hate Speech' 12

Narek Poghosyan

The Spread of Hate and Violence Against Armenians in Raphael Lemkin's Research ... 36

Shushan Khachatryan

The Label "Giaour" applied to Ottoman Christians..... 49

Sose Asatryan

Hakob P. Poghosyan's Work as the First Attempt of the Systematic Study of the Armenian Genocide in Psychological Science 68

Elen Hakobyan

The 1919 Massacre of Armenians in Agulis (Nakhijevan) and the Role of the Azerbaijani and Turkish Authorities 83

Seda Parsamyan, Hayastan Martirosyan

Erasing the Unwanted Identity: The Destruction and/or Transformation of Armenian Cultural Heritage by Turkish and Azerbaijani Authorities..... 107

Hayk Hakobyan

The Median and Albanian Theories of Azerbaijani Ethnogenesis in the Context of Political Transformations of the 20th Century 130

Gohar Khanumyan

Anti-Armenianism in Soviet Azerbaijan: the Story of the Destruction of the Monument "Eagle" in the Village of Banants..... 146

Gayane Hovhannisyan

Surviving Sumgait: The Pogrom of the Armenian Population Through the Eyes of Witnesses 168

Ethical Guidelines 190

Instruction for Authors..... 191

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Шушан Хачатрян

Введение..... 9

Светлана Чахмахчян, Эдита Гзоян

Определение понятий 'расовая дискриминация,' 'ксенофобия,' 'язык вражды'12

Нарек Погосян

*Распространение ненависти и насилия в отношении армян
в исследованиях Рафаэля Лемкина* 36

Шушан Хачатрян

Ярлык «гяур», применяемый к османским христианам..... 49

Сосе Асатрян

*Работа Акоба П. Погосяна как попытка первого систематического
исследования Геноцида армян в психологической науке* 68

Элен Акопян

*Резня армян в Азулисе (Нахиджеван) в 1919 году и роль азербайджанских
и турецких властей* 83

Седа Парсамян, Айастан Мартиросян

*Стирание нежеланной идентичности: уничтожение и/или преобразование
армянского культурного наследия со стороны турецких и
азербайджанских властей*107

Айк Акопян

*Мидийская и албанская теории этногенеза азербайджанцев в контексте
политических трансформаций XX века*130

Гоар Ханумян

*Антиармянская политика в Советском Азербайджане: история уничтожения
памятника "Орёл" в селе Банани,*.....146

Гаяне Оганнисян

Пережив Сумгаит: погромы армянского населения глазами очевидцев168

Правила этики190

Руководство для авторов 191

ՆԵՐԱԾԱԿԱՆ

*«Զարոգչության նպատակն այն է,
որ ստիպի մարդկանց մի հարվածին
մոռանալ, որ մյուս հարվածը մարդ է»:
Օլդոս Հաքսլի*

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի «Ցեղասպանագիտական հանդեսի» սույն՝ հատուկ համարը նվիրվում է հայատյացություն երևույթի տարբեր դրսևորումներին: Հեղինակների հոդվածները տպագրության են հանձնվել հանդեսին իբրև արդյունք 2024 թ. մայիսի 30-31-ը ՀՅԺԻ-ում անցկացված, ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 22YR-6A033 «Թուրք-ադրբեջանական հայատյացության ակունքները, արդի վիճակը, միտումները (միջգիտակարգային մոտեցումներ)» գիտական թեմայի շրջանակներում կազմակերպված «Թուրք-ադրբեջանական հայատյացության շուրջ. միջգիտակարգային մոտեցումներ» խորագիրը կրող գիտաժողովի¹: Գիտաժողովին մասնակցել են հետազոտողներ ՀՅԺԻ-ից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից, Մատենադարանից, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի արևելագիտության ինստիտուտից և Վերլուծական հոգեբանության հայկական ասոցիացիայից: Երկու օրվա ընթացքում ներկայացվել է 19 զեկույց: Դաշտային աշխատանքների ընթացքում բանավոր պատմությունների հավաքագրմանը, արխիվային նյութերի ձեռքբերմանն ուղղված գիտական գործունեությունից ու միջազգային ինդեքսավորված ամսագրերում հոդվածների տպագրումից զատ՝ ծրագրի կարևոր արդյունքներից է սույն համարի լույսընծայումը:

Հայատյացության երկու՝ թուրքական և ադրբեջանական բաղադրիչների փոխկապակցվածության, դրանց բնորոշիչների ու տարբերությունների մասին միջգիտակարգային համալիր ուսումնասիրությունները սակավաթիվ են: Թուրքական և ադրբեջանական հայատյացության հարցն առանձին-առանձին քննարկվել է բազմիցս տարբեր հեղինակների կողմից հիմնականում պատմաքաղաքական և իրավագիտական լույսի ներքո: Այս ամենի կողքին հստակ կերպով հայատյացության ուսումնասիրության հարցում տարրորշվում է միջգիտակարգային մեթոդաբանության կիրառման պակասը: Երևույթի բովանդակային բաղկացուցիչները խորությամբ և հնարավորինս մանրամասնորեն պատկերացնելու համար անհրաժեշտ է հասկանալ դրա ոչ միայն վերից վար, այն է՝ քաղաքական կողմերը, այլև վարից վեր՝ հասարակական, մարդաբանական, մշակութային, կրոնական ու սոցիալ-հոգեբանական գործընթացները, ինքնաբերական դրսևորումները:

Առհասարակ ռասիզմի, խտրականության, այլատյացության մասին ուսումնասիրությունները բազմաթանակ են: Հայատյացության տարբեր դրսևորումների ու բա-

1 Գիտաժողովի ծրագիրը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://genocide-museum.am/arm/pdf/30-31.05.24.pdf>, դիտվել է՝ 12.02.2025, գիտաժողովի հայտարարությունը՝ հետևյալ հղմամբ՝ <https://genocide-museum.am/arm/27.05.24.php>, դիտվել է՝ 12.02.2025: Տե՛ս նաև «ՀՅԺԻ-ում տեղի ունեցավ «Թուրք-ադրբեջանական հայատյացության շուրջ. միջգիտակարգային մոտեցումներ» խորագրով գիտաժողովը», <https://genocide-museum.am/arm/31.05.24.php>, դիտվել է՝ 12.02.2025:

դադրիչների վերաբերյալ ուսումնասիրությունները ևս մեծաթիվ են, սակայն բուն երևույթին նվիրված ուսումնասիրություններն առավել մեծ ուշադրության արժանացվելու հրամայականն ունեն: Հանրապետական Թուրքիայի հայատյաց քաղաքականությանն է նվիրված պ. գ. թ. Հրանուշ Խառատյանի ծավալուն հետազոտությունը²: Այստեղ հեղինակը մինչև 20-րդ դարի 80-ական թվականները Թուրքիայում, հատկապես Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում մնացած հայության շրջանում հավաքված բանավոր պատմությունների միջոցով վեր է հանում թուրքական էթնիկ ճարտարապետությունը՝ ցույց տալով, որ հայերի հանդեպ ատելությունը թուրքական ինքնության կայացման խթանն էր: Ադրբեջանական հայատյացությանն է նվիրված Արմինե Ադիբեկյանի ու ք. գ. թ. Անժելա Էլիբեգովայի ռուսերեն (2013 թ.) և անգլերեն (2015 թ.) հրատարակված գիրքը³: Գրքում մանրամասնորեն ներկայացված են հատկապես մինչև 2013/2015 թթ. ադրբեջանական հասարակությունում հայերի կամ հայկական ծագում ունեցող անհատների նկատմամբ վերաբերմունքը, կարծրատիպերը, հայատյացության սերմանումն ու տարածումն Ադրբեջանում պետական պաշտոնյաների ելույթների և ԶԼՄ-ների միջոցով, հայի կերպարի ապամարդկայնացումը, հայատյացության «փառաբանումը» Ռամիլ Սաֆարովի հերոսացմամբ, Ադրբեջանում հայկական պատմական և մշակութային ժառանգության ոչնչացման դեպքերը, հայատյացության դրսևորումներն ադրբեջանական դասագրքերում, ինչպես նաև գրական ու գեղարվեստական գրականության մեջ:

Ն. Պողոսյանի, Վ. Գեղամյանի, Մ. Մելքոնյանի, Ա. Պետունցի համահեղինակած գրքում (2022 թ.) հիմնական շեշտը դրված է Թուրքիայում և Ադրբեջանում պետական գաղափարախոսության ու պաշտոնական հռետորաբանության կարգավիճակ ունեցող «ատելության խոսքի» ուսումնասիրության վրա⁴: Իրականացվել է թուրքական էլեկտրոնային ԶԼՄ-ներում Հայաստանի և հայերի նկատմամբ «ատելության խոսքի» առանձին, համակողմանի ուսումնասիրություն, որի միջոց են հանդիսացել ինչպես տեքստային, այնպես էլ տեսապատկերային նյութերը:

Հայատյացությունը քննել է նաև արևելագետ Նաիրա Սահակյանն իր անգլալեզու հոդվածում՝ անդրադառնալով վերջին տարիներին Ադրբեջանի պետական և պաշտոնական խոսույթում հայերի ապամարդացմանը⁵:

2 Տե՛ս Հրանուշ Խառատյան, *Հայաբնակությունը որպես թուրքական ինքնության կառուցման գործոն: Գաղափարախոսությունը Թուրքիայի Հանրապետությունում 20րդ դարի միջնադարում* (Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2018):

3 Տե՛ս Арmine Адибе́кян, Анжела Элибе́гова, *Армянофобия в Азербайджане* (Ереван: «Центр общественных связей и информации» при Аппарате президента Армении, 2013), Armine Adibekyan, Anjela Elibegova, *Armenophobia in Azerbaijan* (Yerevan: “Information and Public Relations Center” of the Administration of the President of the Republic of Armenia, 2015):

4 Տե՛ս Նաիրա Պողոսյան, Վարուժան Գեղամյան, Մարիամ Մելքոնյան, Արեն Պետունց, «Արևելության խոսքի» դասական թիրախները. Հայերն ու Հայաստանը թուրքական և ադրբեջանական մեդիա դաշկում 2019-2021 թվականներին (Երևան, ԵԳՀ հրատ., 2022):

5 Տե՛ս Naira Sahakyan, “The Rhetorical Face of Enmity: The Nagorno-Karabakh Conflict and the Dehumanization of Armenians in the Speeches of Ilham Aliyev,” *Southeast European and Black Sea Studies* 23, no. 4 (2023): 863-882:

Հիշենք նաև տարբեր տարիների ՀՀ ՄԻՊ զեկույցները, իրավապաշտպան և գիտակրթական մի շարք կազմակերպությունների հրապարակած զեկույցները⁶, որոնցում տեղ գտած ձևակերպումները, հակիրճ անդրադարձները Թուրքիայի դերին առանձնակի կարևորություն են ներկայացնում:

Փաստորեն, գիտակարգային բազմազանությունն ակնհայտորեն սակավադեպ է, և հայատյացություն երևույթն իր ամենատարբեր հայեցակետերով խորապես ուսումնասիրված չի կարելի համարել երկու կորելատիվ՝ թուրքական և ադրբեջանական մշակույթների, դրանց փոխներգործության (թուրքական հայատյացության ազդեցությունն ադրբեջանականի վրա և հակառակը) ֆենոմենների, ինչպես և Հայոց ցեղասպանության՝ որպես հայատյացություն «գրգռող» երևույթի և փաստի համատեքստում:

«Տեղասպանագիտական հանդեսի» սույն՝ հատուկ համարը գիտակարգային բազմազանություն է ապահովում. ուսումնասիրությունները ներկայացված են իրավագիտական, պատմագիտական, կրոնագիտական, մշակութաբանական, սոցիալ-հոգեբանական հայեցակետերով: Հայատյացության դրսևորումները հասկանալը հրամայական է ոչ միայն հայերիս, այլև այդպիսի գգացումներ ունեցողների համար և կարող է նպաստավոր լինել՝ վերարժևորելու դրա արմատները, ընդունելու և գիտակցելու դրա ապակառուցողական ազդեցությունը թե՛ պետությունների և թե՛ հասարակությունների կյանքում:

* * *

«Տեղասպանագիտական հանդեսի» սույն համարի լույսընծայման համար խորին շնորհակալությունս եմ հայտնում ՀՅԹԻ տնօրեն Էդիտա Գոյանին՝ իր կազմակերպչական ձեռնարկների համար, հանդեսի գլխավոր խմբագիր Հարություն Մարությանին՝ ինչպես միշտ, այնպես էլ այս դեպքում հոդվածների մանրակրկիտ խմբագրման համար, ինչպես և վերոնշյալ ծրագրի ու գիտաժողովի մասնակիցներին, սույն համարի հոդվածների հեղինակներին՝ այս նուրբ ու հրատապ հարցի լուսաբանմանն ու հետազոտմանը միտված իրենց ներդրման համար:

Շուշան Խաչատրյան,

Պատմական գիտությունների թեկնածու,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի վարիչ,
22YR-6A033 «Թուրք-ադրբեջանական հայաբնակչության ակունքները, արդի վիճակը, միությունները (միջգիտակարգային մոլորեցումներ)» գիտական թեմայի
(2022 թ. հոկտեմբեր-2024 թ. հոկտեմբեր) ղեկավար,
«Տեղասպանագիտական հանդեսի» 2025 թ. 2-րդ՝ հատուկ համարի, հրավիրյալ խմբագիր:

6 Տե՛ս, օրինակ, *Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը* (Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2009): *Ad Hoc Public Report: Organized Hate Speech and Animosity Towards Ethnic Armenians in Azerbaijan as Root Causes of Ethnically-Based Torture and Inhuman Treatment by Azerbaijani Armed Forces* (Yerevan-Stepanakert, December 2020): *Report on Xenophobia in Azerbaijan* (Yerevan-Stepanakert, 2021), *Anti-Armenian Xenophobia and Racism in Azerbaijan* (Yerevan, 2024):

**ՍԱՀՄԱՆԵԼՈՎ «ՌԱՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»,
«ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆ», «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ»
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹**

Սվետլանա Չախմախչյան, Էդիտա Գզոյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» ընդունումից 76 տարի անց մարդիկ ոչ միայն հավասար չեն, այլև հաճախ հայտնվում են խտրականության ու ատելության թիրախում միայն իրենց ծագման, կրոնական կամ էթնիկ պատկանելության պատճառով: «Ռասայական խտրականություն», «այլատյացություն», «ատելության խոսք» հասկացությունները դարձել են ժամանակակից խոսույթի անբաժան մաս: Հոդվածի նպատակն է ներկայացնել երեք տերմինների նախապատմությունը, դրանց իրավական նշանակությունը և կիրառելիությունը:

Բանալի բառեր՝ ռասիզմ, ռասայական խտրականություն, այլատյացություն, ատելության խոսք, խտրականություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 12.03.2025: Ընդունվել է տպագրության 24.09.2025:

The article was submitted 12.03.2025 and accepted for publication 24.09.2025.

Статья поступила 12.03.2025 и была принята к публикации 24.09.2025.

Ինչպես հղել՝ Սվետլանա Չախմախչյան, Էդիտա Գզոյան, «Սահմանելով «ռասայական խտրականություն», «այլատյացություն», «ատելության խոսք» հասկացությունները», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 12-35:

How to cite: Svetlana Chakhmakhchyan, Edita Gzoyan, “Defining the Concepts of ‘Racial Discrimination,’ ‘Xenophobia,’ ‘Hate Speech,’” *Tseghaspanagitakan handes* 13, no. 2 (2025): 12-35.

Как сослаться: Светлана Чахмахчян, Эдита Гзоян, “Определение понятий ‘расовая дискриминация,’ ‘ксенофобия,’ ‘язык вражды,’” *Цехаспанагитакан андес* 13, no. 2 (2025): 12-35.

Ռասայական խտրականություն

2022 թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանը դիմեց Արդարադատության միջազգային դատարան՝ մատնանշելով, որ «Ադրբեջանը տասնամյակներ շարունակ հայերի նկատմամբ ցուցաբերել է ռասայական խտրականություն», և Ադրբեջան պետության կողմից հովանավորվող հայատյացության քաղաքականության հետևանքով հայերը ենթարկվել են համակարգային խտրականության, զանգվածային սպանությունների, խոշտանգումների և այլ բռնությունների²: Դատարանն իր որոշման մեջ հիշեցրեց, որ, համաձայն «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միազգային կոնվենցիայի» 2-րդ հոդվածի, մասնակից պետությունները «դատապարտում են ռասայական խտրականությունը և պարտավորվում են բոլոր համապատասխան

1 Հետազոտություն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄԻ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22r1-040):

2 Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), ICJ, The Hague, 16 September, 2022.

միջոցներով և առանց հապաղելու հետամուտ լինել ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով վերացնելու քաղաքականությանը»³:

Ռասայական խտրականության գոհեղը բացարձակապես հեռացված էին միջազգային իրավունքի ստեղծման գործընթացից: Մարտի Կոսկենիեմին նշել է, որ միջազգային իրավական համակարգը հիմնված է «բացառման-ներառման» սկզբունքների վրա, և, դրանով պայմանավորված, որոշ ոչ եվրոպական ժողովուրդներ կարող են ունենալ պարտավորություններ միջազգային իրավունքի տեսանկյունից, սակայն չեն օգտվում լիարժեք անդամության իրավունքներից⁴:

Միջազգային պայմանագրային իրավունքում «ռասա» տերմինն առաջին անգամ հիշատակվել է թերևս 1919 թվականին Փարիզում ընդունված հետպատերազմյան պայմանագրերում: Վերսալի պայմանագրով Չեխոսլովակիան և Լեհաստանը համաձայնեցին «պաշտպանել իրենց բնակիչների շահերը, որոնք տարբերվում են բնակչության մեծամասնությունից ռասայով, լեզվով կամ կրոնով»⁵: Այս պարտավորությունները հաստատվել են առանձին պայմանագրերով, որոնք հռչակում են հավասար վերաբերմունքի իրավունքը՝ «առանց ծննդյան, ազգության, լեզվի, ռասայի կամ կրոնի տարբերության»⁶: 1922 թվականին Մեծ Բրիտանիայի և Իրաքի միջև կնքված պայմանագրում, որով ճանաչվում էր Իրաքի անկախությունը, ամրագրված է, որ «Իրաքի բնակիչների միջև խտրականություն չի դրվում ռասայի, կրոնի կամ լեզվի հիման վրա»⁷: «Ռասա» տերմինը գործածվել է նաև ռազմագերիների մասին Ժնևի 1929 թ. կոնվենցիայում, որով կողմերը պայմանավորվել են «հնարավորինս խուսափել նույն ճամբարում տարբեր ռասաների կամ ազգությունների ռազմագերիներ տեղավորելուց»⁸:

Հարկ է նշել, սակայն, որ միջազգային մի շարք պայմանագրերում նկատելի են խտրական դրույթներ: Նման պայմանագրերում օգտագործված են «քաղաքակիրթ ազգեր», «քաղաքակիրթ մարդիկ», «քաղաքակիրթ աշխարհ» հասկացությունները: Պատերազմի օրենքների և սովորույթների մասին Հաագայի երկու կոնվենցիաներում հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը՝ «քաղաքակիրթ ազգերի միջև հաստատված սովորույթները, մարդկության օրենքները և հանրային խղճի պահանջները»⁹, 1945 թվականին Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում ընդունված ՄԱԿ-ի Արդարադա-

3 Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 21 դեկտեմբերի 1965 թ., հոդված 2, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75843>, դիտվել է՝ 11.10.2024 թ.:

4 Տե՛ս Martti Koskenniemi, *The Gentle Civilizer of Nations: The Rise and Fall of International Law, 1870-1960* (New York: Cambridge University Press, 2001), 127-131:

5 The Versailles Treaty, Versailles, 28 June, 1919, <https://avalon.law.yale.edu/imt/partiii.as>, դիտվել է՝ 11.10.2024 թ.:

6 Տե՛ս, օրինակ, Treaty between the Principal Allied and Associated Powers and Poland, signed at Versailles, June 28, 1919, <https://history.state.gov/historicaldocuments/frus1919Parisv13/ch29>, դիտվել է՝ 11.10.2024 թ.:

7 Treaty of Alliance between Great Britain and Irak signed at Bagdad, October 10, 1922, <https://treaties.fco.gov.uk/data/Library2/pdf/1925-TS0017.pdf>, դիտվել է՝ 11.10.2024 թ.:

8 Geneva Convention on Prisoners of War, Geneva, 27 July, 1929, article 9, <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/gc-pow-1929/>

9 Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, New York, 9 December, 1948, Preamble.

տության միջազգային դատարանի 38-րդ հոդվածում՝ «քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները»¹⁰: Այդ ժամանակ «քաղաքակիրթ ազգեր» հասկացության օգտագործումը, թվում է, որևէ դժգոհություն չի առաջացրել: Այդ հասկացությունը գործածվել է անգամ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» սկզբնական նախագծում, սակայն, շատ չանցած, հեռացվել է Հնդկաստանի և Խորհրդային Միության ընդդիմության հետևանքով¹¹: Իսկ հռչակագրի վերջնական տեքստում խտրականության դեմ քայլեր ձեռնարկվեցին: Նախ՝ նախաբանում ամրագրված են «մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը» և «մարդու հիմնական իրավունքների, մարդկային անհատի արժանապատվության ու արժեքի և տղամարդու ու կնոջ իրավահավասարությունը նկատի ունենալով»¹² ձևակերպումները: Ավելին՝ 2-րդ հոդվածը սահմանում է, որ «յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից»¹³: Վերջապես՝ 7-րդ հոդվածը հաստատում է խտրականության բացառման սկզբունքը՝ սահմանելով, որ «բոլոր մարդիկ ունեն սույն Հռչակագիրը խախտող խտրականության ցանկացած դրսևորումից և նման խտրականության սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք»¹⁴:

Ներկայումս «քաղաքակիրթ ազգեր» տերմինը մնացել է որոշ փաստաթղթերում, սակայն գործնականում որևէ դեր չունի:

«Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թ. կոնվենցիայում գտնում ենք «ռասայական խմբին» ձևակերպումը: Կոնվենցիայի դրույթների վրա հիմնված դատական գործերում երբեք չի սահմանվել «ռասայական խումբ» հասկացությունը: Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալի դատավարության պալատի վաղ որոշման մեջ «ռասայական խումբ» հասկացությունը սահմանվել է, բայց առանց որևէ աղբյուր նշելու, այն է՝ իբրև խումբ՝ առանձնացված «ժառանգական ֆիզիկական հատկանիշների հիման վրա, որոնք հաճախ կապված են աշխարհագրական տարածաշրջանի հետ»՝ անկախ լեզվական, մշակութային, ազգային կամ կրոնական գործոններից»¹⁵: Դատական մեկ այլ գործում նշվում են «ժառանգական ֆիզիկական հատկանիշներ, որոնք հաճախ նույնացվում են աշխարհագրության հետ»¹⁶:

10 Արդարադատության միջազգային դատարանի սրահում, 1945 թ., Սան Ֆրանցիսկո, հոդված 38:

11 St'u Consent received from India, 4 May 1948, E/CN.4/82/Add.7, Summary Record, Discussion of the Drafting Committee, 19 May 1948, E/CN.4/AC.1/SR.39, 3, Summary Record, Human Rights Commission, 2 June 1948, E/CN.4/SR.56, 5.

12 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր - ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն, նախաբան:

13 Նույն տեղում, հոդված 2:

14 Նույն տեղում, հոդված 7:

15 *Prosecutor v. Akayesu* (ICTR-96-4-T), Decision, 2 September 1998, paragraph 514.

16 *Prosecutor v. Kayishema et al.* (ICTR-95-1-T), Decision, 21 May 1999, paragraph 98.

Միավորված ազգերի կազմակերպության գործունեության սկզբնական տարիներին «racialism» բառն օգտագործելու միտում կար, սակայն 1960-ական թթ. այն փոխարինվեց «racism»-ով: «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան» (այսուհետ՝ ICERD) ուղղված է ռասայական խտրականության վերացմանը, իսկ Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (CERD) գործում է որպես դրա պայմանագրային մարմին: Ըստ ICERD-ի՝ «ռասայական խտրականություն» տերմինը նշանակում է «ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների»¹⁷:

Համաձայն ICERD-ի առաջին հոդվածի՝ չորս գործողություն կարող է որակվել խտրական, այն է՝ տարբերակումը, բացառումը, սահմանափակումը կամ նախապատվությունը: Այնուամենայնիվ, մի գործողություն խտրական ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պայման: Նախ՝ այդ գործողությունը պետք է հիմնված լինի ռասայի, գույնի, ծագման, ազգային կամ էթնիկ պատկանելության վրա: Կոնվենցիայի նախագծողների նպատակն էր առաջին պարբերությունում ներառել մարդկանց միջև խտրականության բոլոր ակտերը, բայց միայն այն դեպքում, երբ դրանք հիմնված էին ռասայական բնույթի դրոշապատճառների վրա՝ ավելի լայն իմաստով: «Գույն», «ցեղային ծագում» և «էթնիկ ծագում» տերմինները դժվարություններ չեն ստեղծել, սակայն «ազգային ծագում» հասկացության շուրջ իրական խնդիրներ են ծագել¹⁸:

Մի կողմից, որոշ գիտնականներ պնդում էին, որ անհրաժեշտ է ներառել «ազգային ծագում» տերմինը, քանի որ այն տարբերվում է «էթնիկական ծագում»-ից: Մյուս կողմից, ասվում էր, որ պետությունը կարող է բաղկացած լինել տարբեր ազգություններից, սակայն բոլոր քաղաքացիները պետք է ունենան նույն ազգությունը¹⁹: Չնայած այս քննարկումը վեր հանեց «ազգային ծագման» և «ազգության» միջև գոյություն ունեցող շփոթը, սակայն հարցը լուծվեց կոնվենցիայում 2-րդ և 3-րդ պարբերություններն ավելացնելով: ICERD-ի դրույթները չեն խախտում այն երկրների ներքին օրենսդրությունները, որոնք տարբերակում են քաղաքացիներին և ոչ քաղաքացիներին: Սա չի նշանակում, որ ICERD-ը փոխում է «քաղաքացիության» և «բնակեցման» կանոնները թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային տեսանկյունից: ICERD-ը միայն պաշտպանում է այն սկզբունքը, որ ոչ մի ազգություն չպետք է ենթարկվի խտրականության:

Ռասայական խտրականության երկրորդ պայմանն այն է, որ գործողությունները պետք է ունենան «քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասա-

17 Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, մաս 1, հոդված 1:

18 Տե՛ս Natan Lerner, *The U.N. Convention on the Elimination of all Forms of Racial Discrimination. Reprint Revised by Natan Lerner* (Brill Leiden, 2015), 33:

19 Տե՛ս նույն տեղում, 34:

րակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների»²⁰:

Նպատակը կապված է սուբյեկտիվ գործոնների հետ, որոնք ձևավորում են արարքի խտրական բնույթը, իսկ ազդեցությունը վերաբերում է օբյեկտիվ հետևանքներին: Սա նշանակում է, որ միշտ չէ, որ պետք է լինեն ն «նպատակը», ն «ազդեցությունը»: Որոշակի առումով մեկի առկայությունը բավարար է, որպեսզի արարքը որակվի խտրական²¹: Դա հաստատվում է նաև 2-րդ հոդվածի (գ) կետով, որը միտված է արգելելու ցանկացած օրենք կամ պրակտիկա, որը կարող է հանգեցնել երկարաժամկետ ռասայական խտրականության առաջացմանը: Բացի այդ՝ որոշակի գործողություններ կարող են ունենալ բազմաբնույթ նպատակներ:

Այնուամենայնիվ, ICERD-ի խախտումը կարող է պարզորոշ բացահայտվել, երբ սուբյեկտիվ դիտարկումը հաստատում է արարքի խտրական բնույթը: Սակայն օբյեկտիվ հետևանքները կարող են օգտակար լինել իրական նպատակները պարզելու առումով: Օբյեկտիվ պայմանն ավելի է հստակեցնում սուբյեկտիվ դիտարկումը: Օրինակ՝ երբ որոշ օրենքներում, քաղաքականություններում կամ ծրագրերում խտրական նպատակը դժվար է ճանաչել, դրանց ազդեցությունը կարող է վկայել այդ գործողությունների խտրական բնույթի մասին²²: Այնուամենայնիվ, ոչ խտրական պատճառներով իրականացված գործողությունների ազդեցությունը կամ հետևանքները պահանջում են ավելի մանրամասն տեղեկատվություն համատեքստի և հանգամանքների վերաբերյալ:

Կոնվենցիայի մյուս հոդվածները պարունակում են մասնակից պետությունների հիմնական պարտավորությունների մասին դրույթներ: Այսպես՝ 4-րդ հոդվածը նախատեսում է օրենքների և քաղաքականության վերանայում, որոնք միտված են ռասայական խտրականության ստեղծմանը կամ պահպանմանը: Այն պահանջում է, որ կողմերը «դատապարտեն ցանկացած քաղաքացիություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա, կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն, նրանք պարտավորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խտրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն»²³: 3-րդ հոդվածն էլ հատուկ դատապարտում է սեգրեգացիայի և ապարտեիդի քաղաքականությունը, և կողմերը «պարտավորվում են իրենց իրավագործության ներքո գտնվող տարածքներում կանխարգելել, արգելել ու վերացնել նման բնույթի ցանկացած պրակտիկա»²⁴:

20 Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, հոդված 1:

21 St'u Lerner, *The U.N. Convention on the Elimination of all Forms of Racial Discrimination*, 35:

22 St'u Theodor Meron, "The Meaning and Reach of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (1985)," *American Society of International Law*, Vol. 79, No. 2, 283, 288:

23 Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, հոդված 4:

24 St'u նույն տեղում, հոդված 3:

Կոնվենցիան պարունակում է նաև փոխզիջումային դրույթ, որը Արդարադատության միջազգային դատարանին իրավասություն է շնորհում քննելու կոնվենցիայի դրույթները խախտող միջպետական գործերը, նույնիսկ այն պետությունների առնչությամբ, որոնք ընդհանուր առմամբ չեն ընդունել դատարանի իրավասությունը²⁵:

2008 թվականին Վրաստանի Հանրապետությունը հայց է ներկայացրել ընդդեմ Ռուսաստանի Դաշնության՝ երկու երկրների միջև զինված հակամարտության ընթացքում կոնվենցիայի խախտումների վերաբերյալ: Դատարանը որոշեց միջանկյալ միջոցներ կիրառել, սակայն այնուհետև բավարարեց Ռուսաստանի նախնական բացարկը՝ իրավագործության հիմքով՝ գտնելով, որ Վրաստանը չի փորձել վեճը լուծել բանակցությունների միջոցով մինչև իր դիմումը ներկայացնելը²⁶: 2017 թվականին Ուկրաինան գործ է հարուցել Ռուսաստանի դեմ՝ մասամբ հիմնվելով կոնվենցիայի վրա: Նա պնդում էր, որ խտրականություն է դրսևորվել Ղրիմի թաթարների և էթնիկ ուկրաինացիների նկատմամբ օկուպացված Ղրիմում մշակութային և կրթական իրավունքներին ուղղված միջոցառումների տեսքով: Դատարանը որոշում է կայացրել ձեռնարկելու նախնական միջոցներ՝ պաշտպանելով Ղրիմի թաթարական հաստատությունները և ուկրաիններենով կրթություն ստանալու իրավունքը: Գործի առնչությամբ Ռուսաստանի վիճարկումը հետազայում մերժվեց, և գործը տեղափոխվեց ըստ էության քննության փուլ²⁷: Հաջորդ տարի Քաթարը բողոք ներկայացրեց Արաբական Միացյալ Էմիրությունների դեմ՝ կապված իր քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքի հետ: Դատարանը ժամանակավոր միջոցների մասին որոշում կայացրեց, սակայն այնուհետև գործը կարճվեց իրավագործության վերաբերյալ նախնական առարկության հիման վրա, ըստ որի՝ Արաբական Միացյալ Էմիրություններում բնակվող Քաթարի քաղաքացիների վրա չի տարածվում կոնվենցիայի 1-ին հոդվածի սահմանումը²⁸:

2021 թ. դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը հրապարակեց «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի» շրջանակներում միմյանց դեմ քննվող դատական գործերի առնչությամբ Հայաստանի և Ադրբեջանի ներկայացրած հրատապ միջոցների վերաբերյալ իր որոշումները²⁹: Հրատապ միջոցների կիրառման վերաբերյալ իր դիմումում Հայաստանն ապացույցներ էր ներկայացրել Ադրբեջանի կողմից ռասայական դրդապատճառներով հայ ռազմագերիների և այլ անձանց սպանությունների ու խոշտան-

25 Տե՛ս նույն տեղում, հոդված 22:

26 Request for the Interpretation of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Georgia v. Russian Federation), preliminary objections, judgment, ICJ, The Hague, 2011, 70:

27 Տե՛ս Iryna Marchuk, “Application of the International Convention for the Suppression of the Financing of Terrorism and of the International Convention on the Elimination of all Forms of Racial Discrimination (Ukraine v. Russian Federation),” (Preliminary Objections) (I.C.J.), *International Legal Materials*, Vol. 59, Issue 3, June 2020, pp. 339 – 416:

28 Տե՛ս Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Qatar v. United Arab Emirates), preliminary objections, judgment, ICJ, The Hague, 2021, 71:

29 Տե՛ս «ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը բավարարեց Հայաստանի ներկայացրած դիմումն ընդդեմ Ադրբեջանի», 7 դեկտեմբերի 2021 թ., <https://rilm.am/events/mak-i-ardaradatutyan-mijazgayin-dat/>, դիտվել է՝ 02.11.2024 թ.:

գումների, ինչպես նաև հայերի նկատմամբ ռասայական ատելության և հայկական մշակութային ժառանգության ոչնչացման՝ Ադրբեջանի շարունակական քաղաքականության վերաբերյալ:

«Հայաստանի կողմից ներկայացված հրատապ միջոցների առնչությամբ դատարանը գտել է, որ առկա է կոնվենցիայի շրջանակներում հայերի իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ, և ըստ այդմ Ադրբեջանին պարտավորեցրել է՝

1. բռնությունից և մարմնական վնասվածքներից պաշտպանել բոլոր այն անձանց, որոնք 2020 թ. հակամարտությամբ պայմանավորված հայտնվել և պահվում են Ադրբեջանում, ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առաջ հավասարությունը,
2. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու ազգությամբ և էթնիկ հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից,
3. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները»³⁰:

2023 թ. սեպտեմբերի 28-ին Հայաստանը Արցախի հայ բնակչության առումով «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի» ենթադրյալ խախտման հարցով Ադրբեջանի դեմ հայց է ներկայացրել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան³¹:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրական դաշտում ռասան՝ որպես պաշտպանված հատկանիշ, ներառված է բոլոր այն իրավական ակտերում, որոնցում կան խտրականության արգելքի մասին դրույթներ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում է. «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»³²:

Առավել հաճախ ռասիզմը դրսևորվում է հանցագործության հատկանիշներով: ՀՀ քրեական օրենսգրքում ռասիզմը սահմանված է և՛ որպես ինքնուրույն հանցակազմ, և՛ որպես այլ հանցագործության որակական հատկանիշ: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածը, որը վերաբերում է ցեղասպանություն հանցագործությանը, սահմա-

30 Նույն տեղում:

31 Տե՛ս «Հայաստանը ՄԱԿ-ի միջազգային դատարան հայց է ներկայացրել ընդդեմ Ադրբեջանի», *Ազատություն ռադիոկայան*, 30 սեպտեմբերի 2023 թ., <https://www.azatutyun.am/a/32616357.html>, դիտվել է՝ 02.11.2024 թ.:

32 ՀՀ Սահմանադրություն, 2015 թ., հոդված 29:

նում է. «Ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով այդ խմբի անդամներին սպանելը [...] պատժվում է ազատազրկմամբ՝ տասնվեցից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ»³³:

Ռասայի մասին կարող ենք գտնել նաև 135-րդ /Մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ/, 136-րդ /Ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը, դրանք քարոզելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը/, 146-րդ /Ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական թշնամանք հարուցելու նպատակով մշակութային արժեքները ոչնչացնելը կամ վնասելը/ հոդվածներում³⁴:

Հատկանշական է, որ «ռասա» հասկացությունը հիշատակվում է ոչ միայն խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների առնչությամբ, այլև այլ հանցակազմերում, որոնց դեպքում ռասայական խտրականությունը ևս պատժելի է: Օրինակ, համաձայն 155-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի, «ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով» սպանությունը «պատժվում է ազատազրկմամբ՝ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ»³⁵:

Հայաստանում քայլեր են ձեռնարկվում պաշտպանելու մարդկանց իրավունքներն առանց խտրականության: Այսպես՝ ՀՀ Կառավարությունում գործում է Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժին, որը համակարգում է ազգային փոքրամասնությունների հարցերի և կրոնի ոլորտները, և որի իրավասությունների մեջ են մտնում այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են գործունեության ոլորտների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակումը, իր գործունեության ոլորտներին առնչվող միջոցառումների ծրագրերի կատարման և գերակա խնդիրների լուծման ընթացքի վերահսկումը և այլն:

2005 թ. օգոստոսից Ազգային ժողովն ընդունման է պատրաստել ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին օրենքի նախագիծ, որը կոչվում էր «Հայաստանի Հանրապետության օրենքը ազգությամբ ոչ հայ քաղաքացիների և ազգային փոքրամասնությունների մասին»: Սակայն ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ հավանություն չեն տվել այս նախագծին, քանի որ կարծում են, որ այն շատ ընդհանուր է և մեծ փոփոխություն չի մտցնի տիրող իրադրության մեջ³⁶:

2024 թ. լրամշակման փուլում է «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի նպատակն է առավել համակարգված տալ Հայաստանում բնակվող՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սահմանումը, սահմանել նրանց իրավունքները և պաշտպանության անհրաժեշտ մեխանիզմ-

33 ՀՀ քրեական օրենսգիրք, 2021 թ., հոդված 133:

34 Տե՛ս նույն տեղում, հոդվածներ 135, 136, 146:

35 Տե՛ս նույն տեղում, հոդված 155, մաս 2, կետ 15:

36 Տե՛ս «Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով», *Երկրորդ զեկույց Հայաստանի մասին*, կետ 12:

ներ, հանրապետական գործադիր և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրներն այդ ոլորտում: Նախագծով նախատեսվում է նաև հիմնել Ազգային փոքրամասնությունների պալատ, որը կլինի ազգային փոքրամասնությունների հարցերը քննարկելու և լուծումներ առաջարկելու հարթակ³⁷:

Այլատյացություն/քսենոֆոբիա

Այլատյացությունը կամ քսենոֆոբիան բազմակողմ հասկացություն է: Այն ծագում է հունարեն «*xenos*» (նշանակում է «օտար») և «*phobos*» (նշանակում է «վախ») բառերից: Բառացիորեն քսենոֆոբիան «օտարների նկատմամբ վախ» է, սակայն հասկացությունն ավելի խոր իմաստ ունի³⁸: Քսենոֆոբիան կարելի է դիտարկել որպես «վերաբերմունք, կողմնակալություն և վարքագիծ, որը մերժում, օտարում և հաճախ նսեմացնում է մարդկանց՝ հիմնվելով այն ընկալման վրա, որ նրանք օտար են կոնկրետ համայնքի համար»³⁹:

Այլատյացության միջազգայնորեն ընդունված իրավական սահմանում չկա: Ռասիզմի ժամանակակից ձևերի գծով հատուկ զեկուցողը շեշտում է, որ այլատյացությունը դրսևորվում է, երբ «անհատներին գրկում են հավասար իրավունքներից՝ հիմնվելով այդ անհատների կամ խմբերի իրական կամ ընկալվող աշխարհագրական ծագման կամ այդ անձանց հետ կապված արժեքների, համոզմունքների և/կամ գործելակերպի վրա»⁴⁰:

Քսենոֆոբիայի աշխարհի ընկալումը պարզեցնում է սոցիալական և մշակութային բարդ երևույթները՝ առանձնացնելով սև/սպիտակ սցենարներ:

«Մենք» = մոդել, լավ և նորմալ, չափանիշ, թե ինչպես պետք է բոլորը նայեն, զգան, մտածեն:

«Մենք» = դրական, «նրանք» = բացասական:

Մոտ 281 միլիոն մարդ ներկայումս ապրում է իր հայրենի երկրից դուրս⁴¹: Ըստ Սակշամ Գուպտայի՝ օտարերկրացիներն այն անձինք են, ովքեր բնակվում են այն երկրում, որը նրանց քաղաքացիության երկիրը չէ⁴²: Միջազգային առանցքային մի քանի պայմանագրեր, այդ թվում՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին

37 Տե՛ս «Ազգային փոքրամասնությունների մասին, Իրավահավասարության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծեր», հակիրճ բնութագիր, <https://www.e-draft.am/projects/1801>, դիտվել է՝ 09.11.2024 թ.:

38 Տե՛ս Encyclopedia Britannica, article “xenophobia,” <https://www.britannica.com/science/xenophobia> դիտվել է՝ 09.11.2024 թ.:

39 Jean Pierre Misago, Iriann Freemantle & Loren B. Landua, *Protection from Xenophobia: An Evaluation of UNHCR's Regional Office for Southern Africa's Xenophobia related Programmes* (UNHCR, 2015), 13.

40 UN Special Rapporteur on contemporary forms of racism, racial discrimination, xenophobia, and related intolerance, Report to the UN Human Rights Council, A/HRC/32/50, 13 May 2016.

41 Տե՛ս World Migration Report - 2024, <https://worldmigrationreport.iom.int/msite/wmr-2024-interactive/#:~:text=The%20current%20global%20estimate%20is,percent%20of%20the%20global%20population>, դիտվել է՝ 16.11.2024 թ.:

42 Տե՛ս Saksham Gupta, *International Law and Human Rights* (Haryana-India: Allahabad Law Agency, 2009), 255:

միջազգային դաշնագիրը», «Ռ-ասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան», փախստականների մասին 1951 թ. կոնվենցիան և Դուրբանի վերանայման կոնֆերանսի արդյունքներն ամփոփող փաստաթուղթը, սահմանում են հատուկ պարտավորություններ՝ պաշտպանելու օտարերկրացիներին և այլ շահագրգիռ կողմերի խտրականությունից և բռնությունից:

2001 թ. Դուրբանի հռչակագիրն այլատյացությունը հավասարեցրեց ռասիզմին և ռասայական խտրականությանը՝ հայտարարելով, որ «ռասիզմը, ռասայական խտրականությունը, այլատյացությունը և դրանց հետ կապված անհանդուրժողականությունը՝ նշանակում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակների և սկզբունքների ժխտում»⁴³:

Հռչակագիրը կոչ է անում ընդունելու լայնածավալ օրենսդրական, դատական, կարգավորիչ և վարչական միջոցներ, նաև ինքնակարգավորման մեխանիզմներ՝ ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության կանխարգելման և պաշտպանական միջոցառումների իրականացման, ինչպես նաև հարգանքի ու հանդուրժողականության խթանման նպատակով: Այն մասնավորապես կոչ է անում պետություններին «կիրառելու իրավական պատժամիջոցներ՝ հիմնվելով մարդու իրավունքների պաշտպանության համապատասխան միջազգային իրավունքի վրա, տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների, այդ թվում՝ համացանցի միջոցով ռասայական ատելության հրահրման դեպքում»⁴⁴, և խրախուսում է դատապարտել ու ակտիվորեն կանխել զանգվածային հաղորդակցության բոլոր միջոցներով ռասիստական և այլատյացության ուղերձների տարածումը⁴⁵:

Հարկ է նշել, որ որոշ պետություններ փորձում են կանխել այլատյացության դեպքերը՝ նաև նոր զարգացող տեխնոլոգիաների տիրույթում: Այսպես՝ «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությամբ նախատեսվող միջոցներն ուղղված են համակարգչային համակարգերի միջոցով կատարված ռասիստական և այլատյացության գործողությունների քրեականացմանը⁴⁶:

Համաձայն սույն լրացուցիչ արձանագրության՝ ««ռասիստական և քսենոֆոբիական նյութ» տերմինը նշանակում է՝ որևէ գրավոր նյութ, որևէ արտահայտություն կամ մտքի կամ տեսության որևէ այլ արտահայտություն, որը որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ քարոզում, օժանդակում կամ հրահրում է ատելություն, խտրականություն կամ բռնություն՝ ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ծագման կամ ազգային կամ էթնիկական ծագման, ինչպես նաև կրոնի հիման վրա, եթե որպես շարժառիթ օգտագործվել է հիշյալ գործոններից որևէ մեկի համար»⁴⁷:

43 Declaration of the World Conference against Racism in Durban, Durban, 31 August, 2001,

44 General Assembly, Resolution 52/111], New York, 18 February, 1998.

45 Տե՛ս նույն տեղում, կետ 147 (դ):

46 Տե՛ս «Լրացուցիչ արձանագրություն կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի՝ համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին», Ստրասբուրգ, 2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=48029>, դիտվել է՝ 16.11.2024 թ.:

47 Նույն տեղում, հոդված 2:

Այլատյացությունը դրսևորվում է խտրականության ուղղակի և անուղղակի ձևերով: Ուղղակի այլատյացությունը կարող է դրսևորվել ատելության, բռնության կամ չափազանց խտրական քաղաքականության խթանմամբ, մինչդեռ անուղղակի այլատյացությունը ենթադրում է թվացյալ «չեզոք» օրենքների, քաղաքականության և գործելակերպի անհամաչափ և բացասական ազդեցությունը ոչ քաղաքացիների վրա⁴⁸:

Ռասայական խտրականության վերացման կոմիտեն իր 30-րդ ընդհանուր հանձնարարականում նշել է, որ ազգության վրա հիմնված տարբերությունները պետք է կիրառվեն ըստ օրինական նպատակի և համաչափ լինեն այդ նպատակի իրականացմանը: Պետությունները պետք է ապահովեն, որ «օրենսդրության կիրառումը խտրական ազդեցություն չունենա ոչ քաղաքացիների վրա»⁴⁹:

Այլատյացության կանխարգելումը և վերացումը պահանջում են ռասայական զգայուն մոտեցումների ներդրում պետական քաղաքականության մեջ կառավարության յուրաքանչյուր մակարդակում: «Չեզոք» մոտեցումները, որոնք տարածվում են ոչ քաղաքացիների վրա, չեն անդրադառնում համակարգային այլատյացությանը: Դրանք անտեսում են համակարգային անհավասարությունները, խտրականությունը և դրանց բուն պատճառները:

«Amnesty International»-ը փաստագրել է այլատյացության և ռասայական խտրականության դեպքեր, որոնք գրանցվել են թվացյալ «չեզոք» օրենքների, քաղաքականության և գործելակերպի կիրառման հետևանքով: Օրինակ՝ Եվրոպայում, թեև ԵՄ ժամանակավոր պաշտպանության մասին դիրեկտիվը պաշտպանում էր ուկրաինական հակամարտությունից փախած մարդկանց, «չեզոք» մոտեցումը հանգեցրեց ռասայական խտրականության Ուկրաինան լքող մարդկանց որոշ խմբերի նկատմամբ, ինչպիսիք են սևամորթները և ժամանակավոր բնակություն չունեցող քաղաքացիները⁵⁰:

Այլատյացության սահմանումը և դրա տարբերակումը ռասիզմից ու ռասայական խտրականությունից դեռևս հստակ ամրագրված չեն: Համաշխարհային համաժողովի տարածաշրջանային նախապատրաստական հանդիպումներից մեկի ժամանակ առաջարկվել է հետևյալը.

«Ռասիզմը գաղափար է, որը որոշակի ռասայի և/կամ էթնիկ խմբի տալիս է իշխող դիրք ուրիշների նկատմամբ՝ հիմնվելով ֆիզիկական և մշակութային հատկանիշների, ինչպես նաև տնտեսական հարստության վրա, ներառյալ հիերարխիկ հարաբերությունները, որոնցում «վերադաս» ռասան գերիշխում և վերահսկում է ուրիշներին:

48 St'u Amnesty International, "States Parties' Obligations Regarding Xenophobia, and Its Impact on the Rights of Migrants, Their Families, and Other Non-Citizens Subjected to Racial Discrimination," Joint General Comment with CERD-CMW], London, 4 April, 2024, <https://www.amnesty.org/en/wp-content/uploads/2024/04/IOR4078982024ENGLISH.pdf>, ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին», Ստրասբուրգ, 2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=48029>, դիտվել է՝ 16.11.2024 թ.:

49 UN Committee on the Elimination of Racial Discrimination (CERD), "General Recommendation No. 30: Discrimination Against Non-Citizens", New York, 12 March, 2004, para 7.

50 St'u Amnesty International, "Lithuania: Forced out or Locked up. Refugees and Migrants Abused and Abandoned," 27 June 2022, <https://www.amnesty.org/en/documents/eur53/5735/2022/en/>, դիտվել է՝ 16.11.2024 թ.:

Այլատյացությունը նկարագրում է վերաբերմունքը, կողմնակալությունը և վարքագիծը, որոնք մերժում, օտարում և հաճախ մեղադրում են մարդկանց՝ հիմնվելով նրանց՝ որպես համայնքի, հասարակության կամ ազգային ինքնության օտար ընկալումների վրա»⁵¹:

Այլատյացության բռնության վերջին ամենամեծ դեպքը տեղի է ունեցել 2015 թ. մարտի վերջին Հարավային Աֆրիկայում՝ Դուրբան նավահանգստային քաղաքում: Քաղաքացիները հրկիզել և թալանել էին առևտրի մի շարք կենտրոններ: Վախեցած օտարերկրացիներին ստիպել էին թաքնվել ոստիկանական բաժանմունքներում, քանի որ մաչետներով զինված քաղաքացիները շրջում էին քաղաքով, և արդեն երկրի մի շարք քաղաքներում տեղի էին ունեցել սպանություններ: Բռնությունը սկսվել էր այն բանից հետո, երբ գուլուների թագավոր Գուդվիլ Չվելիտինին հանդիպման ժամանակ ասել էր, որ «օտարերկրացիները պետք է հավաքեն իրենց ճամպրուկները և հեռանան», քանի որ նրանք աշխատանք են խլում քաղաքացիներից: Սակայն թագավորի գրասենյակը հերքել է դա և հայտնել, որ լրագրողները նրանից սխալ են մեջբերում արել⁵²:

Այլատյացության հարձակումները զգալի աճ գրանցեցին 1994 թ. Սև ժողովրդավարական կառավարման հաստատումից հետո⁵³: 2008 թ. Յոհանեսբուրգը դարձավ այլատյացության արշավի կենտրոն, ինչի հետևանքով գոհվեցին տասնյակ մարդիկ, իսկ ավելի ուշ բռնությունը տարածվեց Քեյփթաունում, որը 2006 թ. արդեն տուժել էր այլատյացության հարձակումներից: 2008 թ. բռնի հարձակումներ տեղի ունեցան նաև ներգաղթյալների վրա: Այդ հարձակումները հանգեցրին առնվազն 67 մարդու մահվան⁵⁴:

Վիտվատերսբուրգի համալսարանի միգրացիայի և հասարակության աֆրիկյան կենտրոնի հաշվարկներով՝ 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հարավային Աֆրիկայում գրանցվել է այլատյացության հողի վրա զանգվածային բռնության 529 դեպք, որոնց հետևանքով 309 մարդ գոհվել է, 901 մարդ՝ վիրավորվել, ավելի քան 100 հազար մարդ գրկվել է կացարանից, 2193 խանութ թալանվել է, որոշ դեպքերում՝ այրվել⁵⁵:

Այս դեպքերն ուսումնասիրելիս Հարավաֆրիկյան Հանրապետության (ՀԱՀ) ազգային օրենսդրությունում գտնում ենք որոշ բացեր՝ չնայած նրան, որ պետությունը միջազգային մի շարք պայմանագրերի անդամ է: Ապարտեյդի վարչակարգի անկումից հետո Հարավաֆրիկյան Հանրապետությունն անդամակցել է մարդու իրավունքների միջազգային հիմնարար համաձայնագրերին: 1965 թ. «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիային» կից երկիրը ստորագրել է նաև 1981 թ. «Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խար-

51 Declaration on Racism, Discrimination, Xenophobia and Related Intolerance against Migrants and Victims of Trafficking, Tehran, 18 February, 2001.

52 St'u Faith Karimi, "What's behind xenophobic attacks in South Africa," 19 April 2015, <https://edition.cnn.com/2015/04/18/africa/south-africa-xenophobia-explainer/index.html>, դիտվել է՝ 16.11.2024 թ.:

53 St'u "Simon-Peter Ayooluwa, Xenophobia Duty of State Crime against Humanity Migrants Rights Aliens," *Nnamdi Azikiwe University Journal of International Law and Jurisprudence*, Vol. 6, 2015, 128:

54 St'u Morgan Winsor, "South Africa Xenophobia 2015: Victims' Names and Nationalities Released," 28 May, 2015, <https://www.ibtimes.com/south-africa-xenophobia-2015-victims-names-nationalities-released-1900755>, դիտվել է՝ 16.11.2024 թ.:

55 St'u "Fact sheet on foreign workers in South Africa" (Johannesburg: ACMS, 2017), 4:

տիան», որում հաստատվել է օրենքի առջև բոլոր ռասաների և էթնիկ խմբերի ներկայացուցիչների հավասարությունը: Բացի այդ՝ 2001 թ. Հարավաֆրիկյան Հանրապետությունը Դուրբանում կազմակերպեց ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության դեմ պայքարի համաշխարհային կոնֆերանսը, որի ժամանակ ընդունվեցին Դուրբանի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը: Կատարելով հռչակագրի ստորագրմամբ ստանձնած պարտավորությունը՝ մինչև 2016 թվականը ՀԱՀ-ն մշակեց ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, որը երկար քննարկումից հետո ընդունվեց 2019 թ. մարտին⁵⁶: Սահմանադրությունը հարավաֆրիկացիներին երաշխավորում է հավասարություն օրենքի առաջ, արգելում է խտրականությունը ռասայի և էթնիկ պատկանելության հիման վրա⁵⁷: 2000 թվականի «Հավասարության խթանման և անարդար խտրականության կանխարգելման մասին» օրենքի 7-րդ հոդվածը նաև արգելում է ատելության ցանկացած դրսևորում այլ էթնիկ խմբերի և ռասայական խմբերի նկատմամբ⁵⁸: Իրավական համակարգի գլխավոր խնդիրներից մեկը քրեական օրենսդրության մեջ այլատյացության հողի վրա կատարված հանցագործությունների առանձին տեսակների առանձնացված չլինելն է, թեև այլատյացության դրսևորումների առկայությունը կարող է դիտարկվել որպես ծանրացուցիչ հանգամանք, ինչը, սակայն, գործնականում միշտ չէ, որ կիրառվում է⁵⁹:

Վերջերս «Կրոկուս սիթի հոլում» տեղի ունեցած ահաբեկչությունից հետո Ռուսաստանում նույնպես ակտիվացան այլատյացության դեպքերը: 2024 թ. մարտին իրավապաշտպաններին ծանուցվեց ատելության շարժառիթով 16 հարձակման մասին: Տուժածների թվում գերակշռում էին Կովկասից և Կենտրոնական Ասիայից «ոչ պալոնական արտաքինով» մարդիկ: Առնվազն չորս լուրջ հարձակումներ են կատարվել մարտի 22-ին «Կրոկուս սիթի հոլում» տեղի ունեցած ահաբեկչությունից հետո և ներկայացվել որպես «վրեժ»⁶⁰:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը ազգային մակարդակում այլատյացության կանխարգելման և վերահսկման մի շարք գործնական միջոցառումներ է առաջարկում, որոնցից են՝

56 St'u МИД России, "О ситуации с героизацией нацизма, распространении неонацизма и других видов практики, которые способствуют эскалации современных форм расизма, расовой дискриминации, ксенофобии и связанной с ними нетерпимости (Доклад Министерства иностранных дел Российской Федерации)," (Москва, 2019), 379 c., https://www.mid.ru/ru/foreign_policy/humanitarian_cooperation/-/asset_publisher/bb3nyd16mbfc/content/id/3193903/#54, դիտվել է՝ 16.11.2024 թ.

57 St'u ՀՀ Սահմանադրություն, 1996 թ., հոդված 9, կետեր 3 և 4:

58 St'u Հավասարության խթանման և անարդար խտրականության կանխարգելման մասին օրենք, 2000 թ., հոդված 7:

59 St'u Екатерина Заноскина, «Новый курс ЮАП в борьбе с ксенофобией», *Journal of the Institute for African Studies* 3 (52) (2020):65-66:

60 St'u Исследовательский Центр «Сова», «Русский национализм и ксенофобия. Итоги марта 2024 года», 3 марта 2024 г., <https://www.sova-center.ru/racism-xenophobia/publications/2024/04/d49590/>, դիտվել է՝ 23.11.2024 թ.:

- վավերացնել մարդու իրավունքների ոլորտում միջազգային ու տարածաշրջանային գործիքները և ներդնել համապատասխան չափանիշներ, որոնք պաշտպանում են այլատյացության վտանգի տակ գտնվող բոլոր անձանց իրավունքները,
- մշակել և իրականացնել մարդու իրավունքների միջազգային ու տարածաշրջանային չափանիշներին համապատասխան իրավական միջոցառումներ, որոնք կանխում և լուծում են այլատյացության խնդիրները, օրինակ՝ ընդունել հակախտրական դրույթներ,
- ապահովել այլատյացության վտանգի տակ գտնվող զոհերի և համայնքների «մուտքը արդարադատություն», ինչպես նաև բողոքների մատչելի մեխանիզմները և զոհերի փոխհատուցման երաշխիքները,
- կապ հաստատել այլատյացությունից տուժած համայնքների և անձանց հետ՝ տրամադրելով իրավաբանական, բժշկական և հոգեբանական օգնություն,
- միջոցներ ձեռնարկել բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունն ու հարգանքը խթանելու համար, ինչպես նաև հակազդել կողմնակալությանը և բացասական կարծրատիպերին լրատվամիջոցներում, այդ թվում՝ սոցիալական մեդիայում և համացանցում,
- ստեղծել համապատասխան հաստատություններ և մեխանիզմներ այլատյացության հարցերի վերաբերյալ մոնիտորինգի և հաշվետվության համար, օրինակ՝ մասնագիտացված ազգային մարմիններ և քաղաքացիական հասարակության հետ գործակցող ցանցեր⁶¹:

Դուրբանի կոնֆերանսի շրջանակներում ընդունված բանաձևը նույնպես սահմանում է, թե պետություններն ինչ քաղաքականություն պետք է վարեն օտարերկրացիների նկատմամբ.

«Կոչ է անում պետություններին՝

- մշակել և իրականացնել քաղաքականության և գործողությունների ծրագրեր, ինչպես նաև ամրապնդել և իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ, որոնք ուղղված են ներգաղթյալների և ընդունող հասարակությունների միջև ավելի մեծ ներդաշնակության ու հանդուրժողականության խթանմանը՝ ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության դրսևորումները վերացնելու համար, ներառյալ բռնության գործողությունները, որոնք իրականացվում են բազմաթիվ հասարակություններում անհատների կամ խմբերի կողմից,
- առանց հապաղելու մշակել և գործադրել ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության դեմ պայքարի ազգային քաղաքականություններ և գործողությունների ծրագրեր, ներառյալ դրանց՝ գենդերային հիմքով դրսևորումները,

61 Տե՛ս United Nations Human Rights Office of the High Commissioner, *Public perceptions, migration and human rights*, <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Migration/LeafletPublicPerceptions.pdf>, դիտվել է՝ 23.11.2024 թ.:

- մշակել և կատարելապես իրականացնել արդյունավետ քաղաքականություն և ծրագրեր՝ կանխելու, բացահայտելու և հաշվետվողականություն ապահովելու ուստիականության և այլ իրավապահ մարմինների անօրինական գործողությունների համար, որոնք դրդված են ռասիզմով, ռասայական խտրականությամբ, այլատյացությամբ և դրանց հետ կապված անհանդուրժողականությամբ, և պատասխանատվության ենթարկելու նման հանցագործությունների մեղավորներին, և այլն»⁶²:

Հայաստանում գործում է առանձին օրենք «Օտարերկրացիների մասին», որը, սակայն, կարգավորում է օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու, Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկելու, Հայաստանի Հանրապետությունից ելքի, ինչպես նաև օտարերկրացիներին վերաբերող այլ հարցեր⁶³: ՀՀ քրեական օրենսգրքում ևս առանձնաբար նշված չեն այլատյացության դեպքեր՝ որպես առանձին հանցագործություն կամ ծանրացուցիչ հանգամանք:

Ատելության խոսք

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ ատելության խոսքի վերաբերյալ 1997 թվականի հանձնարարականով առաջին անգամ ամրագրվել է ատելության խոսքի հետևյալ սահմանումը. «Արտահայտվելու բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևեր, ներառյալ անհանդուրժողականությունը՝ արտահայտված ազգային փոքրամասնությունների, ներգաղթյալների և ներգաղթյալ ծագում ունեցող անձանց դեմ ագրեսիվ ազգայնամոլությամբ և ազգակենտրոնությամբ էթնոցենտրիզմով, խտրականությամբ և թշնամանքով»⁶⁴:

ՄԱԿ-ի՝ ատելության խոսքի դեմ պայքարի ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը ատելության խոսքը սահմանում են որպես «հաղորդակցություն, որն օգտագործում է նվաստացնող կամ խտրական լեզու՝ հղում անելով կոնկրետ անձի կամ խմբի՝ հիմնվելով նրա կրոնի, էթնիկ պատկանելության, ազգության, ռասայի, մաշկի գույնի, սոցիալական ծագման, սեռի կամ ինքնության այլ գործոնի վրա»⁶⁵:

Դիտարկենք միջազգային փաստաթղթերի հիման վրա ատելության խոսքի դասակարգումը: Առաջին խումբը կարելի է անվանել «ատելության խոսք, որը պետք է արգելվի»: Այդ խմբում ներառված են հետևյալ դեպքերը՝ ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրում, խտրական ատելության քարոզչություն, որը սերմանում է

62 Declaration of the World Conference against Racism in Durban, para 32.

63 Տե՛ս «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, 2007 թ., հոդված 1:

64 Recommendation No. R (97) 20 of the Committee of Ministers on “Hate Speech,” addressed to member states], Strasbourg, October 30, 1997.

65 “United Nations Strategy and Plan of Action on Hate Speech,” <https://www.un.org/en/genocideprevention/documents/UN%20Strategy%20and%20Plan%20of%20Action%20on%20Hate%20Speech%2018%20June%20SYNOPSIS.pdf>, դիտվել է՝ 23.11.2024 թ.:

խտրականություն, թշնամանք կամ բռնություն, մեկ ռասայի կամ որոշակի էթնիկ ծագման անձանց խմբերի գերակայության քարոզչություն, ինչպես նաև ռասայական ատելության և խտրականության արդարացում և խրախուսում ցանկացած ձևով⁶⁶։ Երկրորդ խումբը ներառում է «ատելություն հրահրող արտահայտություններ, որոնք կարող են արգելվել»։ Դրանք կարող են լինել պետական մարմինների ամրագրած սահմանափակումներ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխանելու դեպքում։ Դրանք պետք է ունենան հստակ օրինական նպատակ՝ հարգելու ուրիշների իրավունքները, և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ⁶⁷։ Երրորդ խումբը ներառում է «օրինական» արտահայտությունները՝ հիմք ընդունելով, որ «յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»⁶⁸։ Սակայն երրորդ խմբի առնչությամբ պետք է նշել, որ «նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն։ Հետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա. այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.

բ. պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար»⁶⁹։

Ատելության խոսքի արգելքը սահմանված է մի շարք միջազգային փաստաթղթերում։ Այսպես՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 20-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պետք է արգելվի օրենքով»⁷⁰, իսկ «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի գ կետը հանցագործություն է որակում ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը⁷¹։

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» նախապատրաստական նյութերը ցույց են տալիս, որ 20-րդ հոդվածը բխել է Երկ-

66 St'u Elira Turdubaeva, Mukaram Toktogulova, et. al., *From Hate Speech to Non-Violent Communication*, 13, https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/2023-10/from_hate_speech_to_non-violent_communication_en_web.pdf, դիտվել է՝ 23.11.2024 թ.:

67 St'u նույն տեղում:

68 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, 16 դեկտեմբերի 1966 թ., հոդված 19, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500>, դիտվել է՝ 23.11.2024 թ.:

69 Նույն տեղում:

70 Նույն տեղում, հոդված 20, կետ 2:

71 St'u Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա, 9 դեկտեմբերի 1948 թ., հոդված 3, կետ Գ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835>, դիտվել է՝ 23.11.2024 թ.:

րորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նացիստական վարչակազմի վայրագությունների հանդեպ ունեցած զգվանքից և նման սարսափների կրկնությունը կանխելու հրատապ անհրաժեշտությունից⁷²:

1983 թ. հուլիսի 29-ի թիվ 11/19 ընդհանուր մեկնաբանության մեջ Մարդու իրավունքների կոմիտեն, որը ստեղծվել է դաշնագրի IV մասի 28-45-րդ հոդվածների համաձայն, ընդգծել է, որ 20-րդ հոդվածը «լիովին համատեղելի է ազատ արտահայտվելու իրավունքի հետ», որը երաշխավորված է 19-րդ հոդվածով, քանի որ այդ իրավունքի իրացումը «ենթադրում է հատուկ պարտականություններ և պատասխանատվություն»⁷³:

«Ռ-ասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան» (CERD) պարունակում է ատելության խոսքի և քարոզչության արգելքի ամենալայն և մանրամասն դրույթները, թեև սահմանափակված է ռասայական հիմքերով: Կարևոր է նշել, որ ներկայումս 170 պետություններ սույն կոնվենցիայի կողմ են, հետևաբար պարտավոր են կենսագործել դրա դրույթները: 4-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները «օրենքով պատժելի հանցանք են համարում ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը, ինչպես նաև ռասիստական գործունեությանն օգնություն տրամադրելը, ներառյալ նման գործունեության ֆինանսավորումը»⁷⁴:

Հարկ է նշել, որ, CERD-ի 9-րդ հոդվածի համաձայն, մասնակից պետությունների ներկայացրած զեկույցները, մեկնաբանությունները և տեղեկությունները վերանայելիս Ռ-ասայական խտրականության վերացման կոմիտեն իր տարեկան զեկույցում հաճախ նշում էր մասնակից պետությունների օրենսդրությունը (կամ դրա բացակայությունը), որը կարգավորում է ատելության հրահրումը, և կամ ողջունում նման օրենքների առկայությունը կամ էլ ափսոսանք էր հայտնում դրանց բացակայության համար և կամ իր մտահոգությունն արտահայտում դրանց անբավարարության վերաբերյալ⁷⁵:

Կոմիտեն նաև դիտարկել է CERD-ի 4-րդ հոդվածի խախտումների մի քանի հատուկ դեպքեր CERD-ի 14-րդ հոդվածի համաձայն հաղորդակցության վերաբերյալ անհատների ներկայացրած կարծիքներում: Լ. Կ.-ն ընդդեմ Նիդեռլանդների գործով կոմիտեն ճանաչեց CERD-ի 4-րդ հոդվածի (ա) կետի խախտումը. մարոկկացի մի քաղաքացի, այցելելով իրեն վարձակալությամբ առաջարկված տուն, լսել էր «բավական է օտարերկրացիներ» բղավոցները և նախազգուշացում ստացել, որ եթե սկսի ապ-

72 St'u Manfred Nowak, *U.N. Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary*, 2nd ed. (Kehl: N. P. Engel, 2005), 468:

73 General Comment 11/19, 29 July 1983, HRI/GEN/1/Rev.6, paragraph 2.

74 *Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին*, հոդված 4:

75 St'u Report of the Committee on the Elimination of Racial Discrimination, Supplement No. 18, UN Document A/50/18.

րել այդ տանը, այն կիրդեհվի, և նրա մեքենան կվնասվի⁷⁶: Կոմիտեն պարզել է, որ այդ մեկնաբանություններն ու սպառնալիքները «մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց նկատմամբ ռասայական խտրականության և բռնության հրահրում» են⁷⁷: Մասնակից պետությունը, տվյալ դեպքում՝ Նիդեռլանդները, պատասխանատվություն կրեց, քանի որ հետաքննությունը չէր իրականացրել «պատշաճ օպերատիվությամբ»⁷⁸:

Մարդու իրավունքների կոմիտեն, որը, լրացուցիչ արձանագրության համաձայն, իրավասու է քննելու որոշակի գործեր, մի քանի վճիռ է կայացրել ատելության խոսքի վերաբերյալ: Ռոսն ընդդեմ Կանադայի գործում կոմիտեն վկայակոչել է և՛ 19-րդ, և՛ 20-րդ հոդվածները: Գործի համաձայն՝ Կանադայում ուսուցչին տեղափոխել են ոչ դասարանային պաշտոնի այն դպրոցում, որտեղ նա աշխատել է՝ համաձայն Մարդու իրավունքների կոմիտեի հանձնարարականի, որը որոշել էր, որ այդ ուսուցչի հակասեմական գրությունները և հրապարակային հայտարարությունները խաթարում են անաչառ լինելու նրա կարողությունը և թունավորում դպրոցական մթնոլորտը: Այս հրամանը հաստատել էր Կանադայի Գերագույն դատարանը: Ուսուցիչը բողոքել է՝ վկայակոչելով, որ խախտվել է իր խոսքի ազատության իրավունքը⁷⁹: Սակայն կոմիտեն խոսքի ազատության խախտում չգտավ այդ գործում: Ըստ էության, նա հաստատեց, որ չնայած ուսուցչին դասախոսական պաշտոնից հեռացնելը խոսքի ազատության իրավունքի սահմանափակում է, սակայն տվյալ դեպքում սահմանափակումները թույլատրելի էին, քանի որ դրանք ուղղված էին «այնպիսի արտահայտությունների դեմ, որոնք կարող են բարձրացնել կամ ամրապնդել հակասեմական տրամադրությունները»⁸⁰:

Ատելության խոսքի վերաբերյալ վճիռներ է կայացրել դեռ Նյուրնբերգի ռազմական տրիբունալը, չնայած այդ ժամանակ «ատելության խոսք» տերմինը հայտնի չէր տրիբունալին:

Ցեղասպանության հրահրումը՝ որպես միջազգային իրավունքի հանցագործություն, սկսեց դիտարկվել, երբ Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալը 1946 թվականին վճիռ կայացրեց մեղադրյալներ Յուլիուս Սթրեյխերի և Հանս Ֆրիցշելի գործով: Թեև «ցեղասպանության հրահրում» հասկացությունը դեռ հայտնի չէր, ամբաստանյալներին մեղադրանք էր առաջադրվել մարդկության դեմ հանցագործությունների համար, որոնք հիմնված էին այն գործողությունների վրա, որոնք այսօր ներառվում են ցեղասպանություն հրահրելու սահմանման մեջ: Յուլիուս Սթրեյխերը հակասեմական «Der Stürmer» շաբաթաթերթի հիմնադիրն ու խմբագիրն էր, որի նպատակն էր, իր իսկ խոսքով, «համախմբել գերմանացիներին և դուրս բերել նրանց հրեական ազդեցության դեմ, որը կարող է ոչնչացնել մեր ազնիվ մշակույթը»⁸¹:

76 St'u Communication No. 4/1991: Netherlands, UN Doc. CERD/C/42/D/4/1991, 16 March 1993, 2.1, 6.3:

77 St'u նույն տեղում, պարբերություն 6.3:

78 St'u նույն տեղում, պարբերություն 6.6:

79 St'u Ross v. Canada, Communication No. 736/1997, UN Doc. CCPR/C/70/D/736/1997 (2000):

80 Նույն տեղում, պարբերություն 11.5:

81 Robert Gellately (ed.), *The Nuremberg Interviews Conducted by Leon Goldensohn* (New York: Alfred A. Knopf, 2004), 252.

Իր որոշման մեջ միջազգային ռազմական տրիբունալն ընդգծել է, թե ինչպես են առաջատար հողվածներում և նամակներում, որոնցից մի քանիսը գրել է հենց Սթրեյխերը, հրեաները ներկայացվել որպես «մակաբույծներ, թշամիներ, չարագործներ, հիվանդություններ տարածողներ» կամ որպես «մորեխների ամբոխներ, որոնք պետք է իսպառ ոչնչացվեն»⁸²:

Տրիբունալը հաստատեց, որ նման ատելության քարոզչությամբ Սթրեյխերը «դրդել է գերմանացի ժողովրդին ակտիվ հետապնդումների», ինչպես նաև «սպանության և ոչնչացման», գործողություններ, որոնք, ըստ տրիբունալի, հանցագործություն են մարդկության դեմ, ուստի Սթրեյխերը մեղավոր ճանաչվեց և մահապատժի դատապարտվեց կախաղանի միջոցով⁸³:

Հանս Ֆրիցշեն Գերելսը Գերմանիայի հանրային կրթության և քարոզչության նախարարության բարձրաստիճան պաշտոնյա էր, իսկ 1942 թվականից՝ նախարարության ռադիոդիրկիզիոնի ղեկավարը⁸⁴: Մարդկության դեմ հանցագործությունների մեղադրանքի շրջանակներում նրան մեղադրանք է առաջադրվել այն բանում, որ նա «հրահրել և խրախուսել է պատերազմական հանցագործությունների կատարումը՝ միտումնավոր խեղաթյուրելով լուրերը, որպեսզի գերմանացի ժողովրդի շրջանում բոլորքի կրքերը, որոնք նրանց դրդել են վայրագությունների»⁸⁵: Տրիբունալը նաև ընդգծել է հրահրման ազդեցությունը գերմանացիների, այսինքն՝ հրահրման հասցեատերերի վրա, ինչը ցույց է տալիս, որ տրիբունալը դա համարել է հանցագործության կարևոր տարր:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (ՄԻԵԴ) ատելության հրահրմանը և խոսքի ազատությանը վերաբերող գործերը քննելիս կիրառում է մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված երկու մոտեցում.

1. կոնվենցիայի պաշտպանությունից բացառումը՝ նախատեսված 17-րդ հոդվածով (իրավունքների չարաշահման արգելք) (կիրառվում է, երբ վիճարկվող մեկնաբանություններն ատելության խոսք են և ժխտում են կոնվենցիայի հիմնական արժեքները),
2. պաշտպանության սահմանափակումների սահմանումը՝ նախատեսված 10-րդ հոդվածի 2-րդ կետով (կիրառվում է, երբ խոսքը, թեև ատելության խոսք է, ի գործու չէ ոչնչացնելու կոնվենցիայի հիմնական արժեքները):

ՄԻԵԴ-ը իր որոշումներում մի քանի կարևոր նկատառումներ է արել՝ նշելով ատելության խոսքի կարևոր տարրերը.

1. Հայտարարությունների բովանդակությունը – ցանկացած արտահայտություն, որը խախտում է կոնվենցիայում ամրագրված հիմնարար արժեքների, մասնավորապես՝ արդարության, խաղաղության, հանդուրժողականության և խտրա-

82 *Trial of German Major War Criminals* (Nuremberg, 1945), 501.

83 Տե՛ս նույն տեղում, 529:

84 Տե՛ս Jamie Frederic Metzl, “Rwandan Genocide and the International Law of Radio Jamming,” 91 *AJIL* 628 (1997), 460:

85 *Trial of German Major War Criminals*, 526.

կանության բացառման սկզբունքները, կարող է դուրս բերվել 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից 17-րդ հոդվածի ուժով⁸⁶:

2. Խոսողի մտադրությունը – ինչպես նշված է Բելկասեմն ընդդեմ Բելգիայի (Belkacem V. Belgium) գործով ՄԻԵԴ-ի 2017 թվականի վճռում, դատարանը քննել է դիմումատուի գործը, որը «YouTube» հարթակում հրապարակել է հանրամատչելի տեսանյութեր, որոնցում կոչ է արել հեռուստադիտողներին գերիշխանություն ունենալու ոչ մուսուլմանների նկատմամբ, դաս տալու նրանց և պայքարելու նրանց դեմ: Դատարանն ընդունել է ներպետական դատարանների այն եզրակացությունը, որ դիմողն իր գրառումներով ձգտել է մարդկանց մեջ ատելություն, խտրականություն և բռնություն սերմանելու բոլոր ոչ մուսուլմանների հանդեպ⁸⁷:
3. Վնաս պատճառելու հավանականությունը – դատարանը քննել է նաև այն հարցը, թե համապատասխան կարծիքի արտահայտումը կարող է արդյոք բռնություն հրահրել⁸⁸: Դատարանը դիտարկել է մի շարք ցուցանիշներ, որոնք կարող են հանգեցնել այն եզրակացությանը, որ կոնկրետ հայտարարությունը կարող է նման վնաս պատճառել: Դրանք են՝
 - 3.1. սոցիալ-քաղաքական համատեքստ,
 - 3.2. ելույթի հնարավոր ազդեցությունը դրա ձևն ու հրապարակայնությունը, հեղինակը և լսարանը,
 - 3.3. հավանական վնասի նշանակությունը և հուսալիությունը,
 - 3.4. միջամտության բնույթի և նպատակի օրինականության միջև կապը:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ հարկ է նշել, որ ատելության խոսքի մասին դրույթներ կարող ենք գտնել մի շարք օրենքներում:

Ինչպես նշված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածում, կարծիքի արտահայտման ազատությունը երաշխավորված է, սակայն այդ հոդվածը նաև նախատեսում է որոշ հանգամանքներում այդ իրավունքի սահմանափակման հնարավորությունները: Այսպես՝ սահմանափակումներ կարող են կիրառվել «պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»⁸⁹: Սահմանադրության 77-րդ հոդվածով արգելվում է Սահմանադրությամբ հաստատված հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն բորբոքելու նպատակով⁹⁰: Այս դրույթը կարևոր է, քանի որ հստակեցնում է, որ ատելության խոսքի նորմերը կարող են համընկնել 42-րդ հոդվածի հետ, քանի որ

86 St'v ECtHR judgments: Seurot v. France, 2004; M'Bala v. France, 2015, para 39; Ibragim Ibragimov and Others v. Russia, 2018, para 94; Pavel Ivanov v. Russian Federation, 2007.

87 St'v նույն տեղում, պարբերություն 33:

88 St'v ECtHR Grand Chamber judgment in Sürek v. Turkey (no. 4), 1999, paragraph 58.

89 ՀՀ Սահմանադրություն, հոդված 42:

90 St'v նույն տեղում, հոդված 77:

կարծիքի արտահայտման ազատությունը խոսքի որոշակի տեսակների համար չի կարող ծառայել որպես պաշտպանություն:

Ատելության խոսքի վերաբերյալ դրույթներ կարող ենք գտնել նաև ՀՀ քրեական օրենսգրքում: Այսպես, 329-րդ հոդվածի համաձայն, «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը պատժվում է»⁹¹:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում ատելության խոսքի վերաբերյալ որևէ դրույթ չկա: Թեև քաղաքացիական օրենսգրքում տեղ են գտել վիրավորանքի և գրպարտության մասին նորմեր, սակայն դրանք ուղղակիորեն չեն ներառում ատելության խոսքը: Այսինքն՝ եթե նույնիսկ քաղաքացիական բնույթի վեճը վերաբերում է ատելության խոսքին, դատարան ներկայացված հայցը ձևակերպվում է վիրավորանքի կամ գրպարտության հիմքերով՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի:

Եզրակացություն

Ռասայական խտրականությունը, այլատյացությունը և ատելության խոսքն ի գործուն են էական վնաս հասցնելու հասարակության կայունությանը, համերաշխությանը և մարդու իրավունքներին: Այս երևույթները հաճախ արտահայտվում են մարդու արժանապատվության ու ազատությունների ոտնահարմամբ և ազդում են մարդկանց հոգեկան, ֆիզիկական ու սոցիալական բարեկեցության վրա:

Միջազգային իրավունքի տեսանկյունից պետությունները պարտավոր են ապահովել հանրության համերաշխությունն ու կայունությունը՝ պայքարելով ռասայական խտրականության, այլատյացության և ատելության խոսքի դեմ, ինչպես նաև նորմեր ընդունելով դրանք կանխելու և դրանց դեմ իրավական միջոցներ կիրառելու համար: Այդպիսով միջազգային իրավունքը ոչ միայն մշակում է կանխարգելիչ մեխանիզմներ, այլև պարտավորեցնում է պետություններին ապահովել ռասայական և մշակութային հանդուրժողականության ու մարդու իրավունքների պաշտպանության բարձր մակարդակը, որպեսզի նվազեցվեն նման երևույթների բացասական ազդեցությունները, և հաստատվի համընդհանուր խաղաղություն:

91 ՀՀ քրեական օրենսգրքի, հոդված 329:

DEFINING THE CONCEPTS OF “RACIAL DISCRIMINATION,” “XENOPHOBIA,” “HATE SPEECH”

Svetlana Chakhmakhchyan, Edita Gzoyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

Seventy-six years after the adoption of the Universal Declaration of Human Rights, inequality remains widespread, with many individuals becoming targets of discrimination and hatred due to their origin, religion, or ethnicity. Terms like “racial discrimination,” “xenophobia,” and “hate speech” have become commonly used in modern discourse. This article aims to explore the origins of these three concepts, their legal definitions, and their relevance in today’s society.

Keywords: racism, racial discrimination, xenophobia, hate speech, discrimination.

ОПРЕДЕЛЕНИЕ ПОНЯТИЙ “РАСОВАЯ ДИСКРИМИНАЦИЯ,” “КСЕНОФОБИЯ,” “ЯЗЫК ВРАЖДЫ”

Светлана Чахмахчян, Эдита Гзоян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Семьдесят шесть лет спустя после принятия Всеобщей декларации прав человека неравенство по-прежнему остается широко распространённым, и многие люди становятся объектами дискриминации и ненависти из-за своего происхождения, религии или этнической принадлежности. Такие термины, как “расовая дискриминация,” “ксенофобия” и “язык вражды,” прочно вошли в современный дискурс. Данная статья направлена на изучение происхождения этих трёх понятий, их правовых определений и актуальности в современном обществе.

Ключевые слова: расизм, расовая дискриминация, ксенофобия, слова ненависти, дискриминация.

REFERENCES

«Ազգային փոքրամասնությունների մասին, Իրավահավասարության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծեր» [Draft Laws of the Republic of Armenia on National Minorities and on Ensuring Equality, and Related Legislation]. Yerevan, 15 July, 2019, <https://www.e-draft.am/projects/1801>;

«Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրություն» [Statute of International Court of Justice]. San Francisco, October 24, 1945, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=37341>;

«Լրացուցիչ արձանագրություն կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի՝ համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» [Additional Protocol to the Convention on Cybercrime concerning the criminalization of acts of a racist and xenophobic nature committed through computer systems]. Strasbourg, 28 January, 2003, <https://old.arlis.am/DocumentView.aspx?docID=48029>;

«Հայաստանը ՄԱԿ-ի միջազգային դատարանի հայց է ներկայացրել ընդդեմ Ադրբեյջանի» [Armenia filed a case against Azerbaijan at the UN International Court of Justice]. Radio Free Europe/Radio Liberty, 30 September, 2023, <https://www.azatutyun.am/a/32616357.html>;

«ՀՀ Սահմանադրություն» [Constitution of Republic of Armenia]. Yerevan, 06 December, 2015, <https://www.arlis.am/hy/acts/143723>;

«ՀՀ քրեական օրենսգիրք» [Criminal Code of Republic of Armenia]. Yerevan, 01 July, 2022, <https://www.arlis.am/hy/acts/153080>;

«ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը բավարարեց Հայաստանի ներկայացրած դիմումն ընդդեմ Ադրբեյջանի» [The International Court of Justice of the UN upheld Armenia's application against Azerbaijan]. 7 December, 2021, <https://rilm.am/events/mak-i-ardaradatutyanyan-mijazgayin-dat/>;

«Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» [International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination]. New York, 21 December, 1965, <https://www.arlis.am/hy/acts/75843>;

«Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, Երկրորդ զեկույց Հայաստանի մասին» [European Commission against Racism and Intolerance, Second Report on Armenia]. Strasbourg, June 30, 2006, https://www.gov.am/u_files/file/kron/ECRI%20Komitei%20Zek%20II%20-%202006.pdf;

«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա» [Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide]. New York, 9 December, 1948, <https://www.arlis.am/hy/acts/75835>;

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր» [International Covenant on Civil and Political Rights]. New York, 16 December, 1966, <https://www.arlis.am/hy/acts/18500>;

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը» [Law of the Republic of Armenia on Foreigners]. Yerevan, 25 December, 2006, <https://www.arlis.am/hy/acts/73272>.

Հեղինակների մասին

About the Authors

Об авторах

Սվետլանա Ա. Չախմախչյան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության իրավական հետազոտությունների բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ միջազգային քրեական իրավունք, մարդու իրավունքներ, միջազգային հանրային իրավունք:

Էլ. փոստի հասցե՝ svetlana.chakhmakhchyan@genocide-museum.am

Svetlana A. Chakhmakhchyan, Junior researcher at the Department of Legal Studies of the Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research areas: International Criminal Law, Human Rights, International Public Law

Email: svetlana.chakhmakhchyan@genocide-museum.am

Светлана А. Чахмахчян, младший научный сотрудник Отдела правовых исследований Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований: международное уголовное право, права человека, международное публичное право.

Электронная почта: svetlana.chakhmakhchyan@genocide-museum.am

Էդիտա Գ. Գզոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության իրավական հարցերի ուսումնասիրության բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության պատմական և իրավական հարցեր, մարդու իրավունքներ:

Էլ. փոստի հասցե՝ gzoyan.edita@genocide-museum.am

Edita G. Gzoyan, PhD, Head of the Department for the Study of Legal Issues of the Armenian Genocide, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research areas: Historical and legal issues of the Armenian Genocide, human rights.

Email: gzoyan.edita@genocide-museum.am

Эдита Г. Гзоян, к.и.н., зав. отделом по изучению правовых вопросов Геноцида армян Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований: исторические и правовые вопросы Геноцида армян, права человека.

Электронная почта: gzoyan.edita@genocide-museum.am

ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՐԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ ԵՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄԻ

Նարեկ Պողոսյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված հանցագործությունների դաժան պատկերները խոր հետք են թողել Ռաֆայել Լեմկինի հիշողության մեջ՝ էական ազդեցություն ունենալով նրա մտքերի ձևավորման վրա: Դրանք նպաստել են նաև նրա կողմից «ցեղասպանություն» հասկացության ձևավորմանը, ինչպես նաև այդ հանցագործության կանխարգելման և պատժի շուրջ առանձին միջազգային կոնվենցիա ստեղծելու գաղափարի զարգացմանը:

«Ցեղասպանության պատմություն» անավարտ աշխատության մեջ և այլ փաստաթղթերում Լեմկինն անդրադարձել է հայերի նկատմամբ ցեղասպանության իրագործման ժամանակ զանգվածային բռնությունների՝ փորձելով հասկանալ նաև ցեղասպանության իրողության նկատմամբ կոտորածների կազմակերպիչների և զոհերի հոգեբանական արձագանքը:

Լեմկինն ընդգծում է, որ Օսմանյան կայսրությունում հայերի ունեցած հասարակական դիրքը և մի շարք գործոններ, հատկապես տնտեսական հաջողությունները, առանցքային պատճառներ են դարձել երիտթուրքական կառավարիչների կողմից նրանց նկատմամբ ատելության բորբոքման համար: Եվ այս տեսանկյունից նա զուգահեռներ է անցկացնում Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի միջև՝ հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում համեմատելով հրեաների վիճակի հետ նացիստական Գերմանիայում:

Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառված հալածանքներն ու ատելությունը Լեմկինը մեծապես պայմանավորում է նաև կրոնական դրդապատճառներով: Նա վերլուծում է երիտթուրքական քարոզչության այն առանձնահատուկ դրվագները, որոնք նպատակ ունեին մեղադրելու հայերին՝ նրանց նկատմամբ թշնամանք սերմանելու և բռնություններ հրահրելու համար:

Բանալի բառեր՝ Ռաֆայել Լեմկին, Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, հայեր, բռնություններ, ատելություն, վայրագություններ:

Հոդվածը ներկայացվել է՝ 07.05.2025: Ընդունվել է տպագրության՝ 08.10.2025:

The article was submitted on 07.05.2025 and accepted for publication on 08.10.2025.

Статья поступила 07.05.2025 и была принята к публикации 08.10.2025.

Ինչպես հղել՝ Նարեկ Պողոսյան, «Հայերի նկատմամբ ատելության բորբոքումը և բռնությունները Ռաֆայել Լեմկինի հետազոտություններում», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 36-48:

How to cite: Narek Poghosyan, “The Spread of Hate and Violence Against Armenians in Raphael Lemkin’s Research,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025), 36-48.

Как ссылаться: Нарек Погосян, “Распространение ненависти и насилия в отношении армян в исследованиях Рафаэля Лемкина,” *Цехаспанagitakan андес* 13, no. 2 (2025), 36-48.

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2025»-ի շրջանակներում (թեմայի ծածկագիրը՝ 25YR-6A028):

Ներածություն

Հայտնի իրավապաշտպան և իրավագետ Ռաֆայել Լեմկինը դեռ մանկուց խորապես հետաքրքրված էր էթնիկ, կրոնական և ռասայական խմբերի դեմ զանգվածային բռնությունների պատմական օրինաչափություններով²։ Նա իր գործունեության ընթացքում մանրակրկիտ փաստագրեց պատմության հոլովույթում առանձին խմբերի դեմ նպատակաուղղված բռնությունների դեպքերն, ինչպիսիք են Հայոց ցեղասպանությունը և գաղութատիրության նվաճումների ժամանակ կատարված վայրագությունները։ Այս համատեքստում նա նույնիսկ հասցրեց անդրադառնալ հին ժամանակներում տեղի ունեցած զանգվածային սպանություններին ու բռնություններին՝ ցույց տալով, որ ցեղասպանությունը բազում անգամներ տեղի է ունեցել պատմության ընթացքում, չնայած որ ճանաչված չի եղել որպես առանձին հանցագործություն։

Այդուհանդերձ, Լեմկինի հետաքրքրությունը միայն փաստերով կամ պատմական դեպքերի ուսումնասիրությամբ չէր սահմանափակվում. նա մտադիր էր առաջին անգամ գրել ցեղասպանության ամբողջական պատմությունը, որը պետք է լիներ իր գործունեության ամենակարևոր նվաճումը։ Նրա թողած գիտական ժառանգության մեջ պահպանվել են մեծ թվով գիտական հետազոտություններ, գրառումներ, որոնց մի մասը վերաբերում է հենց ցեղասպանության պատմությանը և ցեղասպանագիտության ասպարեզում ունի գիտական բարձր արժեք։

Լեմկինի տեսլականը ցեղասպանության համապարփակ պատմության վերաբերյալ արտացոլում է նրա ձգտումը՝ հասկանալու և կանխելու զանգվածային վայրագությունները։ Պատահական չէ, որ Լեմկինը «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի դերը դիտարկում էր հենց պատմական անհրաժեշտության համատեքստում։ Կարևորելով պատմության մեջ ցեղասպանություն երևույթի ուսումնասիրությունը՝ նա կարծում էր, որ «ցեղասպանության պատմությունը տալիս է մարդասիրական զգացումների արթնացման օրինակներ, որոնք աստիճանաբար բյուրեղացան միջազգային իրավունքի բանաձևերում»³։

«Ցեղասպանության պատմություն» անավարտ աշխատությունը

Լեմկինի անավարտ աշխատությունը, որը հաճախ կոչվում է «Ցեղասպանության պատմություն», արտացոլում է առաջին անգամ ողջ աշխարհում ցեղասպանությունների համապարփակ, համեմատական պատմություն ստեղծելու նրա ձգտումը։ Իսկ այս համեմատական մեթոդն իր ազդեցությունն է ունեցել ցեղասպանության հետագա ուսումնասիրությունների վրա՝ խրախուսելով գիտնականներին ուսումնասիրել տարբեր դեպքերի օրինաչափությունները, նմանություններն ու տարբերությունները։ «Ցեղասպանության պատմությունը» բաղկացած էր լինելու երեք կամ չորս հատորից։ Առաջին հատորը նվիրված էր լինելու ցեղասպանության տեսությանը, իսկ մյուս երեք

2 St'u Samuel Totten, Steven Jacobs (eds.), *Pioneers of Genocide Studies* (New Brunswick/London: Transaction Publishers, 2002), 366:

3 Douglas Irvin-Erickson, *Raphael Lemkin and the Concept of Genocide* (Philadelphia: University of Pennsylvania Press, 2017), 197.

հատորներում համակարգված քննարկվելու էին անտիկ շրջանում, միջնադարում և ժամանակակից փուլում ցեղասպանության 62 պատմական դեպքեր: Եվ երրորդ հատորի 39-րդ գլուխը նվիրված էր լինելու Հայոց ցեղասպանությանը⁴:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի հետազոտությունները, սակայն, հիմնականում համակարգված չեն: Դրանցում կան բազմաթիվ մեջբերումներ, անունների, փաստերի ու ժամանակագրական սխալներ: Բացի այդ, գրվածքների զգալի մասի հեղինակային թվագրումը բացակայում է: Սակայն Հայոց ցեղասպանությանը նվիրված Լեմկինի նյութերի ընդգրկուն ծավալը, ինչպես նաև այդ հանցագործության բնույթի, կազմակերպման մեխանիզմների և փուլերի վերաբերյալ նրա կատարած մանրակրկիտ դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ նա նպատակ ուներ այս պատմական իրադարձությունը խորապես վերլուծելու որպես համակարգված ցեղասպանագիտական ուսումնասիրության օրինակ: Հայոց ցեղասպանությունը նրա համար ոչ միայն միջազգային սարսափելի հանցագործություն էր, այլև հետագա ցեղասպանությունների կանխման համար անհրաժեշտ հիմնարար նախադեպ, որը պետք է վերլուծվեր իրավական, քաղաքական և մշակութային տեսանկյուններից: Ցավոք, Լեմկինի վաղաժամ մահը խոչընդոտեց այս հավակնոտ ծրագրի լիակատար իրագործումը, և հրապարակի վրա մնացին արժեքավոր, սակայն ամբողջականորեն չմշակված նյութեր⁵:

Հայերի նկատմամբ ատելության բորբոքումը և բռնությունները

Նյու Յորքում գործող Ամերիկայի հրեական պատմական ընկերակցությունում Ռ. Լեմկինի հավաքածուի տեսքով պահպանվող արխիվային նյութերի 8-րդ պահոցի 14-րդ թղթապանակում ներառված է հեղինակի 117-էջանոց ձեռագիրը հայերի կոտորածների վերաբերյալ, որը ստացել է «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագիր» անվանումը: Իսկ 8-րդ պահոցի 15-րդ թղթապանակում պահպանվել է Ռ. Լեմկինի՝ վեց էջից բաղկացած «Հայերի կոտորածների մասին համառոտ ձեռագիրը»: 9-րդ պահոցի՝ «Հայերի և ասորիների դեպքերը» վերնագիրը կրող 2-րդ թղթապանակում գետնդրված անտիպ գրառումների հետազոտությունները նույնպես վերաբերում են Հայոց ցեղասպանությանը⁶: Այլ թղթապանակներում կան տարբեր կարևոր նյութեր, որոնցում այս կամ այն տեսանկյունից անդրադարձ է կատարվում հայերի նկատմամբ հալածանքներին:

Բազմաթիվ աղբյուրներ, փաստաթղթեր ու վկայություններ օգտագործելով՝ Ռաֆայել Լեմկինն իր հետազոտություններում ներկայացնում է Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ժամանակ հայերի նկատմամբ գործադրված բռնությունների ահասարսուռ դեպքերը:

4 St'u Steven Jacobs, "The Papers of Raphael Lemkin: A First Look," *Journal of Genocide Research* 1, no. 1 (1999): 110-114; Thomas Butcher, "A 'Synchronized Attack': On Raphael Lemkin's Holistic Conception of Genocide," *Journal of Genocide Research* 15, no. 3 (2013): 261:

5 Տե՛ս Նարեկ Պողոսյան, *Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում* (Երևան, ՀՅԺԻ, 2020):

6 Տե՛ս American Jewish Historical Society (AJHS), Raphael Lemkin Collection, P-154, Box 8, 9, https://archives.cjh.org/repositories/3/resources/13258/collection_organization, դիտվել է՝ 06.05.2025:

Ուշագրավ է, որ հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում իրականացված հանցագործությունների դաժան պատկերները խորապես տպավորվել էին իրավաբանի հիշողության մեջ: Նրա համար հատկապես ցնցող էր այն դրվագը, երբ ոճրագործները բացում էին հողի կանանց որովայնները և նորածին երեխաներին նետում գետը: Այս մասին են վկայում Լեմկինի փաստաթղթերում տեղ գտած վկայությունները: Իր նամակներից մեկում նա գրում է. «Կարող եմ հիշել մի քանի միջադեպեր. Հայոց ցեղասպանության ընթացքում հողի կանայք բռնաբարվում էին, հետո նրանց որովայնները բացում էին և երեխաներին դուրս հանելով նետում գետը: Կանանց թողնում էին ճանապարհին աներևակայելի ցավերի մեջ, որպեսզի նրանք մահանային տառապանքից: Նրանց բղավոցները սարսափի մեջ էին պահում մյուս կանանց, որոնք դեռ չէին ենթարկվել նույն ճակատագրին»⁷:

Ցեղասպանությանը վերաբերող մեկ այլ նյութում ևս Լեմկինն անդրադառնում է այս թեմային. «Կարող է խումբը ոչնչացվել ընտանիքները քայքայելու և ծնունդը կանխելու միջոցով: Իհարկե, կարող է: Եփրատ գետի երկայնքով հայերի տեղահանությունների ժամանակ քուրդ հրոսակները սրերով բացեցին հողի կանանց որովայնները և պտուղները նետեցին գետը: Կանայք կրում են այս ոճրագործության ողջ բեռը, քանի որ նրանք ազգի ապագա սերունդների կրողն են»⁸:

Լեմկինը մեկ այլ դեպքում էլ նշում է, որ հենց մայրերն էին իրենց երեխաներին նետում գետերը՝ վերջ տալու նրանց տառապանքներին⁹: Այս դրվագի դեպքում արդեն գործ ունենք միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծման հետ, որոնք ուղղված էին խմբի ամբողջական կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը¹⁰: Այս կապակցությամբ Լեմկինը նշում է. «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերը տեղահանվեցին. նրանք 1 մլն 400 հազար էին, ովքեր գնում էին Հալեպի կողմը: Երբ տեղահանվածները՝ տղամարդիկ և կանայք, հասան նշանակված վայրը, նրանց թիվը պակասել էր՝ հասնելով 10 տոկոսի. 90 տոկոսը մահացել էր հոգնածությունից, սովից, ժանտախտից և ճանապարհին իր նկատմամբ դաժան վերաբերմունքից... Դա ցեղասպանության հանցագործություն էր. սպանել դաժանորեն կամ դաժանությամբ աստիճանաբար մահվան հասցնել՝ չկա էական տարբերություն»¹¹:

Ցեղասպանություն հանցագործության վերլուծությանը նվիրված մեկ այլ հետազոտության մեջ Լեմկինը նկատում է. «Երթի ընթացքում հսկիչները և հարևան գյուղերի քուրդ բնակչությունը կոտորում էին տեղահանվածներին: Տղամարդիկ և երեխաները սպանվում էին և նետվում Եփրատ գետը: Նրանք ընտրում էին ամենազեղեցիկ կա-

7 Նույն տեղում, Box 2, Folder 2, Correspondence to Len Peterson, August 9, 1949, 1.

8 Նույն տեղում, Box 7, Folder 3, Manuscript on Genocide, February 2, 1951, 3.

9 Տե՛ս նույն տեղում, Box 8, Folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, 62:

10 Տե՛ս «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի երրորդ կետը՝ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf, դիտվել է՝ 06.05.2025:

11 AJHS, Box 7, Folder 3, Le Crime de Genocide, January 22, 1949, 2.

նանց և վաճառում կամ բռնաբարում նրանց, խոշտանգումները և մյուս վայրագություններն աննկարագրելի էին»¹²:

Հենց այսպիսի սարսափելի իրադարձությունների մասին տեղեկություններն էին, որ մեծ ազդեցություն ունեցան Լեմկինի մտքերի վրա ու նպաստեցին նրա կողմից «ցեղասպանություն» հասկացության ձևավորմանը և այս հարցի շուրջ առանձին կոնվենցիայի ստեղծմանը:

Հայերի կոտորածների վերաբերյալ իր նյութերում Լեմկինը հատուկ անդրադարձ է կատարում ոչ միայն կանանց, այլև որբերի նկատմամբ ցեղասպանության իրագործման ժամանակ դրսևորված դաժան և անմարդկային վերաբերմունքին, որի առնչությամբ նրա գրառումներում ներկայացված են համապատասխան փաստեր, այդ թվում նաև՝ Թալեաթի հեռագրերը՝ ուղղված Հալեպի կառավարությանը, որոնցից մեկում նա նշում է. «Հորդորում եմ, որ մանկատները չընդունեն այդ երեխաներին, և ոչ մի փորձ չարվի նրանց համար հատուկ որբանոցներ հիմնելու համար»¹³:

Լեմկինը փորձում էր նաև հասկանալ ցեղասպանության նկատմամբ կոտորածների կազմակերպիչների և զոհերի հոգեբանական արձագանքը: Նա ծանոթ էր Օսմանյան կայսրությունում հայերի ունեցած դերակատարությանը և ունակություններին, որոնք կարող էին հիմք դառնալ նրանց նկատմամբ ատելության բոլորքքման համար: Ուստի նա գրում է. «Հայերը ստիպված էին հիմնվել իրենց մտավոր ունակությունների և հմտությունների վրա՝ գոյատևելու մի երկրում, որը նրանց տրամադրում էր այնքան քիչ իրավունքներ, որ նրանք, թուրքերի մեջ լինելով, գրեթե մենաշնորհ էին ձեռք բերել առևտրում, ինչի հետևանքով վաստակում էին Թուրքիայի հարստության մեծ մասնաբաժինը: Հայերն, ունենալով բարձր ինտելեկտ և առևտրային գերազանց ունակություններ, փող էին կուտակում իրենց գրպաններում, մինչդեռ թուրքերի աղքատությունն աճում էր: Դա է պատճառը, որ հայերն ամենաատելի մարդիկ էին Արևելքում, շատ դեպքերում՝ անարդարացիորեն և անարդար ընդհանրացման հետևանքով»¹⁴: Այս համատեքստում պետք է նկատել, որ Լեմկինը ցեղասպանությունը դիտարկում էր որպես հուզական երևույթ, որի դեպքում ոճրագործները զոհերի նկատմամբ համապատասխան հուզական վերաբերմունք են ձևավորում¹⁵:

Իր հավաքածուում պահպանված մեկ այլ հետազոտական նյութում Լեմկինը նշում է, որ հայերի մոտ զարգացել էին որոշ հատկանիշներ, որոնք օտարացնում էին նրանց ընդհանուր բնակչությունից ու դարձնում խոցելի մեղադրելու համար: «Նրանք արձագանքում էին մեծացող ճնշումներին՝ դառնալով ավելի հավակնոտ և տնտեսապես, մշակութապես ու սոցիալապես ինքնաբավ: Նրանք բարգավաճում էին, և նրանց մեջ կային հարուստ վաճառականներ, բանկիրներ: Նրանք զարգանում էին որպես հմուտ բանվորների և արհեստավորների խոշոր դաս մի երկրում, որը հիմնականում բնա-

12 AJHS, Box 7, Folder 3, Le Genocide (Social), undated, 3.

13 AJHS, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, undated, notecard 16, verso.

14 AJHS, Box 8, Folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, 94.

15 Sh'u Raphael Lemkin, "The Concept of Genocide in Social and Individual Psychology," reel 3, Box 2, Folder 3, Raphaël Lemkin Papers, Manuscript and Archives Division, New York Public Library, New York, 1-2:

կեցված էր ոչ հմուտ և անգրագետ մարդկանցով: Նրանք նվիրված քրիստոնյաներ էին և, ի հավելումն դրա, եռանդուն գիտնականներ: Նրանք հիմնում էին սեփական բարեգործական հաստատությունները, հիվանդանոցները և դպրոցները: Մի գրող կարծում է, որ նրանք զարգացրել են անհատականությանը բնորոշ գծեր. ժողովուրդ, որը մշտապես ենթարկվել է ճնշումների և գոյատևել անբարենպաստ պայմաններում: Այս բոլոր գործոնները խոր անդունդ ստեղծեցին նրանց և կայսրության մյուս ժողովուրդների միջև, և այդպիսով ճգնաժամի ժամանակ կասկածամտության մթնոլորտը նրանց նկատմամբ աճեց»¹⁶:

Հարկ է ընդգծել, որ Լեմկինը չի կենտրոնանում այն հանգամանքի վրա, որ երիտթուրքերը հայերին պիտակավորում էին որպես «դավաճաններ» ու Օսմանյան կայսրության համար «վտանգավոր տարրեր», իսկ մի շարք դեպքերում նրանց նույնիսկ մարդ չէին համարում ու համեմատում էին ուռուցքի կամ մանրէների հետ, որոնք պետք է ոչնչացվեին: Դրա փոխարեն Լեմկինը զուգահեռներ է անցկացնում Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի միջև՝ հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում համեմատելով հրեաների դրության հետ Գերմանիայում: Նա ընդգծում է, որ թե՛ հայերի և թե՛ հրեաների տնտեսական առաջընթացը նախադրյալներ էր ստեղծում նրանց նկատմամբ ատելության բորբոքման և ցեղասպանության իրագործման համար: «Հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում շատ նման էր հրեաների դրությանը Գերմանիայում: Հայերը կայսրության աշխատասեր քաղաքացիներն էին՝ արհեստի և մտավոր ունակությունների տաղանդով: Նրանք առևտրում ունեին նույն ձիրքն, ինչ հրեաները, և ասիական Թուրքիայում հայերն էին, ովքեր հմուտ, աշխատասեր և բիզնեսի մարդիկ էին: Թուրքիայում յուրաքանչյուր քաղաք ուներ իր բարեկեցիկ հայկական թաղամասը, տեղական արհեստագործության, մտավոր կյանքի և առևտրի կենտրոնը»¹⁷, - նշում է իրավաբանն իր ձեռագրում:

Թերևս որպես ցեղասպանությունների պատմությունն ուսումնասիրող՝ Լեմկինը հաշվի էր առել, որ Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի միջև տարվող զուգահեռները և համեմատությունները հնարավորություն են տալիս բացահայտելու ցեղասպանության իրագործմանն առնչվող որոշակի օրինաչափություններ: Ընդ որում, Լեմկինն իր թղթերում առանձնակի փաստում է, որ և՛ Հայոց ցեղասպանության, և՛ Հոլոքոստի իրագործման հիմքում ընկած է եղել հայերին և հրեաներին՝ որպես առանձին խմբերի ոչնչացնելու մտադրությունը. «[«Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի – Ն.Պ.] երկրորդ հոդվածը խոսում է կոնկրետ մարդկային խմբին ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրության մասին՝ որպես այդպիսին: Բառերն ավելացվել են այն նպատակով, որ համապատասխանեցվեն այնպիսի իրավիճակների, երբ ոչ ամբողջ խումբն է ոչնչացվում: Օրինակ՝ հրեաների դեպքում ողջ 16-միլիոնանոց հրեական ցեղը (Հիտլերի) վերահսկողության տակ չէր: Վեց միլիոն հրեաների ոչնչացումը նրա կողմից նշանակում է հրեա ազգի մասնակի ոչնչացում, որը պետք է որակվի որպես

16 AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, undated, notecard 36.

17 Նույն տեղում, Box 8, Folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, 93.

ցեղասպանություն: 1.2 միլիոն հայեր ոչնչացվեցին: 1916 թ. նրանք ներկայացնում էին հայ ժողովրդի զգալի մասը, բայց ոչ ամբողջ հայ ժողովուրդը: Այս խոսքերն արդեն հաստատում են երկրորդ հոդվածը՝ ցույց տալով, որ հանցագործները մտադիր են եղել ոչնչացնել խմբին: Ոչնչացում նշանակում է այնպիսի գործողությունների իրականացում, որոնք հանգեցնում են խմբի վերացմանը: Հրեաները, հայերը, կաթոլիկները և բողոքականներն անցյալում ոչնչացվել են միայն այն պատճառով, որ նրանք տվյալ կրոնական և ազգային խմբերին էին պատկանում: Վերաբերմունքն անհատապես հրեայի, հայի, կաթոլիկի կամ բողոքականի նկատմամբ էական չէ»¹⁸:

Մյուս կարևոր գործոնը, որով Ռաֆայել Լեմկինը պայմանավորում է Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ ատելությունը և կիրառվող հալածանքները, կրոնական դրդապատճառներն են, քանի որ, ըստ նրա, Ղուրանի հիմնարար սկզբունքները հակասում են քրիստոնեության ուսմունքին¹⁹:

Լեմկինն անդրադառնում է Ղուրանի սկզբունքին, համաձայն որի, մահմեդականությունից բացի, մյուս կրոնները պետք է ոչնչացվեն, և ներկայացնում մի աղոթք, որն օգտագործվում էր Թուրքիայում և Կահիրեի Ազհար համալսարանում տասը հազար մահմեդական ուսանողների կողմից. «Օ՛, Ալլահ, ոչնչացրո՛ւ անհավատներին, քո թշամիներին և կրոնի թշամիներին: Օ՛, Ալլահ, դարձրո՛ւ նրանց երեխաներին որբեր, պղծիր նրանց բնակավայրերը, սայթաքեցրո՛ւ նրանց ոտքերն ու նրանց հարստությունը՝ որպես ավար տո՛ւր մահմեդականներին»²⁰:

Ղուրանի որոշ հիմունքներ, ըստ Լեմկինի, ազդեցություն են ունեցել թուրքերի արարքների վրա: Նա իր գրքաչափ ձեռագրում անգամ հատվածներ է ներկայացնում Ղուրանից, որոնցում կան անհավատների դեմ պատերազմելու և նրանց սպանելու դրույթներ. ««Օ՛, մարգարե՛, պատերազմ սկսի՛ր անհավատների դեմ ու անողոր եղիր նրանց նկատմամբ, և նրանց բնակարաններում կլինի դժոխք» (զուլա 9): «Տե՛ր, ոչնչացրո՛ւ հրեաներին և քրիստոնյաներին», - Մուհամեդի վերջին աղոթքը նախքան իր մեռնելը»²¹:

Օսմանյան կայսրության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությունը, «ցեղասպանություն» եզրույթի հեղինակի պատկերացմամբ, նպատակ էր հետապնդում բնաջնջելու կայսրությունում ապրող ոչ մահմեդականներին, որոնք խաթարում էին կայսրության միատարրությունը²²: Օսմանյան իշխանություններն իրենց նպատակին հասնելու համար մահմեդականներին գրգռում էին հայերի դեմ և նախապես պլանավորել էին իրենց գործողությունները: Այնուամենայնիվ, Լեմկինն առավել մեծ նշանակություն է տալիս կրոնական գործոնին, չնայած որ իրականում օսմանյան իշխանություններն իսլամն օգտագործում էին որպես քող՝ պանթուրքիստական և հայերի հայրենիքին տիրանալու ծրագրերի իրականացման համար: Երիտթուրք պարագլուխ-

18 Նույն տեղում, Box 6, Folder 2, The Truman Doctrine, the Marshall Plan, and the U.N. Action on Genocide, March 29, 1948, 1, 2.

19 Տե՛ս նույն տեղում, Box 8, Folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, 85:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում, 86:

22 Տե՛ս նույն տեղում, 90:

ները պարզապես կարողացան շահարկել կրոնի գործոնը: Նրանք հիմնականում արեւիստներ էին ու անտարբեր էին կրոնի նկատմամբ²³: Ընդհանուր առմամբ ցեղասպանություն երևույթի իրագործման դրդապատճառները Լեմկինը դասակարգում է հետևյալ կերպ՝ անհանդուրժողականություն, կրոնական ատելություն, ռասայական ատելություն, ազահություն, իշխանության նկատառում, սպանություն ունանց ոգևորության համար և քավության նոխագ դարձները²⁴:

Այս համատեքստում էլ Լեմկինն իր նյութերում ներկայացնում է նաև երիտթուրքական քարոզչության այն յուրահատուկ դրվագները, որոնք պետք է հնարավորություն տային հայերի նկատմամբ ատելություն բորբոքելու և բռնություններ իրականացնելու: Այդպիսի քարոզչության օրինակներից էր այն, թե իբր հայերը Վանում ապստամբություն են բարձրացրել: Սակայն Լեմկինը նշում է, որ հայերի արտաքսումն սկսվել էր նախքան Վանի դեպքերը²⁵: Մյուս կողմից էլ նա նկատում է, որ թուրքերը փորձում էին իրենց մեղքը խեղդել հայկական ապստամբությունների մասին խոսակցությունների մեջ: Իսկ այդ մեղադրանքը հերքվում է թուրքական կառավարության փաստաթղթերով: «Անշուշտ, կանայք, երեխաները և ծերերը չէին կարող բոլորը ներգրավված լինել ապստամբության մեջ: Այս անմեղ մարդկանց նկատմամբ ոչ մի մեղադրանք չի առաջադրվել, բացի այն, որ նրանք հայեր են»²⁶, - նկատում է իրավաբանը:

Մյուս կողմից՝ հարկ է նկատել, որ Վանում հայերն ինքնապաշտպանության էին դիմել՝ կոտորածներին դիմագրավելու տեսանկյունից այլ ելք չունենալով²⁷: Սակայն մինչ օրս էլ թուրքական քարոզչությունը ճիգեր է գործադրում հերքելու Հայոց ցեղասպանության փաստը մի թեզով, ըստ որի՝ հայերն ապստամբել էին Օսմանյան կայսրության դեմ²⁸:

Լեմկինն ընդգծում է, որ ընդհանուր առմամբ օսմանյան իշխանությունները փորձում էին հայերին ներկայացնել որպես խռովարար տարր: Նրա անտիպ նյութերում

23 St' u Ариадна Тыркова, *Старая Турция и младотурки. Годъ въ Константинополе* (Петроградъ: тип. Б.М. Вольфа, 1916), 137; Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's story* (Garden City, N.Y.: Doubleday, 1918), 322-323; Halide Edib, *The Turkish Ordeal: Being the Further Memoirs of Halide Edib* (New York and London: The Century Co., 1928), 318; Բիֆաթ Մեվլան Զադե, *Օսմանյան յեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաչինջ ծրագիրները* (Երևան, ԿՓՀ, 1990), 70-71: Շուշան Խաչատրյան, «Երիտթուրքերի գաղափարախոսական ուղենիշները: Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը՝ կրոնի մեջ», *Տեղասպանագիտական հանդես* 4, no. 1 (2016), 131:

24 St' u Raphael Lemkin, *Lemkin on Genocide*, ed. Steven L. Jacobs (Lanham: Lexington Books, 2012), 20:

25 St' u AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, undated, notecard 3:

26 “Dr. Lemkin, Father of Genocide Convention, Reviews Work Relating to Turkish Massacres,” *Hairenik Weekly*, January 1, 1959, <http://asbarez.com/59792/lemkins-hairenik-weekly-article-50-years-later-a-powerful-reminder/>, դիտվել է՝ 07.06.2025.

27 St' u Vahakn Dadrian, *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification* (Cambridge, MA and Toronto: Zoryan Institute, 1999), 13:

28 Թուրքական թեզերի վերաբերյալ տե՛ս, օրինակ, Ahmet Can Öktem, *A Review of the 1915 Van Revolt - before and after, Arguments and Distortions*, Center of Eurasian Studies, No. 2021/63, <https://avim.org.tr/en/Yorum/A-Review-of-the-1915-Van-Revolt-Before-and-After-Arguments-and-Distortions>, դիտվել է՝ 20.02.2025; Güzin Çaykiran, “The Armenian Revolt in Van: Insights from Military History Documents,” *Review of Armenian Studies* 48 (2023): 127-155:

հայերի դեմ ուղղված կեղծ մեղադրանքների շարքում հիշատակվում է, որ երիտթուրքական կառավարությունը հրապարակեց մի գիրք՝ «Հայկական անջատողական շարժումը» վերնագրով, որը ներառում էր մտացածին հրապարակումների պատճեններ և գեղեցիկ ահռելի պահեստների լուսանկարներ: Ընդ որում, այս թեմայի շուրջ գրառման մեջ Լեմկինը ներկայացնում է Առնոլդ Թոմսիի տեսակետը, ով նշում է ցեղասպանության իրագործման հարցում թուրքերի առաջ քաշած երեք արդարացումները.

1. Հայկական ապստամբությունը Վանում (հայերը գեներ վերցրին միայն ինքնապաշտպանության համար, և պատասխանատվությունն ընկնում էր կառավարության վրա):

2. Ռազմամթերքի պաշարներ (հայերը փորձում էին պահել իրենց գեներները՝ զինված քրդերից պաշտպանվելու համար, բայց նրանց պահած գեների քանակը մեծապես չափազանցված է իշխանությունների կողմից):

3. Ռուսաստանի հայերը կռվում էին թուրքերի դեմ (ռուսները կարող էին սպանել նաև լեհական բնակչությանը, քանի որ մեկ լեհական կամավորական գունդ կռվում էր Ավստրո-Հունգարիայի կողմից)²⁹:

Նա ներկայացնում է նաև Հալեայի կառավարությանն ուղղված Թալեաթի հրամանագիրը, որում նշվում է. «Կատարելով հայերի ապստամբ գաղափարներին ու գործերին վերաբերող փաստաթղթեր ուսումնասիրելու և ձեռք բերելու իր պարտականությունները՝ Մուստաֆա Նեյլ էֆենդիի գլխավորությամբ Ուրֆա ուղարկված կոմիտեն հետաքննություն կանցկացնի... (այստեղ նշված կոմիտեն հրատարակել է «Հայկական անջատողական շարժում» հատորը)»³⁰: Այս կոմիտեն փորձեց նշված գրքում ապացուցել, թե իբր հայերն իսկապես սպառնալիք էին Օսմանյան կայսրության գոյության համար, ուստի կառավարությունն իր հերթին պարտավորվել էր աքսորել նրանց: Սակայն պարզ է, որ դա արվել էր հայերի նկատմամբ ատելություն բորբոքելու և նրանց նկատմամբ գործողություններն արդարացնելու նպատակով:

Արամ Անտոնյանն իր «Նայիմ բեյի հուշեր. հայերի տեղահանման և ջարդերի վերաբերյալ թուրքական պաշտոնական փաստաթղթեր» աշխատության մեջ նկատում է, որ նշված գրքում ամենաուժեղ ապացույցը հայերից հավաքված գեների լուսանկարներն են. «Դրանց թվում կային Կոստանդնուպոլսի մերձակա գավառներում հայտնաբերված ռումբերի լուսանկարներ: Այս ռումբերը պատրաստել է Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ համագործակցելով «Իթթիհադ»-ի կոմիտեի հետ, որպեսզի Թուրքիայում արձագանքի դեպքում, ինչպես եղավ 1909 թ. մարտի 31-ին Սահմանադրության հռչակումից անմիջապես հետո, հայերն ու երիտթուրքերը կարողանան կողք կողքի պայքարել հետադիմական ուժերի դեմ»³¹: Այնպես որ եթե նման ռումբեր էլ պահվել են, ապա երիտթուրքերը տեղյակ են եղել, և Օսմանյան կայսրության գոյության համար դրանք վտանգ չէին կարող ներկայացնել:

29 St'u AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, undated, notecard 6, verso:

30 Նույն տեղում, recto:

31 Aram Andonian, *The Memoirs of Nairn Bey: Turkish Official Documents Relating to the Deportation and the Massacres of Armenians* (London: Hodder and Stoughton, 1920), 65.

Հարկ է նկատել, որ չնայած Գերմանիայում էր, որ առաջին անգամ թուրքական կառավարությունը հրատարակեց որոշ ակբուններ՝ հայերի մեղքն «ապացուցելու» նպատակով, սակայն հենց գերմանացի պաշտոնյաներն էին հերքում դրանք: Այսպես՝ Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Հանս Փոն Վագենհայմը գեկուցում էր Բեռլին, որ Սահմանադրության ընդունումից ի վեր հայերը հրաժարվել են հեղափոխության վերաբերյալ մտքերից, իսկ Էրզրումի վիլայեթում փոխհյուպատոս Շոյբներ Ռիխտերը բազմիցս շեշտում էր, որ հայերի մոտ ոչ գեներ, ոչ կոմպրոմատներ չեն հայտնաբերվել³²: Այլ է խնդիրը, որ մի շարք հայկական բնակավայրերում ուղղակի պատրաստվել են ինքնապաշտպանության, որպեսզի կարողանան դիմագրավել թուրքական հարձակումներին:

Մյուս կարևոր իրողությունը, որին ուշադրություն է դարձրել Լեմկինս իր փաստաթղթերում, հայերի դեմ ուղղված թուրքական կեղծ քարոզչության հնարքներն են: Սրա առնչությամբ նա նշում է. «Թուրքերը չալմա էին հագցնում մահացած հայերին և քուրդ կանանց բերում նրանց վրա լացելու համար: Լուսանկարներ էին արվում՝ ապացուցելու եվրոպացիներին, որ քրդերին հայերն են սպանել»³³: Մյուս հնարքն էլ այն էր, որ թուրքական կառավարությունը պնդում էր, որ տեղահանությունների ընթացքում հայերը մահացել են բնական մահով, այլ ոչ թե սպանվել են³⁴: Եվ մինչ օրս Հայոց ցեղասպանության ժխտման հիմնական թեզերից մեկն այն է, որ 1915-1918 թվականներին հայերը հիմնականում մահացել են ոչ թե զանգվածային սպանությունների և կազմակերպված ցեղասպանության հետևանքով, այլ այլընտրանքային պատճառներով, ինչպիսիք են պատերազմական պայմանները, սովը, հիվանդությունները և ապստամբությունները: Այս թեզը բազմիցս արծարծվում է Թուրքիայի պետության, որոշ թուրք պատմաբանների և այլ ժխտողական շրջանակների կողմից:

Որպես հայերի՝ իբրև խռովարար տարրի դեմ քարոզչական մեղադրանքների արտահայտման օրինակ Լեմկինսի փաստաթղթերում բերվում է հենց հայերի արտաքսման վերաբերյալ Օսմանյան կառավարության հրամանի տեքստը. «Մեր հայրենակիցները, որոնք Օսմանյան կայսրության ազգային տարրերից մեկն են, որպես անցյալ տարիների դրդման հետևանք, ընդունել են հասարակական կարգը խանգարելու բազմաթիվ կեղծ գաղափարներ... և քանի որ նրանք համարձակվեցին միանալ իրենց գոյատևման թշնամիներին, որոնք պատերազմի մեջ են մեր պետության դեմ, մեր կառավարությունն ստիպված է ձեռնարկել արտակարգ միջոցառումներ և գոհաբերություններ անել թե՛ պետության կարգի պահպանման և անվտանգության ապահովման, թե՛ բարօրության, թե՛ հայկական համայնքի գոյության համար: Հայերին պետք է ուղարկել հեռու վայրեր...»³⁵:

Այսպիսով՝ Լեմկինը տարբեր փաստական նյութերի հիման վրա հատուկ ուշադ-

32 Տե՛ս Ռոլֆ Հոսֆելդ, *Մահ անապարտում: Հայոց ցեղասպանությունը* (Երևան, Կոնրադ Ադենաուերի հիմնադրամ, 2022), 192:

33 AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, undated, notecard 4.

34 Տե՛ս նույն տեղում, notecard 5, recto:

35 Նույն տեղում, verso.

րություն է դարձրել ոչ միայն Հայոց ցեղասպանության ժամանակ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործված դաժանություններին ու բռնություններին, որոնք ցեղասպանություն հանցագործության բաղկացուցիչ մաս են կազմում, այլև այն պայմաններին, մասնավորապես՝ Օսմանյան կայսրությունում հայերի դիրքին ու կարողություններին և նրանց ուղղված քարոզչական մեղադրանքներին, որոնք ճանապարհ են հարթել էթնիկ ու կրոնական ատելություն բորբոքելու համար:

THE INCITEMENT OF HATRED AND VIOLENCE AGAINST ARMENIANS IN RAPHAEL LEMKIN'S RESEARCH

Narek Poghosyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

The article discusses how the brutal imagery of crimes committed against Armenians in the Ottoman Empire left a profound mark on Raphael Lemkin's memory, significantly influencing the development of his ideas. These events also contributed to his formulation of the concept of "genocide" and the development of the idea of establishing a separate international convention for the prevention and punishment of this crime.

In his unfinished work *History of Genocide* Lemkin examined the mass violence carried out during the Armenian Genocide, seeking to understand the psychological responses of both the organizers of the massacres and their victims.

He emphasizes that the social status and defining characteristics of Armenians in the Ottoman Empire—particularly their economic success—played a crucial role in inciting hatred against them by the Young Turk leadership. In this regard, Lemkin draws parallels between the Armenian Genocide and the Holocaust, comparing the situation of Armenians in the Ottoman Empire to that of Jews in Nazi Germany.

Lemkin also attributes the persecution and hatred against Armenians in the Ottoman Empire largely to religious motivations. He analyzes specific aspects of Young Turk propaganda, which aimed to accuse Armenians, instill hostility toward them, and incite acts of violence.

Keywords: Raphael Lemkin, Armenian Genocide, Ottoman Empire, Armenians, violence, hatred, atrocities.

РАСПРОСТРАНЕНИЕ НЕНАВИСТИ И НАСИЛИЯ В ОТНОШЕНИИ АРМЯН В ИССЛЕДОВАНИЯХ РАФАЭЛЯ ЛЕМКИНА

Нарек Погосян,
Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

В статье рассматривается, как ужасающие образы преступлений, совершённых против армян в Османской империи, оставили глубокий след в памяти Рафаэля Лемкина, значительно повлияв на формирование его взглядов. Эти события также способствовали выработке им концепции «геноцида» и развитию идеи о создании отдельной международной конвенции для предотвращения и наказания этого преступления.

В своей незавершённой работе “История геноцида” Лемкин исследовал массовое насилие, совершённое во время Геноцида армян, стремясь также понять психологическую реакцию как организаторов массовых убийств, так и их жертв.

Он подчёркивает, что социальное положение и характерные особенности армян в Османской империи, особенно их экономические успехи, сыграли важную роль в разжигании ненависти к ним со стороны руководства младотурков. В этом контексте Лемкин проводит параллели между Геноцидом армян и Холокостом, сравнивая положение армян в Османской империи с положением евреев в нацистской Германии.

Лемкин также объясняет преследование и ненависть к армянам в Османской империи в значительной степени религиозными мотивами. Он анализирует ключевые элементы младотурецкой пропаганды, направленной на обвинение армян, разжигание враждебности к ним и подстрекательство к насилию.

Ключевые слова: Рафаэль Лемкин, Геноцид армян, Османская империя, армяне, насилие, ненависть, зверства.

REFERENCES

Hosfeld, Rolf. *Մահ անապատում: Հայոց ցեղասպանությունը* [Death in the Desert: The Armenian Genocide]. Yerevan: Konrad Adenauer Foundation, 2022;

Khachatryan, Shushan. «Երիտուրքերի գաղափարախոսական ուղենիշները: Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ» [The Young Turks' Ideological Guidelines: Religion in Politics and Politics in Religion]. *Ts'eghaspanagitakan handes* 4, no. 1 (2016);

Melvan Zade, Rifat. *Օսմանյան յեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագիրները* [The Dark Side of the Ottoman Revolution and the Armenian Genocide Plans of Ittihad]. Yerevan: KP'H, 1990;

Poghosyan, Narek. *Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում* [The Problem of the Armenian Genocide in the Studies of Raphael Lemkin]. Yerevan: AGMI, 2020;

Tyrkova, Arianda. *Старая Турция и молодотурки. Годъ въ Константинополе* [Old Turkey and the Young Turks. A Year in Constantinople]. Petersburg, B. M. Vol'fa, 1916.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Նարեկ Պողոսյան, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Վահագն Դադրյանի անվան համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից, տեխնոլոգիական առաջընթացը և ցեղասպանության իրագործման ռիսկերը, ցեղասպանությունների առանձին օրինակներ (Բանգլադեշ, Կամբոջա, Թիմոր, Անֆալ և այլն), համեմատական ցեղասպանագիտություն, էլիտիցիդ:

Էլ. փոստի հասցե՝ poghosyan.narek@genocide-museum.am

Narek Poghosyan, PhD in History, Researcher at the Comparative Genocide Studies Department named after Vahakn Dadrian, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: a study of the Armenian Genocide by Raphael Lemkin, technological progress and the risks of committing genocide, other genocides (Bangladesh, Cambodia, Timor, Anfal campaign, etc.), comparative genocide studies, eliticide.

E-mail: poghosyan.narek@genocide-museum.am

Нарек Погосян, кандидат исторических наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения им. Ваагна Дадряна Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований: изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, технологический прогресс и риски совершения геноцида, отдельные примеры геноцидов (Бангладеш, Камбоджа, Тимор, Анфаль и др.), сравнительное изучение геноцидов, элителицид.

Эл. почта: poghosyan.narek@genocide-museum.am

ՕՍՄԱՆՅԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ «ԳՅԱՎՈՒՐ» ՊԻՏԱԿԸ

Շուշան Խաչատրյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Սույն հոդվածով փորձել ենք վեր հանել օսմանյան քրիստոնյաների վերաբերմամբ կիրառվող «գյավուր» («քլյաֆիր», «անհավատ») պիտակը, որը նախ կրոնական պիտակավորում էր, սակայն լայն հասարակական, մշակութային և քաղաքական, ինչու ոչ նաև տնտեսական հետևանքներ ուներ: Սույն վերլուծությունը կատարելու ենք հայ քրիստոնյաների հանդեպ այս պիտակի կիրառման օրինակով՝ սկսելով պիտակի լեզվական ծագումնաբանության, կրոնական նշանակության ներկայացմամբ, ապա՝ նաև՝ հայ մատենագրության մեջ առկա հիշատակումների, ի հետևանք դրանց կիրառվող սահմանափակումների, թիրախավորման, մահապատիժների դեպքերի և, ի վերջո, զանգվածային սպանությունների ու ցեղասպանության ժամանակ կիրառման մեկտեղմամբ: Հոդվածում մատնանշվում է բառի կիրառմանը հետևած ապամարդկայնացման դարավոր պատմությունը՝ ուղղված քրիստոնյաների, տվյալ դեպքում՝ հայերի դեմ:

Բանալի բառեր՝ «գյավուր» («քլյաֆիր», «անհավատ»), թիրախավորում, ապամարդկայնացում, այլատյացություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 07.05.2025: Ընդունվել է տպագրության՝ 08.10.2025:

The article was submitted on 07.05.2025 and accepted for publication on 08.10.2025.

Статья поступила 07.05.2025 и была принята к публикации 08.10.2025.

Ինչպես հղել՝ Շուշան Խաչատրյան, «Օսմանյան քրիստոնյաների վերաբերմամբ կիրառվող «գյավուր» պիտակը», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 49-67:

How to cite: Shushan Khachatryan, “The Label ‘Giaour’ applied to Ottoman Christians,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025), 49-67.

Как сослаться: Шушан Хачатрян, “Ярлык «гяур», применяемый к османским христианам,” *Цехаспанагитакан андес* 13, no. 2 (2025), 49-67.

Մուտք

Ցեղասպանությունների ամենաբնորոշ գծերից մեկը տվյալ խմբի մարդաբանական թիրախավորումն է, որի հետևանքով այդ խումբը կամ հավասարեցվում է կենդանական մակարդակին, կամ դեմոնիզացվում՝ դիվայնացվում, այսինքն՝ նրան վերագրվում են ոչ մարդկային ստորակարգ կամ ծայրահեղ բացասական բարոյական գծեր¹:

Ինչպես մյուս ցեղասպանությունների դեպքում, այնպես էլ Հայոց ցեղասպանության պարագայում այդպիսի պիտակավորումներն առկա են: Հայերիս պարագայում «գյավուր» («անհավատ») պիտակով կոչվելը (կրոնական վերաբերմունքն ու մարդա-

1 Shu Jerry S. Piven, “Lord of the Flies as Parable of the Invention of Enemies, Violence and Sacrifice,” in *Jihad and sacred vengeance*, Volume III. Psychological Undercurrents of History, edited by Piven J. S., Boyd Chr., Lawton H. W. (Lincoln, NE: Writers Club Press, 2002), 135:

բանությունը) և դրա հետևանքով բռնությունները, կոտորածներն ու ցեղասպանությունը քննելը սույն հոդվածի առանցքն է լինելու:

Ցեղասպանագետ Գրեգորի Սթենթոնի առանձնացրած ցեղասպանության տասը փուլերի առաջին չորս կետերն առնչվում են պիտակավորումներին, և դրանց սերտորեն առնչվող մյուս աստիճանները խոսում են ցեղասպանությունների իրագործման հարցում դրանց ազդեցիկ ու էական դերի մասին.

I. դասակարգում,

II. խորհրդանշացում,

III. խտրականություն,

IV. ապամարդկայնացում,

V. կազմակերպում,

VI. բևեռացում,

VII. պատրաստում,

VIII. հալածանք,

IX. բնաջնջում,

X. ժխտում:

Հանրահայտ է, որ օսմանյան իսլամը քրիստոնյաներին կոչում էր «գլավոր», ճանաչում իբրև հպատակ, ստորակարգ միավոր, որոնք, քանի դեռ հպատակ վիճակում էին, լինելու էին օսմանյան իսլամի ուժային գերակայության ներքո և համարվելու էին տանելի: Սակայն փաստ է, որ օսմանյան քրիստոնյաները, չնայած թուրքական իսլամի քաղաքական ենթակայության տակ լինելուն, մշակութային, գիտական ու կրթական բարձր աստիճանի վրա էին, ինչը չի կարելի ասել օսմանյան իսլամադավան խավի մասին: Հարատև համեմատությունը, քրիստոնյայի ունեցվածքը, դիրքն ու բազմաթիվ բնագավառներում գրանցած հաջողությունները հակադրվողի ու հակառակորդի ինքնընկալում ու մտակառույց ունեցող կողմի համար ճանաչողական ու բարոյական ճգնաժամերի հիմք հանդիսացան: Շատախցի վերապրող Սերոբ Քոսյանը հայերի հանդեպ այս զգացումներն ու վերաբերմունքն այսպես էր նկարագրում.

....մանավանդ մեր շրջանի քյուրդերը, կիսավայրենի են, բավական է, որ իրենց աղան կամ մոլլան, կամ շեյխը հայտարարեն, որ հայերը գավուր, մուխտառ են, և ահա կոտորածը պատրաստ է, մանավանդ որ թյուրք կառավարությունը ոչ մի միջոց ձեռք չի առնում այդ բարբարոսություններին վերջ տալու և շատ դեպքերում էլ ինքն է ամիթ տալիս իրարու ջարդելու համար: Փաստորեն, հայերը շատ բարձր են քյուրդերից: Մենք թե գրագետ [ենք], ունենք դպրոցներ, գրադարաններ, ստանում և կարդում ենք շատ թերթեր, սովորում շատ բարձրագույն դպրոցներում, շփվում շատ ժողովուրդների հետ, մեր առևտրականները մանավանդ լինում են շատ երկրներում, շատ մաքուր հագնված և տներում մաքուր, բայց այդ բոլորից հետո հայերիս գավուր և մուխտառ են ասում²:

2 Սերոբ Քոսյան, «Նորահայր» Շաքրախը. Հայոց ցեղասպանությունը վերապրած շաքրախցու հու-

Ժամանակակից վկայությունների հավաքածուի՝ «Հրանտ Դինք» հիմնադրամի՝ «Լուռության ձայնը» խորագրով շարքի գրքերից առաջինում նման միտք է արտահայտվում հետևյալ համատեքստում.

Հայրս ասաց. «Քեզ գյավուր են ասելու, մյուսներին էլ են ասում, բայց ձայն չեն հանում, քեզ չեն սպանի, ծեծդ կեր, ձայն մի՛ հանիր, արի՛ տուն...»: Յոթնութ տարեկան էի, երբ մեծ մարդիկ ինձ ականջներիցս բռնած՝ գետնին էին զարկում ու ասում. «Գյավուր է, ոսկորը չի ջարդվի, պինդ է».... Երբ մեզ հայ էին ասում, հպարտություն էի զգում: Նախընտրում էի, որ գյավուրի փոխարեն հայ ասեն: Քրդերն ասում էին. «Ալլահը այս գյավուրներին խելք է տվել, սրանք մեզնից խելացի են, բայց մենք ենք դրախտ գնալու»: Այդպես էին մխիթարվում: Դա էլ էր ինձ դուր գալիս³:

Առհասարակ պատումների այս շարքի գրեթե բոլոր վկայություններում հիշատակվում են խորհրդանշացված «գյավուր»/«անհավատ» պիտակավորման դեպքերը՝ որպես թշնամու, ծածուկ վատություն անողի ու չարիք նյութողի, դիվային գիտելիքի տեր, ստորակարգ մարդկանց տեսակի: Ակնհայտ է, որ հետցեղասպանական Թուրքիայում հայերի մնացորդացը շարունակում էր ընկալվել նշված բացասական գծերով, և այստեղ կրեերենք այդպիսի ամենապատկերավոր օրինակներից միայն մեկը՝ այնուհետև անցում կատարելով երևույթի իմաստաբանությանը:

Դիարբեքիրում՝ Տիգրանակերտում ծնված մի անձ պատմում է, որ իրենք ապրում էին քաղաքի «Գյավուրի թաղ» կոչվող հատվածում: Հինգ տարեկան է եղել, երբ «գյավուր»-ի թեման մեծ աղմուկի պատճառ է դարձել իրենց թաղամասում: Հարևան իսլամադավանի աղջիկը գնացել է նրանց բակ, խաղացել են, հետո այդ աղջիկը սկսել է արտասվել՝ ասելով. «Դուք հայ եք, դուք ասեղներով օրորոց ունեք.... ինձ մեջն եք դնելու, արյունս թափվելու է»: Երեխան լաց է եղել, մայրը վրա է հասել, և «Ա՛յ գյավուրներ, ի՞նչ եք արել երեխայիս» արտահայտությունից, հայ մեծահասակների ներգրավումից հետո մեծ աղմուկ ու կռիվ է ծագել թաղամասում⁴: ««Գյավուր» բառը հանրապետական տարրական դպրոցում սովորող երեխաներից էի լսում: Երբ դպրոցը փակվեց, մեր դռան վրա քար նետեցին, կավիճով մեր դռան վրա խաչ էին գծում. գիտեին՝ ով ենք.... -Սա գյավուրներինն է, դե՛ , նետե՛ք քարերը»⁵:

Հատվածից երևում է, որ իսլամադավաններն իրենց երեխաներին հայերից հեռու պահելու համար դեռևս դարերից եկող մի բան էին անում. սնահավատական, չար պատում էին ներարկում իրենց երեխաների մեջ, որ վերջիններս վախենան, զգուշա-

շագրություն, «Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ» 14, խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Էլիսա Միրզոյան (Երևան, ՀՅԺԻ հրատ., 2025), 121:

3 Լուռության ձայնը I. Խոսում են Թուրքիայի հայերը, կազմող՝ Ֆերդա Բալանջար, նախաբանը՝ Ալի Բայրամօղլուի, վերջաբանը՝ Արուս Յումուլի (Երևան, «Հրանտ Դինք» հիմնադրամի հրատ., 2021), 31:

4 Տե՛ս Լուռության ձայնը II. Խոսում են Դիարբեքիրի հայերը, կազմող՝ Ֆերդա Բալանջար, առաջաբանը՝ Ալի Բայրամօղլուի, վերջաբանը՝ Արգու Օզթուրքմենի (Երևան, «Հրանտ Դինք» հիմնադրամի հրատ., 2021), 38-39:

5 Նույն տեղում:

նան, հեռու մնան, և համապատասխան վերաբերմունք ձևավորվի նրանց մեջ: Այսպիսի պատումներ պատմվում էին նաև այն հայ երեխաներին, որոնց բռնի տեղափոխում էին իսլամական ընտանիքներ, և որոնց մի փոքր մասի վերահայացման գործը ստանձնել էր Կ. Պոլսում գործող Չեզոք տունը և մեզ փոխանցել այդ հայ երեխաների պատմությունները⁶:

**«Գլավուր» բառի իմաստաբանությունը:
Քուֆր՝ մեծ քուֆր և փոքր քուֆր**

Թուրքերեն *գլավուր* բառն առաջացել է արաբական համարժեքից՝ *քաֆիր/քյաֆիր* (արաբ. کافر, լատինաբան. kâfir) «ծածկել» արմատից, որը ժամանակի ընթացքում ձեռք է բերել իմաստային հավելյալ շերտեր: Բառը մատնանշում է իսլամի մեջ մարդու՝ անհավատի, որն իր անհավատությունը հաստատում է բառերով, նաև մարդու, որը պատկանում է այլ կրոնի, օրինակ՝ քրիստոնյա է: Այն նշանակում է նաև «անշնորհակալ, երախտամոռ»⁷: Կա նաև պարսկական համարժեքը՝ պարսկ. گبر (gäbr) «կրակապաշտ», արամեերեն gabrā «մարդ, այր», նախասեմական gabr-. արմատից, որտեղ, ինչպես տեսնում ենք, բառը, այնուամենայնիվ, սեմական ծագման է: *Քաֆիր*-ի/*գլավուր*-ի հակադիր հասկացությունը *մուսին*-ն է՝ իսլամ հավատացյալը, իսկ *քուֆր*-ի հակադիրը՝ *ինսան*-ը՝ «հավատք/կրոն»: *Քաֆիր* բառը کافر բայի գործադիր մասնիկն է՝ kafara کفر K-F-R արմատից:

Որպես մինչիսլամական եզր՝ այն մատնանշում էր հողի մեջ սերմերը թաղող հողագործներին: Դրա կիրառություններից մեկը Ղուրանում նույնպես ունի նույն նշանակությունը՝ «հողագործ լինելը»⁸: Քանի որ հողագործները ցանելիս հողով են ծածկում սերմերը, *քաֆիր* բառը ենթադրում է «ծալված, թաքնվող կամ սքողված անձ», նույնն է թե՛ «ճշմարտությունը թաքցնող կամ ծածկ(վ)ող մարդ» (Սուրահ ալ Հադիդ, «Երկաթ» (57)): Արաբ բանաստեղծները երբեմն անձնավորում են գիշերվա խավարը որպես *քյաֆիր*, որը ևս, ինչպես նշում են մասնագետները, հավանաբար հնագույն՝ մինչիսլամական հավատալիքներին է վերաբերում⁹: Հողագործության մատնանշումն իր տրամաբանական մեկ այլ հենք գտնում է այս անգամ հնդեվրոպական լեզվաընտանիքի մեկ այլ լեզվում՝ քրդերենում. քրդերը հայերին մասնավորապես ու քրիստոնյաներին ընդհանրապես կոչում էին *ֆլա*, որը նշանակում է «գյուղացի-հողագործ»:

Ավստրալացի ցեղասպանագետ Բեն Կիերնանը դիտարկում է հազարամյակներ

6 St'yan Edita Czoyan, Regina Galustyan, Shushan Khachatryan, "Reclaiming Children after the Armenian Genocide: Neutral House in Istanbul," in *Holocaust and Genocide Studies*, Vol. 33, Issue 3 (Winter 2019): 403: St'yan նաև Էդիտա Գզոյան, Ռեգինա Գալուստյան, Շուշան Խաչատրյան, Էլինա Միրզոյան, *Հայ երեխաների թուրքացումը Հայոց ցեղասպանության տարիներին* (կոլեկտիվ մենագրություն) (Երևան, ՀՅԹԻ հրատ., 2022), 148, 230:

7 St'yan *A Concise Encyclopedia of Islam*, by Gordon D. Newby (Oneworld Publications, 2002, Reprinted 2004), 120:

8 St'yan *Encyclopaedia of Islam*, Second Edition. Vol. 4, Bosworth, C. E., van Donzel, E. J., Heinrichs, W. P., Lewis, B., Pellat, Ch., Schacht, J. (eds.) (Leiden and Boston: Brill Publishers, 1997), doi:10.1163/1573-3912_islam_SIM_3775:

9 St'yan https://www.gutenberg.org/files/48967/48967-h/48967-h.htm#Page_193, դիտվել է՝ 27.01.2025:

ի վեր խաշնարած (իմա՝ քոչվոր) և հողագործ (իմա՝ նստակյաց) մարդկանց պայքարը որպես ցեղասպանությունների հիմք, որտեղ հողագործները, հատկապես մեր տարածաշրջանում, դեռևս վաղուց հաստատված ընկալմամբ, հողի դիվային, թաքնագիտական (օկկուլտ) պաշտամունքի հետևորդ և տարածող էին համարվում¹⁰։ Այս համատեքստում է նաև հասկանալի դառնում, թե ընդհուպ Հայոց ցեղասպանության տարիները ինչպես էր ձևավորվել ատելության և այլատյացության միջավայր հենց կրոնական այս հասկացության հիման վրա, ընդ որում՝ ոչ միայն թուրքերի, այլև քրդերի շրջանում։ Բառի իմաստային դաշտում հասկացվում էր «մութ ուժերի հետ համագործակցող ու նրանց ծառայող, բարոն ու աստվածայինին չծառայող մարդ և մարդկանց խումբ/տեսակ»։

Ստեփանոս Մալխասյանցի բառարանում «գլավոր» բառը բացատրվում է որպես «Ոչ հաւատացեալ, ոչ մահմետական. նախատական անուն, որով կոչում են մահմետականներն այլակրօններին»։ Ապա բերվում են օրինակներ. «Դու մուսուլման ես թե գեաւոր», «Գեաւորների տունը պիղծ է մուսուլմանի համար»¹¹։

Հայ իրականության մեջ բառը նաև գործածվել է ոչ թե կրոնական՝ «անհավատ» իմաստով, այլ հիմնականում «անխիղճ», «անողոր» իմաստով, օրինակ՝ Արցախի բարբառում¹²։

Բառը «kufir» ձևով գտանք նաև «Օքսֆորդի իսլամի բառարանում»՝ հետևյալ համատեքստում.

Անհավատություն։ Իսլամական մտքի կարևոր հասկացություն *քուֆր* բառը կամ դրա ածանցյալներից որևէ մեկը Ղուրանում հանդիպում է 482 անգամ։ Նաև նշանակում է «երախտամոռություն»՝ «Ալլահի տված շնորհները գնահատելու ինքնակամ մերժում, հրաժարում»։ Ժամանակակից բարեփոխումները հայեցակարգին տալիս են նոր նշանակություն. համարվում է, որ ներկայիս մուսուլմանական հավատալիքներն ու սովորույթներն այնքան են ապականվել ճշմարիտ իսլամից, որ առաջացնում են *շիրք* (կոապաշտություն) կամ *ջահիլիա* (տգիտություն)։ Մինչ արդի շրջանի բարեփոխիչները հակված են *քուֆր* տեսնել ժողովրդական իսլամի մեջ, այդ թվում՝ սուֆիական սովորույթների, ժամանակակից որոշ բարեփոխիչներ Արևմուտքի համատարած ազդեցությունը համարում են *քուֆրի* պատճառ¹³։

Մեծ *քուֆր*-ը (*քուֆր աքբար*) նշանակում է «ոչ իսլամադավանի հոգևոր վիճակ, անհավատություն, որը մարդուն դուրս է թողնում իսլամի շրջանակներից»։ Փոքր *քուֆր*-ը

10 St'u Ben Kiernan, *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur* (New Haven: Yale University Press, 2007), 1-40:

11 Ստեփան Մալխասյանց, *Հայերէն բացարդական բառարան* (Երեւան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944), 441:

12 Տե՛ս Դաշտային նյութեր, ասացող՝ Ս. Ս., հարցազրուցավար՝ Շուշան Խաչատրյան, 22.12.2024 թ.:

13 *Kufir*, The Oxford Dictionary of Islam, <https://www.oxfordreference.com/display/10.1093/oi/authority.20110803100044658>, դիմվել է՝ 27.01.2025:

(*քուֆր ասդար*), ընդհակառակը, վերաբերում է մեղքի, անմաքրության ու դրանցից բնականորեն ծագող անհավատության այն ձևերին, որոնք թեն չեն հեռացնում մարդուն իսլամից, բայց նվազեցնում են նրա հոգևոր վաստակը:

Այնպիսի հանրագիտարաններում, ինչպիսին է, օրինակ, «Encyclopedia of Islam and the Muslim World»-ը (Editor in Chief Richard C. Martin, Macmillan Reference USA, 2004), այս բառերը բացակայում էին:

Պատմական ակնարկ

Փաստորեն, ատելությունն ու թշնամանքն ունեին կրոնական մարդաբանությանը ներհատուկ պատճառներ, ավելին՝ ասվում էր, որ քրիստոնյա-անհավատներն Իբլիսի ժողովուրդ են՝ Ալլահի ժողովրդին անսահման հակառակ, և որպես Իբլիսի ժողովուրդ՝ լավը, բարին ստեղծելու անկարող¹⁴: Սա էր էական պատճառներից մեկը, որով բացատրվում է, թե ինչու է բռնության մշակույթը բարձր, քրիստոնյաները՝ անընդմեջ ու հարատև թիրախավորված, ինչպես նշում է Հրաչյա Աճառյանը.

Ամեն երկրի մեջ՝ ուր կան տիրողներ և նուաճուածներ, խտրութիւնը այս երկու տարրերի մէջ երևում է: Տիրող տարրը աշխատում է ճնշել նուաճուած տարրին, կամ աւելի մեղմ խօսելով՝ չի ճանաչում նրան իբրև իր հաւասարը: Այսպիսի դրութեան մէջ էր գտնուում նաև հայը Տաճկահայաստանում:

Բայց Տաճկահայաստանի մէջ կային նաև երեք ուրիշ ծանր հանգամանքներ. – Ղուրանը, Քրդերի բարբարոսութիւնը և տաճկական ապիկար Կառավարութիւնը:

Ղուրանը քարոզում էր անհաշտ ատելութիւն քրիստոնէաների դէմ. նրանց անուանում անհաւատ գեաւոր, նրանց վկայութիւնը, երդումը չէր ընդունում դատարանի առաջ, նրանց ինչքը, կեանքը և պատիւը իբրև մի շնորհ էր ճանաչում սուլթանի կողմից. վերջապէս քրիստոնէային մահմետականի ստրուկն էր համարում:

Քրդերը՝ ոչ միայն մահմետական, այլ և բարբարոս ժողովուրդ, որ շրջապատում էր հայ տարրին գրեթէ ամեն տեղ, չճանչնալով ոչ օրէնք և ոչ արդարութիւն, անունով միայն հպատակ Սուլթանին, հանդիսանում էին հայերի իբրև երկրորդ տէրը, շատ տեղ նրանց հարկատու էին դարձրել, և իրենց աւագակային յարձակումներով, թալանով ու սպանութիւններով սարսափ էին գցում հայ ժողովրդի վրայ¹⁵:

Օսմանյան բռնաճնշումները վկայված էին անհիշելի ժամանակներից՝ ոչ իսլամադավանների և հատկապես քրիստոնյաների վրա դրված ծանր հարկերով, մարդկային

14 Իբլիսի, այսինքն՝ սատանայի համար գործիք հանդիսացող միավոր, որը դիմադարձում է Ալլահի ժողովրդին, այսինքն՝ մուսուլմաններին: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հետևյալ գրքում. Շուշան Խաչատրյան, *Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրադրոճման մեջ* (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020), 53-54:

15 Հրաչյա Աճառեան, *Տաճկահայոց հարցի պարմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.)* (Նոր Նախիջևան, տպ. Ս. Յ. Աւագեանի, 1915), 1:

կորուստներով, քրիստոնյաների գլխին հարատև կախված վտանգներով՝ կոտորածի և իսլամանալու պարտադրանքների, մանկաժողովների կամ *դևշիրմեի*¹⁶ արյան տուրքի գանձման, թիրախավորումներով՝ ուղղված առ կրոնը, արժանապատվությունը, ծնողներն ու ընտանիքը, առօրեական բազում սահմանափակումներով. «Բայեան մայթեն վար պիտի իջնէր՝ իսլամին տեղ տալու համար, և շատ շատ էշ կրնար հեծնել, իսկ չէր կրնար շղարշ առնել գլխուն վրայ. Ինչպէս 1582ին գրչագրեալ ձեռագիրի մը յիշատակարանը կ'ըսէ թէ Մուրատ Գ. (1574-1594) «արաւ ասալս (կարդաւ եասալս) գ-Քրիստոնէ ազգին, գտուլպանտ ի գլխունս առին եւ շափսայ դրին»»¹⁶: Հետագայում կաշառքով այդ իրավունքը վերագտնում են¹⁷:

18-րդ դարում քրիստոնյաների համար նաև հատուկ գույնի հողաթափերի ու հագուստի, մասնավորապես վերնահագուստի, սամույրի մուշտակի արգելքներ են սահմանվում, տրվում բաղնիքներում հատուկ կտավով փաթաթվելու հրամաններ, որ տարբերվեին իսլամադավաններից, իսկ տղամարդկանց դեպքում նաև մորուք ունենալու արգելքներ են դրվում: Հատկապես վերջինի պատճառով տղամարդիկ հեռանում էին կայսրությունից¹⁸:

Հ. Աճառյանի ու Հ. Մանանդյանի «Նոր վկաներ» աշխատության մեջ (1903)¹⁹, որում հավաքված են նոր վկայության²⁰ դեպքերը, արձանագրված է *գյավուր* կամ *քաֆիր* բառը որպես հայհոյանք ու «հայհոյիչ» միաժամանակ, ընդ որում՝ «իսլամի հայհոյիչ» նրբերանգով, որը համահավասարվում էր «քրիստոնյա լինելուն»: *Զֆրեյ/քրֆեյ* հասկացությունը, որը հիմա էլ հայերի շրջանում տարածված է, հատկապես առօրյայում, վեճերում, հենց «հայհոյել» նշանակությունն ունի, որը ծագմամբ, իհարկե, իսլամական է: Այսինքն՝ քրիստոնյաներին *գյավուր* կամ *քաֆիր* անվանելով՝ մատնացույց էր արվում այն, որ նրանք ոչ միայն իսլամն էին հայհոյում չկրոնափոխվելով, այսինքն՝ արհամարհելով, մերժելով, չընդունելով *հաքք դինը*՝ «ճշմարտի հավատքը» կամ իսլամը, այլև հենց իրենք էին տեղով հայհոյանք, նրանց գոյությունն իսկ հակառակ էր Ալլահին: Այսինքն՝ քրիստոնյան հայհոյանք էր ընկալվում, նրա ծագումն ու էությունը հայհոյանք էին ընդդեմ Ալլահի, և, ըստ այդմ, քրիստոնյաների բնական գծերի մեջ էին ներառվում անհնազանդությունը, ապերախությունը, անողորմությունը, թշամոլությունը, ծայրահեղ ու արմատական հակադրությունն ամենայն իսլամականին:

Հակոբ Մանանդյանի և Հրաչյա Աճառյանի «Նոր վկաներ»-ում կան այդպիսի գործածության դեպքեր: Բերենք մի քանի օրինակներ:

16 Արշակ Ալաոյաճեան, *Պատմութիւն Եդուկիոյ հայոց. տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկութիւններով* (Կահիրէ, Տպարան «Նոր Աստղ», 1952), 342:

17 Տե՛ս նույն տեղում:

18 Տե՛ս Արշակ Ալաոյաճեան, *Պատմութիւն Հայ Կեսարիոյ*, Ա. հատոր (Կահիրէ, տպ. Յ. Փափագեան, 1937), 649-651:

19 Տե՛ս Յակոբ Մանանդեան, Հրաչեայ Աճառեան, *Հայոց նոր վկաներ* (Վաղարշապատ, 1903):

20 *Նոր վկա, նորավկա, նոր նահապուկ*, հուն. νεομαρτυς = նոր մարտիրոս: Իսլամական տիրապետության շրջանում կամ իսլամադավանների կողմից մարտիրոսված քրիստոնյա: Եզրույթը կիրառվում է ինչպես արաբական տիրապետության շրջանում, այնպես էլ հետագայում՝ Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակ նահատակված քրիստոնյաների առնչությամբ:

Օրինակ՝ խոսվում է 1642 թվին նահատակված տիգրանակերտցի Նիկողայոսի մասին, որի նահատակության պատմության մեջ, ինչպես դատարանի առաջ ներկայացված մյուս բոլոր ամբաստանություններում, նշվում է, որ նա հայեղել՝ «քֆրել» է Մահմեդին, թեև պատանին հանձն է առնում, որ «քֆրել» է իրեն վիրավորող Մահմեդի մորը, քանի որ նրանք՝ իրեն վիրավորողները, ցանկասիրությամբ իրեն առաջարկություններ էին արել։ Դատավորն ասում է, որ այդ ամբաստանությամբ նրան կենդանի չեն թողնի, ուստի առաջարկում է նրան իսլամանալ, որպեսզի փրկի կյանքը, քանի որ դա էր մահվան այլընտրանքը, ինչին Նիկողայոսը կրկնաբար չի համաձայնում։ Ի վերջո նրա ոտքերն ու ձեռքերն են կտրում, ինչը տարածված կոտանք էր²¹։

Եհարց դատաւորն ի Նիկողայոսէ թէ արդարն հայեղեա՞ց զպատգամաբերն զՄահմետ։

Ետ զպատասխանի Նիկողայոս. «Ես ոչ հայեղեցի և ոչ բան ինչ ասացի պատգամաբերին Մահմետի, այլ այրս այս օրս ախտաւոր ցանկութեամբ փարէր զինն ի մէջ մարդկանց և ամօթով առնէր զիս. Վասն որոյ և ես զմայր սորա քֆրեցի»։

Իսկ այս Մահմետս՝ որ խաղայր ընդ Նիկողայոսի, դատախազ լինէր թէ զՄահմետ զպատգամաբերն քֆրեաց. Այլ և ասաց «ունիմ ահաւասիկ երկու այր վկայ», զոր և ածեալ կացոյց զարսն առաջի դատաւորին, միոյն անուն ասէին պաղալ Ալլահվերտի և միսոյն հալվաչի Սէյիդ. Որոց եկեալ առաջի դատաւորին, վկայեցին թէ «Մեք լուաք ի դմանէ որ քրֆեաց Մահմետին»²²։

1691/2 թ. նահատակված Սարգիս սարկավազ Կարսեցու պատմության մեջ նշվում է, որ երիտասարդը մի օր տեսել է մի մոլլայի իսլամ հավատքը գովերգելիս և նախատել նրան։ Մոլլան ոխը պահած գնացել է նրա խանութն ու պահանջել իրեն ձրի մուշտակ ու այլ հագուստ տալ, այլապես բռնորին կասի, որ նա հայեղիչ է, այսինքն՝ հայեղել է իսլամը, որի հետևանքը «ղաղիի»՝ դատավորի մոտ տարվելուց հետո նրա մահապատիժը և/կամ իսլամացումն էր լինելու։

Ասէ Սարգիս. «Տճօր զգինն, և ես տաց քեզ զոր ինչ կամիս»։

Եւ նա ասէ. «Այնպէս ձի տուր ինձ. Ապա թէ ոչ՝ մատնեմ զքեզ ի կորուստ, զի դու այն օրն հայեղեցեր զօրինադիրն մեր զՄահմետ»։

Եւ զայս ասացեալ՝ աղաղակեաց առ մերձակայ եղեալ տաճիկսն և ասէ.

21 Այդպիսի մի դրվագ է նաև Պելագիո Կորդովացու մարտիրոսությունը՝ Իսպանիայում հայտնի մի մարտիրոս պատանու, որի վկայաբանությունը, ի դեպ, նույն համատեքստում է պատահում Իսպանիայի առաջին արաբ խալիֆի՝ Աբդուլ առ-Ռախման 3-րդի ձեռքով 10-րդ դարում։ Դրվագը պատկերել է Ժամանակակից մի իտալացի նկարիչ՝ Ջովաննի Գասպարրոն, և, իհարկե, կան նաև հին պատկերներ։ Հետաքրքիր է, որ այդ դրվագում Գասպարրոն պատկերել է արաբ խալիֆին ավելի շուտ թուրք պաշտոնյայի կամ սուլթանի հագուստով ու ֆետով (տե՛ս Manuela Antonacci, La Denuncia di Gasparro, <https://lanuovabq.it/it/ddl-omofobia-anche-lautore-di-questo-quadro-rischierebbe>, դիտվել է՝ 12.12.2024)։

22 Մանանդեան, Աճառեան, *Հայոց նոր վկաներ*, 450։

«Եկա՛յք, տեսե՛ք, որ այսպիսի մանուկ քֆրէ փեղամբարին մերոյ, և դու ներեք»:

Եւ առժամայն գրոհ տուեալ յենկիչարիքն՝ ըմբռնեցին զպատանին և կապեցին և չարաչար հարկանէին: Եւ Սարգիսն լայր և աղաղակէր՝ ասելով թէ «Զուր ասէ դա ի վերայ իմ. ես ոչ գիտեմ զոր ասէ զբանդ զայդ»: Սակայն նոքա ոչինչ ունկն դնէին նմա, այլ առեալ տարան առ դատին և ասեն. «Պատանիս այս հայիոյեաց օրինադիրն մեր. զի՛նչ հրամայես»:

Եւ նա վճիռ եհատ ասելով. «Կամ տաճկացի, կամ քարկոծեսցի»²³:

Ինչպես երևում է, եթե իսլամադավանը ներում էր կամ չլսելու էր տալիս «անհավատի» *քուֆրը*, նա ևս «հայիոյիչ» էր դառնում, գործակից ու մեղսակից «հայիոյանքին», ուստի մահվան այլընտրանքն իսլամ ընդունելն էր: Զարմանալի է, որ իրենց տեսակետով այսպիսի «հայիոյիչներին» նրանք ստիպում էին իսլամ ընդունել. չէ՞ որ պետք է այնքան էլ ցանկալի չլիներ այդ նույն «հայիոյիչներին» ընդունել իրենց սրբազան հավատի մեջ:

Հետաքրքիր երևույթ էր հատուկ հրամանագրերի առկայությունը, որոնց միջոցով միայն կարելի էր թաղել մահացած քրիստոնյային.

Իսլամ թուրքերուն այն համոզումը տուած էին թէ, իսլամ երկիրի մը մէջ ոչ-իսլամին բնակութիւնը շտրիք մըն էր, քանի որ անոր շնչած օդը և գործածած ջուրը՝ որ իսլամին նուիրական իրաւունքն էր, իր անարժան մարմնոյն գոյութեանը և պահպանութեանը համար, իսլամին կողմէ կը շտրիհուէր. Նոյնիսկ ոչ-իսլամին իբր գերեզման տրուած հողը, իսլամին երկիրին մէջ, շտրիքի և գթութեան գործ մը նկատուած էր, ինչպէս կը հաստատեն այն հրամանագիրները զորս միւֆթիները տուած են քրիստոնէից թաղումը արտօնելու համար²⁴:

Ինչ հրամանագրերի մասին է խոսում Արշակ Ալպոյաճյանը: Խոսքը թաղումներն արտոնելու գրությունների մասին է, որոնց տեքստերում ծայրահեղ վիրավորական արտահայտություններով մոլլան թույլ էր տալիս քահանային տանել-թաղել քրիստոնյա հային, եթե հատկապես այդ թաղման թափորը պետք է անցներ մուսուլմանական թաղամասով: Յոգդաթում, օրինակ, հետևյալ հրամանագիրն էր տարածված, որն ամեն անգամ լրացվում էր ըստ նոր հանգուցյալ քրիստոնյայի անվան.

[տրված են հայատառ թուրքերեն տեքստն ու դրա թարգմանությունը – Շ. Խ.]

Կուպրի նման սեւ հագուստ հագած,

Սատանայի թագը գլխուն կրող

Ո՛վ ծեր քահանայ

Այս անհաւատին եւ անառակին [թուրք.՝ *Շու քէֆիրէ ֆեճէրէնին* – Շ. Խ.] որ կը

23 Նույն տեղում, 529:

24 Ալպոյաճեան, *Պատմութիւն Եդրնկիոյ հայոց*, 341:

կոչուի *Անուն եւ Մականուն* նեխած ու հոտած դիակը որքան որ ալ, հողն անգամ, չ'ընդունիր, բայց որպէսզի անոր նեխած եւ գարշահոտ դիակէն վնաս չհասնի դէպի Հարաւ երեք հարիւր վաթսուն եւ վեց քայլ հեռաւորութեան վրայ խորունկ փոս մը փորելով՝ զայն երեսն ի վար հոն նետեցէք²⁵:

Բովանդակությունն ամբողջովին կրոնական է, հավատալիքային, ապամարդկայնացումը՝ ակնհայտ: Հենց սկզբից գործածվում է «քէֆիր/քաֆիր» բառը, որի դիակը, հենց նույն այդ հավատալիքային դաշտի համաձայն, հողը չի ընդունում, և նա պիտի թաղվի երեսն ի վար իր անմաքուր և աստվածամերժ ընթացքի համար: Այս հրամանագրերը ցույց էին տալիս թիրախավորման խորությունը, ճշումների կրոնական բովանդակությունն ու առօրեականությունը:

Քիչ չէին այն դեպքերը, երբ հայերը մզկիթներ էին կառուցում մուսուլմանների համար: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ եթե տվյալ բնակավայրում եկեղեցի չկար, նախ հայերը հոգում էին մզկիթի կառուցումը, քանի որ, առանց դրա, եկեղեցի կառուցելու թույլտվություն գրեթե անհնար էր ստանալ. «Հետզհետե՛ աճող, ուռճացող հայ բնակչությունը անհրաժեշտօրէն պէտք ունի եկեղեցւոյ, սակայն *կեալուրը, րայսն*, իր նպատակին կրնայ հասնիլ ոլոր մոլոր ճամբաներով միայն: Չափանօղլու Օսմանին աչքի բիրն է Օհան, սակայն մեղք որ *կեալուր* մըն է: Կրօնական մոլեռանդութիւնը ամենամեծ ամէն շինարար աշխատանքի ու հետագայ արգելքները կանխելու մտահոգութեամբ, Օհան կը ծրագրէ նախ մզկիթ շինել, եւ ապա՝ ձեռնարկել եկեղեցիի կառուցման»²⁶: Այսինքն՝ համայնքի կյանքի կազմակերպումը քրիստոնյայի համար դժվարությամբ էր տրվում, սեփական բարգավաճման նշանները, առաջընթացի ձգտումները սքողվում էին, և նախ պետք է հոգ տարվեր, որ մուսուլման բնակչությունը «հետ չմնար» որպէս առաջընթաց ընկալվող որևէ երևույթից, լինի կրոնական շենքի կառուցում, նոր արտադրություն, թե այլ երևույթներ:

Երբեմն «անհավատ» բառը հատուկ անվան նման գործածվում էր՝ մատնանշելու համայնքի թաղը, փողոցը, մասնագիտությունը, ինչպէս բազմաթիվ քաղաքներում հայտնի էին «քէֆիրլեր մահալեսիները», կամ ինչպէս Քյոթահիայի հախճապակեգործերն էին անվանվում՝ «չինճի քիֆրասը» (բառացի թարգմանությամբ՝ «հայիոյիչ հախճապակեգործներ»)²⁷:

Պիտակավորման հիշատակմամբ մի հիշարժան պատմական հանգրվան է Աբդուլ Ազիզ սուլթանի (1861-1876) հրովարտակով «գյավուր» բառի կիրառման արգելքը, որի փոխարեն քրիստոնյաների վերաբերմամբ պետք է շրջանառվեր «խրիստիան» բառը՝ որպէս միջազգային, բայց տեղայնացված արտասանությամբ բառ: Օրենքն ընդունվում է 1867 թ. հունիսի 18-ին Պոլսում, սակայն գավառներ հասնում է բավականին ուշ, մասնավորապէս Տիգրանակերտ հասնելու համար մեկ տարի է պահանջվում: Ինչպէս հաղորդում է Տիգրան Մկունդը, այդ փոփոխություններն իր հետ Տիգրանակերտ

25 Պապունգիք Եղկպարի եւ շրջակայից (Գամիք) հայոց, խմբ.՝ Արմէն Դարեան եւ Անդրանիկ Երկանեան (Պէյրուք, 1988), 300:

26 Նույն տեղում, 270:

27 Տե՛ս Արշակ Ալաօյանեան, Յուշանարեան Կուրինահայերու (Պէյրուք, 1961), 62:

տարել է Էմին բեկը, և ահա այդ ժամանակ է, որ Ամիդի քրիստոնյաները սկսել են փոքր-ինչ շունչ քաշել²⁸: Մոնետիկը շրջել է քաղաքով ու հայտարարել, որ սուլթանի հրամանով «գյավուր» բառն արգելվել է, քրիստոնյաները հավասար իրավունքներ ունեն և այլևս գերիներ չեն, այլ «ամանաթ ուլլահ»՝ Ալլահի պատանդներ՝ իրենց հանձնված, և այդ տրամաբանությամբ պետք է սկսեն իսլամադավանները վարվել քրիստոնյաների հետ՝ որպես եղբայրների: Մոնետիկի ներկայությունն էր և նրա ստուգում-այցելությունները թաղերով, որ վախեցնում էին իսլամադավաններին՝ չխախտելու այս հրամանը. իշխանությունների շրջանում գիտակցում էին, ու վստահություն կար, որ այն անպայմանորեն խախտվելու է, քանի որ խնդիրը խիստ կարծրացած էր ու դարերով շրջանառված²⁹: Այս ժամանակ է, որ ստորացուցիչ թաղման հրամանագիր-արտոնագրեր գրելը չեղարկվեց, և սկսեցին քրիստոնյաներից կառավարիչներ նշանակվել:

Գյավուր-ը որպես թիրախավորման պիտակ. Հայոց ցեղասպանություն

Հայոց ցեղասպանությանն առնչվող դեպքերը քննելիս Ռաֆայել Լեմկինն առանձնացրել է «անհավատներին» վերաբերող մի շարք հրահանգներ: Հայոց ցեղասպանության ծրագրի քննությանը նվիրված բաժինը նա սկսում է հետևյալ մեկնակետից. «Հայերի՝ մահմեդական կրոնի սրտում գոյակցող հզոր քրիստոնեական տարրի հալածանքն անխուսափելի էր, քանի որ Ղուրանի հիմնարար սկզբունքները Քրիստոսի ուսմունքի ուղիղ հակադրությունն էին»³⁰: Նա նույնիսկ առանձնացնում է «անհավատներին» վերաբերող մի շարք հրահանգներ, այդ թվում՝ ոչնչացման կամ պատժի ուղիղ հրաման պարունակող մի շարք *այաթներ* Ղուրանի հետևյալ *սուրահներ*ից³¹.

8.57 («Ահա՛ գազաններից չար են Աստուծոյ առաջին նրանք, որ անհաւատներ են եւ չեն հաւատում»):

9.29 («Պատերազմեցէ՛ք նրանց հետ, որ չեն հաւատում Աստուծուն եւ ոչ էլ վերջին օրւան եւ պիղծ չեն համարում Աստուծոյ եւ նրա մարգարէի պիղծ հրատարակածը...»):

9.74 («Ո՛վ մարգարէ, կո՛իւ արա անհաւատների եւ կեղծաւորների դէմ եւ խիստ եղիր նրանց դէմ. եւ նրանց բնակարանը դժոխքն է»):

9.124 («Ո՛վ հաւատացեալներ, պատերազմեցէ՛ք այն անհաւատների հետ, որոնք ձեզ դրացի են. թող ձեր խստութիւնը տեսնեն, որ հասկանան թէ Աստուած երկիւղածների հետ է»):

47.4 («Ուրեմն երբ դուք հանդիպէ՛ք անհաւատներին, կտրեցէ՛ք նրանց վիզերը մինչեւ նրանց ջարդէք, գերեալների կապերը պնդացրէ՛ք»):

28 Տե՛ս Տիգրան Մկուրդ, *Ամիդայի արձագանքներ* (Նիւ Եորք, «Hai-Gule Press», 1950), 86:

29 Տե՛ս նույն տեղում:

30 *Raphael Lemkin's Dossier on the Armenian Genocide: Turkish Massacres of Armenians* (Manuscript from Raphael Lemkin's Collection, American Jewish Historical Society), with a foreword by prof. Michael J. Bazyler (Glendale: Center for Armenian Remembrance (CAR), 2008), 73.

31 Այաթները վերցված են Ղուրանի հետևյալ հայերեն հրատարակությունից. *Ղուրան*, թարգմ. արաբ. հայ.՝ Աբր. Ամիրխանյանցի (Վառնա, 1909):

Չարի և բարու պայքարի մոդելը տեղայնացված էր խալիֆայություն ընկալվող Օսմանյան կայսրության վրա: Այդ տրամաբանությամբ՝ երբ բարին հաղթում է չարին, ոչ մուսուլման ժողովուրդները հայտնվում են մուսուլմանների գերիշխանության ներքո: Քանի դեռ «անհավատ» համարվող ոչ մուսուլմաններն ընդունում ու ենթարկվում էին իսլամական օրենքին, նրանց սպանությունն արգելված էր: Սակայն օսմանյան իշխանության ներքո ապրող ոչ մուսուլմանները, միջնադարյան մտայնությամբ, դիտվում էին որպես Իբլիսի՝ սատանայի ժողովուրդ, հետևաբար սատանայի խաբեություններին հեշտությամբ ենթարկվող խմբեր: Այս ընկալումը ձևավորում էր այն համոզումը, որ նրանց նկատմամբ գործադրվող բռնություններն իրականում պայքար էին Իբլիսի դեմ³²: Ոչ մուսուլմանների նկատմամբ կոշտ և դաժան վերաբերմունքը դիտվում էր որպես բարեպաշտության դրսևորում, Իբլիսի դեմ պայքար և Ալլահի կամքի իրականացում: Այս տրամաբանությամբ՝ եթե, օրինակ, հայերն օրենքից դուրս հռչակվեին, նրանց սպանությունը ոչ միայն դժվարություն չէր առաջացնի, այլև կդիտվեր որպես կրոնական և քաղաքական առումներով արդարացված, հասարակության բարօրությանը նպաստող հերոսություն:

Այս մտածողության մոդելը սերտորեն առնչվում է Հայոց ցեղասպանության ընթացքում գործադրված կրոնական բռնությունների բնույթին և դրանց հրահրման մեխանիզմներին: Քրիստոնյաներին սպանելու դիմաց հետմահու դրախտի բարիքներին արժանանալու խոստումները, ունեցվածքի բռնագրավման ողջ տրամաբանությունը և բռնարարքների ընթացքում հնչող «դուք մեր ձեռքերում եք» կոչերը հենց այս հոգևոր-քաղաքական պատկերացումների շարունակությունն էին³³:

Օսմանյան կայսրության՝ Առաջին համաշխարհային պատերազմ մուտք գործելուց՝ ջիհադի հայտարարումից հետո «անհավատության» մարդաբանությունն էլ ավելի արվեց: Որպեսզի արտաքին ջիհադը լավագույնս իրականացվեր, անհրաժեշտ էր ապահովել ներքին ջիհադի հաղթանակը: Նշելի է չորումցի վերապրող Վահրամ Դադրյանի վկայությունը ջիհադի հայտարարումից հետո այն մասին, որ մուսուլմանները խանդավառ էին այն մտքից, որ բոլոր «գյավուրներին» պետք է սպանել.

....նոյն խօսքերը դարձեալ կը կրկնուէին ճիհատի հռչակման օրը, եւ այս անգամ աւելի բացայայտ ակնարկութեամբ: Այդ օրը հաւաքոյթ կար Ուլու Ճամիի մէջ, ուր հրաւիրուած էին նաեւ քաղաքին հայ եւ յոյն երեւելիները: Հոն ճառախօսները դարձեալ կը պոռային թէ քրիստոնեաները տարբերութիւն չունէին իրարմէ, եւ ինչ ազգի ալ պատկանէին՝ անոնք յիսերիմ թշնամիներ

32 St'u James J. Reid, "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918," in Levon Chorbajian, George Shirinian (eds.), *Studies in Comparative Genocide* (London, New York: Palgrave Macmillan, 1999), 62-65:

33 Իսլամական այս աստվածաբանության վերաբերյալ կարելի է ընթերցել հետևյալ հոդվածը, որում «քաֆիր» երկույթը «զիմմի» երկույթի հետ մեկտեղ մանրամասն բացատրվում է, և նշվում՝ ինչու են նրանց հոգին ու ունեցվածքը հանձնված համարվում իսլամադավանին (տե՛ս Ruslan et al., "The Meaning of *Kāfir* in the Quran: A Study of Thematic Interpretation," *Budapest International Research and Critics Institute-Journal (BIRCI-Journal)*, Volume 5, no. 4 (November 2022): 31582-31589):

էին մահմետական թուրքին: Ներկաներէն մոլեռանդ թուրք մը, այս խօսքին վրայ կը հարցնէր ատենախօսին. — Ուրեմն ինչո՞ւ կը սպասենք: Սկսինք նախ ներսի կեանքները մաքրելէ, յետոյ դրսի...³⁴

Եվ հաճախ հալածանքներն ու բռնությունները սկսվում էին հենց այս բառամթերքը գործածելով. երբեմն քրիստոնյաներին կոչում էին ուղղակի «գյավուր», շատ հաճախ ավելանում էին իսլամի մեջ *հայրամ* համարվող «շուն», «շուն քրիստոնյա», «խոզ ան-հավատ», «ապերախտ անհավատ» և այլ պիտակավորումներ: Ահա մի քանի վկայություններ այս առնչությամբ. «(Թուրքերը քրիստոնյաներին սովորաբար կոչում են մեկ բառով՝ «շներ», և դա նրանց համար զուտ այլաբանական հասկացություն չէ. նրանք իսկապես իրենց եվրոպացի հարևաններին ընկալում են որպես շատ ավելի անարժան արարածներ, քան ընտանի կենդանիներն են»³⁵: Վերապրող Աշխեն Պողիկյանի վկայությամբ. «.... թուրքերը հայերի մասին սովոր էին ասել. «Թէրս գյավուր» (Վատ գյավուր), «Նամքէօր գյավուր» (Ապերախտ գյավուր), «Գյավուրա իյիլիք եարամագ» (Գյավուրին լավություն պետք չէ [անել]), «Գյավուրու նէ քադար քէսէրսէն, օ քադար սըք նիթէր» (Գյավուրին ինչքան կտրես, այնքան խիտ կաճի)»³⁶: Կոտորածները դեռ չսկսած՝ «Թուրք պաշտօնատարներ, անգամ երեսփոխաններ, սկսան շրջիլ քիւրտ ցեղախումբերու մօտ եւ, բանակին համար ուղտեր հաւաքելու պատրուակին տակ, սկսան քարոզել անոնց միակ հասկցած լեզուն. մահ կ'իսկալուրներուն....»³⁷:

Քյուրդեմիկ գյուղում «.... նոյնիսկ իրենց պզտիկ տղաքը, ինքզինքնուն հասուն մարդու ձեւեր կու տային ու մեր ետեւէն կը պոռային. - Կեավոր, քրիստոնէայ շուն...»³⁸: Կամ. «.... Քահանան ետ կը կանգնեցնեն. - Քրիստոնէայ շան լակոտ, կը պոռան երեսին, հիմա ալ քեզ քու Տիրոջդ պէս պիտի ընենք»³⁹:

Պիտակավորումը և թշնամանքը տարածված էին նաև մուսուլմանների երեխաների շրջանում, որոնք ավագներից սովորել էին «գյավուր» ոչնչացնելը սեփական պարտքը համարել. «Հովհաննեսը մի դուռ ծեծեց՝ ողորմություն խնդրելու: Բաց արին դուռը, երկու թուրք տղաներ Հովհաննեսին քարշ տալով ներս տարան ու ծեծում էին

34 Վահրամ Տառետան, *Դէպի անապատ (փրցուած էջեր օրագրէս)*, Մատենաշար թիւ 1 (Նիւ Եորք, 1945), 16:

35 Հենրի Մորգենթաու, *Դեպքի Հենրի Մորգենթաուի պատմությունը*, անգլերենից թարգմ.՝ Լ. Թութխալյանի (Երևան, ՀՅԹԻ հրատ., 2012), 209:

36 Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն: Ականալի վերապրողների վկայություններ*, խմբ.՝ Հարությունյան Ս., թուրքերենի թարգմ.՝ Տեր Ողորմիաճյան Տ., Երկրորդ համալրված հրատարակություն (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011), 227:

37 Եղբայր Եասենթ Սիմոն, *Մարտին. հերոս քաղաք: Խորան եւ Շիրին Հայաստանի 1915ի Ջարդերուն ընթացքին* (Լիբանան, Ջունիե, 1991), 36:

38 Մարիա Ճէքըպսըն (Եագոպսըն), *Օրագրություն: 1907-1919: Խարբերդ*, դասիերէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին՝ Բախտիկեան Ն. եպս., Սիմոնեան Մ. (Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1979), 171:

39 Եղբայր Եասենթ Սիմոն, *Մարտին. հերոս քաղաք*, 86: Մաթթա Քրմո վարդապետին կոչում են «շուն քրիստոնյա», կոտորածների ու ֆալսիսայի ենթարկում (տե՛ս նույն տեղում, 84-85):

ասելով. «Գյավոր, քեզ պիտի սպանենք»....»⁴⁰: Կամ, ինչպես փոխանցում է Նվարդ Ալեանաքյանը, երբ թուրքական գյուղում իմանում էին, որ ինքը քրիստոնյա է, բղավում էին, որ պետք է անմիջապես սպանվի⁴¹:

Հետաքրքիր է, որ հայ երեխային թրքացնելուց հետո, օրինակ, Մարդինի որբանոցում արգելվում էր այլևս նրան կոչել «գյավոր»։ «.... մեզ կոչեցին մեօդէտի [իմա՝ նորադարձ – Շ. Խ.] բայց կեավոր բառը խստի արգելուած էր....»⁴²: Սակայն այդ կանոնը հազվադեպ էր պահպանվում, և անգամ հայի կրոնավոր լինելուց հետո էլ շարունակում էին նույն ոճով:

Այն, որ «գյավոր» ասելով հասկանում էին մարդաբանական խոր բովանդակություն՝ իսլամադավանին ու Ալլահին հակադիր մարդ, վկայում է նաև հետևյալ դրվագը Հովհաննես Կարապետյանի անցած ուղուց: Նա հրաշքով փրկվել է մի քանի կոտորածներից՝ որպես աղջիկ ծաղկելով, և երբ ի վերջո պարզվել է նրա՝ տղա լինելու հանգամանքը, չէչեն ոճրագործը նրան զարմանքով տարել է իր ցեղախումբ՝ մոլլային ցույց տալու և ասելու, որ եթե նա «գյավոր» լիներ, չէր փրկվի, ուրեմն նա «միւլիմ հոգի» է, և Ալլահն է նրան փրկել: Իսկ ինքը՝ Հովհաննեսը, երբ խուզարկվել է, և իր մոտ հայտնաբերվել է խաչ, մահից փրկվելու հույսով արել է հետևյալը. «Ցույց տալու համար, որ գյավոր չեմ, ասացի. –Մոլլա էֆենդի, սա գյավուրների աստվածն է, որին պաշտում են: – Սուտ բան է,– ասաց ու ծռեց»⁴³:

Թուրքական իսլամին ներհատուկ կրոնական մարդաբանության ընկալումները ցայտուն դրսևորվում են նաև հետևյալ վկայության մեջ, որում շեշտվում է «անհավատի» դիվային ծագումը՝ Ալլահից դուրս ստեղծված լինելը.

Թուրք զինուորներ, ինչ որ գտնէին, ինչ որ իրենց աչքին զարնէր, կոշտօրէն կ'առնէին ու կ'երթային: Ու տակաին, սպառնացայտ կը պոռային, հայ գիւղացիներու երեսն ի վեր. –

– Խընզը՛ր կեավորլար, սիզի Ալլահ եարաբմամըշ: Միզի շէյթանլա՛ր եարաբմըշ Կորը, պիր քաչ այրան կէօրէճէքսինիզ: Ալաման վէ օսման հէօքիմէթի նէլէր կէթիրէճէք պաշընըզա: Օսմանլը թօպրաղընրա պիր կիզօթ իսմինի գոմիսաճագ... (Թրգմնթ. Խոզ անհաւատներ, Աստուած չէ որ ստեղծած է ձեզի, այլ՝ սատանայի ծնունդ էք դուք: Քանի մը ամիսէն տեսնելիք ունիք...: Գերմանիա եւ Օսմանեան Պետութիւնը ինչ փորձանքներ պիտի բերէ Ձեր գլխուն: Օսմանեան հողին վրայ, մէկ հատ իսկ ... պիտի չձգէ)⁴⁴:

40 Կիլիկիայի 1 600 որբերից մեկի՝ Երվանդ Հակոբի Փոստալջյանի ճակարագիրը, ձեռագիր հուշ, ՀՅԹԻ ֆոնդեր, Բ-8, թղթ. 93, ֆ/հ 129, թ. 24:

41 Տե՛ս Պապուսգիրք Եոզկապի, 492:

42 Մարի Գրիգորեան, Արանայէն Մարտինի թրքական որբանոցը, 1909-1918 (մեքենագիր հուշ), խմբ.՝ Բիւզանդ Եղիայեան, 1989, ՀՅԹԻ ֆոնդեր, քծ. 8, թղթ. 248, ֆ/հ 397, 72:

43 Հովհաննես Կարապետյան, Վերածնված կյանք մը երևակայական և իրական սարսափների արանքում (Երևան, ՀՅԹԻ հրատ., 2010), 74-75:

44 Հակոբ Էլմասեան, Յուշեր սարկիւեան եղեռնէն: Մահուան ճամբաներէն, սրբագրեց եւ վերարտադրեց Սիմոն Հովիտեան (Թորգոմ Վէհապետեան), Պիսքէնթէ, 15 Մայիս, 1964, Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 314, ց. 1, գ. 93 [70 էջ մեքենագիր հուշագրություն]:

Սպանելիս էլ էին հիշատակում զոհի «գյավուր» լինելը⁴⁵։ Կամ տանում էին պատ-
ժելու նրանց, ովքեր ձևանում էին իսլամադավան։ «Կեավուր, հիմա քեզի կը սորվեց-
նենք, թե դու Իսալիլ ես թե Իսորէն – ու մէկը գօտիին մէկ ծայրէն, միւսը միւս ծայրէն
բռնելով սկսան քաշել»⁴⁶։ Կամ՝ մի մոլլա մի թուրքի ստիպում է սպանել մի հայի, այլա-
պես նա «ջեննեթ»՝ դրախտ չի կարող ոտք դնել։ «Մորթէ՛, կ'ըսեմ, այս կեավուրը, այ-
լապէս դուն ճէննեթին երեսը չես տեսներ, դու ճշմարիտ միսիւման չես, թուրք չես։ Այս
կեավուրը քու ամէն ունեցածդ պիտի փճացնէր, դուն զինք փճացուր»⁴⁷։ Սույն դեպքն
առանձնանում է նրանով, որ թուրքը, որին մոլլան հրամայում էր սպանել քրիստոնյա
հային, հրաժարվում է դա անելուց՝ հայիոյելով այն կրոնը, որը մարդասպանության է
դրդում, և հայտարարելով, որ ինքն այդպիսի կրոնի դրախտը չի ցանկանում։ «Գյա-
վուր» սպանելու դիմաց դրախտի խոստումները խիստ տարածված էին⁴⁸ և գալիս էին
հենց ջիհադի՝ սրբազան պատերազմի տեքստերից⁴⁹։

Երբ տեղահանություններից հետո շատ վայրեր գրկվում էին տնտեսական ու առօրյա
բարիքներից, որ ստեղծում էին արվեստներով ու արհեստներով զբաղվող հայերը, ան-
գամ երբ երաշտ էր լինում, և ջրերը ցամաքում էին, իսլամադավանները կրկին դրանում
մեղադրում էին «գյավուրներին», որոնք, ինչպես նրանք էին հավատում, կամ անիծում
էին, կամ դեղ էին լցնում ջրերի մեջ, որ դրանք ցամաքեին իրենցից հետո⁵⁰։ Ուրֆայում
«գյավուրների» կենդանիները ևս թիրախավորվում ու ոչնչացվում էին։ «Ամէն տուներու
հաւերը կը խեղդէին և կատուները «կեավուր տըր» ըսելով կ'սպաննէին»⁵¹։

Այսինքն, հաշվի առնելով նաև Իբլիսի ժողովուրդ լինելու համոզմունքը, կարող ենք
այնուհետև, որ «գյավուրները» ոչ միայն ապամարդկային էին ընկալվում, այլև դեմոնի-
զացվում էին՝ դիվայնացվում։

Ամփոփելով վերն ասվածը՝ պետք է նշել, որ ներկայիս Թուրքիայում պահպանվել
է խիստ վիրավորական բովանդակության խնդրո առարկա այս բառի շրջանառումը՝
հաճախ նույնիսկ պետական մակարդակով⁵²։ Ժողովրդական մակարդակով ևս այն
դեռևս հասկանալի և գործածելի մի բառ է, որն ունի խոր մշակութային, հոգեբանա-
կան և կրոնական բովանդակություն։ Վերը քննարկվեց խնդրո առարկայի՝ բռնության
մշակույթ ձևավորելու պոտենցիալը, ի թիվս այլ դեպքերի՝ նաև Հայոց ցեղասպանու-
թյան տարիներին լայն կիրառմամբ։

45 Տե՛ս Գալուստ Սիւրմէնեան, *Երզնկա* (Գահիրէ, տպարան «Սահակ-Մեսրոպ», 1947), 375։

46 Նույն տեղում, 377։

47 *Պարմագիրք Եոզկապի*, 668։

48 Տե՛ս նույն տեղում, 542, 589։

49 Տե՛ս Իսաչատրյան, *Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրադրոժման մեջ*, 90-116, I-LIX։

50 Տե՛ս *Պարմագիրք Եոզկապի*, 703։

51 Արամ Սահակեան, *Դիցազնական Ուրֆան եւ իր հայրդդիւները* (Պէյրուք, 1955), 355, հմմտ. 377։

52 Տե՛ս “Turkey Needs to Change its Policy and Rhetoric Toward Religious Minorities,” <https://www.newsweek.com/turkey-needs-change-its-policy-rhetoric-toward-religious-minorities-opinion-1586803>, դիտվել է՝ 17.01.2025։

THE LABEL “GIAOUR” APPLIED TO OTTOMAN CHRISTIANS

Shushan Khachatryan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

In this article, the derogatory term and their varieties “*giaour*”/“*gâvur*”=“*kâfir*”=“infidel,” are examined that have been applied to the Ottoman Christians—a designation that was initially a religious marker but came to entail broad social, cultural, political, and, indeed, economic consequences. Our analysis focuses on the use of this label toward Armenian Christians, beginning with a survey of existing studies on its linguistic and etymological origins, followed by an examination of attestations in Armenian literary sources. We then bring together the resulting forms of discrimination, restrictions, targeting, and instances of capital punishment, the Armenian Genocide, and the usage in modern times in Turkey. The article demonstrates the centuries-long history of dehumanization inherent in the usage of this term against Christians—in this case, Armenians.

Key words: *giaour/gâvur, kâfir*, “infidel,” targeting, dehumanization, xenophobia.

ЯРЛЫК «ГЯУР», ПРИМЕНЯЕМЫЙ К ОСМАНСКИМ ХРИСТИАНАМ

Шушан Хачатрян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

В статье проанализирован уничижительный термин *гяур/гявур=кяфир*=“неверный”, применяемый по отношению к османским христианам. Первоначально являясь религиозным обозначением, он постепенно приобрёл социальные, культурные, политические и, безусловно, экономические последствия. Наш анализ сосредоточен на использовании этого ярлыка в отношении армян-христиан, начиная с обзора существующих исследований о его языковом и этимологическом происхождении, а затем переходя к рассмотрению упоминаний в армянской письменной традиции. Сопоставлены возникшие вследствие этого формы дискриминации, ограничений, преследований, случаи смертных казней и конечно же Геноцид армян. В статье демонстрируется многовековая история дегуманизации, которую несёт в себе употребление данного термина в отношении христиан — в данном случае, армян.

Ключевые слова: *гяур/гявур, кяфир*, “неверный,” преследования, дегуманизация, ксенофобия.

REFERENCES

Alboyajian, Arshak. *Յուշամատենն Կուրինահայերու* [Memory Book of the Armenians of Kutina]. Beirut, 1961;

Alboyajian, Arshak. *Պատմութիւն Եդոկիոյ հայոց. տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկություններով* [History of the Armenians of Eudocia: With Geographical, Historical, and Ethnographic Information]. Cairo: “New Star” Printing House, 1952;

Alboyajian, Arshak. *Պատմութիւն Հայ Կեսարիոյ* [History of Armenian Caesarea]. Cairo: H. Papazian Publishing House, 1937;

Atcharian, Hrachya. *Տաճկահայոց հարցի պատմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.)* [The History of the Question of the Turkish Armenians (From the Beginning to 1915)]. New Nakhichevan: S. Y. Avagian Publishing House, 1915;

Dadrian, Vahram. *Դէպի անսպաս (փրցուած էջեր օրագրէս)* [Toward the Desert (Torn Pages from My Diary)]. Series no. 1. New York, 1945;

Elmasian, Hakob. *Յուշեր սպրիլեան եղեռնէն: Սահուան Ճամբաներէն* [Memories of the April Genocide: From the Paths of Death]. Edited and reproduced by Simon Hovhoyan (Torgom Vehapetian). Piskente, May 15, 1964. National Archive of Armenia, Fond 314, coll. 1, opus 93;

Grigorian, Mari. *Ադանայէն Մարտինի թրքական որբանոցը, 1909-1918* [From Adana to Mardin's Turkish Orphanage, 1909-1918]. Typewritten memoir. Edited by Buzand Yeghiayan. 1989. Armenian Genocide Museum-Institute's (AGMI) Collection, section 8, folder 248, no. 397;

Gzoyan, Edita G., Galustyan, Regina A., Khachatryan, Shushan R., & Mirzoyan, Elina Z. *Հայ երեխաների թուրքացումը Հայոց ցեղասպանության տարիներին* [Turkification of the Armenian Children During the Armenian Genocide]. Yerevan: AGMI Publishing House, 2022;

Hovhannes Karapetyan. *Վերածնված կյանք մը երևակայական և իրական սարսափների արանքում* [A Reborn Life Between Imaginary and Real Horrors]. Yerevan, AGMI publication, 2010;

Jacobsen, Maria. *Օրագրութիւն: 1907-1919: Խարքերդ* [Diary: 1907-1919: Kharpert]. Translated from the original Danish manuscript by Bishop N. Bakhtikian and M. Simonian. Antelias: Printing House of the Catholicosate of the Great House of Cilicia, 1979;

Khachatryan, Shushan. *Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ* [The Role of Religion in Committing the Armenian Genocide]. Holy Etchmiadzin, 2020;

Kosyan, Serob. «Նորահայր» Շաղախը. *Հայոց ցեղասպանությունը վերապրած շաղախոցու հուշագրություն*, [“Newly Discovered” Shatakh: A Memoir of A Shatakh Survivor of The Armenian Genocide], “Memoirs of the Survivors of the Armenian Genocide” vol. 14; editor, author of the preface and references Elina Mirzoyan. Yerevan: AGMI Publishing House, 2025;

Manandian, Hakob, Atcharian, Hrachya. *Հայոց նոր վկաներ* [Armenian New Martyrs (1155-1843), academic publication], Vagharshapat, 1903;

Mkund, Tigran. *Ամիրայի արձագանքներ [Echoes of Amita]*. New York, Hai-Gule Press, 1950;

Morgenthau, Henry. *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը [The Story of Ambassador Henry Morgenthau]*. Translated from English by L. Tutkhalian. Yerevan: AGMI Publishing, 2012;

Piven, Jerry S. “Lord of the Flies as Parable of the Invention of Enemies, Violence and Sacrifice.” In *Jihad and sacred vengeance*, Volume III. Psychological Undercurrents of History, edited by Piven J. S., Boyd Chr., Lawton H. W. (Lincoln, NE: Writers Club Press, 2002), 132-158.

Postaljian, Yervand Hakob. *Կիլիկիայի 1 600 որբերից մեկի՝ Երվանդ Հակոբի Փոստալջյանի ճակատագիրը [The Fate of Yervand Hakob Postaljian, One of 1,600 Orphans of Cilicia]*. Manuscript memoir. AGMI Collection, section 8, folder 93, no. 129;

Sahakian, Aram. *Դիցազնական Ուրֆան և իր հայորդիները [Heroic Urfa and Its Armenian Sons]*. Beirut, 1955;

Simon, Brother Yasent. *Մարտին. հերոս քաղաք: Խորան և Շիրիմ Հայաստանի 1915ի Քարդերոն ընթացքին [Mardin: Hero City. Altar and Martyrdom during the Massacres in Armenia in 1915]*. Lebanon, Jounieh, 1991;

Svazlian, Verzhine. *Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ [Armenian Genocide: Testimonies of Eyewitness Survivors]*. Edited by S. Harutyunyan. Turkish translation by T. Ter Voghmiajian. 2nd expanded edition. Armenian Genocide Museum-Institute and Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia. Yerevan: “Gitutyun” Publishing House of the NAS RA, 2011;

Syurmenian, Galust. *Երզնկա [Yerznka]*. Cairo: Sahak-Mesrop Press, 1947;

Լռության ձայնը I. Խոսում են Թուրքիայի հայերը [The Voice of Silence I. Turkish Armenians Speak], compiled by Ferda Balancar, with a preface by Ali Bayramoğlu and an afterword by Arus Yumlu. Yerevan: HDV publications, 2021;

Լռության ձայնը II. Խոսում են Դիարբեքիրի հայերը [The Voice of Silence II: The Diyarbakir Armenians Speak], compiled by Ferda Balancar, with a preface by Ali Bayramoğlu; and an afterword by Arzu Öztürkmen. Yerevan: HDV publications, 2021;

Ղուրան [The Qur'an], transl. from Arabic into Armenian by Abraham Amirkhanyants, Varna, 1909;

Պատմագիրք Եոզկատի և շրջակայից (Գամիրք) հայոց [Histories of Yeozkat and Its Surroundings (Gamirk)], Armenian Texts, edited by Armen Darian and Andranik Yerkanian. Beirut, 1988.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Շուշան Խաչատրյան, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության գոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանությունների կրոնական և աստվածաբանական չափումները, հայ երեխաների բռնի կրոնափոխությունների հարցերը, ցեղասպանությունների ընթացքում ապամարդկայնացման երևույթը:

Էլ. փոստի հասցե՝ khachatryan.shushan@genocide-museum.am

Shushan Khachatryan, Ph.D., Head of the Armenian Genocide Victims' and Survivors Documentation and Research Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: examination of the religious and theological dimensions of genocides, the forceful conversion of Armenian children, the phenomenon of dehumanization during genocides.

E-mail: khachatryan.shushan@genocide-museum.am

Шушан Хачатрян, кандидат исторических наук, заведующая Отделом документирования и исследований жертв и выживших Геноцид армян Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований: религиозные и богословские измерения геноцидов, насильственные религиозные обращения армянских детей, феномен дегуманизации во время геноцидов.

Эл. почта: khachatryan.shushan@genocide-museum.am

**ՀԱԿՈԲ Պ. ՊՈԴՈՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Սոսե Ասատրյան

Վերլուծական հոգեբանության հայկական ասոցիացիա, Հայաստան

Հայոց ցեղասպանության ժամանակ, հալածանքների ընթացքում և այդ հակամարդկային իրադարձություններից հետո ցեղասպանությունը վերապրածների, նրանց ժառանգների և հաջորդող սերունդների հոգեբանական խնդիրների, հոգեկան առողջության խաթարումների վերաբերյալ հոգեբանական աշխատությունները հայ իրականության մեջ սակավաթիվ են՝ չնայած այն փաստին, որ դեռ 1919 թվականին ամերիկահայ հոգեբանն արդեն լույս էր ընծայել աշխատություն, որն անդրադառնում էր Հայոց ցեղասպանությանը և հալածանքներին: Սույն հոդվածը միտված է հանրության ավելի լայն շրջանակների համար բացահայտելու Հակոբ Պոդոսյան գիտնականին, ըստ արժանվույն գնահատելու նրա գիտական վաստակը և կատարած ահռելի աշխատանքը, որը կարող էր և, հույս ունենք, հիմա էլ կծառայի հայ հոգեբանների կողմից թեմայի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը և նոր աշխատանքների իրականացմանը, որոնցում անպայման անդրադարձ կլինի, և կհիշատակվեն նրա մշակած և առաջին անգամ կիրառած մեթոդներն ու գիտական հայացքները: Դուրս գալով Պոդոսյանի կատարած ուսումնասիրությունները բացառիկ են ոչ միայն այն առումով, որ առաջինն են ոլորտում, այլև այն տեսանկյունից, որ նա էլ, լինելով կոտորածներից փրկված հայ, կարողացել է սեփական կենսագրությամբ և փորձառությամբ ներկայացնել պատմական իրողությունները և դրանց ունեցած հոգեբանական ազդեցությունները, էթնիկ ինքնության և ազգային գաղափարախոսությունների պահպանման կարևորությունը:

Բանալի բառեր՝ Հակոբ Պոդոսյան, հայ, հոգեբանություն, հոգեցնցում, հալածանքներ, ոճրագործներ:

Հոդվածը ներկայացվել է՝ 05.08.2025: Ընդունվել է տպագրության՝ 07.10.2025:

The article was submitted on 05.08.2025 and accepted for publication on 07.10.2025.

Статья поступила 05.08.2025 и была принята к публикации 07.10.2025.

Ինչպես հղել՝ Սոսե Ասատրյան, «Հակոբ Պ. Պոդոսյանի աշխատությունը որպես Հայոց ցեղասպանության առաջին համակարգային ուսումնասիրության փորձ հոգեբանական գիտության մեջ», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 68-82:

How to cite: Sose Asatryan, “Hakob P. Poghosyan’s Work as the First Attempt of the Systematic Study of the Armenian Genocide in Psychological Science” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025), 68-82.

Как ссылаться: Сосе Асатрян, “Работа Акоба П. Погосяна как попытка первого систематического исследования Геноцида армян в психологической науке,” *Цехаспанagitakan андес* 13, no. 2 (2025), 68-82.

Մուտք

Հակոբ Պողոսյանն առաջին հոգեբանն է, որը համակարգային ձևով և բազմակողմանիորեն փորձել է ուսումնասիրել Հայոց ցեղասպանությանը նախորդող և հաջորդող իրադարձությունները և դրանց հետևանքով առաջացած հոգեբանական խնդիրներն ու դրանց առանձնահատկությունները: «Հայ Ցեղը և Հալածանքները հոգեբանության լույսին տակ» աշխատությունն ամուրի հիմքեր է ստեղծել հայ և ոչ միայն հայ հոգեբանների կողմից Հայոց ցեղասպանության հոգեբանական ուսումնասիրությունների համար: Սակայն, ցավոք, հայ հոգեբանների շրջանում հեղինակի գործերը շրջանառված չեն, ինքս էլ ՀՅԺԻ գրադարանում առկա գրականությունն ուսումնասիրելիս եմ պատահաբար բացահայտել այս չափազանց կարևոր հեղինակին և իր աշխատությունները:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադարձ կատարել դոկտոր Պողոսյանի կենսագրությանը, քանի որ կյանքի փորձառությունը, ըստ իս, իր ազդեցությունն է թողել գիտնականի աշխատանքների վրա: Սույն հոդվածում դրան է նվիրված առաջին հատվածը, հատկապես այն պատճառով, որ նրա կենսագրությունը որևէ աղբյուրում համապարփակ տրված չէ: Ուստի անդրադառնալով նրա կենսագրության՝ տարբեր աղբյուրներից քաղված դրվագներին՝ կփորձենք ստեղծել հնարավորինս համապարփակ կենսագրական պատում, որը միգրացիոն ապագայում կծառայի տարբեր մասնագետների: Եվ, իհարկե, հոդվածի երկրորդ հատվածում անդրադարձ կկատարվի դոկտոր Պողոսյանի ուսումնասիրություններին և գրական վաստակին՝ շեշտը դնելով նրա՝ հոգեբանական գիտության մեջ ունեցած ներդրման վրա:

Ո՞վ է Հակոբ Պողոսյանը՝

Հակոբ Պողոսի Պողոսյանը ծնվել է 1890 թ. մայիսի 1-ին Կիլիկիայի Վահկա քաղաքում: Մանուկ հասակում՝ համիդյան ջարդերի տարիներին, որը մնալով՝ 1897 թ. հարկադրված դարձել է Հաճընի ամերիկյան միսիոներական որբանոցի սան, որը հայտնի էր «Միսթըր Մարթինի որբանոց» անվամբ¹: 1905 թ. ավարտել է Հաճընի ակադեմիան, 1905-1909 թթ.՝ հաճախել Տարսոնի Սեյնթ Փոլզ քոլեջը: 1906-1907 թթ. եղել է ուսուցիչ Հաճընի ակադեմիայում: 1909 թ. Տարսոնից մեկնելով՝ մագապուրծ է եղել կիլիկյան կոտորածներից: 1909-1911 թթ. հաճախել է Կոնիայի Ջենանյան քոլեջը, որտեղ ստացել է բակալավրի աստիճան: 1911-1914 թթ. պաշտոնավարել է նույն քոլեջում որպես ներքին տեսուչ և ուսուցիչ: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հաստատվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ շարունակելու հոգեբանական և մանկավարժական բարձրագույն կրթությունը: 1914 թ. Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում արժանանալով կրթաթոշակի («Livingston Scholarship»)՝ ավարտել

1 Տեղեկությունները նախ և առաջ քաղել ենք Հակոբ Պողոսյանի՝ Հաճընի պատմությանը նվիրված հետևյալ գրքից՝ Յակոբ Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պայմանությունը և շրջակայ Գոզան-տաղի հայ գիղերը* (Lou Անճէլըս, Պոզանեան տպագրություն/Bozart Press, 1942), 44-45:

2 Այս որբանոցի մասին տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հոդվածում՝ Rosemary Russell, “Hadjin – Missionaries,” <https://www.houshamadyan.org/mapottomanempire/vilayet-of-adana/hadjin/religion/missionaries.html>, դիտվել է՝ 12.01.2025:

է համալսարանը 1915 թ.՝ ստանալով մագիստրոսի աստիճան: 1915-1917 թթ. սովորել է Քլարկի համալսարանում (Մասսաչուսեթս), որտեղ էլ ստացել է իր դոկտորական աստիճանը: Դոկտորական աշխատանքի թեման էր «Անհատն ու հասարակությունը» («The Individual and Society»)³:

Կրթական և գիտական գործունեությունից զատ՝ Հ. Պողոսյանն ունեցել է նաև հասարակական ակտիվ դերակատարություն Կիլիկիայում: 1908-1909 թթ. Տարսոնում գտնվելու ընթացքում եղել է Հնչակյան կուսակցության՝ Տարսոնի մասնաճյուղի գործիչ և, Ադանայի ջարդերի մասին առաջին անգամ լուրեր ստանալով Սարրաֆ Ջեմալ անունով մի թուրքից, որը նրան հորդորել էր անմիջապես Տարսոնից փախչել Կիպրոս (քանի որ հաջորդ առավոտ մտադիր էին կոտորել Տարսոնի հայությանը), որոշել է մնալ տեղում: Նա Սբ Ստեփանոս եկեղեցու ազգային դպրոցի սրահում հավաքված մոտ 100-հոգանոց խմբին պատմել է եղելությունը, որից հետո՝ նույն երեկոյան, քաղաքը, մասնավոր թաղերի բաժանվելով, դիմել է ինքնապաշտպանության: Աղետի դաղարկից հետո Պողոսյանը ստիպված հեռացել է Կիլիկիայից:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1918 թ. որոշ ժամանակ զբաղեցրել է Հայ ազգային միության օգնական քարտուղարության պաշտոնը: Այդ տարի նաև անդամակցել է «Սահմանադրական ռամկավար կուսակցությանը»՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ Ամերիկայի շրջանակի նախագահ, ընդհանուր քարտուղար, Ֆրեզնոյում հրատարակվող ռամկավարների «Նոր կեանք-Սիսուան» երկօրյա թերթի⁴ խմբագիր: Համաշխարհային պատերազմի ընթացքում Միացյալ Նահանգների կառավարության կողմից կարգվել է գրաքննիչ. 1917-1919 թթ., ստանալով տարեկան մեկ դոլար, քննել է օտար թերթերն ու հրատարակությունները և հրաշալի է կատարել իր աշխատանքը, քանի որ տիրապետում էր թուրքերենին, հայերենին, անգլերենին, ֆրանսերենին և գերմաներենին:

Հատկանշական է հեղինակի կողմից հայոց լեզվի կարևորումը: Բանն այն է, որ նա մանուկ հասակից տիրապետել է թուրքերենին, բայց, 1916 թ. հոգեկան վայրկյալներումների մեջ լինելով, անդիմադրելի ներքին մղում է ունեցել սովորելու հայերեն: Պողոսյանը գրում է, որ նախ հայերեն սովորել է «ինքնաշխատությամբ, և յետոյ ուսումնասիրել օտար լեզուներով գրուած հեղինակներուն գործերը: Եվ որքան խորացած է անոնց մէջ, այնքան մեծարած է իր հիացումը իրեն ծնունդ տուող հայ ազգին հանդէպ»⁵:

Մասնակցել է Լոնդոնի արքայական աշխարհագրական ընկերության կազմակերպած Էվերեստ լեռան արշավներից մեկին:

1921 թ. Ֆրեզնոյում Հ. Պողոսյանն ամուսնացել է խարբերդցի Վիկտորյա Բենյամինի հետ և ունեցել դուստր՝ Քերոլ Գրեյս (Պողոսյան) Գինոյանը, և որդի՝ Մելքոն-

3 Դոկտորական ատենախոսությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://commons.clarku.edu/hist_disstheses/65/, դիտվել է՝ 12.01.2025:

4 Թերթի 1920-1921 թթ. համարները տեղադրված են Հայաստանի ազգային գրադարանի կայքում՝ <https://tert.nla.am/mamul/nor%20kyanq-sisuan/NLA.html>, դիտվել է՝ 12.04.2025:

5 Տե՛ս Յակոբ Պողոսեան, *Ներածութիւն հայ հոգեբանութեան* (Գահիրէ, Տպարան «Սահակ-Մեսրոպ», 1958), ԺԸ:

Փոլ Պոդոսյանը: 1948 թ. կինը մահացել է, և 1950 թ. Հ. Պոդոսյանը երկրորդ անգամ ամուսնացել է պոլսեցի Նունուֆար Արզվյան-Պահարյանի հետ: Ուներ եղբայր՝ Գասպար Պոդոսյանը, որն ապրում էր Բաղդադում: Բնակվել է Կալիֆոռնիայի Փասսադենա քաղաքում և 1927-1951 թթ. զբաղվել արևելյան գորգագործությամբ: 1951 թվականից նվիրվել է գիր-գրականությանը⁶: Աշխատել է «Պահակ», «Ազգ», «Պայքար», «Կոչնակ», «Սիսուան», «Նոր կենսք», «Նոր կենսք-Սիսուան» թերթերում, թղթակցել «Լոյս» և «Հաճն» թերթերին: 1919 թ. հրատարակել է «Հայ Ցեղը և Հալածանքները հոգեբանության լոյսին տակ», 1920 թ.՝ «Ռամկավարության ոգին կամ Անհատականության զարգացումը» աշխատությունները: Պատրաստել և 1942 թ. հրատարակել է «Հաճնի Ընդհանուր Պատմությունը» գիրքը, որը Լեոնային Կիլիկիայի մասին հրատարակված առաջին գիրքն է՝ 857 էջ ծավալով:

Ավելի ուշ շրջանի գործ է նրա «Ներածություն հայ հոգեբանության» աշխատությունը, որը գրել է մոտ 20 տարի և տպագրել 1958 թ. Կահիրեում: Գերծավալուն այս աշխատանքն ունի լայն ընդգրկում՝ սկսած Հայաստանի երկրաբանական և աշխարհագրական դիրքի մանրամասն նկարագրից և դրա՝ հայ ժողովրդի վրա թողած ազդեցություններից մինչև հայերի հոգեբանական առանձնահատկությունները, հայ ազգին բնորոշ դրական ու բացասական կողմերը, ազգային խորհրդանիշները, առակները, մշակույթը, ինչպես նաև հայերի քաղաքակրթական մեծ ավանդը:

Հեղինակն ունի այլ գործեր ևս, այդ թվում՝ բանաստեղծական քերթվածքներ, նաև անտիպ աշխատություններ՝ հայերեն, թուրքերեն և անգլերեն, որոնք հայտնաբերվել ու տպագրելը մեծ նպաստ կրերի թե՛ հայագիտությանը, թե՛ հոգեբանական գիտությանը:

«Հայ ցեղը և հալածանքները». Մեծ եղեռնի մեկնաբանումը հոգեբանական գիտության կայացման արշալույսին

Ինչպես արդեն նշվեց, Մեծ եղեռնին վերաբերող առաջին հոգեբանական ուսումնասիրությունը կարելի է համարել Հակոբ Պոդոսյանի՝ «Հայ Ցեղը և Հալածանքները հոգեբանության լոյսին տակ» արևմտահայերենով 1919 թ. տպագրված գիրքը, որում ամերիկաբնակ հոգեբանն անդրադառնում է ցեղասպանությանը նախորդող սոցիալ-քաղաքական իրադարձություններին, ներկայացնում հայերի և շրջապատող ազգերի միջև առկա տարբերությունները և մատնանշում հայերի քրիստոնյա լինելու փաստը, ինչը, ըստ Պոդոսյանի, պայմանավորում է հայերի խաղաղարար էությունը:

Ներածականում նա մանրամասնորեն ներկայացնում է իր աշխատանքի կազմակերպման մեթոդները և նշում, որ այս վերնագրով 70-էջանոց զեկույցը առաջին անգամ պատրաստել է հայերի հետ տեղի ունեցածի մասին իրազեկելու, ուշադրություն հրավիրելու համար:

Հայկական Խնդիրը փրօփականտ ընելու նպատակով զայն կարդացի Նախագահ Հոլի⁷ տան մեջ գումարտիված գիտական հաւաքոյթի մը առջեւ: Ժողո-

6 Տե՛ս նույն տեղում, ԺԹ:

7 Գրենվիլ Սթենլի Հոլլ (Granville Stanley Hall, 1844-1924), ամերիկյան հոգեբանության վաղ շրջանի

վին անդամները ներկայացրած ուսումնասիրությունով այնչափ հետաքրքրուեցան, որ թե՛ հաւաքաբար, փափաք յայտնեցին որպէս զի ես այս նիւթին շուրջ ուսումնասիրութիւնս յառաջ տանիմ եւ զայն իբրեւ գիրք հրատարակեմ: Օր մը վերջը, Նախագահ Տօլի հետ այս մասին խօսակցութեան մը պահուն, անիկա կրկին ու կրկին փափաք յայտնեց որպէս զի այս նիւթը աւելի մշակեմ, եւ ես, խնդրին կնճռոտութիւնն ու դժուարութիւնները քաջ գիտնալով հանդերձ, հաւանեցայ եւ գործի ձեռնարկեցի⁸:

Պողոսյանը նոյն գրքում նշում է, որ Սթենլի Հոլլի հետ իր ունեցած քննարկումներին մէկ ժամանակ իր գիտական ղեկավարը հետևյալ դիտարկումներն է արել Հայոց ցեղասպանության հոգեցնցման հաղթահարման հարցի շուրջ. «Քլարք Համալսարանի նախագահ, Սթենլի Հոլ, օր մը Հայկական ջարդերու մասին հետս խօսակցելու առթիւ, պահ մը աչքերուս մէջ նայելէ յետոյ՝ ըսաւ «Պօղոսեան, եթէ Հայ Յեղին կրած այսչափ տանջանքներն ու հալածանքները եւ ջարդերը՝ չկարողանան ձեզմէ ստեղծել յարձակողական բնատրոյթեամբ ուժեղ ու մեծ ազգ մը՝ դուք այլ եւս կորսուած էք: Ձեր պարտականութիւնն է՝ անանկ դաստիարակութիւն մը տալ Հայ Նոր սերնդին, որ թշնամիին հանդէպ ատելութեամբ լեցուած յարձակողական ազգի մը ծնունդ տան ձեր ցեղին կրած այս հալածանքներն»⁹: Միայն թե «հարձակողական ազգ» հասկացության շուրջ հետագա բացատրություն է տալիս հեղինակն ինքը, այն է՝ ոչ թե քայքայիչ ատելություն, այլ արդար ցասում կրած տառապանքների փոխհատուցման համատեքստում¹⁰:

Պողոսյանի ուսումնասիրության արժեքավորությունը նաև ժամանակի հոգեբանության մէջ (այդ թվում՝ սոցիալական) առկա տեսությունների համակարգված շրջանառությունն է, և վերորեքյալ մտքերն անհրաժեշտ է դիտարկել ժամանակի նորածն «գոյության պայքարի» տեսությանը համահունչ, որը տեղայնացվում է հայերի հոգեբանական նկարագրի, հայերին որպէս այլ, որպէս հակադիր դիտող ազգերի, հայերի կրած մարդածին աղետների վրա.

ռահվիրաներից: Նրա ներդրումը ոլորտում ներառում է հոգեբանական ամսագրերի հիմնումը Միացյալ Նահանգներում: Նա նշանակալի դեր է ունեցել 1887 թ. Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի հիմնման գործում՝ լինելով առաջին նախագահը 1892 թ. և նորից վերընտրվելով այդ պաշտոնում իր մահվանից քիչ առաջ՝ 1924 թ.: Հոլլն սկզբում կենտրոնացած էր աստվածաբանության վրա, այնուհետև անցնում է փիլիսոփայության, ապա՝ հոգեբանության ոլորտ: Կարճ ժամանակ Հոլլը դասավանդում է Հարվարդի համալսարանում՝ նախքան 1881 թ. Ջոնս Հոպկինսի համալսարանում պաշտոն ստանալը: Նրա լաբորատորիան Հոպկինսի համալսարանում համարվում է ամերիկյան հոգեբանական առաջին լաբորատորիան: Երբ 1887 թ. բացվում է Քլարկի համալսարանը, Հոլլը նշանակվում է ռեկտոր, որտեղ էլ հիմնում է «*Pedagogical Seminary*» (ներկայումս՝ «*Journal of Genetic Psychology*», 1891 թ.), կարճ կյանք ունեցած «*Journal of Religious Psychology*» (1904 թ.) և «*Journal of Applied Psychology*» (1915 թ.) գիտական ամսագրերը: Ավելի մանրամասն տե՛ս <https://www.teachpsych.org/page-1562855>, դիտվել է՝ 12.04.2025:

8 Յակոբ Պօղոսեան, *Հայ Յեղը և Հալածանքները հոգեբանութեան լոյսին տակ* ([Պոստոն], «Երան» տպարան, 1919), 3-4:

9 Նոյն տեղում, 326:

10 Նոյն տեղում, 327:

Գոյութեան Պայքարը» մեր Հայերոս մէջ երկար դարերէ ի վեր շատ սուր հանգամանք մը ստացած եւ անտանելի կացութիւն մը ստեղծած է: Մեր երկրին աշխարհագրական անյարմար դիրքը, վայրենի ու բարբարոս ցեղերուն հետ շարունակ մղած պատերազմները, Քրիստոնէական դարին յետոյ դրացի ժողովուրդներու հետ՝ քաղաքակրթական, ցեղային, եւ կրօնական կապերու գրեթէ բացակայութիւնը, եւ վերջապէս Հայ ցեղին տիրող կոշտ ու բարբարոս միջավայրին յարմար ըլլալը, մեզի գրեթէ միշտ սուղի նստած է: Հայ ցեղը շարունակ յարձակում կրած, յաղթուած, նուաճուած եւ ջարդուած է: Բնաշրջման օրէնքը կը ցուցնէ թէ, ոչ թէ ամէնալաւը, այլ ամէնայարմարն է որ կապրի, եւ կը ցաւիք ըսելու թէ Հայը «ամէնալաւը» եղած է, սակայն տիրող միջավայրին համար «ամէնայարմարը» եղած չէ: Մեր դրկիցները բարբարոս ու հովուական էին, իսկ մենք՝ հաստուած ու քաղաքակրթուած, անոնք հեթանոսական խաւարի մէջ կը խարխափէին, իսկ մենք՝ Քրիստոնէական վսեմ գաղափարներով թռիչ կ'առնէինք, անոնք ցեղին ու ազգը կը քարոզէին, իսկ մենք՝ մարդկութիւնը, անոնք ցեղային ռազմական աստուծոյն կը հաւատային, իսկ մենք՝ տիեզերական ու սիրոյ Աստուծոյն, անոնք աչքի տեղ աչք կը հատուցանէին, իսկ մենք՝ զմեզ կողոպտողին մեր վերարկուն ալ կը ձգէինք: Անոնք Մովսիսական օրէնքն ու Հին Ուխտը կ'ապրէին, իսկ մենք՝ Քրիստոնէական ու Սիրոյ Ավետարանը, անոնք կ'ապտակէին, իսկ մենք՝ կ'աղօթէինք...: Այս է Հայութեան դարաւոր հոգեբանութիւնը, իր համառօտ ձեւին տակ¹¹:

Գիրքը բաղկացած է երկու մասից. առաջին մասում («Հայ ցեղը եւ հալածանքները հոգեբանութեան լոյսին տակ»)՝ տաս գլուխ, իսկ երկրորդ մասում («Մտաբուժական միջոցներ»)՝ յոթ գլուխ: Քանզի անկարող էր իրականությանն անմիջականորեն ծանոթանալու, նա որոշում է ուսումնասիրությունն իրականացնել ԱՄՆ տեղափոխված վերապրողների շրջանում: Գրպանում ունենալով սեփական ձեռքով սարքած մի տետրակ՝ խանութխանութ, վայրից վայր է անցնում՝ տեսակցելու ու խոսելու հայերի հետ: Օգտվում է մինչ այդ հրատարակված և հրատարակվող հոդվածներից ու նյութերից, նամակներից, թերթերում, գրքերում, օտարերկրացի վկաների հիշողություններում և ուսումնասիրություններում ներառված տեղեկություններից: Ընթերցում է հեղինակավոր նյարդաբանների, հոգեբույժների, բժիշկների, կենսաբանների, հոգեբանների ու մարդաբանների գրքերը և այդ ամենի լոյսի ներքո ուսումնասիրում հայ ազգի խնդիրները, կատարում իր եզրակացությունները:

Այստեղ կկենտրոնանանք 22 հարցից բաղկացած մի հարցարանի վրա՝ որպէս փաստահավաք գործի և միաժամանակ Մեծ եղեռնի գիտական ուսումնասիրության առաջին համապարփակ փորձի մեթոդի՝ կազմված Հ. Պողոսյանի կողմից: Նա ընդգծում է, որ իր նպատակը բնավ ամփոփ չաշխատանք ստեղծելը չէր, պարզապէս ինքը կատարել է հետազոտություն, թեև, ինչպէս նշում է, հայերը, իրեն բժիշկ կարծելով, դժվարություններ էին հարուցում անանուն նամակներով¹²:

11 Նույն տեղում, 19-21:

12 Տե՛ս նույն տեղում, 5:

Հարցարանը ներառում է հետևյալ հարցերը, որոնք կազմված են հոգեբանական հետազոտություն կատարելու համար, և կենտրոնանում է հատկապես հույզերի, տրավմատիկ դրվագների և ցուցաբերած պաշտպանական ռեակցիաների, ինչպես և հոգեցունց փորձառությունների հետագա հոգեկան ու մարմնական ներազդեցությունների վրա.

1. Անուն: Քանի տարեկան էիր: Ո՞ր թուականին և ո՞ր: Ի՞նչ սեռ: Ամուսնացած թե ոչ:

2. Թե՛ ջարդերէն առաջ և թե՛ ջարդերու ընթացքին ի՞նչ զգացիր: Պոռացիր, փախար, դիմադրեցիր, թոթովեցիր, դողդողացիր, յարձակեցար, վախցար, ցնցուցար, բարկացար, անզգայ մնացիր և այլն, բացատրէ:

3. Ջարդերու ազդեցութիւնը ի՞նչ եղաւ մարմնիդ և մկանային դրութեանդ վրայ, ինչպէս լեզուի, ծնոտի, աչքի, ականջի, լորձոնքի, թուքի, կաթի և այլն:

4. Ջարդերու՝ ախորժակիդ վրայ ազդեցութիւնը ի՞նչ եղաւ: Անօթի զգացիր, ծարամ զգացիր, քունդ ի՞նչպէս էր:

5. Ջարդերու մտքիդ վրայ ազդեցութիւնը ի՞նչ էր: Ի՞նչ տեսակ պատրանքներ ունեցար, աչքի, ականջի, ախորժակի, հոտառութեամբ: Եւ ի՞նչ տեսակ մտային թերութիւններ յառաջ եկան, մելամաղձութիւն, տկարութիւն, մոռացկոտութիւն, սաստիկ երևակայութիւն ու գրգռում, դիւրագրգռութիւն և այլն:

6. Թե՛ ջարդերու ընթացքին և թե՛ անմիջապէս վերջը ատլի անձդ խորհեցար, թե՛ ուրիշները՝ ինչպէս ընտանիքդ, զաւակներդ, ազգականներդ, ազգդ և այլն:

7. Թե՛ ջարդերու ընթացքին և թե՛ անկէ վերջը, Աստուծոյ, կրօնքի, անմահութեան, եկեղեցիի, և հոգիի մասին խորհուրդդ ի՞նչ եղաւ:

8. Թե՛ ջարդերու ընթացքին և թե՛ անկէ վերջը բարոյական զգացումներդ ատլի բարձրացան թե՛ ինկան:

9. Թե՛ ջարդերու ընթացքին և թե՛ անկէ վերջը ընտանեկան սրբութիւնը և անձնական պատիւը ի՞նչ վիճակ ստացան:

10. Թե՛ ջարդերու ընթացքին և թե՛ անկէ վերջը մերձատրութեան փափաքը ատլիցար թե՛ պակսեցաւ: Սեռային գործարաններու վրայ ազդեցութիւնը ի՞նչ եղաւ:

11. Ջարդերուն նոր սերունդին վրայ տպաւորութիւնը ի՞նչ եղաւ: Այսինքն յղի եղած ժամանակ և կամ անկէ վերջը ծնող զաւակները վիճեցան թե՛ կանոնաւոր կերպով ծնան: Անոնց գլուխը, դէմքը ինչպէ՛ս էր: Առողջ էին թե՛ մարմնական և մտային թերութիւններ և տկարութիւններ ունէին:

12. Մայրական կաթը ի՞նչ փոփոխութիւններ կրեց, կանոնաւոր և առողջ էր, թե՛ անկանոն ու թունաւորուած:

13. Ջարդերու միջոցին և կամ անկէ անմիջապէս վերջը երազ տեսար, մղձաւանջներ ունեցար: Հիմա երազ, մղձաւանջ կ'ունենաս: Գիշերաշրջիկ ես. բացատրէ:

14. Ջարդէն վերջը վախկոտ, բարկացկոտ, դիւրագրգիռ թե՛ քաջ և յարձակող եղար:

15. Ջարդերը հայուն միտքը և բնատրութիւնը շինելուն մէջ ի՞նչ դեր ունեցած են: Կը խորհի՞ր որ ջարդը հայը ատլի անձնասէր, մելամաղձոտ, կասկածոտ, ճարպիկ, դիւրագրգիռ, կրօնասէր եւ երևակայող ու յոռետես շինած է:

16. Ջարդերուն հայ պատմութեան, հայ գրականութեան, հայ երաժշտութեան, գեղարուեստի, և ընկերային երեկոյներու վրայ ազդեցութիւնը ինչ եղած է և կամ կրնայ ըլլալ:

17. Ջարդի մատնուած հայութիւնը ֆիզիքական և մտային հիւանդութիւններէն ազատելու համար անմիջական ինչ միջոցներ կրնանք թելադրել: Բժշկական, հոգեբանական, կրթական, կրօնական: Ինչ:

18. Առողջ սերունդ մը յառաջ բերելու համար ինչ միջոցներ կրնան թելադրուիլ:

19. Նոր սերունդը ինչ միջոցներով կարելի է ջարդերու ազդեցութենէն ազատ պահել և անոնցմէ անվախ ու յարձակող ազգ մը յառաջ բերել:

20. Ջարդերու յառաջ բերած վախն ու ցնցումները ինչպէս կրնանք գործածել որ անոնք հայութեան մեծութեան և զարգացման սատարեն:

21. Ցեղային ատելութեամբ նոր սերունդը մեծցնելու համամիտ ես:

22. Այս վերլիշուած կէտերէն դուրս, դուք ուրիշ թելադրութիւն մը ունի՞ք:

Տօթ. Յ. Պ. Պօղոսեան

Հասցէ՝

Clark University - Worcester, Mass.¹³:

Բացի այս հարցարանից՝ Պողոսյանը տպւած թերթիկների վրա ունենում էր լրացուցիչ օրինակներ, որոնք իր ճանաչած անձանց միջոցով բաժանում էր կոտորածները վերապրած հայերին: Ինչպես ինքն է նշում, և ինչպես գրքից է ակնհայտ դառնում, գրքում նա ստեղծել է հոգեբանական նոր բառապաշար՝ հայոց լեզուն հարստացնող, որը, փաստորեն, ինքն է առաջին անգամ շրջանառության մեջ դնում, քանի որ հայերենով խիստ սակավ էին նման աշխատանքները, եթե առհասարակ կային այդ ժամանակ¹⁴:

Նա մանրամասն քննարկում է նաև հոգեբանական, նյարդաբանական, սոցիոլոգիական և հոգեբուժական գիտություններում 1910-ականներին արդեն իսկ հայտնի մեթոդները և տեսությունները, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու ոճրագործների էությունն ու վարքի ձևերը, ոճրագործությունը կանխելու միջոցները: Ինչպես նաև քննարկում է առաջին փաստածին հոգեբանական հետևանքները, որոնք նկատվում էին ցեղասպանությունը վերապրածների շրջանում:

Ոճրագործի մեջ Պողոսյանը դեռևս տասնամյակներ առաջ՝ նախքան Հաննա Արենդտի հանրահայտ միտքն առ այն, որ ծայրահեղ չարը գործարկվում է այն պատճառով և այն ժամանակ, երբ մարդը/մարդիկ հրաժարվում է/են անհատ լինելուց¹⁵, շեշտադրում է այն, որ «Անոնց մէջ Անձնական Եսը շատ տկար է, եւ երբեմն ալ բոլորովին կը պակասի»¹⁶: Ոճրագործներին ուսումնասիրելու առումով նա առանձնացնում է մի կենսաբանական, բայց և ընկերային-փիլիսոփայական դասակարգում՝ որպես տեսական և գործնական նպատակներին ծառայող միջոց.

13 Յ. Պ. Պօղոսեան, «Հայ ցեղը եւ ջարդերը», *Ազգ* (Պոստոն), թիւ 237-1011, 20 նոյեմբերի 1917 թ.:

14 Տե՛ս Պօղոսեան, *Հայ Ցեղը և Հայաձանքները*, 6:

15 Տե՛ս Hannah Arendt, *Eichmann in Jerusalem: A Report on the Banality of Evil* (New York: Viking Press, 1963):

16 Նույն տեղում, 349:

Հոս ոճրագործներու մասին Թինսոալի դասաւորումը գործնական նպատակներու համար շատ աղէկ կրնայ ծառայել: Անիկա կ'ընդունի թէ ոճրագործութիւնը գլխաւորաբար հակա-ընկերական (anti-social) եւ անոր բնոյթը մակարածական է: Մակարոյծները 3 տեսակի կրնան բաժանուիլ, 1) անոնք որ բռնաբռնող ուրիշի վրայ կ'ապրին, 2) անոնք՝ որ թէի ուրիշներու վրայ կ'ապրին, բայց քիչ թէ շատ իրենք ալ կը գործեն. եւ 3) անոնք՝ որ թէ ուրիշներու վրայ կ'ապրին եւ թէ զանոնք վնասելու կը ջանան: Բարոյական վատասեռածները եւ ոճրագործները 3-րդ դասակարգին կը պատկանին, որոնք ընկերութեան օրէնքները եւ իրաւունքները չեն յարգեր¹⁷:

Այս հատվածում Հակոբ Պողոսյանը, ամենայն հավանականությամբ, նկատի ունի անգլիացի քրիստոնյա-դեիստ փիլիսոփա Մեյյու Թինդալին¹⁸:

Հայոց ցեղասպանության անմիջական ազդեցության մասին խոսելիս նա հիշատակում է նաև սեփական փորձառությունը: Օրինակ՝ ասում է, որ դեռևս Կիլիկիո ջարդերից առաջ իր սիրելի վայրերն անգամ իր հոգեկանի մեջ ինչ-որ չարագուշակ բաներ էին կանխորոշում: Նա նաև հիշում է, որ Տարսոնից Ջմյուռնիա մեկնելիս անիծել է այդ վայրերը, ուխտել, որ այլևս չի վերադառնալու, բայց երբ 1914 թ. Կոնիայից Տարսոնով անցնելիս է եղել դեպի Մերսինի նավահանգիստը, վերհիշել է կիլիկյան արհավիրքները, որոնք մարմնական արտահայտություն են գտել՝ ցնցումի, դողի պատճառ դառնալով¹⁹: Ահա սեփական օրինակը նկատի ունենալով՝ նա գրում է. «Ջարդերու թէ ֆիզիքական եւ թէ մտային ազդեցութիւնները միայն ջարդի ընթացքին չեն, այլ անկէ վերջն ալ կը շարունակեն: Ջարդերու իւրաքանչիւր տեսարանն ու անոնց ազդեցութիւնները ենթակային ջղային դրութեան վրայ բան մը կ'աւելցնեն եւ ժամանակ մը վերջը անոնք կուտակուելով ահաւոր վնասի մը, հոգեկան սոսկալի երեւոյթի մը պատճառ կը դառնան»²⁰: Կամ. «Դարձեալ այն տեղերը, ուր խիստ յուզման ու դողի ենթարկուած ենք անգամ մը, մեզի սարսուռ կը պատճառեն, երբ դարձեալ անկէ անցնինք»²¹:

Հակոբ Պողոսյանն առանձնացնում է ջարդերի մտավոր-հոգեկան ազդեցությունների երկու հիմնական դրսևորում՝ ա) անմիջական ազդեցություններ, բ) հետագա ազդեցություններ: Անմիջական ազդեցությունները, ըստ հոգեբանի տեսության, մարդու մեջ երկու ձևով են դրսևորվում՝ հուզումների կամ հուզական պոթելումի՝ բարկության, ընդդիմանալու, հակառակվելու, հարձակվողականության, ատելության պոթելումների և ճիշտ հակառակը՝ կրավորականության՝ առանց ընդդիմության համակերպվելու, հուսալքման, վախի, սարսափի, դողի, պապանձման, ընկրկման ու փախուստի

17 Նույն տեղում:

18 Տե՛ս <https://www.encyclopedia.com/humanities/encyclopedias-almanacs-transcripts-and-maps/tindal-matthew-1657-1733>, դիտվել է՝ 11.12.2024:

19 Տե՛ս նույն տեղում, 88:

20 Նույն տեղում, 86:

21 Նույն տեղում, 87:

կամ ներփակման միջոցով²²: Իսկ հետագա ազդեցությունները ջարդերից հետո են ի հայտ գալիս: Ենթական, ջարդերի ժամանակ ունեցած վախն ու սարսափները վերհիշելով, տառապում է, հալածվում ցնորքներից և այդպիսով իր ամբողջ կյանքը ջարդերի տպավորության տակ անցկացնում²³:

Երբ որ հոս վայրկեան մը խորհինք մեր սիրելիներուն թշուառ վիճակին վրայ, թէ ինչպէս անոնք թշնամին առջեւէն հալածական, անհանգիստ անքուն, կը փախչին, լեռ ու ձոր կը թափառին, եւ կամ դժոխային անապատներու մէջ շարունակ կը տուայտին ու կը հիւծին, կը տառապին ու կը տանջուին, այն ատեն կրնանք երեւակայել թէ, այդ ամբողջ սոսկալի տեսարանները, փորձառութիւնները, իղձերն ու զսպուած հոգեկան կնճիռները (complex) անոնց կենսատու քունը կը խռովեն եւ անբացատրելի սոսկումներ յառաջ կը բերեն²⁴:

«Հայ ցեղը» և նրա տառապանքը

Հակոբ Պողոսյանը հայերի ողջ գոյությունը տառապանքով թաթախված է ընկալում ու մեկնաբանում և որպես դրա արտահայտություն առաջարկում է գնալ ու տեսնել հայերի կենտրոնները, տները, դռներն ու պատուհանները, եկեղեցիների նեղ դռներն ու վիմափոր, հողափոր բնակարանները, և այդ ժամանակ կարելի է հասկանալ հոգեբանական ողջ ներկայական առ այն, որ հայ ցեղը միշտ տանջված ու նահատակված է եղել, այլապես ինչո՞ւ պետք է անմատչելի վայրերում ու լեռներում իր գյուղն ու քաղաքը կառուցեր²⁵: Նա ուշադրությունը կենտրոնացնում է բնական պաշտպանության այնպիսի վայրերի վրա, ինչպիսիք են անառիկ լեռներում ու կիրճերում հիմնված Հաճըր, Ջեյթունը, Սասունը: Նույն երևույթը նա նկատում է հայ կերպարվեստի մեջ, օրինակ՝ հայ կանանց կերպավորման՝ տառապած, առօրյա հոգսերով տարված, մեղամաղձոտ, թախծոտ աչքերով, բայց ոչ երբեք ընկճված կամ կոտրված²⁶: Եվ դա չի ծագել միայն մեկ դիպվածով կամ աղետով.

Հայուն պատմութիւնը քիչ բացառութեամբ ջարդերու եւ հալածանքներու պատմութիւն մը եղած է, իր գրականութիւնն ու բանաստեղծութիւնը գրեթէ միշտ մեղամաղձոտ թոն մը ունի, եւ ամենագուարթ նիւթն իսկ իր գրչին տակ տխրութեան հոտով, արինի, ջարդի եւ վրէժի մահաբոյրով կը խառնուի, ու կը վերջանայ, եւ մեր կրօնական շարականներն իսկ մեղմ ու մեղամաղձոտ են, որչափ ալ արտայայտուած գաղափարները վեհ ու հոգեշունչ ըլլան: Ինչո՞ւ Հայը տիրական ու գուարթ երաժշտութիւն ու գրականութիւն չէ կրցած արտադրել, եւ կամ իր արտադրութիւնները ինչո՞ւ գրեթէ միշտ մեղամաղձոտ թօս

22 Տե՛ս նույն տեղում, 82:

23 Տե՛ս նույն տեղում, 83:

24 Նույն տեղում, 94-95:

25 Տե՛ս նույն տեղում, 213-214:

26 Տե՛ս նույն տեղում, 214-215:

մը ունին, այս եւ ասոնց նման «ինչու»ներու պատճառը պէտք է դարձել տիրապետող կոշտ միջավայրին ու բռնակալ քաղաքակրթութեան մէջը փնտռենք²⁷:

Թե՛ն հայ ազգը գրականություն, արվեստ, մշակույթ է ստեղծել, ջարդերն ու հալածանքները, դեռնա պարսկական տիրապետության ժամանակներից վկայված բռնագաղթերը թունավորել են հայի բնավորությունը²⁸: Սակայն թվում է, թե մի յունգյան իմաստասիրությամբ նա պնդում է՝ «ամէն բարիք չարիք մը ունի, եւ ամէն չարիք բարիք մը», և այս դինամիկ հարաբերության մեջ է դիտարկում հայ-թուրք փոխհարաբերությունները՝ հային ներկայացնելով որպէս քաղաքակրթությանն ու լուսավորությանը, արվեստներին ու գիտությանը միտված բարիք ստեղծող, իսկ թուրքին՝ որպէս կեղեքող և ի վերջո հայի բնաջնջումը ծրագրող²⁹: Եվ այս ամենն է նաև մղել հայերին ստեղծելու հայրենասիրական գրվածքներ ու գրականություն, ունենալու ազգասիրական կենտրոնացում, անդրադառնալու ինքնաճանաչման ու ինքնաքննման հարցերի³⁰:

Ողջ ուսումնասիրության մեջ տարտղնված ներկայացնելով ոճրագործ կողմին՝ դոկտոր Պողոսյանը կենտրոնանում է հայերի ներքին հոգեբանական հարցերի վրա, մանրամասն քննության առնում դրանք ժամանակի նորաձև տեսությունների համատեքստում և կատարում հարցադրում. «....կայ միջոց մը, դարման մը եւ վերջապէս ճամբայ մը որպէս զի դարերով տառապող այս ժողովուրդը, իր տխուր եւ մեղամաղձոտ բնատրոյթնէ ազատուի, եւ ազատ, անվախ, յարձակող ու կորովի նոր սերունդ մը, նոր հայութիւնը մը յառաջ գայ»³¹: Թե՛ն վերջնական միջոց առաջարկելուց հեղինակը հրաժարվում է, ինչը պրոֆեսիոնալիզմի ցուցիչ է, քանի որ լուծումները մեկ ոլորտի չեն պատկանում, այլ, ինչպէս ինքն է նշում, կապված են քաղաքական խիստ կնճռոտ խնդիրների հետ, և միայն դրանց լուծումով կարելի է գոհացուցիչ արդյունքի հասնել, այդուհանդերձ, կարծում է, որ հոգեբանական առումով կարելի է բազմաթիվ էականորեն ամոքիչ գործողություններ ու քայլեր ձեռնարկել: Նա նշում է այն հոգեբանների անունները, որոնց աշխատությունների վրա հիմնվելով հնարավոր է իրականացնել «մտաբուժությունը»՝ որպէս ապագայի գիտական ուղղություն՝ գործնական արդյունքների հանգեցնող³²: Այս առումով նա նաև ընդհանրացնող մի դիտարկում է անում, թե նման հանրությաների ու անհատների դեպքում ինչ պէտք է հաշվի առնի «մտաբույժը»՝

ա. ընտանեկան պատմությունը՝ ժառանգական, մտային հատկությունները, ընտանեկան սովորույթները, խառնվածքը, ֆիզիկական հիվանդությունները, վնասակար սովորությունները և «ոճրագործական միտումները»³³,

բ. անձնական պատմությունը՝ հղացման ու ծննդյան պայմաններից սկսած, անց-

27 Նույն տեղում, 218:

28 Տե՛ս նույն տեղում, 220:

29 Տե՛ս նույն տեղում, 260:

30 Տե՛ս նույն տեղում, 263:

31 Նույն տեղում, 277:

32 Տե՛ս նույն տեղում, 278-280:

33 Տե՛ս նույն տեղում, 283:

նելով տարիքային զարգացման փուլերով, հուզումներով, կրոնական փորձառություններով, հիվանդություններով, կերակուրով մինչև այլևայլ մտային զարգացումներ,

գ. ախտի պատմությունը,

դ. ախտի ներկա վիճակը:

Եվ որպես «դարմանի» ձևեր նշում է ժամանակի բուժման ձևերը, որոնք արդիական են նաև մեր օրերում՝ բացի միգրացիոն կրոնական հավատքին մեծ դեր տալուց, որը համարում է հոգեբանական ամենից կենսական ազդակներից մեկը՝ իր փարատող միջոցներով՝ Սուրբ Գիրք ու Նարեկ կարդալով, կրոնական պաշտպանիչ միջոցներ կրելով ու կախելով, ուխտի գնալով, աղոթելով³⁴: Բուժման հարցում նա մեծ դեր է հատկացնում նաև կրթությանը:

Քննարկելով հոգեցնցման ազդեցությունն ընկճախտի ենթարկվածների օրգանիզմների կենսաքիմիական փոփոխությունների վրա՝ Հ. Պողոսյանն առավել մանրամասն խոսում է նրանց պահվածքի, հակազդեցությունների, բնավորության գծերի կամ նոր գծերի ի հայտ գալու մասին ու դա հիմնավորում ժամանակի ուսումնասիրություններով: Միաժամանակ ներկայացնում է ցնցումի տարբեր ազդեցությունները՝ տվյալ անձի բնորոշիչներով պայմանավորված, այն է՝ արական սեռի է, թե իգական, առողջ է եղել, թե հիվանդ, ինչպիսի խառնվածքի տեր մարդ է, քանի որ տարիքով պայմանավորված՝ ցնցումի առավել ենթակա է համարում երիտասարդներին, քան ծերերին, հետևաբար դրա ազդեցությունն ավելի շատ երիտասարդների դեպքում է նկատում, քան ծերերի³⁵:

Ամփոփելով պետք է ասել, որ Հ. Պողոսյանի ուսումնասիրությունները մեծարժեք գործեր են և կարևոր հիմք Հայոց ցեղասպանության հոգեբանական ուսումնասիրությունների առավել թիրախային իրականացման համար: Դրանց շրջանառումը, դրանց ամենատարբեր կողմերին անդրադառնալը, մանավանդ որ դրանք հոգեբանական գիտության կայացման վաղ փուլերում կատարված ուսումնասիրություններ են, մեծապես կնպաստեն ոլորտի՝ տեսական ու ճանաչողական առումներով կայացմանը: Հոգեբանական գիտության շրջանակներում Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ հիմնականում զբաղվել են արևմտահայ կամ սփյուռքահայ հոգեբանները, և սկզբունքային է օգտվել նման կարևորագույն աշխատություններից և ուսումնասիրություններից:

Հայատյացությունը միայն 1915 թ. չի դրսևորվել և ոչ էլ սկիզբ առել և/կամ սահմանափակվել Հայոց ցեղասպանությամբ. սերնդեսերունդ փոխանցված էթնիկ հոգեցնցումներն ու վախերը կրկնվել և չեն հաղթահարվել մինչ օրս: Վերջին տարիներին Արցախի հայերի բռնի տեղահանություններն էլ հոգեբանական նոր խնդիրներն ու վերահոգեցնցումների պատճառ են դարձել ու դառնում թե՛ անհատի և թե՛ ազգի մակարդակով: Հետևաբար դրանք ըմբռնելու և ուսումնասիրելու հրամայականը կասկածից վեր է և վաղուց հասունացած:

34 Տե՛ս նույն տեղում, 314:

35 Տե՛ս նույն տեղում, 69:

**HAKOB P. POGHOSYAN'S WORK AS THE FIRST ATTEMPT
OF THE SYSTEMATIC STUDY OF THE ARMENIAN GENOCIDE
IN PSYCHOLOGICAL SCIENCE**

*Sose Asatryan,
Armenian Association for Analytical Psychology*

SUMMARY

This article aims to introduce a broader audience to the work of American-Armenian psychologist Hagop Boghosian and to highlight his pioneering contributions to the psychological study of the Armenian Genocide. Dr. Boghosian's studies are the first attempt of their kind. As a survivor of the Armenian Genocide, he was uniquely positioned to convey historical realities and their psychological consequences through both his personal testimony and rigorous fieldwork conducted among American Armenians. His research has the potential to stimulate renewed interest among psychologists and to inspire further scholarly inquiry.

In his work, Dr. Boghosian provides a detailed account of the factors preceding and contributing to the genocide, as well as the psychological and physiological torture, repression, and persecution endured by witnesses and survivors.

Key words: Hagop Boghosian, persecutions of the Armenians, the Armenian Genocide, psychology, trauma, perpetrators.

**РАБОТА АКОБА П. ПОГОСЯНА КАК ПОПЫТКА
ПЕРВОГО СИСТЕМАТИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН
В ПСИХОЛОГИЧЕСКОЙ НАУКЕ**

*Sose Asatryan,
Армянская ассоциация аналитической психологии*

РЕЗЮМЕ

Эта статья направлена на то, чтобы познакомить более широкую аудиторию с работами американско-армянского психолога Акоба Погосяна и подчеркнуть его новаторский вклад в психологическое изучение Геноцида армян. Исследования доктора Погосяна можно считать первой попыткой в своей области. Как выживший Геноцида армян, он обладал уникальной возможностью передать исторические реалии и их психологические последствия как через собственные воспоминания, так и посредством тщательных полевых исследований среди американских армян. Его исследования способны стимулировать возобновление интереса среди психологов и вдохновить на дальнейшие научные исследования.

В своей работе доктор Погосян подробно описывает факторы, предшествовавшие геноциду и способствовавшие ему, а также психологические и физиологические пытки, репрессии и преследования, которые пережили свидетели и выжившие.

Ключевые слова: Акоб Погосян, преследования армян, Геноцид армян, психология, травма, преступники.

REFERENCES

Boghossian, Hakob P. *Հանրնի ընդհանուր պատմությունը և շրջակայ Գոզան-տաղի հայ գիւղերը* [The General History of Hadjin and the Surrounding Armenian Villages of Gozan-tagh]. Los Angeles, Bozart Press, 1942;

Boghossian, Hakob P. *Հայ Յեղը և Հալածանքները հոգեբանության լոյսին տակ* [Armenian Race and Persecution in the Light of Psychology], [Boston], Eran Tparan [Press], 1919;

Boghossian, Hakob P. *Ներածություն հայ հոգեբանության* [Introduction to Armenian Psychology], Cairo, Sahak-Mesrop Tparan [Press], 1958.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Սոսե Ասատրյան, ԳԻՀԻ հոգեբանների և հայագետների միավորման անդամ, Վերլուծական հոգեբանության հայկական ասոցիացիայի (ՎՀՀԱ) հիմնադիր անդամ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ յունգյան հոգեբանության տիրույթին առնչվող տարատեսակ երևույթներ, որոնք վերաբերում են, մասնավորապես, կոլեկտիվ անգիտակցականին, ազգային խորհրդանիշներին, անհատի հոգեկանի ձևավորման ընթացքում կրոնի և մշակույթի ազդեցությանը, կանացի արքետիպերին (Մեծ մոր արքետիպ, Անիմա), հայատյացության սոցիալ-հոգեբանական կողմերին և դրան առնչակցվող խորհրդաբանական համակարգին:

Էլ. փոստի հասցեն՝ asatryansose@gmail.com

Sose Asatryan, psychologist, member of the GIHI Union of Psychologists and Armenologists, founding member of the Armenian Association for Analytical Psychology.

Research fields: various phenomena within the field of Jungian psychology, including the collective unconscious, national symbols, the influence of religion and culture on the formation of psychic contents, female archetypes (the Great Mother archetype, the Anima), the socio-psychological aspects of Armenophobia, and the symbolic systems associated with it.

E-mail: asatryansose@gmail.com

Сосе Асатрян, психолог, член Объединения психологов и арменоведов при ГИХИ, член-основатель Армянской Ассоциации Аналитической Психологии (АААП).

Область исследований: различные явления, связанные с юнгианской психологией, включая коллективное бессознательное, национальные символы, влияние религии и культуры на формирование содержания психики, женские архетипы (архетип Великой Матери, Анима), социально-психологические аспекты армянофобии и связанные с этим символические системы.

Эл. почта: asatryansose@gmail.com

ՀԱՅԵՐԻ ԶԱՐԴԸ ԱԳՈՒԼԻՍՈՒՄ 1919 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԱԴԻԲԵԶԱՆԱԿԱՆ ՈՒ ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Էլեն Հակոբյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ և ԵՊՀ, Հայաստան

Հոդվածում անդրադարձ է կատարվում 1919 թ. Նախիջևանի Վերին Ագուլիս և Ներքին Ագուլիս գյուղերում հայ խաղաղ բնակչության ջարդին: Քննարկման առարկա են ջարդի կազմակերպման ռազմաքաղաքական համատեքստին և դրանում Նախիջևանի ադրբեջանական ու թուրքական իշխանությունների դերակատարմանը, ինչպես նաև տեղական պաշտոնյաների և բնակիչների մասնակցությանն առնչվող հարցերը:

Հոդվածի գլխավոր սկզբնաղբյուրներն են վերապրածների և ժամանակակիցների վկայությունները, պաշտոնական փաստաթղթերն ու հրապարակումները: Նշված նյութերի համադրական քննությունը թույլ է տալիս համահավաք կերպով ներկայացնել՝ ա) Ագուլիսում հայերի ոչնչացման ընթացքը, բ) 1919 թ. վերջին Նախիջևանի ադրբեջանական իշխանությունների քաղաքական խնդիրները որպես Ագուլիսի հայերի ոչնչացմանը նպաստած հիմքեր, գ) Նախիջևանում թուրքական իշխանությունների գերակա ազդեցությունը և նրանց անունից ջարդի օրինականացումը, դ) ջարդի անմիջական կազմակերպիչների և իրագործողների շրջանակը և ե) հայերի դեմ բռնություններին տեղացի թաթարների մասնակցության սոցիալ-խմբային գործոնները:

Բանալի բառեր՝ հայեր, Ագուլիս, Գողթն, Նախիջևան, Ադրբեջան, Օսմանյան կայսրություն, բռնություն, ջարդ:

Հոդվածը ներկայացվել է՝ 05.08.2025: Ընդունվել է տպագրության՝ 07.10.2025:

The article was submitted on 05.08.2025 and accepted for publication on 07.10.2025.

Статья поступила 05.08.2025 и была принята к публикации 07.10.2025.

Ինչպես հղել՝ Էլեն Հակոբյան, «Հայերի ջարդը Ագուլիսում 1919 թվականին և Նախիջևանի ադրբեջանական ու թուրքական իշխանությունների դերը», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 83-106:

How to cite: Elen Hakobyan, “The 1919 Massacre of Armenians in Agulis (Nakhijevan) and the Role of the Azerbaijani and Turkish Authorities,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025), 83-106.

Как сослаться: Элен Акопян, “Резня армян в Агулисе (Нахиджеван) в 1919 году и роль азербайджанских и турецких властей,” *Цехаспанагитакан андес* 13, no. 2 (2025), 83-106.

Մուտք

1919 թ. դեկտեմբերին հայ բնակչության ջարդ տեղի ունեցավ Նախիջևանի Վերին Ագուլիս գյուղում, որը նույն թվականի օգոստոսից գտնվում էր ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո: Նախապատերազմական շրջանում Ագուլիսը հայկական ամենամեծ բնակավայրն էր Նախիջևանի գավառի Օրդուբադի շրջանում¹ (պատմական Գողթն գավառի տարածքը), որը հարավից Արաքս գետի հովտով սահմանակից էր Իրանին, արևմուտքից կապվում էր Նախիջևանին, արևելքից՝ Մեղրիին, իսկ հյուսիս-արևելքում Կապուտջուղի լեռնանցքով միանում էր Զանգեզուրի գավառին: Վերին և Ներքին Ագուլիս գյուղերն ընկած էին հարավային առավել դաշտավայրային հատվածում՝ մոտ շրջանային կենտրոն Օրդուբադին: Ագուլիսի հայ բնակչությունը 1918 թ. և 1919 թ. ամռանը զերծ էր մնացել լայնածավալ բռնություններից՝ հնազանդվելով օսմանյան և ադրբեջանական իշխանությունների: Այդ իսկ պատճառով Ագուլիսի «լոյալ և անզեն» հայերի ջարդն անսպասելի էր նաև Երևանում Հայաստանի իշխանությունների համար²:

Հոդվածի նպատակն է սկզբնաղբյուրների համահավաք քննությամբ ներկայացնել Ագուլիսում հայերի ջարդի մանրամասն պատմությունը, պարզաբանել ջարդի կազմակերպման և իրագործման մեջ Նախիջևանի ռազմաքաղաքական իշխանությունների ներգրավվածությունը և բացահայտել գլխավոր ոճրագործներին: Հոդվածի աղբյուրագիտական հենքն են կազմում դեպքերի վերապրածների և ականատեսների վկայությունները³, հայկական և օտարերկրյա պաշտոնական հաղորդումները,

1 Ազգագրագետ Երվանդ Լալայանի տվյալներով՝ 1904 թ. շրջանի 55 գյուղերը և Օրդուբադ քաղաքն ունեին 9946 հայ և 14 736 մուսուլման բնակչություն: Վերին Ագուլիսն ուներ 2205 հայ, 731 մուսուլման բնակչություն: Վերին Ագուլիսին էր կապված նաև Ներքին Ագուլիս կամ Դաշտ գյուղը, որտեղ ապրում էին միայն հայեր՝ 1904 թ. դրությամբ 739 հոգի (տե՛ս Երվանդ Լալայան, «Նախիջևանի գաւառ, Ա մասն. Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան», Ազգագրական հանդես, գիրք XI (1904), 305, 314): Շրջանում ամենամեծ բնակավայրն Օրդուբադ քաղաքն էր՝ հիմնականում մուսուլման բնակչությամբ (1907 թ. տվյալներով՝ 4941 բնակիչներից 4447-ը թաթարներ էին, 399-ը՝ հայեր, 94-ը՝ ռուսներ) (տե՛ս George Bournoutian, *Armenia and Imperial Decline. The Yerevan Province, 1900-1914* (London and New York: Routledge, 2018), 43, 45):

2 Տե՛ս «Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.: Փաստաթղթեր և նյութեր», Բանբեր Հայաստանի արխիվների 1-2 (1993), 196-197:

3 1920 թ. հունվարի 27-ին Վերին Ագուլիսի հաշտարար դատավոր Հովհաննես Տեր-Անտոնյանը ՀՀ արտաքին գործերի նախարարությանը վկայություն է տվել Ագուլիսում կատարվածի մասին: Հայաստանի ազգային արխիվում պահպանված այդ վկայությունը տպագրվել է 1993 թ. «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում: Ագուլիսի բնակիչ, պատմաբան Հովհաննես Հախնազարյանն իր «Գողթան գավառ» գրքում ներկայացրել է նաև ջարդի մասին իր վկայությունը (տե՛ս Դոկտ. Յովհաննես Հախնազարեան, *Գողթան գաւառ (պալամագրություն և յուշագրություն)* (Թեհրան, 1991)): Պատմաբան Արգամ Ավագյանը հավաքել և հրատարակել է 15 վկայություն, որոնց մեծ մասը պահվում է նրա անձնական արխիվում: Կարևոր է նաև 1918-1919 թթ. Վերին Ագուլիսում որպես ռազմական բժիշկ ծառայած Նիկոլայ Ավարյանի վկայությունը՝ գրված 1920 թ. փետրվարին: Կա մեկ այլ վկայություն, որի հեղինակն անհայտ է, սակայն վկայությունից պարզ է դառնում, որ նա իրադարձություններն անմիջականորեն վերապրածներից է և հուշերը գրի է առել դեպքերից շատ չանցած: Ուշադրության են արժանի նաև վերինագուլիսցի վերապրածներ Շմավոն Հախնազարյանի և Թովմաս Հայրապետյանի հուշերը՝ շարադրված 1950-ական թվականներից հետո, և ներքինագուլիսցի Կարապետ Սիմոնյանի վկայությունը: Դիտարկել ենք նաև ծնունդով Վերին Ագուլիսից, սակայն թիֆլիսաբնակ Հակոբ

ժամանակի մամուլի հրապարակումները:

Պատմագիտական գրականության մեջ Ագուլիսի հայերի ջարդը ներկայացրել են Սիմոն Վրացյանը⁴, Ռիչարդ Հովհաննիսյանը⁵, Էդիկ Զոհրաբյանը⁶: Արգամ Այվազյանը նաև հավաքել ու հրատարակել է վերապրածների և ժամանակակիցների մինչ այդ անտիպ մնացած տասնմեկ վկայություններ⁷: Ծնունդով Ագուլիսից ադրբեջանցի գրող Աբրամ Այլիսի 2012-2013 թթ. ռուսալեզու «Дружба народов» («Ժողովուրդների բարեկամություն») ամսագրում հրապարակել է իր «Քարե երազներ» վեպը, որում անդրադարձ կա նաև Ագուլիսի հայերի ջարդին⁸: Միկայիլ Մամեդովը, անդրադառնալով Այլիսի վեպին, Ագուլիսի ջարդը ներկայացրել է որպես քեմալական բանակի իրագործած ոճիր Հայոց ցեղասպանության քաղաքականության շարունակման համատեքստում⁹:

1. Ռազմաքաղաքական դրությունը ջարդին նախորդած շրջանում (1918-1919 թթ.)

1918 թ. ամռանը օսմանյան բանակը գրավեց Նախիջևանը՝ տեղիք տալով հայ բնակչության դեմ զանգվածային բռնությունների¹⁰: Օսմանյան տիրապետության շրջանում Ագուլիսի հայերը, չդիմադրելով հրամանատար Խալիլ բեյին, շարունակեցին տեղում ինքնակառավարումը՝ «Հայ հեղափոխական դաշնակցության» գործիչ Աշոտ Մելիք-Մուսյանի գլխավորությամբ¹¹:

Անագյանի, Ագուլիսի մերձակա Ցղնա գյուղի բնակիչ բժիշկ Գարեգին Հովսեփյանի հուշերը (տե՛ս Արգամ Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը: Ականաբեռների և ժամանակակիցների վկայություններ* (Երևան, Հեղ. հրատ., 2013)): Վերապրած ամուսիններ Հայկանուշի և Հարությունի մասին տեղեկություններ կան նրանց թոռնուհու՝ նկարչուհի Լուսիկ Սամվելյանի (Ագուլեցի) հուշագրական գրքում, իսկ գրույցի ընթացքում նրանց փրկության մասին պատմել է նաև ծոռնուհին՝ Աստղիկ Սամվելյանը (տե՛ս Լուսիկ Ագուլեցի. *հոգևորի ճանապարհով* (Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2018), 10-29:

4 Տե՛ս Սիմոն Վրացյան, *Հայաստանի Հանրապետություն* (Երևան, «Հայաստան» հրատ., 1993), 355-361:

5 Տե՛ս Richard Hovannisian, *The Republic of Armenia, Vol. II: From Versailles to London, 1919-1920* (Berkeley, Los Angeles and London: University of California Press, 1982), 234-240:

6 Տե՛ս Էդիկ Զոհրաբյան, *Նախիջևանյան հիմնախնդիրը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր – 1920 թ. ապրիլ)* (Երևան, 2002), 223-241:

7 Տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը: Ականաբեռների և ժամանակակիցների վկայություններ*: Տե՛ս նաև Արգամ Այվազյան, *Նախիջևանը 1905 թ. և 1918-1919 թթ. կրակե շղթայի գոյամարտերում* (Երևան, Ա. հ., 2005), 310-380:

8 Տե՛ս Akram Aylisli, *Farewell, Aylis: A Non-Traditional Novel in Three Works*, trans. Katherine E. Young (Brighton: Academic Studies Press, 2018), 71-159, 271-301:

9 Տե՛ս Mikail Mamedov, “Reading the Novel Stone Dreams on the 100th Anniversary of the “Great Catastrophe”,” *Nationalities Papers* 44:6 (2016): 967-984:

10 Տե՛ս Էդիկ Զոհրաբյան, *Ազգամիջյան կոիմները Երևանի նահանգում 1918 թվականին* (Երևան, «Հայագիտակ», 2000), 125-128: Օսմանյան հարձակման հետևանքով Գողթնում ավերածությունների և կորուստների մասին տե՛ս նաև *Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов*, под редакцией М. Г. Персисяна (Ереван: «Айастан», 1982), 539:

11 Տե՛ս Իրազել, «Դրությունը Գողթնի շրջանում», *Հանգ* (Երևան), 14 նոյեմբերի 1918, 1-2:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և Օսմանյան կայսրության պարտությունից հետո Հայաստանի կառավարությունը պետք է ստանձներ Նախիջևանի վերահսկողությունը՝ համաձայն բրիտանական հրամանատարության որոշման: Հայկական առաջխաղացումը խափանելու համար Նախիջևանի մուսուլմանական խորհուրդը հայտարարեց ինքնավարության մասին՝ հռչակելով «Արաքսյան հանրապետությունը»: Միայն 1919 թ. մայիսից Հայաստանի կառավարությունը կարողացավ սահմանափակ թվով զորք մտցնել Նախիջևան և տեղում որոշակի իշխանություն հաստատել: Ազուլիսը դարձավ Գողթն գավառի վարչական կենտրոնը, իսկ գավառապետ նշանակվեց Աշոտ Մելիք-Մուսյանը: Սակայն Ադրբեջանի դրդմամբ և օգնությամբ, թուրքական հրամանատարների և զինվորականների մասնակցությամբ 1919 թ. ամռանը Նախիջևանի թաթարական համայնքները հայկական վարչակազմի դեմ խռովություն բարձրացրին: Ապստամբությունն ուղեկցվեց Նախիջևանի հայ բնակչության զանգվածային սպանություններով ու տեղահանությամբ¹²: Ի վերջո Բաքվից ուղարկված Սամեդ բեյ Ջամալինսկին Նախիջևանում հաստատվեց ադրբեջանական զեներալ-նահանգապետ, ապստամբությունը գլխավորած թուրքական սպա Խալիլ բեյը¹³ և տեղացի ազդեցիկ գործիչ Քելբալի խանը՝ համապատասխանաբար գլխավոր և դաշտային հրամանատարներ, իսկ ներկայացուցչական մարմինը մուսուլմանական խորհուրդն էր (միլլի շուրա):

Գողթնում ադրբեջանական խռովությունն ուղղորդվում էր Ազուլիսից հարավ-արևելք գտնվող Օրդուբադ քաղաքից: Ռազմական անհաջողություններից հետո և հարձակման վտանգի ներքո Ազուլիսի հայ ղեկավարները տեղի թաթարների պահանջով գյուղից հեռացրին գավառապետ Մելիք-Մուսյանին¹⁴: Ըստ իրադարձությունների ականատես, Վերին Ազուլիսում հաստատված բժիշկ Նիկոլայ Ավշարյանի՝ ազուլիսցիները, պատգամավորներ ուղարկելով Օրդուբադ, պայմանականորեն ընդունեցին Ադրբեջանի կառավարության գերիշխանությունը մինչև հարցի որոշումը «խաղաղության վեհաժողովում»¹⁵: Գողթնի հայ առաջնորդները, լեռնային գյուղերում շարունակելով ինքնապաշտպանությունը, 1919 թ. օգոստոսի 25-ի համագումարի դիմումում Ազուլիսն անապահով էին համարում ծանր զինտեխնիկա տեղակայելու համար, նշում, որ Վերին Ազուլիս և Ներքին Ազուլիս գյուղերն արդեն գրավոր հպատակություն են հայտնել Ադրբեջանին, և «....նրանց ֆիզիկական գոյութանը

12 Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 186: Զոհրաբյան, Նախիջևանյան հիմնախնդիրը և Հայաստանի «դաշնակիցները», 174-179:

13 1918 թ. օսմանյան զորքերին առաջնորդել է Նախիջևան: 1919 թ. հուլիսին, օսմանյան 15-րդ բանակային կորպուսի հրամանատար Քյազըմ Կարաբեքիրից ցուցումներ ստանալով, գլխավորել է Շարուր-Նախիջևանի մուսուլմանների ապստամբությունը (տե՛ս Hovannisian, *The Republic of Armenia*, Vol. II, 74):

14 Տե՛ս Այվազյան, *Ազուլիսի 1919 թ. ողբերգություն-եղենը*, 159-160: Այս մասին Հովհաննես Հախնազարյանը նշում էր, որ Աշոտ Մելիք-Մուսյանը և մյուս ղեկավարները դեպքերի բերումով հեռացել էին Ազուլիսից:

15 Տե՛ս Այվազյան, *Ազուլիսի 1919 թ. ողբերգություն-եղենը*, 13: Խոսքը 1919-1920 թթ. Փարիզի խաղաղության վեհաժողովի մասին է:

մեծ վտանգ չի նախատեսվում»¹⁶։ Տեղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար ՀՀ կառավարությունը Գողթն էր ուղարկել Գարեգին Նժդեհին և խմբապետ Ղազար Քոչարյանին։ Վերջինս մնաց Գողթնում որպես լեռնային գյուղերի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, իսկ Նժդեհը հաստատվեց Կապանում։ Սիմոն Վրացյանի հաղորդմամբ՝ ագուլիսների «պահանջով ինքնապաշտպանական ուժերի ազդեցությունը չէր տարածվում Ագուլիսների վրա»¹⁷։

1919 թ. սեպտեմբերին Շարուր-Նախիջևանում չեզոք գոտի ստեղծելու հարցով ընթացած բանակցությունների ժամանակ ադրբեջանական իշխանություններն առաջարկեցին Դարալագյազը (Վայոց ձորի տարածքը) Հայաստանի մաս ճանաչելու դիմաց անմիջապես ստանալ Ագուլիս-Օրդուբադ գիծը, ինչը ՀՀ կառավարությունը մերժեց¹⁸։ Արդեն հոկտեմբերին ամերիկյան միջնորդությամբ չեզոք գոտու ստեղծումը փաստացի ձախողվեց։

2. Ագուլիսը՝ ադրբեջանական իշխանության ներքո

1919 թ. սեպտեմբերից Ագուլիսների հայերը փաստացի մեկուսացած էին գավառի մյուս հայկական բնակավայրերից և ինքնապաշտպանական ուժերից։ Ադրբեջանական իշխանությունները ստանձնեցին գավառի հարավային բնակավայրերի վերահսկողությունը։ Օրդուբադում գավառապետ էր նշանակված նախկին շրջանային ոստիկանապետ Աբաս Ղուլի բեկ Թայիրովը, իսկ Ագուլիսում իշխանությունը կենտրոնացած էր ոստիկանապետ Մուստաֆա բեկ Մունշինի՝ Երևանի նահանգական դատարանի նախկին թարգմանի ձեռքում։

Ըստ ականատեսների վկայությունների՝ տեղական պաշտոնյաները և ոստիկանները գաղտնաբար խրախուսում և անպատիժ էին թողնում Ագուլիսում հայերի սպանություններն ու կողոպուտները¹⁹։ Ամերիկյան նպաստամատույցի աշխատակիցներ Քլարենս Աշերը և Քարլթոն Այերը 1919 թ. սեպտեմբերի 23-ին Ագուլիս այցից հետո գրում էին, որ Ագուլիսի պարսպապատ ներքին թաղամասն ունակ էր պաշտպանության, սակայն բնակիչներն ընդունել էին Նախիջևանի մուսուլմանական վարչակազմը, քանի որ այն գավառի տրամաբանական, իսկ ձմռան ընթացքում միակ հասանելի կենտրոնն էր։ Գավառապետ Աբաս Ղուլի բեյը գովաբանել էր Ագուլիսի բնակչության

16 Տե՛ս Զոհրաբյան, *Նախիջևանյան հիմնախնդիրը և Հայաստանի «դաշնակիցները»*, 159-164։

17 Վրացյան, *Հայաստանի Հանրապետություն*, 360։

18 Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 122։

19 Սպանվել էին Աշոտ Մելիք-Մուսյանի ծնողները, կողոպտվել և սպանվել էր Ներքին Ագուլիսից մի բնակիչ իր ծառայի հետ, սակայն երկու դեպքում էլ մարդասպաններն ազատ էին արձակվել։ Մի գիշերում կողոպտվել էր երեք եկեղեցի, որի հեղինակը Ագուլիսի մուսուլմանական թաղի բնակիչներից էր, սակայն ձերբակալվելուց հետո նա ազատ էր արձակվել։ Ձերբակալվել էին Սբ Թովմա վանքի գանձապետ Ալեքսան Փանյանը և իր օգնականները, ապա՝ երկու հոգի ևս, սակայն վերջիններիս գնդակահարել էին առանց Օրդուբադ հասցնելու։ Սեպտեմբերի 1-ին Ցղնա գյուղից Ագուլիս ճանապարհին՝ Դիսար գյուղի և Ագուլիսի միջև, սպանվել էր Գարեգին Սարգսյանի կինը։ Ըստ Ավարյանի՝ սպանողներն էին Դիսար գյուղի մելիքը և այլ համագյուղացիներ (տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղենը*, 111-112)։

խաղաղասիրությունը, սպաներ էր ուղարկել Օրդուբադից՝ մուսուլման ներխուժող-ներին հեռացնելու համար, սակայն ամերիկյան ներկայացուցիչները նշում էին, որ հայերը փաստացի պատանդի կարգավիճակ ունեին և մեկ այլ տեղում թաթարների հնարավոր դժվարությունների դեպքում հաշվեհարդարի զոհ էին դառնալու²⁰։ Ըստ բժիշկ Ավշարյանի՝ Ագուլիսի հայերը հաղորդել էին ամերիկյան ներկայացուցիչներին, որ ցանկանում էին թողնելով իրենց ունեցվածքը, «միայն կենդանի շնչով» դուրս գալ գյուղից²¹։

1919 թ. նոյեմբերից Ագուլիսում ձևավորված փխրուն իրավիճակն սկսեց կտրուկ փոխվել ռազմաքաղաքական զարգացումների բերումով։ Ադրբեջանական ուժերը Գողթն գավառին արևելքից սահմանակից Զանգեզուրը գրավելու անհաջող փորձ ձեռնարկեցին։ Ի պատասխան դրա՝ հայկական ուժերն իրենց վերահսկողության տակ վերցրին Զանգեզուրի Ողջի, ապա Գեղվա ձորի մուսուլմանաբնակ ապստամբ գյուղերը, որոնց փախստականները հաստատվեցին Օրդուբադի շրջանում։ Դեկտեմբերի կեսերից նրանք սկսեցին խմբվել Ագուլիսի դարպասների հետևում, շատ բնակիչներ ծայրամասերից փոխադրվում էին գյուղի կենտրոնական հատվածներ։ Ըստ Ավշարյանի, տեսնելով իշխանությունների անփույթ վերաբերմունքն ագուլիսցիների նկատմամբ, փախստականներն էլ մասնակցում էին թալանին ու սպանություններին։

Օրդուբադի ղեկավարների պահանջով Ագուլիսից բանագնացություն ուղարկվեց Զանգեզուր՝ հայկական իշխանություններին առաջխաղացումներից հետ պահելու նպատակով՝ սպառնալով, որ հակառակ դեպքում վրեժն Ագուլիսից կլուծվի²²։ Հանդիպումից հետո, սակայն, բանագնացներն սպանվեցին Օրդուբադի ղեկավարների ցուցումով։ Արդեն դեկտեմբերի 12-ին Նախիջևանում ամերիկյան ներկայացուցիչ Էդմունդ Դելլին հեռագրով հայտնում էր ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին, որ Նախիջևանում մուսուլմանական հուզումներ էին Զանգեզուրում թաթարական գյուղերի գրավման պատճառով, և հնարավոր էր Նախիջևանում մնացած հայերի ջարդ։ Ընդ որում, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, զաղտնագրեծելով Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովի հեռագրերը, եզրակացնում էր, որ Նախիջևանում դրությունը «ամենուր հանգիստ է և հայերի դեմ ելույթներ չեն սպասվում»²³։

20 St'u Hovannisian, *The Republic of Armenia, Vol. II*, 235-236:

21 St'u Ավազյան, *Ագուլիսի 1919 թ. ռդբերգություն-եղեռնը*, 16:

22 Հետագայում հայտնի է դարձել, որ Զանգեզուրի իշխանությունը մերժել է ագուլիսցիներին՝ նշելով, որ նրանք կկարողանային կանխել վտանգներն իրենց «ճարպիկ քաղաքականությամբ» (տե՛ս Հախնազարեան, *Գողթան գաւառ*, 338):

23 St'u Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 188-189:

3. Դեպքերը Ագուլիսում. 1919 թ. դեկտեմբերի 20-25

3.1. Դեկտեմբերի 20-21. Ներքին Ագուլիսի դեմ հարձակումն ու ավերումները

1919 թ. դեկտեմբերի 20-ի լույս 21-ի գիշերը²⁴ զինված խմբերը մուտք գործեցին Վերին Ագուլիսին կից Ներքին Ագուլիս գյուղը: Ըստ վերապրած Կարապետ Սիմոնյանի՝ բնակիչների մի մասը, չկարողանալով փախչել, մնաց տեղում և սպանվեց, իսկ գյուղը հրդեհվեց ու թալանվեց: Բնակիչների մեծ մասը՝ մոտ 300 հոգի, կարողացավ հասնել Վերին Ագուլիս, որտեղ ոստիկանները խլեցին նրանց իրերը և ժողովեցին նրանց գյուղի մուտքի մոտ գտնվող եկեղեցում: Ըստ Սիմոնյանի՝ վճռվել էր սպանել նրանց, և այդ նպատակով լուսաբացին եկեղեցու բակ ժամանեցին տեղացի զինված թաթարներ՝ ոստիկանապետի օգնական, ուրյադնիկ Մաշադի Հասան Վելիբեկովի գլխավորությամբ: Սակայն դրսից հրացանաձգության ձայներ լսելով՝ նրանք հեռացան: Դրանից հետո ներքինագուլիսցիներից ոմանք կարողացան եկեղեցու պարիսպներից ցատկելով մտնել Վերին Ագուլիս²⁵:

3.2. Դեկտեմբերի 23-25. Վերին Ագուլիսի բնակչության փրկության փորձերն ու ջարդը

Ա. Վերին Ագուլիսի արձագանքը

Տեսնելով Ներքին Ագուլիսից փախստականներին՝ Վերին Ագուլիսի հայերը սկսեցին որոշակի քայլեր ձեռնարկել: Նախ՝ նրանք օգնության խնդրանքով հեռագրեցին Օրդուբադի իշխանություններին և թուրքական սպա Էդիֆ բեյին²⁶: Վերջինս իր թուրք զինվորներով ժամանեց Ագուլիս՝ խոստանալով կամ գորքեր խնդրել Բայազետից, կամ անվտանգ տեղափոխել հայերին Պարսկաստան²⁷: Դեկտեմբերի 23-ին, ըստ Կ. Սիմոնյանի, Էդիֆի հրամանով ցուցակագրվեցին թալանված ներքինագուլիսցիները և նրանցից խլվածները՝ դրանք երկու օրից վերադարձնելու խոստումով: Հատկանշական է, որ Էդիֆի ներկայությունն Ագուլիսում որոշակի ապահովության զգացում ներշնչեց հայերին: 1918 թ. նա եղել էր Ագուլիսի օսմանյան տեսուչը, անձնական կապեր ուներ Ագուլիսի առաջնորդներից Արամ Տեր-Միքայելյանցի և Նիկոլայ Ավշարյանի հետ:

24 Ավելի հավանական ենք համարում Ներքին Ագուլիսի դեմ հարձակման այս ամսաթիվը, որը հիշատակել են վերապրածներ Ե. Ավշարյանը և Հ. Հախնազարյանը: Ներքին Ագուլիսից վերապրած Կ. Սիմոնյանը նշել է հին տոմարով դեկտեմբերի 8-ը, որը համապատասխանում է նոր տոմարով հենց դեկտեմբերի 21-ին: Դեպքերի ժամանակակից թիֆլիսաբնակ վերինագուլիսցի Հակոբ Անագյանը նույնպես նշում է դեկտեմբերի 21-ը: Վերին Ագուլիսի հաշտարար դատավոր, վերապրած Հովհաննես Տեր-Աստուկյանի վկայության արխիվային փաստաթղթի 1993 թ. հրատարակության մեջ նշված է դեկտեմբերի 1-ը: Իսկ պատմագիտական գրականության մեջ Ռ. Հովհաննիսյանը և Է. Զոհրաբյանը նշել են դեկտեմբերի 17-18-ը՝ հիմք ընդունելով «Յառաջ» օրաթերթի 1920 թ. փետրվարի 3-ի հաղորդումը, որում Ագուլիսներում տեղի ունեցածը ներկայացվում էր կրկին ըստ Տեր-Աստուկյանի վկայության:

25 Տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղենը*, 95:

26 23-ամյա թուրք առաջին լեյտենանտ Էդիպ Թոքալիը (1896-1975) 1919 թ. հուլիսից ստանձնել էր Օրդուբադի շրջանի հրամանատարությունը (տե՛ս Richard Hovannisian, *The Republic of Armenia, Vol. III: From London to Sevres February-August, 1920* (Berkeley, Los Angeles and London: University of California Press, 1996), 291):

27 Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 199-202:

Բացի ադրբեջանական պաշտոնյաներից պաշտպանություն ակնկալելուց՝ Ագուլիսի հայերից ոմանք փորձեցին նաև ինքնակազմակերպվել: Ըստ Շմավոն Հախնազարյանի՝ Արամ Տեր-Միքայելյանցը փորձել էր հավաքել կոմիտեների խումբ՝ եղած գնաքերը կենտրոնացնելով որոշ տներում, ինչպես նաև կապ հաստատել գավառի հայկական ուժերի հետ, որոնցից պատասխան չստացվեց²⁸:

Դեկտեմբերի 23-ին, ըստ Ավշարյանի, թաթարական գյուղերի գլխավորները հավաքվել էին Ագուլիսի շուկայում, և ըստ շրջանառվող լուրերի՝ ամերիկյան գնդապետ Շելլիի հանձնախումբն Օրդուբադում ուսումնասիրում էր թաթար փախստականների վիճակը²⁹: Ըստ Ավշարյանի՝ Ագուլիս այցելելու հայերի խնդրանքը մերժվել է:

Բ. Հարձակման նախանշանները և առաջին հարվածը

1919 թ. դեկտեմբերի 24-ին Վերին Ագուլիսում սպասվող հարձակման մասին արդեն լուրեր էին տարածվում³⁰: Կարապետ Սիմոնյանի վկայությամբ՝ այդ առավոտ շուկայում «...Տաճիկները չկային, բայց տեղական թուրքերը բոլորը զինված: Դեռ խանութները բաց էր: Միս առանք թուրքից: Այդ թուրքը Վ[երին] Ագուլիսից էր, փողը չվերցրեց՝ թե տարեք կերեք, այս գիշեր ձեր վերջն է»³¹: Շմավոն Հախնազարյանի հարևան ոստիկանը նրան հայտնել էր. «...Եթե այսօր ձեզ չկոտորեն, այլևս չեն կոտորի»³²: Երբ Հախնազարյանն այդ տեղեկությունը փոխանցել էր Տեր-Միքայելյանցին, վերջինս ասել էր, թե վտանգն արդեն անցել է: Այս վստահության հիմքում պետք է լիներ Օրդուբադից թաթար ղեկավարների՝ Ագուլիս ժամանելը՝ հարձակումը կանխելու համար: Տեր-Միքայելյանցի տանն էին Օրդուբադի շրջանային ղեկավար Աբաս Դուլի բեկ Թայիրովը և շեյխ ուլ-իսլամ Ղաֆարը: Թաթարական թաղի առաջնորդ Վահաբն առաջարկում էր վտանգի դեպքում հայ բնակիչներին տեղափոխել իր և ոստիկանապետի տներ, այնուհետև՝ Օրդուբադ կամ Պարսկաստան³³:

28 Ըստ մեկ այլ տեղեկության՝ ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Ղ. Քոչարյանը, փաստորեն, գործողություն չէր ձեռնարկել՝ պատասխանելով, թե «կարող է ամեն ինչ փրկել հարիւրով ուղարկեն Ագուլիս» գրառելու...» (Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը*, 50):

29 Այս վկայությունը հիմնավորվում է նաև Հայաստանում Ադրբեջանի ներկայացուցիչ Միր Բաբանի՝ 1920 թ. հունվարի 4-ին Ադրբեջանի արտգործնախարարին ուղղված հեռագրով, որում հաղորդվում էր դեկտեմբերի 27-ին Նախիջևանից ստացված տեղեկությունը. «...Զանգեզուրի փախստականները ցանկացել են ավերել Ագուլիսները, բայց շտրիկով վարչակազմի միջոցառումների առաջխաղացումը ճնշվել է, ինչի արդյունքում հայերը, թողնելով Ներքին Ագուլիս գյուղը, տեղափոխվել են Վերին Ագուլիս: Նախիջևանից նաև վերադարձել է ամերիկացի գնդապետ Շելլին, ով նույն է հաղորդել: Ասել է, որ մարդկային կորուստներ չեն եղել: Ինչ է եղել հետո՝ հայտնի չէ» (*Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.*, 193): Արդեն 1920 թ. փետրվարին գնդապետ Շելլին, այցելելով Թավրիզ, զեկուցում էր խնդրել Ագուլիսի ջարդերի մասին, քանի որ իր տեղեկությունները միակողմանի էին, և Ագուլիսում կատարված ջարդերի չափի ու ձևի մասին այլ գաղափար ուներ (տե՛ս Այվազյան, *Նախիջևանը 1905 թ. և 1918-1919 թթ.*, 348-351):

30 Աստղիկ Մամվելյանը նշում էր, որ, ըստ մոր տատի՝ Հայկանուշի պատմության, նախորդ օրը՝ երեկոյան, սպասվող հարձակման մասին նրանց զգուշացրել էին իրենց տանն աշխատող թաթարները:

31 Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը*, 96:

32 Նույն տեղում, 113-114:

33 Տե՛ս նույն տեղում, 75:

Դեկտեմբերի 24-ի երեկոյան տեղացի ուրյադնիկի ձեռքով սպանվեց ներքինագուլիսի ազդեցիկ անձնավորություն Սպիրիդոն Ոսկանյանը, ապա՝ մեկ այլ ազդեցիկ բնակիչ՝ Տելեմաք Բաղդյանցն իր ընտանիքի հետ, թալանվեց և հրդեհվեց մեծահարուստ Սարգիս Հախնազարյանցի տունը: Սկիզբ տրվեց ընդհանուր հարձակմանն ու փողոցային սպանություններին: Դարանակալ զինյալները նաև կրակի տակ առան լեռներով փախուստի դիմող մոտ 200 ներքին և վերինագուլիսիներին: Նրանց մի մասը կարողացավ փրկվել և դուրս գալ գյուղից: Ըստ աղբյուրների՝ երեք տներում զինված ինքնապաշտպանություն տեղի ունեցավ, և ի վերջո դիմադրողների մի մասը զոհվեց, մյուս մասն ինքնասպան եղավ:

Գյուղի կենտրոնական տներում խմբված հայ բնակչության մեծ մասի անվտանգությունն ապահովելու համար շեյխ ուլ-խալամ Ղաֆարը և այլ պաշտոնյաներ դեկտեմբերի 24-ի գիշերը նրանց առաջնորդեցին դեպի ոստիկանապետ Մունշինի և հարակից երկու տներ³⁴:

Գ. Զարդը

Դեկտեմբերի 25-ի առավոտյան ոստիկանապետի տանը հավաքված հայերը դեռ հավատում էին, որ տեղի ունեցողը փրկության գործողություն է: Այս վստահությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ազուլիսցիների հետ էին հոգևոր առաջնորդ Ղաֆարը, գավառապետը, ոստիկանապետը, թուրք սպա Էդիֆը, իսկ որոշ թաթար բնակիչներ իրենց հայ ծանոթներին տեղափոխել էին իրենց տներ: Բացի այդ՝ ազուլիսցի հայերը փոխադարձ պաշտպանություն էին ակնկալում տեղական առաջնորդներից, քանի որ իրենք էլ 1918 թ. ամռանը կանխել էին Օրդուբադի և տեղի թաթարական գյուղերի դեմ գորավար Անդրանիկի և նրա դիվիզիայի գործողությունները:

Ըստ վկաների՝ դեկտեմբերի 25-ի առավոտյան Ազուլիսից հեռացավ գավառապետ Թայիրովը՝ հայտնելով, թե պետք է դիմավորի Օրդուբադ եկող Խալիլ փաշային³⁵, և խոստանալով այնտեղից հաղորդել, թե ուր էին տեղափոխվելու ազուլիսցիները³⁶:

34 Ըստ անհայտ հուշագրի՝ ճանապարհին շատերից խել էին իրերը, մինչև ոստիկանապետի տուն հասնելը կանանցից և երեխաներից մի քանիսը պակասել էին (տե՛ս նույն տեղում, 75-76):

35 Այստեղ, կարծում ենք, խոսքը Խալիլ բեյի՝ Նախիջևանի թուրք գորահրամանատարի մասին է, մինչդեռ Հալիլ կամ Խալիլ փաշան (Էնվեր փաշայի հորեղբայրը) 1918 թ. Կովկասյան ճակատի օսմանյան հրամանատարն էր, ով պատերազմի տարիներին հայտնի էր Օսմանյան կայսրությունում և Բաքվում հայերի զանգվածային ջարդերի կազմակերպմամբ: Փախչելով Կոստանդնուպոլսի բանտից՝ 1919 թ. սեպտեմբերին *Դեմիր Ալի* կեղծանունով Նախիջևանից անցել է Բաքու՝ կապ հաստատելու Կովկասում բոլշևիկների հետ՝ ապահովելու Ռուսաստանի օգնությունը (տե՛ս Hovannisian, *The Republic of Armenia, Vol. II*, 212-213): Մասնակցել է Ադրբեջանի խորհրդայնացմանը, Ղարաբաղում և Նախիջևանում հայերի դեմ գործողություններին:

36 Հ. Հախնազարյանը Օրդուբադ մեկնելը վերագրում էր Էդիֆ բեյին, ով գնում էր Թավրիզից եկող Ալի Էհսան փաշային դիմավորելու (տե՛ս Հախնազարեան, *Գործան գաւառ*, 360-361): Ալի Էհսանը կարող է նույնացվել Ալի Էհսան Սարիսի հետ, ով եղել է օսմանյան 6-րդ բանակի հրամանատարը: 1918 թ. հունիսին նրա զորամասերը գրավել են Թավրիզը: Ալի Էհսան Օսմանյան կայսրությունում և Իրանի Իսլամի, Սալմաստի և Ուրմիայի շրջաններում հայերի ու ասորիների ջարդերի գլխավոր կազմակերպիչներից էր: Պատերազմից հետո ձերբակալվել է բրիտանացիների կողմից, արքայրվել Մալթա և Թուրքիա է վերադարձել 1921 թ.: Հետևաբար 1919 թ. նա չէր կարող լինել Նախիջևանում: Կարող է նույնացվել նաև 1920 թ. փետրվարին Բայազետից Զանգիբասար (ՀՀ Արարատի մարզի Մասիսի

Դրանից հետո, ըստ անհայտ հուշագրի, ոստիկանապետի տուն ժամանեցին Ագուլիսից, Օրդուբադից և շրջակա գյուղերից տասից ավելի զինյալ թաթարներ: Կեսօրին հայտնի դարձավ, որ, կարգադրության համաձայն, Տրոնիս գյուղի առաջնորդ, նախկին դատապարտյալ Սատտարը հայերին պետք է ուղեկցեր Ցղնա գյուղ: Չվստահելով Սատտարին՝ ագուլիսցիները ցանկություն հայտնեցին փոխադրվելու Էդիֆ բեյի ուղեկցությամբ, սակայն վերջինս չընդառաջեց հայերին: Ոստիկանապետ Մունշինի հրամանով՝ ոստիկանները սկսեցին մտրակներով սենյակներից դուրս հանել ագուլիսցիներին³⁷: Խուզարկության պատրվակով հայերից խլվեցին իրենց իրերը:

Անհայտ հուշագրի հաղորդմամբ՝ սենյակում թաքնվել փորձող այլ հայերից Մունշին առանձնացնում էր գեղեցիկ կանանց, իսկ նրանց ամուսիններին սպանում էին³⁸: Ն. Ավշարյանը նույնպես նշում է, որ Սատտարն սկսեց սպանությունները՝ առանձնացնելով և հետո թաթարական գյուղեր տանելով գեղեցիկ կանանց ու աղջիկներին³⁹: Հովհաննես Հախնազարյանի վկայությամբ՝ առաջին հերթին առանձնացվեցին ու սպանվեցին տղամարդիկ⁴⁰: Ըստ Շմավոն Հախնազարյանի՝ առաջիններից առանձնակի դաժանությամբ սպանվեց Արամ Տեր-Միքայելյանցը⁴¹: Հովհաննես Տեր-Աստուկյանը վկայում էր, որ շուրջ երկու ժամ լսելի էին համազարկեր, ինչը թույլ էր տալիս ենթադրել, որ կատարվող գործողություններում ներգրավված էին նախապես կազմակերպված զինված ջոկատներ: Անհայտ հուշագրի վկայությամբ՝ սպանությունները կատարվում էին միաժամանակ երեք տների բակերում՝ առանց խնայելու կանանց և երեխաներին: Ըստ այս աղբյուրի՝ շատերն սպանվում էին սուր գործիքներով, և հատկապես շատ էին սպանված երեխաների դիակները, որոնք «ռակի պես բլրբլրում էին», իսկ կոտորածն ավարտվեց մոտավորապես ժամը 17:30-ին⁴²:

4. Հայաստանի Հանրապետության արձագանքը և հետագա զարգացումները (1919 թ. դեկտեմբերի վերջ – 1920 թ. փետրվար)

Սպանություններից փրկված ագուլիսցիների մի մասը հաջորդ օրերին լեռներով հասավ Ցղնա, որտեղից էլ հարձակումների մասին լուրերը փոխանցվեցին հայկական կողմին: Դեկտեմբերի 27-ին Զանգեզուրի գեներալ-կոմիսարը դիմեց Նախիջևանի գեներալ-նահանգապետին՝ պարզաբանում պահանջելու: Դեկտեմբերի 31-ի աղբյուր-

տարածաշրջանը) ուղարկված Իհսան կամ Էքսան փաշայի հետ, ով կազմակերպել է տեղի թաթարների խռովությունները Հայաստանի դեմ (տե՛ս Hovannisian, *The Republic of Armenia*, Vol. III, 291-292):

37 Վերապրած Հովհաննես Տեր-Աստուկյանին Մունշինը (Տեր-Աստուկյանի նախկին գրագիրը) թաքցրել էր իր սենյակում: Որոշ ժամանակ անց Տեր-Աստուկյանը և նույն սենյակում թաքնված Սերգեյ Մսիրիսայանցը տան հետևի մուտքով փախուստի են դիմել:

38 Տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգությունն-եղենը*, 78-80:

39 Տե՛ս նույն տեղում, 25-26:

40 Տե՛ս Հախնազարեան, *Գողթան գաւառ*, 360-361:

41 Տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգությունն-եղենը*, 116:

42 Տե՛ս նույն տեղում, 78: Դեկտեմբերի 25-26-ին բացահայտվում և սպանվում են նաև Ագուլիսի մի հատվածում, ինչպես նաև թաթարների տներում թաքնված մի խումբ հայեր, Օրդուբադի ոստիկանապետի ձեռքով սպանվում է Օրդուբադ փախուստի դիմած Սուլխանյանցների ընտանիքի մեծ մասը:

ջանական արձագանքում ասվում էր, թե փախստականներից կազմված ավազակախմբերը հարձակումներ էին գործում ինչպես հայկական, այնպես էլ մուսուլմանական գյուղերի վրա⁴³։ Արդեն դեկտեմբերի 29-ին ՀՀ կառավարությունը Գորիսից ստացավ Ագուլիսների վրա հարձակումների մասին առաջին լուրերը⁴⁴։ Իսկ դեկտեմբերի 31-ին և հունվարի 4-ին Թավրիզից Երևան հասան Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանի հեռագրերը Վերին Ագուլիսի հայերի վերջնական ոչնչացման մասին. «....քարտեզի վրա Ագուլիսն այլևս գոյություն չունի....», «....ամենքը կոտորված են։ Մանրամասնությունները թույլ չեն տալիս»⁴⁵։ Հունվարի 5-ին Զանգեզուրի կոմիսար Սերգեյ Մելիք-Յուլյանը հայտնեց գոհերի մասին առաջին թվական տվյալները՝ Ներքին Ագուլիսում՝ 400, Վերին Ագուլիսում՝ 1.000 հոգի, «բացառությամբ 20 օրիորդների, որոնք բաժանված էին սպաներին, իսկ մեծահարուստ Պապյանցի 16-ամյա աղջիկը՝ Էդիֆ բեյին»⁴⁶։ ՀՀ արտգործնախարարությունը հունվարի 14-ին պաշտոնական բողոքի հեռագիր հղեց Ադրբեջանին՝ պահանջելով պատժել մեղավորներին, վերադարձնել առևանգվածներին և հեռացնել օսմանյան սպաներին⁴⁷։ Ադրբեջանական իշխանությունների հունվարի 21-ի պատասխան հեռագրում նշվում էր, որ Զանգեզուրի փախստականներն անսպասելի հարձակում էին գործել Ագուլիսի վրա, իսկ տեղի բնակչությունը վախենալով փախել էր, տեղական վարչությունը փորձում էր արգելել մահմեդական փախստականների բնակեցումը հայկական գյուղերում։ Ըստ պատասխանի՝ կարգադրված էր նաև վերաքննել դեպքերը, ստուգել ադրբեջանական սպաների մասնակցությունը, որից հետո մասնակիցները կկրեին պատիժ, իսկ աղջիկները, եթե առևանգվել էին, կվերադարձվեին⁴⁸։

Փետրվարի 5-ին ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց գերիների փոխանակության մասին⁴⁹։ Փետրվարի 9-ին մոտ 100-110 վերինագուլիսցի կանայք և երեխաներ ամերիկացի գնդապետ, դաշնակից պետությունների գերագույն կոմիսար Վիլյամ Հասկելի միջնորդությամբ հասան Թավրիզ։ Հայերի խնդրանքն էր նաև ազատել թաթարական տներում գտնվող 60-80 հայ կանանց ու օրիորդներին և Օրդուբադի բանտում հայտնված 6 հայ տղամարդկանց⁵⁰։

1920 թ. մարտին Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ Զանգեզուրի և Գողթնի հայկական ինքնապաշտպանական ուժերը վերագրավեցին Ագուլիսը։ Սակայն Օրդուբադի գրավման ձախողումից հետո հայկական ուժերը նահանջեցին դեպի լեռնային գյուղեր, որտեղ ինքնապաշտպանությունը շարունակվեց։ 1920-1921 թթ. ձմռանը՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո, լեռնային գյուղերի հայերն ընդունեցին

43 Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 192-193:

44 Տե՛ս նույն տեղում, 129-130:

45 Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, 359-360:

46 Սերգեյ Մելիք-Եօլչեան, «Հեռագիրներ (շտապ)», Միւնիք (Գորիս), 8 յունուարի 1920, 1:

47 Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 196-197:

48 Տե՛ս «Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի ամսիս 21-ի հեռագիրը Հայաստանի արտաքին գործերի նախարարին», Յառաջ (Երևան), 24 յունուարի 1920, 2:

49 Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 72:

50 Տե՛ս Այվազյան, Նախիջևանը 1905 թ. և 1918-1919 թթ., 348-351:

խորհրդային կարգերը և դադարեցրին համագործակցությունը Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի հետ: Այդպիսով Գողթն գավառը կամ Օրդուբադի շրջանն ամբողջությամբ ներառվեց խորհրդային Նախիջևանի կազմում, իսկ Ագուլիսի հայերի տներում հաստատվեցին տեղի և Զանգեզուրի մուսուլմանները⁵¹:

Աղյուսակ 1. Վերին և Ներքին Ագուլիսներում 1919 թ. դեկտեմբերի 20-26-ը սպանվածների, փրկվածների և գերեվարվածների թվաքանակը

Աղբյուր	Գյուղ	Զոհեր	Փրկվածներ	Գերիններ	Նշումներ
Զանգեզուրի կոմիսար Ս. Մելիք-Յուլյանի՝ 1920 թ. հունվարի 5-ին Հայաստանի կառավարությանը հղած հեռագիրը	Վ. Ագուլիս	400		20	
	Ն. Ագուլիս	1000			
Պարսկաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ապրիլի 16-ի նամակը ըստ Թավրիզում «Ագուլիսի արկածեալների կոմիտեի» ⁵²	Վ. Ագուլիս			166-196	
	Ն. Ագուլիս				
Գենվազի շրջանի տեղակալ Ն. Մինասյան, 1920 թ. ապրիլ	Վ. Ագուլիս		60	250 ⁵³	
	Ն. Ագուլիս		80		
	Անհայտ		50		

51 Ագուլիսում մնացած հատուկենտ հայերի մասին պատմում են Հովհաննես Հախնազարյանը և Աբրամ Այլիսլին: Ագուլիս էին վերադարձել նաև դեկտեմբերի 24-ի հարձակման ժամանակ փախուստի դիմած ամուսիններ Հարությունը և Հայկանուշը: Մյուսը հետագայում հայտնի դարձած նկարչուհի Լուսիկ Սամվելյանի հոր ծնողներն էին: Լուսիկ Սամվելյանն ինքն էլ ծնվել էր Ագուլիսում 1946 թ., ծնողների հետ Երևան էր տեղափոխվել 1953 թ., իսկ Հարությունն ու Հայկանուշը Ագուլիսը լքել էին 1966 թ. (տե՛ս *Լուսիկ Ագուլեցի. հոգևորի ճանապարհով*, 15-18): Հայկանուշին և Լուսիկին հիշատակում է նաև Այլիսլին իր վեպում: Վերջինս նաև նշում է, որ 1990 թ. Բաքվում հայերի ջարդերի հետ միաժամանակ Ագուլիսում հինգ երիտասարդ ներխուժել և կացնի հարվածներով սպանել էին դեռևս ողջ միակ հայ բնակչին՝ Թամարա Աթաբեկյանին, ով նույնիսկ հայերեն խոսել չգիտեր: Սպանելուց հետո նրա մարմինը նետել էին հայկական գերեզմանոց, որտեղ այն մնացել էր ձյան տակ, և երբ ձյունը մաքրվել էր, տեղացի հովիվը նկատել էր մարմինը, թաղել այն և ոճրի մասին զայրացած խոսել թեյարանում (տե՛ս Aylisli, *Farewell, Aylis*, 273, 283):

52 Տե՛ս Այվազյան, *Նախիջևանը 1905 թ. և 1918-1919 թթ.*, 348-351:

53 200 կանայք և աղջիկներ պահվում էին Օրդուբադի թուրքերի տներում, ևս 50-ը՝ կառավարության հսկողության տակ (տե՛ս նույն տեղում, 351-353):

Աղբյուր	Գյուղ	Չոհեր	Փրկվածներ	Գերիներ	Նշումներ
Կարապետ Սիմոնյան	Վ. Ագուլիս			160 ⁵⁴	Դեկտեմբերի 21-ի հարձակման ժամանակ սպանվել էր 77 ներքինագուլիսցի, դեկտեմբերի 25-ին՝ 183 հոգի:
	Ն. Ագուլիս	264	95		
Անհայտ հուշագիր ⁵⁵	Վ. Ագուլիս	1040-1080	60		
	Ն. Ագուլիս		85		
Թովմաս Հայրապետյան ⁵⁶	Վ. Ագուլիս	1100	145		
	Ն. Ագուլիս				
Նիկոլայ Ավշարյան ⁵⁷	Վ. Ագուլիս	1000			257 տղամարդ, 345 կին և 312 երեխա
	Ն. Ագուլիս				
Հակոբ Անագյան	Վ. Ագուլիս	600-700	200	65 ⁵⁸	
	Ն. Ագուլիս	300	100		

5. Աղբրեջանական և թուրքական իշխանությունների ներգրավվածությունը

Ինչպես տեսանք, դեռևս 1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Նախիջևանի և Օրդուբադի մուսուլմանական վարչակազմը հայերի պաշտպանության տեսանկյունից վստահություն չէր ներշնչել և, կարելի է ասել, ակնարկել էր ամերիկյան ներկայացուցիչներին հայերի դեմ հաշվեհարդարի հավանականության մասին: Ագուլիսի դեպքերին հաջորդած պատասխաններում, փաստորեն, Նախիջևանի և Բաքվի աղբրեջանական իշխանությունները հարձակման ու բռնությունների նախաձեռնող էին հա-

54 Ըստ հուշագրի՝ 160 օրհորդների տարել էին Օրդուբադ, ապա՝ Ջուլֆա և վաճառել Թավրիզից եկած հայերին (տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղենը*, 88, 97-98):

55 Տե՛ս նույն տեղում, 76-81: Ըստ հուշագրի՝ օրհորդներ և տիկիներ էին տարվել Օրդուբադ, 15 հոգի Յայջիում էին, իսկ բաց թողնված և Ցղնա հասած երկու հոգու դեմքերն այլակերպված էին, մազերը՝ «թուրքի նման խուզած», Յայջիում նրանց նամագ էին սովորեցրել:

56 Տե՛ս նույն տեղում, 123:

57 Տե՛ս նույն տեղում, 25:

58 Ըստ Անագյանի՝ այս 65 հոգին կանայք, աղջիկներ և երեխաներ էին, որոնց փրկել էին տեղացի թաթարները, իսկ իշխանությունները նրանց փոխադրել էին Օրդուբադ և երկու ամիս անց հանձնել Թավրիզից եկած հայերին: Անագյանը նաև վկայաբերում էր, որ մի տեղացի հեղինակավոր թուրքի հաշվով սպանվել էր 950 հայ (տե՛ս նույն տեղում, 87-89):

մարում մուսուլման փախստականներին՝ ի վերջո ընդունելով նաև աղբրեջանական պաշտոնյաների ներգրավվածությունը⁵⁹:

Վերապրածները, սակայն, նախաձեռնությունը վերագրում էին ոչ թե փախստականներին կամ տեղական պաշտոնյաներին, այլ Նախիջևանի իշխանություններին: Իր ցուցմունքում այդպես էր արտահայտվել Հովհաննես Տեր-Անտոնյանը: Հովհաննես Հախնազարյանը նույնպես ջարդի նախաձեռնությունը վերագրում էր «մուսաֆաթիստ⁶⁰ որոշ տարրերի»՝ նշելով, որ Նախիջևանում չէին ցանկացել փախստականներին ապաստան տալ քաղաքի մոտակա լքված հայկական գյուղերում, փոխարենը նրանց ուղղորդել էին դեպի Օրդուբադի շրջան⁶¹: Նիկոլայ Ավշարյանը նույնպես գրում էր, որ մուսուլման փախստականները նախ ապաստանել էին Նախիջևանում, որտեղից ազդեցիկ մարդկանց դրդմամբ նրանց մի մասն ուղարկվել էր Ագուլիսի մոտակա գյուղեր, ընդ որում նրանց խմբում բոլոր տղամարդիկ զինված էին: Ըստ Ավշարյանի տեղեկությունների՝ Ներքին Ագուլիսի հարձակումից առաջ Նախիջևան գնացած մուսուլման պատգամավորները տեղեկացել էին, որ Ներքին Ագուլիսի ավերումը շարունակվելու էր Վերին Ագուլիսում⁶²:

ՀՀ կառավարությունը Ագուլիսի հայերի ջարդը դիտարկում էր որպես Աղբրեջանի՝ Նախիջևանը իրեն բռնակցելու քաղաքականության մաս՝ հայ բնակչության դեմ բռնություններ հրահրող գործելաոճով, որն օգտագործվում էր նաև Լեռնային Ղարաբաղի ու Զանգեզուրի նկատմամբ աղբրեջանական նկրտումներում⁶³:

Սիմոն Վրացյանը մատնանշում էր 1920 թ. հունվարի սկզբին Բաքվից ստացված մի տեղեկություն, համաձայն որի՝ Աղբրեջանի արտագործախարարի օգնական Խան Թեքինսկիի գլխավորությամբ մշակվել էր Հարավային Զանգեզուրը, Գողթնը, Օրդուբադը և Նախիջևանը Աղբրեջանին ու Թուրքիային հավատարիմ մարտական տարրերով բնակեցնելու ծրագիր: Ըստ Վրացյանի՝ ծրագրի սկզբնական քայլերից մեկը պիտի լիներ «Նախիջևանի շրջանի հարավային մասը հայ տարրից մաքրագործելը», և Ագուլիսի կոտորածն այդ ծրագրի իրականացման մեկնակետն էր⁶⁴: Նման ծրագրի առկայության մասին է հուշում նաև Նախիջևան-Բաքու գաղտնագրեծված հաղորդակցության բովանդակությունը: 1919 թ. վերջին Նախիջևանում Բաքվի ներկայացուցիչ նահանգապետ Ջամալինսկին դժվարանում էր զինվորագրել տեղի թաթարական բնակչությանը⁶⁵: Այս հանգամանքը բացատրում է նաև փախստականներին Նա-

59 Փախստականների գործոնը բռնություններ հրահրելու և դրանք որպես գործիք կիրառելու տեսանկյունից օգտագործվում էր Օսմանյան իշխանությունների կողմից և բնութագրական էր Հայոց ցեղասպանությանը. տե՛ս Raymond Gevorgian, *The Armenian Genocide: A Complete History*, trans. Andrew Andersen (London: I.B. Tauris, 2011), 141:

60 «Մուսավաթ» – Աղբրեջանի իշխող կուսակցությունը 1918-1920 թթ.:

61 Տե՛ս Հախնազարեան, *Գողթան գաղտ*, 337:

62 Տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեղներ*, 16-20:

63 Տե՛ս *Нагорный Карабах в 1918-1923 гг.. Сборник документов и материалов*, ред.: В. Микаелян (Ереван: изд. АН Армении, 1992), 404:

64 Տե՛ս Վրացյան, *Հայաստանի Հանրապետություն*, 360:

65 Տե՛ս Գարաի Али оглы Мадатов, *Победа Советской власти в Нахичевани и образование Нахичеванской АССР* (Баку: Изд-во АН АзССР, 1968), 71:

խիջևանում պահելու նրա մտահոգությունը՝ արտահայտված 1919 թ. դեկտեմբերի 20-ի գաղտնագերծված հեռագրում: Ջամալինսկին Բաքվին հաղորդում էր, որ Պարսկաստանից փախստականներին գրավում են մեծ խոստումներով, և «....եթե կառավարության համար թանկ է այդ երկրամասի պահպանումը, ապա թող անհապաղ դրամ ուղարկի՝ փրկելու գաղթականների կյանքը և պահելու նրանց տեղում»: Իսկ արդեն 1920 թ. փետրվարի 3-ի հեռագրում Ջամալինսկին հաղորդում էր, որ Խալիլ բեյը փորձում է վերցնել ամբողջ իշխանությունը, և «....նրա նենգ նպատակներից գաղթականները գլխովին ոչնչանում են»⁶⁶:

Ջանգեզուրը գրավելու անհաջող փորձից հետո թուրքական իշխանության ամրապնդումը Նախիջևանում միտված էր ապահովագրելու քեմալական ուժերի թիկունքը և Ադրբեյջանի տարածքով հաղորդակցությունը Ռուսաստանի հետ՝ համագործակցության նպատակով: Թուրք հրամանատար Խալիլին էին հարում Նախիջևանի տեղական ղեկավարներ ազդեցիկ Ջաֆարովի խանը և նրա որդին՝ Քելբալի խանը, որոնք, ի վերջո չենթարկվելով Ջամալինսկիին, 1920 թ. փետրվարին ստիպեցին նրան հեռանալ Նախիջևանից: Քելբալի խանը և տեղացի առաջնորդները փաստացի ենթակա էին թուրքական հրամանատարությանը, որը հավատարմության դիմաց նրանց թույլ էր տալիս հարձակումներ գործել հայկական գյուղերի վրա և պարզևատրում էր թուրքական շքանշաններով⁶⁷:

Թուրքական գերակա ազդեցության մասին են վկայում նաև Ագուլիսում հայերի ջարդի իրագործման մանրամասները: Այսպես, ըստ Նիկոլայ Ավշարյանի, Խալիլը նամակով կարգադրել էր Էդիֆ բեյին վերադառնալ Օրդուբադ, իսկ Ագուլիսում ամեն ինչ թողնել «ժողովրդի կամքին»: Տրոնիսի առաջնորդ Սատտարը, Օրդուբադի ճանապարհին Խալիլից բաժանվելով և Ագուլիս հասնելով, հայտնել էր, թե Խալիլն ինքը հրամայել էր կոտորել բոլոր ագուլիսցիներին⁶⁸: Իսկ ըստ Շմավոն Հախնազարյանի՝ Խալիլ բեյն Օրդուբադից կարգադրել էր դադարեցնել կոտորածը, սակայն Վահաբը ջարդարարներին հրահանգել էր. «....կոտորեցեք գնդակներով եւ շուտ, որովհետեւ Խալիլ բեկին խաբել եմ՝ որ արդեն բոլորին կոտորել ենք»⁶⁹: Հովհաննես Հախնազարյանի վկայությամբ՝ ագուլիսցի տղամարդկանց հայտարարել են, թե Ալի Էհսան փաշան անձամբ է հրամայել նրանց սպանությունը՝ ընդառաջելով Օրդուբադի շեյխի դիմումին՝ «ագուլեցիներին անխտիր կերպով սրի քաշելու»⁷⁰: Այս վկայությունները ցուցում են, որ տեղական գործիչներն իրենց հաշվետու էին համարում թուրք հրամանատարներին և հայերի ջարդն օրինականացնում էին նրանց անունից:

Ինչ վերաբերում է թուրք սպա Էդիֆ բեյի դերակատարությանը (Ալլիսի վեպի հերոսները ջարդի կազմակերպումը վերագրում էին Էդիֆին և նրա թուրք զինվորներ-

66 Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., 157-159: Խոստացված դրամը տեղ է հասնում 1920 թ. հունվարին, իսկ մինչ այդ փախստականների մի մասն արդեն հաստատվել էր Ներքին և Վերին Ագուլիսներում՝ սպանված հայերի տներում:

67 Տե՛ս Мадатов, Победа Советской власти в Нахичевани, 72:

68 Տե՛ս Այվազյան, Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը, 25-26:

69 Նույն տեղում, 116:

70 Տե՛ս Հախնազարեան, Գողթան գաւառ, 360-361, 371:

րին), նա, փաստորեն, չի պահել հայերին անվտանգ տեղափոխելու իր խոստումը և չի կանխել կոտորածը: Հովհաննես Տեր-Անտոնյանի ցուցմունքի համաձայն՝ Էդիֆն Ագուլիսի անվտանգության համար օգնական ուժեր էր խնդրել Իսալիլ բեյից, որը մերժել էր՝ պատճառաբանելով Նախիջևանում տիրող անիշխանությունը, իսկ կոտորածն սկսվելիս Էդիֆը խուսափել էր հայերից՝ մնալով սենյակներում: Ըստ անհայտ հեղինակի՝ կոտորածի ժամանակ «....կարգադրում էր Էդիֆն Վահաբին, պրիստավին եւ մի քանի տեղացիների»⁷¹: Մինչդեռ Նիկոլայ Ավշարյանը, ով մասնագիտության բերումով ավելի սերտ հարաբերություններ էր հաստատել Էդիֆի հետ, գրում էր, որ վերջինիս դեմ նույնիսկ մահափորձ էին կազմակերպել հայերին պաշտպանելու պատճառով, զրպարտել նրան Իսալիլի առաջ հայասեր լինելու և հայերից կաշառք վերցնելու մեջ⁷², իսկ կոտորածի ընթացքում Էդիֆն ինքը զինված ամբոխից թաքնվել էր սենյակներում և հետո վերադարձել Օրդուբադ՝ Իսալիլի մոտ⁷³: Արդեն 1920 թ. փետրվարին, ըստ Հակոբ Անագյանի, Էդիֆն անձամբ Ջուլֆա էր տարել և Թավրիզից եկած հայերին հանձնել 65 պատանդի⁷⁴:

Այսպիսով՝ Ագուլիսի հայերի դեմ հարձակման և հաշվեհարդարի նախաձեռնումը, խրախուսումը ադրբեջանական իշխանությունների կողմից տեղավորվում էին նրանց քաղաքական օրակարգում, որը նախատեսում էր պահել մուսուլման փախստականներին Նախիջևանի տարածքում և նրանց միջոցով ամրապնդել Բաքվի ազդեցությունը: Մյուս կողմից՝ Նախիջևանում իր ազդեցությունն էր ընդլայնում թուրքական հրամանատարությունը՝ իրեն ենթարկելով տեղական առաջնորդներին և թույլատրելով նրանց հարձակումներ ու բռնություններ գործել հայերի դեմ: Ագուլիսցիների ջարդի ժամանակ ոճրագործները մատնանշում էին հենց թուրքական սպաներին հաշվետու լինելը և նրանց կողմից հայերի ոչնչացման օրինականացումը:

6. Հարձակման և ջարդի անմիջական կազմակերպիչներն ու մասնակիցները

Ագուլիսների դեմ հարձակումների անմիջական կազմակերպման և համակարգման պատասխանատուն էր տեղացի ոստիկաններից *Մաշադի Հասան Վելիբեկովը*, ով իր շուրջն էր հավաքել թաթարական գյուղերի և փախստականների ավագներին: Իսկ դեկտեմբերի 25-ի ջարդի հիմնական կազմակերպիչները և իրագործողներն էին գյուղական առաջնորդներից *Մալուրարը*, *Վահաբը* և Ագուլիսի *ոստիկանապետ Մուսուրաֆա Մունշինը*: Ըստ անհայտ հուշագրի՝ հենց Մունշինի տան ներքնահարկում էին հավաքվում հարուստ ագուլիսցիների տներից կողոպտված իրերը, իսկ Մունշինը կարգադրում էր, թե ինչպես սպանել նրանց: Տեր-Անտոնյանի վկայությամբ՝ Մունշինը, Վահաբ էֆենդին, Սատտարը և այլք գեղեցիկ կանանց առանձնացնում էին, խլում

71 Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը*, 78:

72 Ի դեպ, Շ. Հախնազարյանը, խոսելով կոտորածին նախորդած իրադարձությունների մասին, նշում էր, որ Էդիֆը ոսկով թավջի (հարկ) էր հավաքում (տե՛ս նույն տեղում, 112):

73 Տե՛ս նույն տեղում, 25-26:

74 Տե՛ս նույն տեղում, 87-89:

նրանց զարդերն ու գումարը և հարևան սենյակներում բռնաբարում: Հովհաննես Հախնազարյանի վկայությամբ՝ Մունշինը Նախիջևանի խորհրդայնացումից հետո Ազուլիսից գերի վերցրած կանանց Թավրիզի հայոց թեմի առաջնորդարանին է վաճառել մեկ ոսկի դրամով, իսկ Հախնազարյանին հանդիպելու ժամանակ երկու հայի դեռ պահում էր իր մոտ⁷⁵:

Հիշատակված մյուս ոճրագործը՝ *Վահաբ Էֆենդին*, Ազուլիսում մուսուլմանական համայնքի հոգևոր քարոզիչն էր, ուսուցիչը և առաջնորդը: Ըստ Հախնազարյանի՝ Վահաբը և Մունշինը ջարդի ժամանակ «բղաւում էին թուրքերէն լեզուվ որ՝ «խանչալով կոտորէք, ափսոս է գնդակը...»»⁷⁶: Այս մասին գրում էր նաև Աքրամ Այլիսին՝ հիշելով ջարդի ականատես իր մոր պատմությունները. «...Անամոթ Միրզա Վահաբը, ով ամեն օր Ղուրան էր կարդում և գիտնականի համբավ ուներ, կանգնել էր կողքի և ոգևորում էր մարդասպաններին. «Ձեր սվիններն օգտագործէք, սվինահարէք՝ նրանց, խնայէք ռազմամթերքը»»⁷⁷: Կոտորածից հետո Վահաբը կրոնափոխել և ամուսնացել էր իրենից քսան տարով փոքր Անիկո-Անըլիսի հետ, որը փրկվել էր թաքնվելով թոնրում⁷⁸:

Ջարդին ներկա էր նաև Օրդուբադի *շեյխ ուլ-խալամ Ղաֆարը*: Հախնազարյանը նշում էր, որ Խալիլն ընդառաջել էր հայերին սրի քաշելու նրա դիմումին, իսկ ըստ անհայտ հեղինակի՝ ջարդի ժամանակ Ղաֆարը գերեվարված կանանց հետ էր⁷⁹:

Հովհաննես Տեր-Աստուկյանը հիշատակում էր Վերին Ազուլիսում գողությունների և կրակոցների ժամանակ տեղացի վաճառականներ Համգայի, Հուսեյն-Ղուլիի և Իբրահիմի մասնակցությունը: Հախնազարյանի հաղորդմամբ՝ ազուլիսցի իր ընկերը միակն էր տեղի մուսուլման երիտասարդներից, որ չէր մասնակցել հայերի դեմ հարձակմանը: Վերջինս նույնպես ամուսնացել էր ջարդից փրկված հայ աղջկա հետ⁸⁰:

Բռնություններին տեղացիների զանգվածային մասնակցությունը, բացի ռազմաքաղաքական, գաղափարական գործոններից, կարող էր պայմանավորված լինել հայերի նկատմամբ սոցիալ-տնտեսական լարվածությամբ, որն իր հերթին կարող էր դրսևորվել այլատյացությամբ: Իրենց կրթամշակութային առաջընթացով և տնտեսական հաջողություններով ազուլիսցի հայերը հասարակական տիրապետող դիրք էին գրավում⁸¹: Հովհաննես Հախնազարյանը նշում էր, որ Ազուլիսում «թուրքերը

75 Տե՛ս նույն տեղում, 78-80, *Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.*, 202: Հախնազարեան, *Գողթան գաւառ*, 361-362:

76 Հախնազարեան, *Գողթան գաւառ*, 360-361:

77 Ayisli, *Farewell, Aylis*, 296. Տարիներ անց Վահաբն արդարացնում էր իրեն և Էդիֆին՝ Հովհաննես Հախնազարյանին ասելով, որ իրենք փորձել էին կանգնեցնել փախստականների հարձակումը:

78 Տե՛ս նույն տեղում, 121:

79 Տե՛ս Հախնազարեան, *Գողթան գաւառ*, 371: Այվազյան, *Ազուլիսի 1919 թ. ողբերգություն-եղենը*, 78:

80 Տե՛ս *Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.*, 202: Հախնազարեան, *Գողթան գաւառ*, 372:

81 Ազուլիսի հայերը (և Այսրկովկասի հայ բնակչությունն առհասարակ), հիրավի, ավելի առաջադեմ էին համարվում, քան թաթարական բնակչությունը: 1909 թ. թաթարալեզու «Մոլլա Նասրեդդին» երգիծաթերթում տպագրվել էր «Մոզական բեյի ուղեգրություններն Օրդուբադից, 1907 թ.» վերնագրով մի հոդված, որի հեղինակն Օրդուբադը համեմատել էր Ազուլիսի հետ: Ազուլիսը ներկայանում էր որպես գեղեցիկ ու կոկիկ բնակավայր, հայերը՝ եվրոպական հագուստով, հաճախում էին դպրոց,

խոր նախանձով և ատելությամբ էին նայում հայերի փարթամ կեանքին և շուկայում՝ տիրական հայերի արտօնեալ և գերազանց պայմաններին»⁸²: Դեկտեմբերի 24-ի հարձակման ժամանակ, Նիկոլայ Ավշարյանի հաղորդմամբ, գավառապետը և շեյխ ուլ-խալամ Ղաֆարը հանգստացնում էին ագուլիսցիներին՝ ասելով, որ «....թուրքերը յարձակում էին միայն թալանելու նպատակով, այլ ոչ թե սպանության....»⁸³: Ագուլիսցիներն իրենք դեռ ամերիկյան ներկայացուցիչներին հայտնել էին, որ պատերազմ էին թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը դուրս գալ գյուղից: Ըստ էության, թաթարական գործիչները խոստացված տեղահանության փոխարեն, որը նրանց կրկին հնարավորություն կտար տիրանալու հայերի ունեցվածքին, իրագործեցին ագուլիսցի հայերի հավաքական բնաջնջում⁸⁴:

գրադարան, ընթերցարահ, իսկ Օրդուբադում մուսուլմանները՝ ավանդական հագուստով ու նիստուկացով, խմբված էին կեղտոտ փողոցի մի անկյունում՝ մոլլայի շուրջը: Հողվածագիրը կոչ էր անում թաթարներին օրինակ վերցնելու հայերից (տե՛ս Mamedov, *Reading the Novel Stone Dreams*, 973): Կրթված թաթար գործիչները, համեմատելով թաթարներին՝ որպես ավելի պահպանողական, գրագիտությունից զուրկ, և հարևան հայերին՝ իբրև ավելի գործունյա, կրթված, առաջադեմ և օրինակելի, փաստորեն ի ցույց էին դնում իրենց և իրենց ազգակիցների նկատմամբ թերաթմեքության ընկալումներ ու պատկերացումներ (տե՛ս Evan Siegel, “Armenophilia among the Azerbaijani Intelligentsia,” <https://iran.qlineorientalist.com/Articles/Armenophilia.pdf>, դիտվել է՝ 04.11.2024):

82 Ագուլիսի հայկական թաղամասում գործող շուկայի խանութների ու կրպակների մեծ մասը, Հովհաննես Հախնազարյանի հաղորդմամբ, պատկանում էր հայ վաճառականներին ու արհեստավորներին: Գլխավոր շուկայի հետևում մուսուլմաններն ունեին իրենց արհեստանոցներն ու խանութները: Հայ վաճառականների խանութները հայտնի էին բացառիկ հագուստով, գործվածքով և կենցաղային իրերով, մինչդեռ մուսուլմանները հիմնականում զբաղվում էին մանր արհեստներով և սննդի առևտրով (տե՛ս Հախնազարյան, *Գողթան գաւառ*, 106-112):

83 Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը*, 23: Ինչպես նշում էր Երվանդ Լալայանը, Ագուլիսի ձորը թաթարներու անվանում էին նաև Ոսկե ձոր՝ նկատի ունենալով ագուլիսցի հարուստ վաճառականների կարողությունը (տե՛ս Լալայան, *Նախիջևանի գաւառ, Ա մասն. Գողթն*, 299-300):

84 Քաղաքագետ Դոնալդ Հորովիցն էթնիկ հակամարտությունների իր ուսումնասիրություններում ընդգծում է, որ տնտեսական կամ նյութական շահագրգռությունը չի բացառում էթնիկ հակամարտությունների հուզական լարվածությունը և բռնությունների ինտենսիֆիկացիան: Հորովիցը բռնությունների զանգվածային աջակցությունը դիտարկում է խմբային հոգեբանության տեսանկյունից՝ հաշվի առնելով հակակրանքի զգացումը: Նրա մոտեցմամբ՝ հետադեմ համարվող խմբերը «առաջադիմելու» և մրցակցելու համար մի կողմից փորձում են ընդօրինակել իրենց կողքին բնակվող ավելի առաջադեմ համարվող խմբերին, մյուս կողմից հակակրում են նրանց՝ իրենց խմբային արժանապատվությունը նսեմացած համարելով: Ի վերջո, թերաթմեքությունը ցուցող խմբի նկատմամբ առաջանում է թշնամանք, ի հայտ են գալիս հասարակությունը միատարր դարձնելու, խմբային բացարձակ իշխանություն հաստատելու ազդակներ (տե՛ս Donald Horowitz, *Ethnic Groups in Conflict* (Berkeley – Los Angeles – London: University of California Press, 2000), 148-156): Ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Ժիրարը նույնպես մարդու վարքագծում կարևորում էր ընդօրինակումը և մրցակցությունը: Ըստ նրա՝ մարդը ցանկանում է այն, ինչը մյուսները համարում են արժեքավոր, ուստի այլ մարդիկ դառնում են ընդօրինակման մոդելներ: Նման ցանկություններից առաջացած մրցակցությունը հանգեցնում է բախման և բռնությունների: Խաղաղության վերականգնման համար անհրաժեշտ է քաղության նոխազ, որը չի կարող հակահարված տալ: Վերջինիս գոհաբերությունը վերջ է տալիս բռնության ցիկլին և ծիսականացվում որպես հիշեցում (տե՛ս Рене Жирар, *Насилие и священное* (Новое литературное обозрение, 2000)): Հատկանշական է, որ, Ագուլիսի ջարդի ժամանակ ծիսական վարքագծից բացի, հետագա տարիներին, ինչպես պարզվում է Աքրամ Այլիսլիի գրվածքներից, Ագուլիսի աղորեջանցիների մեջ կար հավատ, որ սպանված հայերի հոգիները հանգիստ չեն տալիս իրենց տներում հաստատված մարդասպանների ժառանգներին (տե՛ս Ayisli, *Farewell, Ayilis*, 106-107):

Ագուլիսի հայերի դեմ բռնությունների ակտիվ մասնակիցների շարքում կային գործիչներ, որոնք անմիջականորեն առնչվել էին սոցիալ-տնտեսական ավելի գերակա կարգավիճակ ունեցող հայերի հետ, ինչը կարող էր լարվածություն ձևավորել հայերի նկատմամբ: Այսպես, օրինակ, Հախնազարյանը հիշատակում էր ոճրագործներից Մուստաֆային՝ Տրոնիս գյուղից մի մսագործ, ավագակ, որը փախել էր բանտից (ամենայն հավանականությամբ՝ նույն ինքը՝ Սատտարը), և որի կինը որպես աղախին աշխատում էր Հախնազարյանի մոտեղբոր տանը: Ոճրագործներից Համգեի մասին (թերևս Տեր-Անտոնյանի հիշատակած նույն Համգան) Հախնազարյանը գրում էր, որ նա հայերից սովորել էր խմոր հունցել և հաց թխել, իսկ հետո իր սեփական փուռն էր հիմնել Ագուլիսում: Ըստ անհայտ հեղինակի՝ դեկտեմբերի 24-ի գիշերային սպանություններում առաջնորդող էր եղել Նեհրամ գյուղի մի բնակիչ՝ Ալասկար անունով, որը ցորեն էր տանում Ագուլիս՝ վաճառելու⁸⁵: Ոստիկանապետ Մունշիևը, որից Հովհաննես Տեր-Անտոնյանը փրկություն էր խնդրել ջարդի ժամանակ, նախկինում Տեր-Անտոնյանի ենթակայությամբ աշխատել էր որպես գրագիր: Իսկ Վերին Ագուլիսում ծնված ուսուցիչ և քարոզիչ Վահաբը, Հախնազարյանի հաղորդմամբ, պատերազմի ժամանակ Ագուլիս վերադառնալով, չէր ցանկացել այլևս բնակվել թաթարական թաղամասում և զբաղեցրել էր հայ ընտանիքի չբնակեցված առանձնատունը, որտեղ էլ շարունակել էր ապրել ջարդից հետո⁸⁶: Հետագայում Վահաբ Հասանզադեն բարձր պաշտոններ է զբաղեցրել Նախիջևանի և Բաքվի պետական գիտակրթական հաստատություններում⁸⁷, և, Այլիսիի հաղորդմամբ, նրա հայ կինը՝ կրոնափոխված Անիկոն, հպարտանում էր ամուսնու գիտելիքներով ու վեհանձնությամբ⁸⁸:

Հատկանշական է, որ ջարդից փրկվածների մեջ մեծ թիվ էին կազմում գեղեցիկ և երիտասարդ կանայք, որոնց բռնաբարում էին, պատվազրկում, կրոնափոխում, դարձնում սպասուհիներ կամ բռնի ամուսնացնում: Հատկանշական է նաև, որ ջարդի ընթացքում «....երգում էին «Արշին մալ ալան» մի երգ»⁸⁹ եւ ածում էին գարմոնով

85 Տե՛ս Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը*, 76: Հախնազարեան, *Գողթան գաւառ*, 372:

86 Ագուլիսի թաթարական թաղը ֆրանսիացի տիկին Շանտրը նկարագրում էր որպես «խիստ խեղճ և աղքատին» (տե՛ս «Ուղեւորութիւն Շանտրի», *Բազմալէս հանդիսարան*, հատոր ԾԲ. դեկտեմբեր (1894), 534):

87 Ըստ աղբրեջանական աղբյուրների՝ Գանձակում Վահաբն ստացել էր հոգևոր կրթություն և իսլամական հոգևորականի աստիճան (ըստ Աբրամ Այլիսիի՝ նա սովորել էր նաև Ստամբուլում): Հատկանշական է նաև, որ նա Ագուլիսի իր դպրոցը վարում էր առաջադիմության ձգտող ջադիդական շարժման մեթոդներով (տե՛ս Musa Rəhimoglu, “Görkəmlı siyasi xadim, tanınmış alim” [Ականավոր քաղաքական գործիչ, ճանաչված գիտնական], <https://tv.ikisahil.az/post/126921-gorkemli-siyasi-xadim-taninmish-alim>, դիտվել է՝ 04.05.2024):

88 Տե՛ս Aylisli, *Farewell, Aylis*, 121: Անիկոյին Անուկ ձևով հիշատակում էր նաև Լուսիկ Սամվելյանը (տե՛ս Լուսիկ *Ագուլեցի. հոգևորի ճանապարհով*, 10):

89 Թաթար կոմպոզիտոր Ուգեիր Հաջիբեկովի (Հաջիբեյով) 1913 թ. հեղինակած «Արշին մալ ալան» օպերետի անվանումն է, որը բառացի նշանակում է «սպրանքն արշինով գտող»: «Արշին մալ ալան» արտահայտությունը գործվածք վաճառող փողոցային առևտրականներին բնորոշ բացականչություններից էր, որոնց կերպարանքով էլ թաթուն հանդես է գալիս ստեղծագործության գլխավոր հերոսը՝ իր հարսնացուին տեսնելու համար: Ամուսնությունները սովորաբար լինում էին ծնողների կամքով. փեսան հաճախ տեսնում էր իր հարսնացուին միայն ամուսնությունից հետո: 20-րդ դարի սկզբին շա-

ու խմբով էին երգում»⁹⁰: Բռնությունները նվազակցությամբ ուղեկցելը համարվում է ծիսականացված վարք, որն ամրապնդում է ռազմական հաղթանակը, խմբի միասնականությունը, նշանավորում է կյանքի կարևոր փուլաբաժանումները, ինչպիսին է, օրինակ, կրոնափոխությունը⁹¹: Հայերի ջարդը, փաստորեն, օրինականացվում էր նաև խմբային հոգեբանության տեսանկյունից մշակութային գործիքակազմով:

Այսպիսով՝ Ագուլիսի հայերի դեմ հարձակումը, սպանություններն ու ջարդը փախստականների տարերային գործողությունների արդյունք չէին: Տեղի ուստիկանական պաշտոնյաները, զինյալները, ինչպես նաև թաթարական գյուղերի ղեկավարներն ու կրոնական առաջնորդներն իրենք են կազմակերպել, առաջնորդել և իրագործել Ագուլիսում հայերի ոչնչացումը: Բացի այդ թաթար բնակչության զանգվածային մասնակցությունը ջարդին, ի թիվս քաղաքական, գաղափարական գործոնների, կարող էր պայմանավորված լինել ձևավորված սոցիալական ու խմբային հարաբերությունների լարվածությամբ, որը տվյալ դեպքում վերաճեց հայերի դեմ հավաքական բռնության:

Եզրակացություններ

Ի մի բերելով Ագուլիսի հայերի ջարդի մասին քննարկումը՝ առանձնացնենք հետևյալ ամփոփիչ դրույթները:

- Վերին Ագուլիս և Ներքին Ագուլիս գյուղերի խաղաղ և անզեն հայ բնակչությունը, չնայած հպատակվեց Նախիջևանի աղբյուրեջանական իշխանություններին, այնուամենայնիվ հարձակման ենթարկվեց և կազմակերպված ջարդի զոհ դարձավ 1919 թ. դեկտեմբերի 20-25-ին:
- Աղբյուրեջանական իշխանությունների՝ տեղի ունեցածը փախստական մուսուլմանների խմբերին վերագրելու և անկառավարելի հարձակման տեսքով ներկայացնելու փորձերը հիմնավոր չէին: Վկայությունները փաստում են, որ Ագուլիսի հայերի դեմ ջարդի կազմակերպման ու իրագործման անմիջական շրջանակը ներառում էր տեղացի պաշտոնյաների և առաջնորդների (ուստիկանապետ և ուստիկաններ, գավառապետ և գյուղապետներ, կրոնական առաջնորդներ):
- 1919 թ. Նախիջևանը բռնակցելու աղբյուրեջանա-թուրքական իշխանությունների օրակարգը իր քաղաքական նպատակներին հասնելու համար որպես գործիք օգտագործում էր հայերի դեմ կազմակերպված բռնությունները, ինչի հետևանքն էր նաև Ագուլիսի անզեն հայերի վերջնական ոչնչացումը:

րիաթի օրենքների վրա հիմնված ընտանեկան կենցաղակարգն սկսեց ենթարկվել գաղափարական քննադատության, որի ներկայացուցիչներից էր, ըստ ամենայնի, Ուզեիր Հաջիբեկովը:

90 Այվազյան, *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղևոնը*, 78:

91 Տե՛ս Հասմիկ Գրիգորյան, «Հայոց ցեղասպանությունից մինչև «Քառօրյա պատերազմ». բռնության օրինականացման մշակութային գործոնները», *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: Հարիություն 2* (2017), 172: Շուշան Խաչատրյան, *Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ* (Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2020), 135-136: Arsen Hakobyan, Marcello Mollica, *Conflict, Space and Transnationalism: An Ethnography of the Second Nagorno-Karabakh War* (Palgrave Macmillan Cham, 2025), 100:

- Ջարդի անմիջական կազմակերպիչներն ու իրագործողներն իրենց հաշվետու էին համարում Նախիջևանի թուրք հրամանատարներին և նրանց անունից արտոնված ներկայացնում իրենց գործողությունները:
- Տեղացի մուսուլման գործիչների և բնակչության մասնակցությունը հայերի դեմ բռնություններին պայմանավորված էր ոչ միայն ռազմաքաղաքական իրադրության, այլև Ազուլիսի հայերի նկատմամբ ձևավորված սոցիալ-խմբային լարվածությամբ:

THE 1919 MASSACRE OF ARMENIANS IN AGULIS (NAKHJEVAN) AND THE ROLE OF THE AZERBAIJANI AND TURKISH AUTHORITIES

Elen Hakobyan

Armenian Genocide Museum-Institute Foundation

Yerevan State University, Armenia

SUMMARY

The article discusses the 1919 massacre of the Armenian civilian population in the villages of Verin Agulis and Nerkin Agulis in Nakhijevan. It focuses on both the military and political context of the organization of the massacre, the role of the Azerbaijani and Turkish authorities of Nakhijevan, and issues related to the participation of local leaders and residents.

The main sources of this study consist of eyewitness testimonies, contemporary accounts, official documents, and period publications. A comparative analysis of these materials enables a comprehensive reconstruction of: a) the process of the extermination of Armenians in Agulis; b) the political challenges faced by the Azerbaijani authorities of Nakhijevan at the end of 1919, which formed the basis for the massacre; c) the predominant influence of the Turkish authorities in Nakhijevan and the subsequent legitimization of the violence under their auspices; d) the circle of direct organizers and perpetrators of the massacre; and e) the social and group-related factors behind the participation of local Tatars in the violence against Armenians.

Key words: Armenians, Agulis, Goghtn, Nakhijevan, Azerbaijan, Ottoman Empire, violence, massacre.

РЕЗНЯ АРМЯН В АГУЛИСЕ (НАХИДЖЕВАН) В 1919 ГОДУ И РОЛЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ И ТУРЕЦКИХ ВЛАСТЕЙ

Ջլեն Ակոյան

Фонд “Музей-институт Геноцида армян”

Ереванский государственный университет, Армения

РЕЗЮМЕ

В статье рассматривается резня армянского гражданского населения в 1919 году в селах Верхние и Нижние Агулисы Нахиджевана. Предметом обсуждения являются как военно-политический контекст организации резни, роль азербайджанских и турецких властей Нахиджевана, так и участие местных лидеров и жителей.

Основными источниками статьи являются свидетельства выживших и современников, официальные документы и публикации. Сопоставительный анализ этих материалов позволяет всесторонне представить: а) процесс и ход истребления армян в Агулисе; б) политические трудности, с которыми столкнулись азербайджанские власти Нахиджевана в конце 1919 года, которые послужили основанием для расправы над армянами Агулиса; в) преобладающее влияние турецких властей в Нахиджеване и легитимизацию резни с их стороны; г) круг непосредственных организаторов и исполнителей резни; д) социально-групповые факторы участия местных татар в насилии против армянского населения.

Ключевые слова: армяне, Агулис, Гохтн, Нахиджеван, Азербайджан, Османская империя, насилие, резня.

REFERENCES

«Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի ամսիս 21-ի հեռագիրը Հայաստանի արտաքին գործերի նախարարին» [Azerbaijan's Foreign Minister's Telegram to Minister of Foreign Affairs of Armenia on the 21st]. *Haraj* (Yerevan), 24 January 1920;

Լուսիկ Ագուլեցի. հոգևորի ճանապարհով [Lusik Aguletsi: Along the Path of the Spiritual]. Yerevan: Tigran Mets Publishing House, 2018;

Նախիջևան-Շարուրը 1918 – 1921 թթ.. փաստաթղթեր և նյութեր [Nakhijevan-Sharur in 1918 - 1921: Documents and Materials]. *Banber Hayastani arkhivneri* 1-2 (1993);

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов [The Armenian Genocide in the Ottoman Empire. Collection of Documents and Materials], ed. M. G. Nersisyan. Yerevan: “Hayastan,” 1982;

Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов [Nagorny Karabakh v 1918–1923 gg.: Sbornik dokumentov i materialov], ed. V. Mikaelian. Yerevan: Publishing House of NAS RA, 1992;

Ayvazyan, Argam. *Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը: Ականատեսների և ժամանակակիցների վկայություններ* [The 1919 Tragedy and Catastrophe of Agulis. Testimonies of Eyewitnesses and Contemporaries]. Yerevan: Author's Edition, 2013;

Ayvazyan, Argam. *Նախիջևանը 1905 թ. և 1918-1919 թթ. կրակե շղթայի գոյամարտերում* [Nakhijevan in the 1905 and 1918-1919 Struggles of Blazing Chain]. Yerevan, 2005;

Grigoryan, Hasmik. «Հայոց ցեղասպանությունից մինչև «Քառօրյա պատերազմ»․ բռնության օրինականացման մշակութային գործոնները» [From The Armenian Genocide to the “4-Day War”: Cultural Factors of Violence Legalization]. *HABITUS. Studies in Anthropology and Archaeology* 2, Yerevan: “Gitutyun” Publishing House, 2017, 163-183;

Hakhnazarean, Dr. Hovhannes. *Գողթան գաւառ (պատմագրություն և յուշագրություն)* [Goghtan District (Historiography and Memoirs)]. Tehran, 1991;

Irazek. «Դրութիւնը Գողթնի շրջանում» [The Situation in the Goghtn District]. *Zang* (Yerevan), 14 November 1918;

Khachatryan, Shushan. *Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ* [The Role of Religion in the Implementation of the Armenian Genocide]. St. Etchmiadzin: Publishing House of the Mother See of Holy Etchmiadzin, 2020;

Lalayan, Yervand. «Նախիջևանի գաւառ, Ա մասն, Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան» [Nakhijevan District, Part A, Goghtn or Ordubad Police Sector]. *Azagrakan Handes*, Book XI (1904), 241-334;

Madatov, Garash Ali oğly. *Победа Советской власти в Нахичевани и образование Нахичеванской АССР* [The victory of Soviet leadership in Nakhichevan and the formation of the Nakhichevan ASSR]. Baku: Publishing House of the Academy of Sciences of the Azerbaijani SSR, 1968;

Meliq-Eolchean, Sergey. «Ընտագիրներ (շտապ)» [Telegrams (Urgent)]. *Syunik* (Goris), 8 January 1920;

Rəhimoglu, Musa. “Görkəmli siyasi xadim, tanınmış alim” [A prominent political figure, a well-known scientist], <https://tv.ikisahil.az/post/126921-gorkemli-siyasi-xadim-taninmish-alim>, 04.05.2024;

Vratsyan, Simon. *Հայաստանի Հանրապետություն* [The Republic of Armenia]. Yerevan: “Hayastan,” 1993;

Zohrabyan, Edik. *Նախիջևանյան հիմնախնդիրը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր – 1920 թ. ապրիլ)* [The Nakhijevan Problem and Armenia’s “Allies” (December 1918 - April 1920)]. Yerevan, 2002.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Էլեն Հակոբյան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Արցախի, Նախիջևանի և Ադրբեջանի հայության բռնաճնշումների ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի՝ «Մշակութաբանություն» մասնագիտությամբ ասպիրանտ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ հայերը Նախիջևանում, միջէթնիկ հարաբերությունները Հարավային Կովկասում նախախորհրդային և խորհրդային շրջաններում, էթնիկ հակամարտություններ և զանգվածային բռնություններ:

Էլ. փոստի հասցե՝ elen.hakobyan@ysu.am

Elen Hakobyan, Junior Researcher, Department of Studies on the Repressions of Armenians in Artsakh, Nakhijevan, and Azerbaijan, Armenian Genocide Museum-Institute Foundation; PhD student in “Cultural Studies,” Faculty of History of Yerevan State University.

Research fields: Armenians in Nakhijevan, interethnic relations in the South Caucasus in the pre-Soviet and Soviet periods, ethnic conflicts and mass violence.

E-mail: elen.hakobyan@ysu.am

Элен Акопян, младший научный сотрудник Отдела изучения репрессий против армян Арцаха, Нахиджевана и Азербайджана Фонда “Музей-институт Геноцида армян,” аспирантка по специальности “Культурология” исторического факультета Ереванского государственного университета.

Область исследований: армяне в Нахиджеване, межэтнические отношения на Южном Кавказе в досоветский и советский периоды, этнические конфликты и массовое насилие.

Эл. почта: elen.hakobyan@ysu.am

**ՋՆՋԵԼՈՎ ԱՆՑԱՆԿԱԼԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԿԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ
ԵՎ/ԿԱՄ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄԸ ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԻ ԿՈՂՄԻՑ**

Սեդա Պարսամյան, Հայաստանի Մարտիրոսյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Թուրքական և ադրբեջանական հայատյացությունը, շատ կետերում փոխակապակցված, մշտապես դրսևորվել է ոչ միայն հայության՝ որպես էթնիկ խմբի, այլև նրա ստեղծած մշակութային ժառանգության նկատմամբ: Ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ադրբեջանում հայկական մշակութային ժառանգությունը թիրախավորվել է թուրքական և ադրբեջանական բոլոր վարչակարգերի կողմից: Ներկայումս Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության մեծ մասը ոչնչացված է, մի մասը քայքայված վիճակում է, իսկ մնացյալ մասը շարունակաբար փոխակերպվում է մզկիթների կամ այլ բնույթի օբյեկտների: Ինչ վերաբերում է Ադրբեջանում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգությանը, ապա կարող ենք արձանագրել, որ Ադրբեջանը տասնամյակներ շարունակ բարեհաջող կիրառում և գրեթե նույնությամբ կրկնում է հայկական պատմաճարտարապետական հուշարձանների վերացման թուրքական փորձը: Ավելի քան երեքուկես տասնամյակ է՝ Ադրբեջանում չկա որևէ գործող հայկական եկեղեցի. մեծ մասը պայթեցվել կամ օգտագործվում է այլ նպատակով, իսկ Նախիջևանի և Արցախի տարածքներում գտնվող հայկական եկեղեցիները ներկայացվում են որպես աղվանական ժառանգություն:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Թուրքիայում և Ադրբեջանում հայկական պատմաճարտարապետական հուշարձանների շարունակական փոխակերպումների և/կամ աղավաղումների մեխանիզմը որպես հակառակորդ էթնիկ հանրույթի (տվյալ դեպքում՝ հայերի) մշակույթը չեզոքացնելու, անցյալում նրա գոյությունը ժխտելու և դրա մասին հիշողությունը ջնջելու միջոց:

Բանալի բառեր՝ հայատյացություն, Թուրքիա, Ադրբեջան, մշակութային ժառանգություն, ոչնչացում, փոխակերպում, յուրացում:

Հոդվածը ներկայացվել է՝ 06.08.2025: Ընդունվել է տպագրության՝ 22.10.2025:

The article was submitted on 06.08.2025 and accepted for publication on 22.10.2025.

Статья поступила 06.08.2025 и была принята к публикации 22.10.2025.

Ինչպես հղել՝ Սեդա Պարսամյան, Հայաստանի Մարտիրոսյան, «Ջնջելով անցանկալի ինքնությունը. հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը և/կամ փոխակերպումը թուրքական և ադրբեջանական վարչակարգերի կողմից», *Ցեղասպանագիրական հանդես* 13, no. 2 (2025), 107-129:

How to cite: Seda Parsamyan, Hayastan Martirosyan, “Erasing the Unwanted Identity: The Destruction and/or Transformation of Armenian Cultural Heritage by Turkish and Azerbaijani Authorities,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025), 107-129.

Как сослаться: Седя Парсамян, Айастан Мартиросян, “Стирание нежеланной идентичности: уничтожение и/или преобразование армянского культурного наследия со стороны турецких и азербайджанских властей,” *Цехаспанагитакан андес* 13, no. 2 (2025), 107-129.

Ներածական

Թուրք-ադրբեջանական հայատյացությունը մշտապես դրսևորվել է ոչ միայն հայության՝ որպես էթնիկ խմբի, այլև հայկական մշակութային ժառանգության նկատմամբ: Ինչպես Օսմանյան կայսրությունում և ապա հանրապետական Թուրքիայում, այնպես էլ Ադրբեջանում հայկական մշակութային ժառանգությունը թիրախավորվել է թուրք-ադրբեջանական տարբեր վարչակարգերի կողմից:

Օսմանյան կայսրությունում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման կամ փոխակերպման քաղաքականությունը գործադրվում է Արևմտյան Հայաստանի նվաճումից ի վեր՝ շարունակվելով մինչև մեր օրերը: Հարյուրամյակների ընթացքում թուրքական տարբեր վարչակարգերի կողմից (սուլթանական, երիտթուրքական, հանրապետական) հայկական մշակույթը՝ որպես կայսրության քրիստոնեական մշակույթի մաս, ոչնչացվել է տարերայնորեն կամ զանգվածաբար, և դա՝ որպես պետական քաղաքականության մաս, ունեցել է չեզոքացման տարբեր դրսևորումներ և նպատակային ուղղվածություն: Մասնավորապես Հայոց ցեղասպանության ընթացքում (1915-1923 թթ.) և դրանից հետո՝ մինչ օրս, հայերի բնակության պատմական տարածքներում՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, հայկական պատմամշակութային հուշարձանները ենթարկվում են մշակութային ցեղասպանության¹: Եթե երիտթուրքական վարչակարգի համար առաջնային խնդիրը հայերի ֆիզիկական բնաջնջումն էր, իսկ մշակութային ցեղասպանությունը մղվում էր երկրորդական պլան, ապա քեմալական-հանրապետական վարչակարգի համար ուղղակի հրամայական դարձավ շարունակել և ավարտին հասցնել հայերի պատմական տարածքներում հայկական ինքնությունը փաստող ցանկացած հետքի ոչնչացումը՝ այդպիսով ամբողջացնելով ցեղասպանությունը: Ներկայումս հայկական պատմամշակութային ժառանգության մեծ մասը ոչնչացված է, մի մասը քայքայված վիճակում է, իսկ մնացյալ մասը շարունակաբար փոխակերպվում է այլ բնույթի օբյեկտների: Վերջին տասնամյակներին Թուրքիայի մշակութային քաղաքականության մեջ որոշակի փոփոխություն է նկատվում. հայկական որոշ եկեղեցիներ, քաղաքական և/կամ տնտեսական (տուրիզմի զարգացում) շահերով պայմանավորված, հիմնականում պետական միջոցներով վերանորոգվում

1 Տե՛ս Տաճատ վոդ. Եարտրմեան, *Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 չարիներուն*, Բ տպագրութիւն (Վենետիկ-Սուրբ Ղազար, 2001); Dickran Kouymjian, “The Destruction of Armenian Cultural Monuments: Its Significance for World Heritage Preservation,” in *Noah’s Country: A Roadtrip through Post-Genocide Armenia*, ed. Judith Crispin (Sydney: T & G Publishing, 2015), 297-299; Uğur Ümit Üngör and Mehmet Polat, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property* (London-New York: Continuum, 2011); Simon Payaslian, “The Destruction of the Armenian Church during the Genocide,” *Genocide Studies and Prevention* 1, no. 2 (2006), 149-172; Սեդա Պարսամյան, «Հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման երիտթուրքական քաղաքականությունը (1915-1918 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 1 (2018), 71-104:

են²: Նման «վերանորոգչական/վերականգնողական» աշխատանքների հետևանքով հուշարձանը, թեև կանգուն է մնում, սակայն կորցնում է իր ինքնությունը՝ ճարտարապետական ոճը, պատկանելությունն ու իրական նշանակությունը:

Ինչ վերաբերում է Ադրբեջանում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգությանը, ապա կարող ենք արձանագրել, որ Ադրբեջանը տասնամյակներ շարունակ բարեհաջող կիրառում և գրեթե նույնությամբ կրկնում է հայկական մշակութային հուշարձանների վերացման թուրքական փորձը: Ներկայումս Ադրբեջանում չկա որևէ գործող հայկական եկեղեցի. մեծ մասը պայթեցվել է կամ օգտագործվում է այլ նպատակով, իսկ Նախիջևանի և Արցախի տարածքներում գտնվող հայկական եկեղեցիները ներկայացվում են որպես աղվանական ժառանգություն: Թուրքադրբեջանական անարգել գործելաոճը պայմանավորված է տասնամյակների անպատժելիության իրողությամբ և պատասխանատվության չենթարկվելու վստահությամբ:

Հայկական պատմամշակութային ժառանգության դեմ թուրքադրբեջանական շարունակական ոտնձգությունները մշակութային ցեղասպանության ակնհայտ դրսևորումներ են և լիովին տեղավորվում են ցեղասպանության հայեցակարգի հեղինակ Ռաֆայել Լեմկինի տեսության մեջ, համաձայն որի՝ մշակութային ցեղասպանության բնորոշիչներն են.

1. Այդ գործողությունները միանշանակ մշակույթի ձուլման, միավորման կամ դանդաղ ադապտացիայի գործընթացները չեն, որոնք ցեղասպանական բնույթ չեն կրում:
2. Այն իրագործվել և իրագործվում է կանխորոշված ծրագրով, լայնամասշտաբ ընդգրկմամբ, բռնի և կտրուկ՝ ուղեկցվելով խմբի ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացման զանգվածային գործողություններով³:

«Մշակութային ցեղասպանություն» եզրույթն իր իրավական սահմանումներով առաջին անգամ տեղ է գտել 1947-1948 թթ. ՄԱԿ-ի պատրաստած «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի երկու՝ քարտուղարության (Secretariat Draft) և ժամանակավոր հանձնաժողովի (Ad Hoc

2 2005-2007 թթ. Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին վերանորոգվեց և զբոսաշրջիկների համար ծառայում է որպես թանգարան: 2019 թ. Այնթապի հայ կաթոլիկների եկեղեցու շենքը հատկացվեց Թուրքիայի հնագիտության և մշակութային ժառանգության ինստիտուտին, և երկու տարի տևած վերանորոգումից հետո՝ 2021 թվականից առ այսօր, եկեղեցու շենքը գործում է որպես ինստիտուտ (տե՛ս ինստիտուտի պաշտոնական կայքէջը՝ Türk Arkeoloji ve Kültürel Miras Enstitüsü, <https://turkarkeolojienstitusu.org/>, դիտվել է՝ 26.11.2024): 2020 թ. ավարտվեց նախկինում որպես մարզադահլիճ օգտագործված Կեսարիայի Ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգումը, որը գործում է որպես գրադարան (տե՛ս «Կեսարիայի Սբ. Աստվածածին հայկական եկեղեցին կվերածվի գրադարանի», 168.am, մայիսի 21, 2018 թ., <https://168.am/2018/05/21/954372.html>, դիտվել է՝ 15.11.2024):

3 St'u Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress* (Washington: Carnegie Endowment for International Peace, 1944), 84-85; Donna-Lee Frieze, "Genos – the Human group: How the Concept of Culture Underscores Raphael Lemkin's Notion of Genocide," *The Crime of Genocide: Prevention, Condemnation and Elimination of Consequences* (Proceedings of the International Conference held in Yerevan, December 14-15, 2010, MFA of Armenia, AGMI) (Yerevan, 2011), 167-168:

Committee Draft) նախագծերում⁴: Մասնավորապես քարտուղարության նախագծում «մշակութային ցեղասպանություն»-ը սահմանվում էր որպես «պատմական և կրոնական հուշարձանների հետևողական ոչնչացում կամ դրանց օգտագործում այլ նպատակներով, պատմական, գեղարվեստական, կրոնական արժեք ունեցող փաստաթղթերի կամ կրոնական ծեսերում օգտագործվող առարկաների ոչնչացում ու տարրալուծում»⁵: Չնայած խնդրի կարևորությանը՝ մշակութային ցեղասպանության դրույթը կոնվենցիայի երկրորդ նախագծում ավելի նեղացվեց, իսկ վերջնական տարբերակից ընդհանրապես դուրս մղվեց: Մինչդեռ Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի օրինակով Լեմկինը պնդում էր, որ ոճրագործների խնդիրը միայն խմբի անդամների սպանությունը չէ, այլև այդ խմբի ինքնության ջնջումը մշակութային ժառանգության ոչնչացման միջոցով⁶: Բացի այդ, Լեմկինի պնդմամբ, մշակութային ցեղասպանության դրույթը կոնվենցիայի ամենակարևոր հատվածն էր, և հաճախ հենց մշակութային ոչնչացումները կարող են բացահայտել խմբի ֆիզիկական ոչնչացման դիտավորությունը⁷:

Հետագա տարիներին մի շարք ցեղասպանագետներ իրենց տեսական աշխատանքներում զարգացրին Ռաֆայել Լեմկինի մշակութային ցեղասպանության դրույթը՝ ընդհանուր առմամբ նկարագրելով այն որպես գործողությունների ծրագիր, որն ուղղված է խմբի մշակութային ժառանգության և ինքնության ոչնչացմանը⁸: Չնայած այն բանին, որ մեր օրերում մշակութային ցեղասպանությունները շարունակվում են, և նման հանցագործությունների վերաբերյալ միջազգային օրենսդրական պատշաճ կարգավորումները գնալով ավելի ու ավելի հրատապ են դառնում, միջազգային հանրությունը դեռևս քայլեր չի ձեռնարկում դրանց դադարեցման ուղղությամբ:

Թուրքիայում և Ադրբեջանում հայկական պատմամշակութային հուշարձանների հետևողական ոչնչացումներն ու աղավաղումները վերը սահմանված մշակութային ցեղասպանության վառ օրինակներ են և կարող են նախադեպ ստեղծել նման հանցագործությունները կանխարգելող ու պատժող օրենսդրական նոր կարգավորումների համար: Այսօր Արցախում Ադրբեջանի՝ հայկական հետքերը ջնջելու դիտավորյալ քաղաքականությունն ահագանգ պետք է լինի միջազգային հանրությանը՝ ընդգծելով մշակութային հանցագործությունները քրեականացնելու հրատապությունը:

4 St'u Secretariat Draft: First Draft of the Genocide Convention, prepared by the UN Secretariat, [May] 1947 [UN Doc. E/447], Ad Hoc Committee Draft: Second Draft Genocide Convention, prepared by the Ad Hoc Committee of the Economic and Social Council (ECOSOC), meeting between April 5, 1948 and May 10, 1948 [UN Doc. E/AC.25/SR.1 to 28], հասանելի է՝ <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>, դիտվել է՝ 07.11.2024:

5 Նույն տեղում:

6 St'u Raphael Lemkin Collection, box 1, folder 19, "Correspondence to James N. Rosenberg, September 13, 1948," էջ 2, *American Jewish Historical Society (AJHS)*, հասանելի է՝ http://digital.cjh.org/R/3N5MGJHA7A23T3DB59T73H5SIEIFT31IDD44FA4EQ8UGA75GEM0882?func=collections-result&collection_id=1661&pds_handle=GUEST, դիտվել է՝ 15.02.2019:

7 St'u *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, edited by Donna-Lee Frieze (New Haven: Yale University Press, 2013), 172-173:

8 St'u Սեդա Պարսամյան, «Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. տեսական հիմնադրույթներ», *Ցեղասպանագիտական հանդես* 2, no. 2 (2014), 164-175:

Թուրքիայի և Ադրբեջանի՝ պետական քաղաքականության ընտրությունը հայկական մշակութային ինքնությունը թիրախավորելու հարցում պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Երկուսի պետական քաղաքականություններն էլ ունեն հետևյալ հիմնական ուղղությունները՝ հայկական ինքնության (թե՛ ֆիզիկական, թե՛ մշակութային) թիրախավորում, տարածաշրջանում հայերի պատմական ներկայության կասկածի հարուցում, Հայոց ցեղասպանության ժխտում, հայերի բնակության պատմական տարածքներում (Արևմտյան Հայաստան, Կիլիկիա, Նախիջևան, Արցախ) դեռևս կանգուն մշակութային ժառանգության վերացում և դրա ինքնության վերափոխում թուրքացման և աղվանացման միջոցով:

Հայկական եկեղեցիների «փոխակերպումները» Թուրքիայում

Օսմանյան կայսրությունում եկեղեցիների փոխակերպման ամենավաղ և տարածված եղանակներից էր դրանց վերափոխումները մզկիթների: Անշուշտ, օսմանյան սուլթաններն այս առումով արդեն իսկ լավ փորձ էին կուտակել նախկինում բյուզանդական քրիստոնեական եկեղեցիների ոչնչացման և/կամ ձևափեղման ճանապարհին⁹: Հատկանշական է, որ Արևմտյան Հայաստանում օսմանյան բռնության մշակույթի այս դրսևորման բավականին տարածված լինելու մասին հաճախ վկայում են հենց թուրքական աղբյուրները¹⁰: 17-րդ դարի թուրք պատմաբան և աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբին իր «Ջիհաննյումա» («Cihannüma») աշխատության մեջ Բիթլիս քաղաքը նկարագրելիս նշում է, որ իսլամական կառավարիչները կառուցել են բազմաթիվ բարեսիրական կազմակերպություններ, այդ թվում՝ չորս մեծ *ջամիներ* (մզկիթներ), որոնցից մեկն սկզբում հայկական եկեղեցի է եղել, սակայն քաղաքը գրավելուց հետո այն վերածվել է մզկիթի և հայտնի է *Զըզըլ Մեսցիդ* (*Kizil Mescid*) անվամբ¹¹: Մեծանուն հիշատակումներ կան նաև 17-րդ դարի թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» մեջ¹²: Այս վկայությունները ևս մեկ անգամ փաստում են այն իրողության մասին, որ Օսմանյան կայսրությունում հայկական մշակութային ժառանգության, տվյալ դեպքում՝ հուշարձանների փոխակերպումն ունի ավելի խոր արմատներ:

Եկեղեցիի մզկիթացնելու գործընթացը հաճախ ուղեկցվել է այնպիսի խորհրդանշական գործողություններով, ինչպիսիք են խաչի ու զանգի տապալումը և փոխարենը

9 Մինչև 20-րդ դարի սկիզբը միայն Կոստանդնուպոլսում IV-XV դարերում կառուցված շուրջ 60 բյուզանդական քրիստոնեական մեծարժեք հուշարձանների մի մասն ավերվել է, մեծ մասը՝ վերածվել մզկիթի, այդ թվում՝ Ս. Սոֆիայի տաճարը (Քյուչուկ Այա-Սոֆիա), Ս. Պամակարիստոսի (Փեթիսիե ջամի), Ս. Թեոդոսիայի (Գյուլ ջամի) եկեղեցիները, Խորի Ս. Փրկիչ վանքը (Կալսիե ջամի) և այլն (տե՛ս Ա. Н. Николаев, “Современное состояние памятников Византийского зодчества в Стамбуле”, *Византийский временник*, том VII (Москва, 1953), 146-160):

10 Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, թարգմանություն թուրքական բնագրերից, կազմեց՝ Ա. Խ. Սաֆրաստյան (Երևան, 1964): Տե՛ս նաև Էվլիյա Չելեբի, *Թուրքական աղբյուրներ*, հ. Գ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Խ. Սաֆրաստյանի (Երևան, 1967):

11 Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, 34:

12 Տե՛ս Չելեբի, *Թուրքական աղբյուրներ*, 199, 246:

իսլամի խորհրդանիշը հանդիսացող աստղի ու լուսնի հանդիսավոր բարձրացումն ու տեղադրումը, մահմեդական հոգևորականի կողմից եկեղեցու՝ մզկիթի ծխականորեն ձևափոխումը, *ազանի* կոչի հնչեցումը զանգակատնից, կոտորածների ու թիրախավորման ժամանակ քրիստոնեական եկեղեցու խորհրդակատարություններն ու եկեղեցականներին կեղծ նմանակմամբ ծաղրելը, վանդալիզմի ու պղծման կամ պրոֆանացման գործողությունները, քրիստոնեությունն անարգող արտահայտությունների կիրառումը և այլն¹³:

Եկեղեցիների մզկիթացման մեխանիզմը բավական տարածված է եղել համիդյան կոտորածների տարիներին (1894-1896 թթ.)¹⁴: Կոտորածների ականատես ամերիկացի միսիոներ Ֆրեդերիկ Գրինը հաղորդում է այդ տարիներին շուրջ 2500 բնակավայրերի ավերման և 568 եկեղեցիների ու վանքերի քանդման կամ մզկիթի վերածման մասին¹⁵:

Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդել, որ, որպես կանոն, մզկիթի են վերածվել հիմնականում ճարտարապետական տեսանկյունից արժեք ներկայացնող, շքեղ, հին ու քարաշեն եկեղեցական շինությունները, որոնք առանձնանում էին տվյալ բնակավայրում: Քրիստոնյաների հոգևոր արժեքների ոչնչացումը կամ յուրացումը ձևախեղման միջոցով նաև փորձ էր ցույց տալու իսլամի գերակայությունը¹⁶: Հայոց ցեղասպանության տարիներին արձանագրվել են դեպքեր, երբ իրականացնողները՝ ոստիկաններ, տեղի մուսուլման բնակիչներ, երբեմն նաև զինվորներ, ցանկացել են գործընթացին մասնակից դարձնել նաև տեղացի հայերին կամ հայ հոգևորականությանը՝ դարձյալ փորձելով ծաղրել ու նվաստացնել վերջիններիս և նրանց հոգևոր զգացումները¹⁷:

Հայկական բազմաթիվ եկեղեցիներ մեր օրերում շարունակում են գործել որպես մզկիթներ, ինչպես, օրինակ, Տաքսուի Ս. Աստվածածին (ըստ տեղի բնակիչների՝ Պողոս առաքյալի) մայր եկեղեցին, Ուրֆայի Ս. Աստվածածին մայր տաճարը (ներկայումս՝ Selahaddini Eyyubi Camii), Ուրֆայի հայ բողոքականների եկեղեցին (ներկայումս՝ Yeni Firfirli Camii), Կարսի Առաքելոց վանքը (ներկայումս՝ Kümbet Camii), Կյու-

13 Տե՛ս Գալուստ Միրմենեան, *Երզնկա* (Գահիրե, 1947), 348: Տե՛ս նաև Վերթինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ*, երկրորդ համալրված հրատարակություն (Երևան, 2011), 191-192:

14 1895-1896 թթ. մզկիթների փոխակերպված հայկական եկեղեցիների բազմաթիվ օրինակներ տե՛ս *Les massacres d'Arménie. Témoignages des victimes*, Préface de G. Clemenceau (Paris: Édition du Mercvre de France, 1896), 62, 74, 82, 106, 110, 221; Mons. Felix Charmetant, *Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires grégoriens et protestants* (Paris: Au bureau des Œuvre d'Orient), 46-71; Edwin Munsell Bliss, *Turkey and the Armenian Atrocities: A Reign of Terror. From Tartar Huts to Constantinople Palaces* (Philadelphia: Edgewood Publishing Company, 1896), 444:

15 Տե՛ս Frederick Greene, *Armenian Massacres or the Sword of Mohammed* (Philadelphia and Chicago: International Publishing Co., 1896), 261-262:

16 Տե՛ս Ferriman Duckett, *The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909* (Yerevan, 2009), 35: Տե՛ս նաև Արշակունի Թեոդիկ, *Ամիս մը՝ ի Կիլիկիա* (Կ. Պոլիս, 1910), 205-207:

17 Տե՛ս Տոթթ. Եօհաննէս Լեփսիոս, *Հայաստանի ջարդերը. գաղղնի տեղեկագիր*, թարգմանեց՝ Միքայիլ Շամտանճեան (Կ. Պոլիս, տպ. Յ. Ասատուրեան որդիք, 1919), 273:

րինի մայր եկեղեցին (1922 թվականից փոխակերպված մզկիթի, ներկայումս՝ Camii Kebir/Ulu Camii), Այնթապի Ս. Աստվածածին մայր տաճարը (ներկայումս՝ Kurtulus Cami) և տասնյակ այլ եկեղեցիներ:

Դեռևս 1920-ականներից քեմալական-հանրապետական վարչակարգի գործադրած պետական ծրագիրը՝ վերացնելու հայկական հետքը, առավել ամբողջական ու համակարգված բնույթ է ստանում 1940-1960-ականներին, երբ նախկին Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում աննախադեպ չափերի է հասնում ոչնչացվող հուշարձանների թիվը¹⁸: 1970-ականներից հետո Արևմտյան Հայաստանի տարածքում, թեև ոչ 1940-1960-ական թթ. ջանադրությամբ, հայկական հետքի վերացման քաղաքականությունը հետևողականորեն շարունակվում էր: Տարբերությունն այն էր, որ ավերիչ ուժն արդեն ոչ այնքան զինվորական ռեսուրսն էր՝ ծանր հրետանու գործադրմամբ, որքան պետական քարոզչությամբ ու անպատժելիությամբ խրախուսված քուրդ և թուրք բնակչությունը: Այս շրջանում հայկական պատմաճարտարապետական հուշարձանները ոչնչացվել են գերազանցապես հետևյալ եղանակներով. ա) արևմտահայ վանքերի ու եկեղեցիների, ինչպես, օրինակ, Վարազավանքի, Նարեկավանքի, Մշո Ս. Կարապետի վանքի սրբատաշ քարերով կառուցվել են գյուղական տներ՝ մինչև անգամ խաչքարերը, արձանագրություններն ու զարդաքանդակներն արտաքին պատերում օգտագործելով որպես զարդարանք, բ) օգտագործվել են կենցաղային ու հասարակական ամենատարբեր նպատակներով՝ որպես գոմեր, մարագներ, ֆերմաներ, բանտեր, մարզասրահներ, պարասրահներ, հասարակաց տներ, լավագույն դեպքում՝ թանգարաններ, գ) ոչնչացվել են եկեղեցիների ու վանքերի ինքնությունը փաստող արձանագրություններն ու սրբապատկերները¹⁹:

Թուրքիայում հայկական եկեղեցիները տասնամյակներ շարունակ այլափոխելու հարյուրավոր օրինակներից որպես դասական օրինակ կարելի է առանձնացնել Այնթապի Ս. Աստվածածին մայր տաճարի դեպքը²⁰: 1915 թ. օգոստոսի 22-ին եկեղեցին բռնագրավվել ու փակի տակ է առնվել, իսկ ներսում եղած ողջ գույքը նախ ամբարվել է, այնուհետև՝ դրվել աճուրդի: 1916 թ. եկեղեցու շենքն օգտագործվել է որպես պահեստ և վաճառասրահ, որտեղ աճուրդի են հանվել տեղի հայերի «լքյալ» գույքը, որից հետո՝ ավելի քան երեք տարի, եկեղեցու շենքը կառավարության կողմից օգտագործվել

18 Տե՛ս *Եղեռն՝ եղեռնից հետո* (Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2015): Տե՛ս նաև «Վարձք», N 1, հունվար-հունիս, թիվը ???, 3-12; N 2, հուլիս-նոյեմբեր, 2010, 2-64:

19 Տե՛ս նույն տեղում:

20 Այնթապի Ս. Աստվածածին մայր եկեղեցին նախագծել է արքունի ճարտարապետ Սարգիս Պալյանը 1874-1884 թթ.՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի դիմումի համաձայն: Եկեղեցու շինարարության մեկնարկի առումով տարբեր թվեր են շրջանառվում՝ 1873/1874/1876: Ներսես ավագ քահանա Թավուզյանի հաղորդմամբ՝ եկեղեցու հանդիսավոր հիմնարկերը տեղի է ունեցել 1876 թ. հունիսի 26-ին: Գմբեթի վերջին քարը դրվել է 1893 թ. հոկտեմբերի 18-ին մեծ հանդիսավորությամբ: 17 տարի տևած շինարարության վրա ծախսվել է շուրջ 10.000 օսմանյան ոսկի՝ գերազանցապես այնթապցի հայերի հանգանակած միջոցներով: Եկեղեցու կառուցման այլ մանրամասների մասին տե՛ս Գեորգ Սարաֆեան, *Պապոնություն Անթեպի հայոց*, հ. Ա. (Լոս Անճելես, 1953), 339, 422, 430, 435-438:

է ռազմական նպատակներով²¹: 1918 թ. զինադադարից հետո Այնթապ վերադարձած հայերի առաջին ձեռնարկներից մեկը եղավ պղծված ու կողոպտված Ս. Աստվածածին մայր եկեղեցու, ազգային առաջնորդարանի և այլ հաստատությունների վերականգնումն ու դպրոցների վերաբացումը²²: 1919 թ. նոյեմբերի 22-ով թվագրված միսիոներական զեկույցներից մեկի համաձայն՝ Այնթապի երեք մեծ ավետարանական եկեղեցիներն այնքան վատ վիճակում էին, որ հնարավոր է եղել վերականգնել միայն մեկը²³:

1921 թ. հոկտեմբերին Անկարայում կնքված ֆրանս-թուրքական համաձայնագրի հետևանքով Կիլիկիան նորից հայաթափվում է, և, 1922 թ. սկսած, հայերի մասնավոր և ազգային կալվածքները նոր թափով են թիրախավորվում քեմալական-հանրապետականների կողմից: 1920-ականներից մինչև 1980-ականների կեսերը Ս. Աստվածածին եկեղեցու շենքն օգտագործվել է որպես բանտ²⁴: 1963 թ. փետրվարի 28-ին թուրքական թերթերն այն հիշատակում են որպես «ապստամբ բանտ», քանի որ Գազիանթեփի (Այնթապի թուրքացված անվանումը) 340 բանտարկյալներ, չկարողանալով օգտվել համաներման իրավունքից, նախօրեին հարձակվել էին հսկող ոստիկանների վրա, փակել բանտի դռներն ու հացադուլ սկսել²⁵: 1988 թվականից առ այսօր եկեղեցին օգտագործվում է որպես մզկիթ՝ *Զուրթուլուշ* անվամբ (Kurtuluş Cami, թուրք. թարգմ.՝ «ազատագրված մզկիթ»)²⁶:

Վաղ հանրապետական շրջանից սկսած մինչև մեր օրերը բազմակի փոխակերպման է ենթարկվել նաև 1860/1862 թ. կառուցված Այնթապի հայ կաթոլիկների եկեղեցին (հայտնի *Զենդիլի* (Kendirli) անվամբ): Այնթապի թուրքական պաշարման ժամանակ՝ 1920 թ. ապրիլից մինչև 1921 թ. փետրվարը, եկեղեցու շենքը հայերի համար դարձել էր ապաստարան: Հայերի շուրջ 11 ամիս տևած դիմադրական պայքարի ընթացքում զգալիորեն տուժել են եկեղեցու արտաքին պատերը՝ դառնալով թուրքական հրացանագարկերի թիրախ: Այնթապից հայերի հեռանալուց հետո՝ 1923 թ., եկեղեցին օգտագործվել է որպես ուսուցչական քոլեջ, 1932 թ.՝ որպես «Հանրապետական ժողովրդական կուսակցության» գրասենյակ, այնուհետև՝ որպես Գազիանթեփի ժողովրդական տուն (Gaziantep Halkevi)²⁷: Այնթապի Երվանդ Բյուզուկյանը, 1951 թ. դեկտեմբերին այցելելով Այնթապ և նկարագրելով տեղի նախկին հայկական եկեղեցիների վիճակը, հետևյալն է փաստում.

21 St'u Ümit Kurt, *The Armenians of Aintab: The Economics of Genocide in an Ottoman Province* (Cambridge, MA: Harvard University Press, 2021), 127-128, 131:

22 St'u Սարաֆեան, *Պալամութին Անթափի հայոց*, 1077-1078:

23 St'u Kurt, *The Armenians of Aintab*, 158:

24 St'u նույն տեղում, 189:

25 St'u Serdar Korucu, ““A Mosque Built as a Church” in Antep: Kurtuluş Mosque,” *Bianet*, June 24, 2017, <https://archive.ph/20230118135629/https://bianet.org/biamag/azinliklar/187713-antep-te-kilise-olarak-yapilan-cami-kurtulus-camii#selection-1011.0-1011.54>, դիտվել է՝ 18.11.2024:

26 St'u Gaziantep kurtulus mosque Stock Photos and Images, *Alamy.com*, <https://www.alamy.com/stock-photo/gaziantep-kurtulus-mosque.html?sortBy=relevant>, դիտվել է՝ 19.11.2024; Kurtulus Cami Mosque, *Trip Advisor*, https://www.tripadvisor.ru/Attraction_Review-g297998-d2624139-Reviews-Kurtulus_Cami_Mosque-Gaziantep_Gaziantep_Province.html, դիտվել է՝ 26.11.2024:

27 St'u Kurt, *The Armenians of Aintab*, 189:

....Հայոց մեծ եկեղեցին [Ս. Աստվածածին] բանտի վերածնունդ է: Բողոքականաց առաջին եկեղեցին նախ սինեմայի վերածնունդ է, հետո այրուած, ներկայիս կառավարական պաշտօնեայ մը կը բնակի հոն եւ շտեմարան եղած է մէկ մասը: Բողոքականաց Բ. եկեղեցին եւ անոնց կցուած Վարդանան դպրոցը ավիրի գործարանի վերածնունդ է, Ներսէսեանը՝ մեծ հրապարակ շինած են... Հայ կաթողիկոսներու «Քէնտրոլի»ներու եկեղեցին սինեմա եղած է, սրահին ճերմակ եւ կարմիր մարմարները պահուած են: «Վալի»ին օֆիսը հոս է²⁸:

2019 թ. Այնթապի հայ կաթողիկոսների եկեղեցու շենքը հատկացվել է Թուրքիայի հնագիտության և մշակութային ժառանգության ինստիտուտին (Türk Arkeoloji ve Kültürel Miras Enstitüsü): Երկու տարի տևած վերանորոգումից հետո՝ 1921 թ. առ այսօր, եկեղեցու շենքը գործում է որպես ինստիտուտ²⁹:

Բազմակի փոխակերպման եղանակով յուրացված հայկական եկեղեցիների շարքում է նաև Կեսարիայի (Կայսերի) կենտրոնում գտնվող հայկական Ս. Աստվածածին մայր եկեղեցին, որը մի որոշ ժամանակ ոստիկանական բաժանմունք լինելուց հետո շուրջ 40 տարի օգտագործվել է որպես մարզադահլիճ, իսկ այժմ գործում է որպես քաղաքային գրադարան³⁰:

Վերջին տարիներին արձանագրվել են նաև դեպքեր, երբ հայկական եկեղեցիները դրվել են աճուրդի: Բուրսայում գտնվող 19-րդ դարի հայկական եկեղեցին վաճառքի էր հանվել թուրքական անշարժ գույքի կայքում 2021 թ. հունվարի 17-ին: Գովազդում այն բնութագրվել էր որպես իդեալական զբոսաշրջային վայր, քանի որ գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահպանվող տարածքում: Վաճառողը հայտարարել էր, որ եկեղեցին խելացի ներդրում է, քանի որ այն կարող է «օգտագործվել որպես հյուրանոց, թանգարան կամ արվեստի պատկերասրահ»³¹: 2022 թ. օգոստոսին լուր տարածվեց, որ Թուրքիայի Իզմիր նահանգի Մենեմեն քաղաքում գտնվող հայկական կիսաքանդ Ս. Սարգիս եկեղեցին կվերանորոգվի: Մենեմենի քաղաքապետի պաշտոնակատարը նշել էր, որ եկեղեցին վերանորոգվելու և օգտագործվելու է որպես մշակույթի և գիտության կենտրոն: Ս. Սարգիս եկեղեցին նախկինում թուրքերն օգտագործել են նաև որպես զինվորական պահեստ, ապա՝ ախոռ³²:

28 Սարաֆեան, *Պալատներին Անթեպի հայոց*, 1086-1088:

29 Տե՛ս ինստիտուտի պաշտոնական կայքէջը՝ Türk Arkeoloji ve Kültürel Miras Enstitüsü, <https://turkarkeolojiensitüsü.org/>, դիտվել է՝ 26.11.2024:

30 Տե՛ս «Կեսարիայի հայկական եկեղեցին վերածվել է գրադարանի», *Երկիր օրաթերթ*, 23 հունվարի 2020 թ., <https://yerkir.am/hy/article/2020/01/23/199829>, դիտվել է՝ 26.11.2024:

31 Տե՛ս “17th Century Armenian Church on Preservation List Demolished in Western Turkey,” Stockholm Center for Freedom, January 30, 2021, <https://stockholmcfr.org/17th-century-armenian-church-on-preservation-list-demolished-in-western-turkey/>, դիտվել է՝ 26.11.2024; Fethiye Çetin, “Bursa’da satılık Ermeni kilisesi,” *Agos*, January 17, 2021, <https://www.agos.com.tr/tr/yazi/25187/bursa-da-satilik-ermenikilisesi>, դիտվել է՝ 26.11.2024:

32 Տե՛ս «Թուրքերը հայկական եկեղեցին պատրաստվում են վերածել արվեստի կենտրոնի (Տեսալույթ)», *Ermeni Haber Ajansı*, August 29, 2022, <https://www.ermenihaber.am/am/news/2022/08/29/%D4%>

Հայկական եկեղեցիների «փոխակերպման» ադրբեջանական փորձից

Դեռևս անցած դարի 20-ականներից սկսած մինչև մեր օրերը՝ Ադրբեջանի տարբեր վարչակարգերի շրջանում, Նախիջևանում, Լեռնային Ղարաբաղում, Բաքվում, Ադրբեջանի նախկին հայաբնակ քաղաքներում և գյուղերում արձանագրվել են հայկական պատմամշակութային հուշարձանների՝ եկեղեցիների, խաչքարերի, գերեզմանների ոչնչացման, եկեղեցիների՝ այլ նպատակներով օգտագործման բազմաթիվ դեպքեր:

1920 թ. հուշագրություններից մեկից տեղեկանում ենք, որ Մեյսարի և Մատրասա գյուղերում և ընդհանուր առմամբ Շամախիի գավառում հայերի դատարկված տներում փախստական թաթարներ էին եկել ապրելու և սպասում էին Ադրբեջանի կառավարության կարգադրությանը իրենց՝ այդ գյուղերում հիմնավորապես բնակվելու: Հայերի ողջ անշարժ և շարժական գույքը, ունեցվածքը, կալվածքները, եկեղեցիները, այգիները Ադրբեջանի կառավարությունը բաժանել էր իր հավատակիցներին՝ թաթարներին: Իսկ Շամախիի գյուղերի հայերը գրկվել էին ժառանգությունից և բռնի տեղահանվել³³: Վերջապահում հեղինակը մտավախություն է հայտնում.

Այս կերպ շարունակվելու դեպքում եկեղեցիների խաչերը շուտով կհասլուսնի կփոխվեն, եկեղեցիներն ու վանքերը անմիջապես մզկիթ կդառնան, մոտերը կցցվեն ազանի մինարեթներ: Այդպես է եղել Կարսում, Էրզրումում, Տրապիզոնում, Կ. Պոլսում ու այլ մահմեդական աշխարհում³⁴:

Խորհրդային իշխանության շրջանում առհասարակ եկեղեցականների, հոգևոր գործիչների հանդեպ քաղաքականությունը բավական խիստ էր, սահմանափակված էր կրոնական գործունեությունը: Օգտվելով առիթից՝ ադրբեջանական խորհրդային իշխանություններն էլ ավելի մեծ ճնշում էին գործադրում հայ հոգևորականության նկատմամբ՝ նրանց վրա դնելով հարկային ծանր բեռ: Նույն ժամանակահատվածում Ադրբեջանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիների օգտագործումն այլ նպատակներով կրում էր զանգվածային բնույթ: 1925 թ. օգոստոսի 18-ին Բաքու-Թուրքեստանյան հայոց թեմի առաջնորդը նամակ է հղում Ազգային կոմիսարների նախագահող խորհրդին՝ հայտնելով, որ Գյոքչայի³⁵ բնակիչները դիմել են իրեն՝ տեղեկացնելով, որ տեղական իշխանությունները մտադրված են Գյոքչայի հայկական եկեղեցին վերածել էլեկտրակայանի: Առաջնորդը նշում էր նաև, որ 1918 թ. դեպքերի ժամանակ միջերթիկ հակամարտության հետևանքով Գյոքչայի հայ բնակիչները լքել են իրենց տները և նոր են սկսել վերադառնալ, ուստի հայ հավատացյալները մինչ այդ հնարավորություն չեն ունեցել հրավիրելու հոգևորականի և երկրպագություն կատարելու եկեղեցում³⁶:

B9%D5%B8%D6%82%D6%80%D6%84%D5%AB%D5%A1-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6/236255, դիտվել է՝ 26.11.2024:

33 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 1, գ. 439, էջ 8:

34 Նույն տեղում, էջ 69:

35 Քաղաք Ադրբեջանական ԽՍՀ Բաքվի նահանգի Գյոքչայի գավառում:

36 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 134, էջ 79:

Խորհրդային իշխանությունների՝ ինչպես Արցախում, այնպես էլ այլ թեմերում հայ եկեղեցու փաստացի ոչնչացմանը միտված ապօրինություններն ավելի ահագնանում և զանգվածային բնույթ են ստանում 1920-ական թթ. վերջերին: Այս մասին տեղեկանում ենք Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսի 1929 թ. մարտի 4-ին գրած ծավալուն բողոք-դիմումից՝ ուղղված ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին: Վեհափառն ամենայն մանրամասնությամբ ու փաստարկված ներկայացնում է հակաեկեղեցական բոլոր անօրինականությունները, որոնք «մեղանչում են պետական օրենքի հիմնական երեք սկզբունքների դեմ, այն է՝ խղճի ազատության, կրոնական պրոպագանդայի ազատության և հակակրոնական պրոպագանդայի համար պետականորեն ծրագրված գործելակերպի դեմ»³⁷: Նույն ժամանակամիջոցում՝ 1929 թ. մարտի 6-ին, Ադրբեջանի կոմկուսի 9-րդ համագումարում Բաքվի վարչախմբի առանցքային դեմքերից Ասադ Կարանն իր զեկույցում կոչ է անում անհապաղ վերաբացելու ոչ կամովին փակված մզկիթները³⁸: Հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում Ադրբեջանում ազատ և անարգել գործել են մզկիթները, և մոլլաները զանգվածային բռնաճնշումների չեն ենթարկվել, ինչպես հայ հոգևորականները³⁹: Դեռևս 1960-ական թթ. Ադրբեջանի ԽՍՀ գյուղնախարարությունը ցուցումներ էր տվել կոլտնտեսությունների նախագահներին, որ հայկական եկեղեցիները, բայց ոչ մզկիթները, կարող են օգտագործել այլ նպատակներով⁴⁰: Այսպես՝ Շուշիի Մեղրեցոց եկեղեցին վերածվել էր ամառային կինոթատրոնի, Կանաչ ժամը՝ հանքային ջրերի սրահի⁴¹, Ղազանչեցոցը՝ զինապահեստի⁴², որտեղ Արցախյան առաջին պատերազմի ընթացքում ադրբեջանցիները պահեստավորել էին գրադի ականներ: Որոշ դեպքերում հայկական սրբավայրերն ադրբեջանցիները վերածել են արտաքնոցի, ինչպես, օրինակ, Ղալաքենդ⁴³ գյուղի եկեղեցին (9-11-րդ դդ.):

1950-1960-ականներից սկսած՝ ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ադրբեջանում հայկական հուշարձանների յուրացման նոր միտում է նկատվում: Տեսական, կեղծ «գիտական» մակարդակում խեղաթյուրվում էր այս կամ այն հուշարձանի պատմությունը՝ իբրև թե «օրինական» հիմք ապահովելով տվյալ հուշարձանի բռնագրավման և տնօրինման համար: Նման եղանակով, եթե թուրք «պատմաբանները» հայկական

37 Գարիկ սարկավազ Ասոյան, «Արցախի թեմը Խորհրդային Ադրբեջանի բռնաճնշումների կիզակետում 1920-1933 թթ.», *21-րդ դար*, թիվ 5 (2016), 104:

38 Տե՛ս նույն տեղում:

39 Տե՛ս Հրանտ Աբրահամյան, *Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933)* (Ս. Էջմիածին, 2009), 208:

40 Տե՛ս Շահեն Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անադուրիան* (Ստեփանակերտ, 2003), 203:

41 Տե՛ս Լևոն Մելիք-Շահնագարյան, *Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ* (Երևան, 1998), 149:

42 Տե՛ս *Ղարաբաղյան ազարագրական պատերազմ. 1988-1994 թթ.* հանրագիտարան (Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 2004), 527:

43 Ներկայումս՝ գյուղ Ադրբեջանի Հանրապետության Գետաբեկի շրջանում: Ղալաքենդը 1671 թ. «յերկիրս Շամքոն»-ում հիշված Բերդատակ գյուղն է (տե՛ս Սամվել Կարապետյան, *Հյուսիսային Արցախ* (Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող ՀԿ, 2004), 124):

միջնադարյան հուշարձանները, ինչպես, օրինակ, Աղթամարի Ս. Իսաչ, Անիի և Կարսի եկեղեցիները, վերագրում են սելջուկյան ճարտարապետությանը՝ անտեսելով այն փաստը, որ այդ հուշարձաններից շատերը կառուցվել են մինչև սելջուկների հայտնվելն առաջավորասիական տարածաշրջանում⁴⁴, ապա աղբրեջանական կողմն աղվանացնում է դրանք:

1960-ականներից սկսած մինչ օրս պետական հովանավորությամբ աղբրեջանցի պատմաբանները, հետազոտողները հակազիտական տարբեր հողվածների, զեկույցների ու աշխատությունների միջոցով շրջանառում են *աղվանականության տեսությունը*: Տեսության հիմնաքարը դնողներից էր աղբրեջանցի պատմաբան, հայտնի կեղծարար Զիա Բունիաթովն իր «Աղբրեջանը 7-9-րդ դարերում» (Բաքու, 1965) ուսումնասիրությամբ⁴⁵, որի վերնագիրն արդեն իսկ խոսում է դրա հակազիտական մոտեցման մասին: Համաձայն այս տեսության՝ մասնավորապես Արցախի տարածքում գտնվող հայկական եկեղեցիներին վերագրվում է աղվանական ծագում, իսկ աղվանական ցեղերն անվանվում են աղբրեջանցիների նախնիներ⁴⁶: Այդպես աղբրեջանցիները փորձում էին ստանալ բնիկ ժողովրդի կարգավիճակ խորհրդային ազգերի շարքերում, յուրացնել Լեռնային Ղարաբաղի և հայաբնակ այլ տարածքներ, իսկ սեփական պատմամշակութային ժառանգության առկայությունը յուրացվող տարածքում ապացուցելը կարևոր տարրերից մեկն է: Արդեն 1988 թ. ապրիլի 27-ին Աղբրեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդի հրամանում անգամ այն հուշարձանները, որոնք նախկինում պետության կողմից հաստատվել էին որպես հայկական, վերանվանվեցին «աղվանական», կամ ուղղակի դրանց վերագրվեց անհայտ ծագում⁴⁷:

1980-ականներից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների ոչնչացման գործում Աղբրեջանի քաղաքականության բնորոշ կողմերից դարձավ նաև «վերանորոգչական/վերականգնողական» աշխատանքների պատրվակով վանքերի ու եկեղեցիների ճարտարապետության այլափոխումը, որի հետևանքով հուշարձանը, թեև կանգուն էր մնում, սակայն կորցնում էր իր ինքնությունը՝ ճարտարապետական ոճը, պատկանելությունն ու իրական նշանակությունը: Այսպես՝ Գանձակ (ներկայումս՝ Գյանջա) քաղաքի 17-րդ դարի Ս. Սարգիս եկեղեցին վերանորոգման անվան տակ արտաքուստ երեսպատվեց աղյուսով՝ կորցնելով հայկական ճարտարապետական ոճը, ինչպես և սրբավայրի իր նշանակությունը՝ օգտագործվելով որպես ժողովուրդների բարեկամության պալատ⁴⁸:

44 Տե՛ս Մանվել Զուլպյան, *Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր)* (Երևան, «Հայաստան» հրատ., 1995), 157:

45 Տե՛ս Зия Бунятов, *Азербайджан в VII-IX вв.* (Баку: Издательство Академии наук Азербайджанской ССР, 1965):

46 Տե՛ս Hayastan Martirosyan, “Azerbaijan’s Policy of Forced Cultural Appropriation After the Second Artsakh War: The Case of Dadivank Monastery,” *International Journal of Armenian Genocide Studies* 7, no. 2 (2022): 103:

47 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 84, էջ 13:

48 Տե՛ս Սամվել Կարապետյան, «Հայկական պատմական հուշարձանների վիճակը Հայաստանի հարևան երկրներում», *Վասն հայության*, 23 ապրիլի, 2002, 11:

Նախկինում հայաբնակ Նախիջևանի քաղաքներից Ագուլիսում⁴⁹ գործել են հայկական մեկ տասնյակից ավելի եկեղեցիներ: Հայտնիներից է Ս. Թովմա առաքյալի վանքը⁵⁰: Կովկասյան ժառանգության մշտադիտարկման կենտրոնի (Caucasus Heritage Watch) հաշվետվությունում նշվում է, որ 1973 թ. և 1982 թ. արբանյակային պատկերներում Ս. Թովմա առաքյալի եկեղեցին դեռ կանգուն էր: Վանական համալիրի ապամոնտաժումն սկսվեց 2000 թ. փետրվարից: Արդեն 2009 թ. հունիսի 28-ին արված արբանյակային պատկերում երևում էր, որ եկեղեցին հիմնովին չկա, իսկ 2014 թ. մայիսի 15-ին եկեղեցու տեղում բացվեց մզկիթ⁵¹:

Գանձակի հայտնի եկեղեցիներից մեկը՝ Ս. Հովհաննես մայր եկեղեցին, կառուցվել է 1633 թ. Քիլիսաքյանդ թաղամասում (ներկայումս՝ Միրզա Աբբաս Աբբասզադեի փողոց)⁵²: 1970-ական թթ. այն վերանորոգվել է և սկսել է գործել որպես Կիրովաբադի քաղաքային կամերային համերգասրահ: 1991 թ. Ադրբեջանի անկախացումից հետո շենքը գործել է որպես Գյանջայի պետական կամերային նվագախմբի շենք⁵³, իսկ այժմ մուտքի մոտ ցուցանակ է փակցված, որի վրա նշված է, որ շենքն ազգային նշանակության ճարտարապետական հուշարձան է և գտնվում է պետության հոգածության ներքո որպես «Յոթայունանոց աղվանական տաճար»⁵⁴: Չնայած փորձ է արվել վերացնելու եկեղեցու հայկականությունը վկայող փաստերը, եկեղեցին՝ որպես շինություն, ընդհանուր առմամբ պահպանվել է: Ադրբեջանցիները ներկել կամ քերել են եկեղեցու պատերի արձանագրությունները՝ քողարկելու համար հայկականությունը, խաչքարերն էլ տարվել են անհայտ ուղղությամբ⁵⁵: Չնայած եկեղեցին աղվանական համարելուն՝ ադրբեջանցի հետազոտողները եկեղեցու պատմությունը ներկայացնելիս հղում են կատարում միայն հայկական աղբյուրներին, քանի որ չկա ադրբեջանական որևէ աղբյուր: Շինության ընդհանուր պահպանումն ադրբեջանական կողմը

49 Ագուլիսը ներկայումս գտնվում է Ադրբեջանի Հանրապետության Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանում: Ագուլիսը նախկինում եղել է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Գողթն գավառի մի մաս, տարբեր ժամանակներում եղել է նաև Վասպուրականի վարչական մաս, իսկ խորհրդային տարիներին՝ ներառվել Նախիջևանի ԻԽՍՀ Օրդուբադի վարչական շրջանի կազմում:

50 Վանքը գտնվում է Վերին Ագուլիսում (ավելի հստակ՝ Վանքի թաղում)՝ Ագուլիս գետակի ձախ կողմում:

51 Տե՛ս “St. Tovma Monastery of Agulis, Destruction and Reuse,” *Caucasus Heritage Watch* (CHW), August 31, 2022, <https://storymaps.arcgis.com/stories/c0b4f1fa78ea4c5ab6e67bdac79cb5d7>, դիտվել է՝ 26.11.2024:

52 1910 թ. եկեղեցին վերանորոգվել է, որի աշխատանքներում ընդգրկված են եղել Հովսեփ բեկ Մելիք-Բեգլարյանը, Սիմեոն Աֆանասյանը, Միքայել Լազարյանը, Հակոբ Լիսիկյանը, Մարտիրոս Նաբաթյանը և Սիմեոն Բաբաբնիսիյանը, նախագծի և նորոգումների ծախսերի նախահաշիվը կազմել էր ճարտարապետ Օլտարժևսկին (տե՛ս Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, 49-50):

53 Տե՛ս «Գանձակ քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցի», *Գարդմանահայերի տեղեկատվական անկյուն*, 28 հունվարի 2014 թ., https://gardmanq.do.am/blog/gand_39_ak_qaghaqi_sowrb_hovhannes_ekegheci/2014-01-28-16, դիտվել է՝ 07.10.2024; Hidden Ganja, Facebook post, April 20, 2022, <https://www.facebook.com/hiddenganja/posts/1024281388494171>, դիտվել է՝ 07.10.2024:

54 Տե՛ս Gəncədə. Müqəddəs İohann kilsəsi, Youtube video, February 2, 2024, <https://www.youtube.com/watch?v=HtxYR8iCdHk>, դիտվել է՝ 07.10.2024:

55 Տե՛ս «Գանձակ քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցի»:

ներկայացնում է որպես ադրբեջանցի ժողովրդի էթնիկ և կրոնական հանդուրժողականության բարձր մակարդակի դրսևորում⁵⁶:

Կրակի տաճարի է վերածված Բաքվի հայտնի եկեղեցիներից Ս. Աստվածածինը՝ Ապշերոնյան թերակղզու Սուրախանի բնակավայրից հյուսիս գտնվող տաճարի նմանությամբ⁵⁷: Բաքվում կանգուն միակ հայկական եկեղեցին 19-րդ դարում կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, որն այժմ անշուք վիճակում է, գմբեթից և զանգակատնից հանված են խաչերը, դռները փոխարինված են երկաթե կոնստրուկցիաներով, երկու պատուհանները որմնաշարված են, իսկ մուտքերի զույգ խաչքարերի հայերեն արձանագրությունները քերված են: Եկեղեցու ներսում ոչ թե գրադարան է, այլ գրքերի պահեստի նման մի տարածք⁵⁸, չնայած որ 2001 թ. օգոստոսի 2-ին ընդունված հրամանագրով եկեղեցին ներառվել էր Ադրբեջանում պետական պահպանության տակ վերցված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում⁵⁹: Այս միակ եկեղեցին Ադրբեջանում պահպանվել է միայն նրա համար, որպեսզի ցույց տրվի, որ Ադրբեջանում տիրում է հանդուրժողականության մթնոլորտ նաև հայկական մշակույթային ժառանգության նկատմամբ:

2022 թ. փետրվարի 3-ին ադրբեջանական լրատվամիջոցներից «report.az»-ը լուր տարածեց⁶⁰ այն մասին, որ կովկասյան Ադվանքի պատմությունն ու ճարտարապետությունն ուսումնասիրող մասնագետներից բաղկացած խումբ է ստեղծվել՝ «ադվանական կրոնական տաճարների վրայից հեռացնելու «հայերի գրած» հետքերը»: Այս մասին Գանձակում հայտարարել էր Ադրբեջանի մշակույթի նախարար Անար-Քերիմովը: Վերջինս նշել էր, որ խմբում ընդգրկված են նաև պետական կառույցների ներկայացուցիչներ: Դեռևս 2021 թ. մարտին Ադրբեջանի նախագահն ու իր տիկինն այցելել էին Հադրութի շրջանի Ծակուռի գյուղի 12-րդ դարի Ս. Աստվածածին հայկական եկեղեցին, որտեղ Ադրբեջանի նախագահը հայտարարել էր, որ այն ադվանական եկեղեցի է, հայերն այնտեղ գրություններ են ավելացրել, որոնք կեղծ են, և իրենք վերականգնելու են եկեղեցին, քանի որ այն պատկանում է իրենց «ուղի եղբայրներին»⁶¹:

56 Տե՛ս “Dini abidələrimiz: qədim alban məbədləri,” 20.08.13, https://525.az/?name=xeber&news_id=10940, դիտվել է՝ 07.10.2024:

57 Տե՛ս Սամվել Կարապետյան, *Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս* (Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2017), 17:

58 Տե՛ս Գևորգ Ստեփանյան, «Համառոտ ակնարկ Բաքվի Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմության», *Լրաբեր հասարակական գիտությունների* 3, no. 3 (2009), 55-56:

59 Տե՛ս “E-Qanun, Framework 2847,” *E-Qanun*, <https://www.e-qanun.az/framework/2847>, դիտվել է՝ 07.10.2024:

60 Տե՛ս Anar Kərimov, “Ermənilərin saxtalaşdırdıqları alban dini məbədlərinin bərpası üçün İşçi qrup yaradılıb,” *Report.az*, February 3, 2022; <https://report.az/medeniyyet-siyaseti/alban-dini-mebedlerinin-berpasi-ucun-isci-grup-yaradilib/>, դիտվել է՝ 07.10.2024:

61 Տե՛ս İlham Əliyev, “Prezident Əliyev: Biz bu qədim alban kilsəsini təmir edəcəyik,” *Minval*, March 16, 2021; <https://minval.az/news/124099506>, “Qədim Alban məbədində saxta tarix” [“A Fake History of an Ancient Albanian Temple”], YouTube video, March 16, 2021, <https://www.youtube.com/watch?v=R4nsAN1yOoc>, դիտվել է՝ 07.10.2024:

Սոցիալական ցանցերի ադրբեջանական տիրույթում 2022 թ. հունվարի 8-ին տարածված տեսանյութից⁶² պարզ է դառնում, որ ադրբեջանցիները հանել են Հադրութի շրջանի Վանք գյուղի Սպիտակ Խաչ եկեղեցու խաչը և վերանորոգման քողի տակ քանդել տանիքը: Եկեղեցին հանրությանը ներկայացվում է որպես ուղիական եկեղեցի⁶³: 2023 թ. հունիսի 23-ին Արցախի Հանրապետության Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայությունը լուր տարածեց այն մասին, որ Արցախի Բերձոր քաղաքում գտնվող Ս. Համբարձում եկեղեցում⁶⁴ ադրբեջանական կողմը շինարարական աշխատանքներ է կատարում, և փորձ է արվում եկեղեցին վերածելու մզկիթի: Դեռևս 2022 թ. օգոստոսին «Ադրբեջանի հուշարձանների պաշտպանության հասարակական միավորում» կազմակերպությունը համացանցում շրջանառում էր Ս. Համբարձում եկեղեցու՝ նախատեսվող մզկիթի վերանսման լուսանկարները: Սակայն վերջերս պարզ դարձավ, որ եկեղեցին հիմնահատակ ավերվել է⁶⁵:

Վերականգնման քողի տակ ադրբեջանցիները քանդել են Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցու երկթեք ճակատներից մեկի վրայի խաչածն լուսամուտը և դրանից վեր գտնվող պատկերաքանդակը, այլափոխված է գմբեթը, իրականացվել են շինարարական անթույլատրելի միջամտություններ, եկեղեցին ներկայացվում է որպես ռուսական եկեղեցի⁶⁶: Բացի այդ՝ Ադրբեջանի պետական կառույցներն աշխատանքներ են տանում Ծիծեռնավանքի (Քաշաթաղի շրջան) եկեղեցու «վերականգնման» ուղղությամբ⁶⁷, որին ևս ադրբեջանցիները վերագրում են աղվանական ծագում⁶⁸: Մինչ այդ «աղվանա-ուղիական համայնքը» պղծել և քանդել էր Ծիծեռնավանքի եզակի շուրֆը⁶⁹: Վերջին տարիներին Արցախում կառուցվում են նաև նոր ճանապարհներ հայկական հուշարձանների, եկեղեցիների հարակից տարածքներում, ինչը կարող է

62 Տե՛ս «Xocavənd rayonu Ağ oğlan qəsəbəsi (HADRUT),» YouTube video, posted by Rec Time, January 8, 2022, <https://www.youtube.com/watch?v=UriqUakelks&t=6s>, դիտվել է՝ 07.10.2024:

63 Տե՛ս «Վանդալիզմ Հադրութում. ադրբեջանցիները հանել են Սպիտակ Խաչ եկեղեցու խաչը», *Armradio*, 27 հունվարի 2022 թ., <https://hy.armradio.am/archives/391004>, դիտվել է՝ 07.10.2024:

64 Եկեղեցին կառուցվել է Քաշաթաղի շրջանային վարչակազմի առաջին ղեկավար Ալեքսան Հակոբյանի նախաձեռնությամբ 1996-1999 թթ., ճարտարապետն է Հրայր Գասպարյանը:

65 Տե՛ս «Azerbaijan obliterated the Surb Hambardzum Church of Berdzor,» <https://monumentwatch.org/en/alerts/azerbaijan-obliterated-the-surb-hambardzum-church-of-berdzor/>, դիտվել է՝ 21.05.2025:

66 Տե՛ս «Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ այլափոխված և պղծված», *Monument Watch*, <https://shorturl.at/Jmtgf>, դիտվել է՝ 24.01.2025:

67 Տե՛ս «Ադրբեջանը պետական մակարդակում նախաձեռնել է հայկական Ծիծեռնավանքի վերականգնման, կամ որ նույնն է խեղաթյուրման նախագիծ», *Monument Watch*, <https://shorturl.at/SciUU>, դիտվել է՝ 31.07.2025:

68 Տե՛ս «Ağoglan Məbədi (V-VI əsrlər), Kosalar kəndi,» *Dini Qurumlarla İş Üzrə Dövlət Komitəsi*, April 25, 2023, <https://scara.gov.az/az/xeberler/print/agoglan-mebedi-v-vi-esrler-kosalar-kendi>, դիտվել է՝ 31.07.2025:

69 Տե՛ս «Ադրբեջանի «աղվանա-ուղիական» համայնքի ներկայացուցիչները պղծել և քանդել են Արցախի Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանքի հայկական եկեղեցու եզակի շուրֆը», *Monument Watch*, <https://url-shortener.me/6FOT>, դիտվել է՝ 31.07.2025:

վտանգել դրանց գոյությունը: Այդպիսի օրինակներից են Ս. Ստեփանոս եկեղեցին (17-րդ դ., Քաշաթաղի շրջան, գյուղ Հոջանց), Հակ կամուրջը (Քաշաթաղի շրջան, գյուղ Հակ), Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին (15-16-րդ դդ., Քաշաթաղի շրջան, գյուղ Հակ) և այլն⁷⁰:

Այսպիսով, հետևելով հայկական հուշարձանների նկատմամբ ադրբեջանական կողմի վարած «մշակութային» քաղաքականությանը, կարել է եզրահանգել հետևյալը.

ա) Եթե Արցախում եկեղեցին կամ հուշարձանը կառուցվել է 1994 թվականից հետո, ապա ադրբեջանական կողմը դրանք պարզապես ավերում կամ վերածնունդ է՝ փոխակերպելով այլ շինության:

բ) Մինչև 1994 թ. կառուցված, մասնավորապես հնագույն եկեղեցիներն ու վանքերը ուղղակիորեն ներկայացվում են որպես աղվանական-ուդիական՝ հեռացնելով հայկական ինքնությունը փաստող արձանագրություններն ու այլ ցուցիչներ:

2022 թ. հոկտեմբերի 19-20-ը Բաքվում և Շուշիում տեղի է ունեցել Թյուրքական պետությունների կազմակերպության հոգևոր առաջնորդների երրորդ համաժողովը՝ «Թյուրք-իսլամական ժառանգության հարստությունը և դրա նշանակությունն արդի խնդիրների լուծման համատեքստում» թեմայով, իսկ Շուշիում այդ ընթացքում կնքվել է փաստաթուղթ՝ հիմք դնելով Շուշիում Թյուրքական պետությունների կազմակերպության մուսուլմանական վարչությունների ղեկավարների խորհրդի ստեղծմանը⁷¹: Շուշին նաև հռչակվել է «2023 թ. թյուրքական աշխարհի մշակութային մայրաքաղաք»⁷²: Այս և այլ միջոցառումներ պարբերաբար և միտումնավոր Շուշիում անցկացնելը հետապնդում է և՛ քաղաքական, և՛ կրոնական նպատակներ: Շուշին հայերի համար ունի բացառիկ հոգևոր ու մշակութային նշանակություն: Այստեղ թյուրքական համաժողովներ անցկացնելով կամ մուսուլմանական խորհուրդ ստեղծելով՝ Ադրբեջանը ցանկանում է քաղաքը ներկայացնել որպես իսլամա-թյուրքական կենտրոն՝ օտարելով քաղաքը հայկական ներկայության պատմական փաստերից, ամրապնդել Շուշիի բռնազավթումը և վերածել այն հանդիպման հիմնական վայրի թյուրքական և մուսուլմանական աշխարհի համար՝ փորձելով համախմբել մուսուլմանական աշխարհն Ադրբեջանի շուրջ:

Ամփոփելով հայկական մշակութային ժառանգության նկատմամբ վարվող թուրքադրբեջանական քաղաքականության դրսևորումները՝ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ուղղությունները.

70 Տե՛ս *Caucasus Heritage Watch, Monitoring Report #8*, July 2025, 12-15, <https://indd.adobe.com/view/f69c6aa7-7f27-42a1-b042-a1c436756860>, դիտվել է՝ 31.07.2025:

71 Տե՛ս «The Meeting of Religious Leaders of Turkic States convened in Baku,» *Organization of Turkic States*, October 21, 2022, <https://www.turkicstates.org/en/news/the-meeting-of-religious-leaders-of-turkic-states-convened-in-baku>, դիտվել է՝ 31.07.2025:

72 Տե՛ս «The City of Shusha Was Declared Cultural Capital of the Turkic World 2023,» *TURKSOY*, April 2, 2022, <https://www.turksoy.org/en-US/news/2022-04-02-the-city-of-shusha-was-declared-cultural-capital-of-the-turkic-world-2023>, դիտվել է՝ 31.10.2024:

- Հայկական եկեղեցիները որպես սեփականություն հանձնվել և հանձնվում են տեղի մուսուլմանական համայնքներին՝ տարբեր ձևախեղումներից հետո օգտագործվելով որպես կենցաղային ու հասարակական օբյեկտներ:

- Հայկական վանքերի ու եկեղեցիների սրբատաշ քարերն օգտագործվում են գյուղական տներ կառուցելու համար:

- Չորավարժությունների ժամանակ հայկական որոշ հուշարձաններ պայթեցվել կամ որպես թիրախ են օգտագործվել:

- Մեծ թվով հայկական եկեղեցիներ վերածվել են մզկիթների:

- Հայկական մշակութային ժառանգությունը յուրացվում է ոչ միայն գործնական (օրինակ՝ խաչի հեռացում, հայկական ինքնության ցուցիչների ապամոնտաժում և այլն), այլև գիտական մակարդակում (պատմության խեղաթյուրման միջոցով):

- Հայկական եկեղեցիները ներկայացվում են որպես այլ էթնիկ խմբի մշակութային ժառանգություն և այլն:

ERASING THE UNWANTED IDENTITY: THE DESTRUCTION AND/OR TRANSFORMATION OF ARMENIAN CULTURAL HERITAGE BY TURKISH AND AZERBAIJANI AUTHORITIES

*Seda Parsamyan, Hayastan Martirosyan,
Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

SUMMARY

Turkish-Azerbaijani Armenophobia has always been manifested not only towards Armenians as an ethnic group, but also towards Armenian cultural heritage. As in the Ottoman Empire and then in the Republican Turkey, as well as in Azerbaijan, Armenian cultural heritage has been targeted by all ruling regimes. Currently, much of the Armenian historical and cultural heritage in the Republic of Turkey has been destroyed; some remain in dilapidated state, while others have been converted into mosques or repurposed for various other uses. In recent years, there have also been cases where Armenian churches were put up for auction. In Azerbaijan, a similar pattern is evident, though the situation is even grimmer. While some Armenian churches in Turkey have been restored in recent years, often for political reasons, in Azerbaijan, there are virtually no functioning Armenian churches. Most have been destroyed or repurposed, and in regions such as the Nakhichevan Autonomous Republic and Nagorno-Karabakh, surviving Armenian sites are frequently reclassified as Albanian heritage.

Keywords: Armenophobia, Turkey, Azerbaijan, cultural heritage, destruction, transformation, appropriation.

СТИРАНИЕ НЕЖЕЛАННОЙ ИДЕНТИЧНОСТИ: УНИЧТОЖЕНИЕ И/ИЛИ ПРЕОБРАЗОВАНИЕ АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ СО СТОРОНЫ ТУРЕЦКИХ И АЗЕРБАЙДЖАНСКИХ ВЛАСТЕЙ

Շեդա Պարսամյան, Այաստան Մարտիրոսյան,
Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Армянофобия в Турции и Азербайджане всегда проявлялась не только по отношению к армянам как к этнической группе, но и к армянскому культурному наследию. Как и в Османской империи, а затем и в Республиканской Турции, а так жев Азербайджане армянское культурное наследие подвергалось нападкам со стороны всех режимов. В настоящее время большая часть армянского историко-культурного наследия в Турецкой Республике разрушена, часть находится в полуразрушенном состоянии, а остальная часть постоянно перестраивается в мечети или другие сооружения. В последние годы участились случаи продажи армянских церквей на аукционах. Что касается армянского историко-культурного наследия в Азербайджане, то здесь прослеживается та же картина. Если в Турции в последние годы некоторые армянские церкви были восстановлены в политических целях, то в Азербайджане картина более печальна. Действующих армянских церквей нет, большинство из них взорваны или используются не по назначению, а остальные, особенно в Нахичеванской Автономной Республике и в Нагорном Карабахе, переписываются албанскому наследию.

Ключевые слова: армянофобия, Турция, Азербайджан, культурное наследие, уничтожение, преобразование, присвоение.

REFERENCES

«Ադրբեջանը պետական մակարդակում նախաձեռնել է հայկական ԾիծեռնաՎանքի վերականգնման, կամ որ նույնն է խեղաթյուրման նախագիծ» [Azerbaijan has Initiated a State-level Project to Restore the Armenian Tsitsernavank Monastery, or What is the Same, to Distort it], *Monument Watch*. <https://shorturl.at/SciUU>;

«Ադրբեջանի «ալվանա-ուդիական» համայնքի ներկայացուցիչները պղծել և քանդել են Արցախի Քաշաթաղի շրջանի ԾիծեռնաՎանքի հայկական եկեղեցու եզակի շուրֆը» [Representatives of the “Albanian-Udi” Community of Azerbaijan have Desecrated and Destroyed the Unique Crypt of the Tsitsernavank Armenian Church in the Kashatagh Region of Artsakh], *Monument Watch*. <https://url-shortener.me/6FOT>;

«Գանձակ քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցի» [St. Hovhannes Church in Gandzak], *Information Corner of Gardaman Armenians*, January 28, 2014, https://gardmanq.do.am/blog/gand_39_ak_qaghaqi_sowrb_hovhannes_ekegheci/2014-01-28-16;

Եղևնն՝ եղևնից հետո [Genocide After Genocide]. Yerevan: Research on Armenian Architecture Foundation, 2015;

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, [Turkish Sources about Armenia, Armenians and Other peoples of Transcaucasia] Vol. 2, translation from Turkish originals, compiled by A. Kh. Safrastyan. Yerevan, 1964;

«Թուրքերը հայկական եկեղեցին պատրաստվում են արվեստի կենտրոնի վերածել» [Turks are Preparing to Turn an Armenian Church into an Art Center], *Sputnik Armenia*, 29 August 2022. <https://kulturenvanteri.com/yer/surp-sarkis-ermenikilisesimenemen/#17.1/38.606457/27.072979>;

«Կեսարիայի հայկական եկեղեցին վերածվել է գրադարանի» [The Armenian Church in Caesarea Has Been Turned Into A Library], *Yerkir Daily*, 23 January 2020, <https://yerkir.am/hy/article/2020/01/23/199829>;

«Կեսարիայի Ար. Աստվածածին հայկական եկեղեցին կվերածվի գրադարանի» [The Armenian Holy Mother of God Church of Caesarea Will Be Converted Into a Library], *168.am*, 21 May 2018, <https://168.am/2018/05/21/954372.html>;

«Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ այլափոխված և պղծված» [The Holy Savior Church of Shushi, Altered and Desecrated], *Monument Watch*. <https://shorturl.at/Jmtgf>;

«Վանդալիզմ Հադրութում. ադրբեջանցիները հանել են Սպիտակ Խաչ եկեղեցու խաչը» [Vandalism in Hadrut: Azerbaijanis Have Removed the Cross From the White Cross Church]. *Armradio*, 27 January 2022. <https://hy.armradio.am/archives/391004>;

«Վարձք» Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, [“Vardzq” Research on Armenian Architecture Foundation]. No. 1, January-June, No. 2, July-November (2010);

ՀԱԱ [National Archive of Armenia/NAA], f. 1159, coll. 1, op. 84, 13;

ՀԱԱ [National Archive of Armenia/NAA], f. 149, coll. 1, op. 134, 79;

ՀԱԱ [National Archive of Armenia/NAA], f. 57, coll. 1, op. 439, 69;

ՀԱԱ [National Archive of Armenia/NAA], f. 57, coll. 1, op. 439, 8;

Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան [Karabakh Liberation War: 1988-1994, Encyclopedia]. Yerevan, 2004;

Abrahamyan, Hrant. *Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933)* [The Socio-political Life of Artsakh Armenians and the Artsakh Diocese]. Ejmiatsin, 2009;

Arshakuni, Teodik. *Ամիս մը՝ ի Կիլիկիա* [A Month in Cilicia]. Constantinople, 1910;

Asryan, Deacon Garik. «Արցախի թեմը Խորհրդային Ադրբեջանի բռնաճնշումների կիզակետում 1920- 1933 թթ.» [The Diocese of Artsakh at the Center of Repressions in Soviet Azerbaijan in 1920-1933], *21 DAR* 5 (2016): 97-110;

Azerbaijan obliterated the Surb Hambardzum Church of Berdzor, *Monument Watch*. <https://monumentwatch.org/en/alerts/azerbaijan-obliterated-the-surb-hambardzum-church-of-berdzor/>;

Bunyatov, Ziya. *Աзербայձյան Վ VII-IX ԵԵ.* [Azerbaijan in the 7th–9th Centuries]. Baku: Publishing House of the Academy of Sciences of the Azerbaijan SSR, 1965

Caucasus Heritage Watch. *Monitoring Report #8*. July 2025, 12–15. <https://indd.adobe.com/view/f69c6aa7-7f27-42a1-b042-a1c436756860>;

Chelebi, Evliya. *Թուրքական աղբյուրներ* [Turkish Sources] Vol. 3, translation from the original, preface and notes by A. Kh. Safrastyan. Yerevan, 1967;

Ermeni Haber Ajansi. «Թուրքերը հայկական եկեղեցին պատրաստվում են վերածել արվեստի կենտրոնի (Տեսանյութ)» [Turks are Preparing to Turn an Armenian Church into an Art Center (Video)]. *Ermeni Haber Ajansi*, August 29, 2022. <https://www.ermenihaber.am/am/news/2022/08/29/%D4%B9%D5%B8%D6%82%D6%80%D6%84%D5%AB%D5%A1-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6/236255>;

Hidden Ganja. Facebook post, April 20, 2022. <https://www.facebook.com/hiddenganja/posts/1024281388494171>;

Karapetyan, Samvel. «Հայկական պատմական հուշարձանների վիճակը Հայաստանի հարևան երկրներում» [The Situation of Armenian Historical Monuments in Armenia's Neighboring Countries], *Vasn Hayutyan*, 23 April 2002: 10-13;

Karapetyan, Samvel. Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս [Azerbaijan Out of Civilization]. Yerevan: Research on Armenian Architecture Foundation, 2017;

Karapetyan, Samvel. *Հյուսիսային Արցախ* [Northern Artsakh]. Yerevan: Research on Armenian Architecture Foundation, 2004;

Korucu, Serdar. “A Mosque Built as a Church” in Antep: Kurtuluş Mosque.” *Bianet*, June 24, 2017;

Gaziantep kurtulus mosque Stock Photos and Images, *Alamy.com*, <https://www.alamy.com/stock-photo/gaziantep-kurtulus-mosque.html?sortBy=relevant>;

Kurt, Ümit. *The Armenians of Aintab: The Economics of Genocide in an Ottoman Province*. Cambridge, MA: Harvard University Press, 2021;

Kurtulus Cami Mosque, *Trip Advisor*, https://www.tripadvisor.ru/Attraction_Review-g297998-d2624139-Reviews-Kurtulus_Cami_Mosque-Gaziantep_Gaziantep_Province.html;

Lepsius, Iohannes. *Հայաստանի ջարդերը. գաղտնի տեղեկագիր* [The Massacres in Armenia: A Secret Report], translated by Michael Shamdanjian. Constantinople: Print. House Asaturian and Sons, 1919;

Les massacres d'Arménie. Témoignages des victimes, Préface de G. Clemenceau. Paris: Édition DV Mercure de France, 1896;

Melik-Shahnazaryan, Levon. *Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ* [War Crimes of Azerbaijan Against the Civilian Population of the Nagorno-Karabakh Republic]. Yerevan, 1998;

Mkrtychyan, Shahen. *Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած գեղասպանության անսարմուխի* [Nagorno-Karabakh: The Anatomy of the Genocide Perpetrated by Azerbaijan]. Stepanakert, 2003;

Nikolaev, A. N. “Современное состояние памятников Византийского зодчества в Стамбуле” [The Current Situation of Byzantine Architectural Monuments in Istanbul]. *Byzantine Chronicle* 7, no. 32 (1953): 146-160;

Parsamyan, Seda. «Հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչաց-

ման երիտթուրքական քաղաքականությունը (1915-1918 թթ.)» [Young Turk's Policy of Appropriation and Destruction of the Armenian cultural values (1915-1918)], *Tseghaspanagitakan handes* 6(1) (2018): 71-104;

Parsamyan, Seda. «Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. Տեսական հիմնադրույթներ» [The Cultural Genocide in the Context of International Law: Theoretical Considerations] *Tseghaspanagitakan handes* 2(2) (2014): 164-175;

Sarafian, Gevorg. *Պատմություն Անթեպի հայոց*, հատ. Ա [History of the Armenians of Antep], Vol. 1. Los Angeles, 1953;

Stepanyan, Gevorg. «Համառոտ ակնարկ Բաքվի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմության» [A Brief Overview of the History of St. Gregory the Illuminator Church in Baku], *Լրաբեր hasarakakan gitutyunneri* 3 (2009): 45-59;

Svazlyan, Verzhine. *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, երկրորդ համարված հրապարակություն* [The Armenian Genocide: Testimonies of Eyewitness Survivors, Second Completed Edition]. Yerevan, 2011;

Syurmenean, Galust. *Երզնկա* [Erzenka]. Cairo, 1947;

Yardemian, Rev. Fr. Dajad. *Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն*, Բ տպագրութիւն [The Loss to the Armenian Culture Caused by the destruction of Armenian Monasteries and Churches during 1894-1896 and 1915-1925], second edition (San Lazzaro - Venice, 2001);

Zulalyan, Manvel. *Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր)* [The Distortion of Armenian History in Modern Turkish Historiography (Ancient and Medieval Periods)]. Yerevan, "Hayastan," 1995;

"Ağoglan Məbədi (V-VI əsrlər), Kosalar kəndi," Dini Qurumlarla İş Üzrə Dövlət Komitəsi, ["AGOGLAN TEMPLE (5th-6th centuries), Kosalar village," State Committee for Work with Religious Organizations] April 25, 2023. <https://scara.gov.az/az/xeberler/print/agoglan-mebedi-v-vi-esrler-kosalar-kendi>;

Anar Kərimov, "Ermənilərin saxtalaşdırdıqları alban dini məbədlərinin bərpası üçün İşçi qrup yaradılıb" [A Working Group Has Been Established To Restore Albanian Religious Temples That Were Falsified By Armenians], Report.az, February 3, 2022. <https://report.az/medeniyyet-siyaseti/alban-dini-mebedlerinin-berpasi-ucun-isci-grup-yaradilib/>;

Dini abidələrimiz: qədim alban məbədləri [Our Religious Monuments. Ancient Albanian Temples], 20.08.13. https://525.az/?name=xeber&news_id=10940;

Çetin, Fethiye. "Bursa'da Satılık Ermeni Kilisesi." [Armenian Church for Sale in Bursa], Agos, January 17, 2021. <https://www.agos.com.tr/tr/yazi/25187/bursa-da-satilik-ermeni-kilisesi>;

"E-Qanun, Framework 2847," E-Qanun, <https://www.e-qanun.az/framework/2847>;

Gəncədə. Müqəddəs İohann kilsəsi [In Ganja. St. John's Church], Youtube video, February 2, 2024. <https://www.youtube.com/watch?v=HtxYR8iCdHk>;

Xocavənd rayonu Ağ oğlan qəsəbəsi (HADRUT) [Khojavend region, Ag Ogan settlement], YouTube video, posted by Rec Time, January 8, 2022. <https://www.youtube.com/watch?v=UriqUakelks&t=6s>;

İlham Əliyev, “Prezident Əliyev: Biz bu qədim alban kilsəsini təmir edəcəyik,” [President Aliyev. We will Repair This Ancient Albanian Church], Minval, March 16. 2021, <https://minval.az/news/124099506>;

“Qədim Alban məbədinə saxta tarix” [A Fake History in an Ancient Albanian Temple], YouTube video, 16 March 2021. <https://www.youtube.com/watch?v=R4nsAN1yOoc>.

Հեղինակների մասին

About the Authors

Об авторах

Սեդա Պարսամյան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության գոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի գիտաշխատող, թանգարանային ցուցադրությունների կազմակերպման պատասխանատու:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Օսմանյան կայսրությունում և ներկայիս Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման հիմնախնդիրներ:

Էլ. փոստի հասցե՝ parsamyan.seda@genocide-museum.am

Seda Parsamyan, Researcher at the Armenian Genocide Victims' and Survivors' Documentation and Research Department, Armenian Genocide Museum-Institute Foundation. Responsible responsible for organizing museum exhibitions at the AGMI.

Research fields: the destruction of Armenian cultural heritage in the Ottoman Empire and modern Turkey.

E-mail: parsamyan.seda@genocide-museum.am

Седя Парсамян, научный сотрудник Отдела документирования и исследований жертв и выживших Геноцида армян Фонда “Музей-институт Геноцида армян,” координатор музейных выставок МИГА.

Область исследований: вопросы уничтожения армянского культурного наследия в Османской империи и современной Турции.

Эл. почта: parsamyan.seda@genocide-museum.am

Հայաստանի Մարտիրոսյան, ասպիրանտ, ՀՅԹԻ Արցախի, Նախիջևանի և Ադրբեջանի հայության բռնաճնշումների ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Խորհրդային Ադրբեջանում հայերի նկատմամբ խտրականության դրսևորումները, խորհրդային ազգային քաղաքականությունը, մշակութային ոչնչացումը, ազգամիջյան հարաբերություններն ու Հարավային Կովկասի ժամանակակից պատմությունը:

Էլ. փոստի հասցե՝ araks.martirosyan@genocide-museum.am

Hayastan Martirosyan, PhD student, Junior researcher, Department of Studies on the Repressions of Armenians in Artsakh, Nakhijevan, and Azerbaijan, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: Manifestations of discrimination against Armenians in Soviet Azerbaijan, Soviet nationality policy, cultural destruction, interethnic relations and the modern history of the South Caucasus.

E-mail: araks.martirosyan@genocide-museum.am

Айастан Мартиросян, аспирантка, младший научный сотрудник Отдела изучения репрессий против армян Арцаха, Нахиджевана и Азербайджана Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований: проявления дискриминации в отношении армян в Советском Азербайджане, советская национальная политика, разрушение культурного наследия, межэтнические отношения и современная история Южного Кавказа.

Эл. почта: araks.martirosyan@genocide-museum.am

**ԱԴԻԲԵԶԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻ ՄԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՂՎԱՆԱԿԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հայկ Հակոբյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

Մենարայ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ,

Արևելագիտության ինստիտուտ, Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան,

Հայաստան

Հոդվածը նվիրված է ադրբեջանական պատմագրության գաղափարական ձևավորման գործընթացին 1930-ականներից մինչև մեր օրերը: Ուշադրության առանցքում այն մեխանիզմներն են, որոնցով ձևավորվեց «տեղաբնիկության» խոսույթը՝ նպատակ ունենալով ներկայացնելու ադրբեջանցիներին որպես Հարավային Կովկասի հնագույն ժողովուրդ: Վերլուծվում են մարական և աղվանական տեսությունների ծագումն ու զարգացումը որպես խորհրդային գաղափարախոսության մեջ ձևավորված պատմական-քաղաքական կառուցումներ, որոնք հետագայում շարունակեցին գործել նաև անկախ Ադրբեջանի պետական գաղափարախոսության մեջ: Հոդվածը ցույց է տալիս, որ այս պատմաշարերը (նարատիվները) ծառայել են ոչ թե գիտական նպատակների, այլ քաղաքական շահերի, մասնավորապես հայկական մշակութային և պատմական ժառանգության յուրացմանը: Հատուկ ընդգծվում է, որ նույն մոդելը վերջին տասնամյակներում որդեգրել են նաև Ադրբեջանում ապրող ազգային փոքրամասնությունները՝ ստեղծելով իրենց սեփական «հին պետականության» առասպելները: Այս երևույթը բնութագրվում է որպես «հավաքական յուրացման» գործընթաց, որի նպատակը տարածաշրջանի իրական պատմական հիշողության փոխարինումն է արհեստական և քաղաքականապես շահավետ առասպելաբանությամբ: Ուստի հոդվածնառաջարկում է քննադատական հայացք նետել Ադրբեջանի պատմական գիտակցության վերակառուցման և մշակութային հիշողության մանիպուլյացիայի մեխանիզմների վրա:

Բանալի բառեր՝ ադրբեջանական պատմագրություն, տեղաբնիկության խոսույթ, մարական ծագման տեսություն, աղվանական ծագման տեսություն, պատմական հիշողության մանիպուլյացիա, մշակութային յուրացում:

Հոդվածը ներկայացվել է՝ 08.06.2025: Ընդունվել է տպագրության 12.08.2025:

The article was submitted on 08.06.2025 and accepted for publication on 12.08.2025.

Статья поступила 08.06.2025 и была принята к публикации 12.08.2025.

Ինչպես հղել՝ Հայկ Հակոբյան, «Ադրբեջանցիների էթնոգենեզի մարական և աղվանական տեսությունները 20-րդ դարի քաղաքական իրավիճակի փոփոխության համատեքստում», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 130-145:

How to cite: Hayk Hakobyan, “The Median and Albanian Theories of Azerbaijani Ethnogenesis in the Context of Political Transformations of the 20th Century,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025): 130-145.

Как ссылаться: Айк Акопян, “Мидийская и албанская теории этногенеза азербайджанцев в контексте политических трансформаций XX века,” *Цехаспанагитакан андес* 13, no. 2 (2025): 130-145.

1930-ական թթ. վերջերին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Միրիուսեյն Բադիրովը հանձնարարեց ադրբեջանցի պատմաբաններին գրել Ադրբեջանի պատմություն, որը կներկայացներ ադրբեջանցի ժողովրդին որպես բնիկ բնակչություն՝ կտրելով նրան թյուրքական արմատներից¹: Բադիրովը շեշտում էր, որ, չնայած պատմության ընթացքում հաճախակի տեղի ունեցած նվաճումներին և օտար քաղաքական իշխանություններին, ադրբեջանական ժողովուրդը կարողացել է պահպանել իր ազգային մշակույթն ու մայրենի լեզուն²: Ռուսաֆիկացման վտանգի պայմաններում այս գաղափարն առավել լսելի էր ադրբեջանական հանրության շրջանում:

Այս խնդիրն ավելի հստակ ձևակերպվեց Ադրբեջանի կոմկուսի 1949 թ. XVII և 1951 թ. XVIII համագումարներում: Դրանք պարտավորեցնում էին ադրբեջանցի պատմաբաններին ուսումնասիրել «ադրբեջանական ժողովրդի պատմության այն կարևոր խնդիրները, ինչպիսիք են Մարաստանի պատմությունն ու ադրբեջանցիների ծագումը»³: Այլ կերպ ասած՝ ադրբեջանական իշխանությունները հաստատում էին, որ Մարաստանի բնակիչներն ադրբեջանցիների նախնիներն են, իսկ գիտնականները պետք է գտնեին դրա համապատասխան ապացույցները⁴:

1940 թ. նոյեմբերի 5-ին ԽՍՀՄ ԳԱ Ադրբեջանի մասնաճյուղի նախագահության նիստում Ադրբեջանի վաղ շրջանի պատմությունը հստակ նույնացվեց Մարաստանի պատմության հետ⁵: Այսպիսով՝ ԽՍՀՄ ԳԱ Ադրբեջանի մասնաճյուղի պատմության ինստիտուտը պարտավորվեց մշակել Ադրբեջանի պատմության նոր հայեցակարգ: Ադրբեջանի պատմության գրքի առաջին տարբերակի մշակումն ավարտվեց 1949 թ. գարնանը, և մայիսին այն քննարկվեց ԽՍՀՄ ԳԱ պատմության և փիլիսոփայության բաժնի գիտական նիստում: Դրա նախնական տարբերակը լույս տեսավ 1949 թ. որպես դպրոցական դասագրքի նախատիպ⁶:

Գլխավոր գաղափարներն էին, որ Ադրբեջանը բնակեցված է եղել Քարի դարից ի վեր, տեղական ցեղերը հետամնաց չեն եղել իրենց հարևանների համեմատ, քաջաբար պայքարել են բոլոր անցանկալի նվաճողների դեմ ու թեև ժամանակավորապես պարտվել են, բայց միշտ պահպանել են իրենց ինքնիշխանությունը: Հետաքրքրական է, որ Մարաստանի դերը «ադրբեջանական պետականության նախնական զարգաց-

1 St'u Саид Алиев, «К вопросу об этногенезе азербайджанских тюрок», в кн.: М. Н. Губогло (ред.), *III Конгресс этнографов и антропологов России, 8-11 июня 1999 г., Москва, Тезисы докладов* (Москва: Институт этнологии и антропологии РАН, 1999), 388: St'u նաև Victor Shnirelman, *The Value of the Past: Myths, Identity and Politics in Transcaucasia* (Osaka: National Museum of Ethnology, 2001), 104:

2 St'u Миргусейн Багиров, *Об очередных задачах интеллигенции Азербайджана* (Баку: Азернешр, 1950), 30:

3 Зиновий Ямпольский, *Атропатена и Кавказская Албания в I в. до н. э. – III в. н. э.* (Баку, 1952), 164; Зейнал Ибрагимов, Евгений Токарежский, *Развитие советской исторической науки в Азербайджане* (Баку: Изд-во Акад. наук АзССР, 1964), 37:

4 St'u Александр Климов, Ибрагим Джафарзаде, Зиновий Ямпольский, «Об итогах изучения территории Азербайджана за 20 лет», *Известия Азербайджанского филиала Академии наук СССР*, 2 (1940): 65-71:

5 St'u Игорь Дьяконов, *Книга воспоминаний* (Санкт-Петербург: «Европейский дом», 1995), 731; Ага Сумбатзаде, *Азербайджанская историография XIX-XX вв.* (Баку: ЭЛМ, 1987), 102-109:

6 St'u Shnirelman, *The Value of the Past*, 104:

ման» մեջ դեռ երկրորդ պլան էր մղված, աղվանական թեման՝ գրեթե անտեսված, իսկ տեղական բնակիչներն անվանվում էին «աղբբեջանցիներ»՝ անկախ նրանից, թե պատմական որ ժամանակաշրջանի մասին էր խոսքը⁷:

Այսպիսով՝ հեղինակները նույնացնում էին ժողովրդին այն տարածքի հետ, որտեղ նա ապրում էր, և այդ պատճառով էլ անհրաժեշտ չէին համարում քննարկել աղբբեջանցի ժողովրդի ձևավորման հարցը: Նրանք դեռևս հանդուրժում էին նաև այն փաստը, որ Արցախում բնակիչները «անցել էին հայերենի», հոգևորականությունը գրում էր գրաբարով, և սելջուկյան արշավանքներն ստիպել էին բնիկներին անցնել թյուրքական լեզվի: Նրանց շատ ավելի անհանգստացնում էր իսլամը. այն ներկայացվում էր որպես օտար հավատ⁸:

Իրականում այս հատորը Խորհրդային Աղբբեջանի գիտնականների մշակած Աղբբեջանի պատմության առաջին համակարգային ներկայացումն էր: Հաջորդ՝ վերանայված տարբերակում հեղինակները հղում էին անում Միխայիլ Կալինինի՝ 1940 թ. Մոսկվայում կուսակցական ակտիվի ժողովում ունեցած ելույթին: Նա խոսում էր խորհրդային հայրենասիրության մասին և կոչ անում գնահատելու «մեր ժողովրդի վաղ պատմության արմատները»: Նա նաև ասել էր. «Խորհրդային հայրենասիրությունը մեր ստեղծագործ նախնիների գործունեության ուղիղ ժառանգն է»: Կալինինը հորդորում էր ճանաչել սեփական պատմական ծագումնաբանությունը և հպարտանալ էպիկական ու պատմական հերոսներով, ինչը և իրենք փորձում էին տեղայնացնել Աղբբեջանում⁹: Հետևելով դրան՝ վերանայված դասագրքի հեղինակները պնդում էին, որ յուրաքանչյուր հայրենասեր պարտավոր է ճանաչել աղբբեջանցի ժողովրդի անցյալը՝ սկսած ամենահին ժամանակներից:

Իր էությանը, սա ուղղակիորեն դրված հանձնարարություն էր: Այն հաստատում էր, որ աղբբեջանցի ժողովուրդը ոչ թե 19-րդ կամ 20-րդ դարերում է ձևավորվել, այլ նրա արմատները պետք է փնտրել հնագույն անցյալում և հենց այն տարածքում, որտեղ այժմ բնակվում է: Դասագրքում շեշտվում էր աղբբեջանցիների տեղաբնիկությունը: Այս գաղափարը հաստատելու համար հեղինակներն առաջ էին քաշում մի քանի հիմնավորումներ: Նախ՝ նրանք հրաժարվում էին աղբբեջանցիների նախնիներին որևէ օտար ժողովրդի հետ նույնացնելուց և, ի տարբերություն խորհրդային ընդհանուր մոտեցման, լեզուն չէին համարում ժողովրդի հիմնական բնութագիրը: Նրանց համար շատ ավելի կարևոր էին ազգի տարածքային ինքնությունը և նյութական ու մտավոր մշակույթը, որը ժառանգվել էր նախնիներից¹⁰:

Երկրորդ՝ նրանք նույնպիսի եռանդով փորձում էին նվազեցնել կրոնի դերն ազգային ինքնության մեջ՝ ընդգծելով, որ իսլամից առաջ աղբբեջանցիները դավանել են տարբեր կրոններ:

Եվ վերջապես՝ նրանք պնդում էին, որ բոլոր օտար խմբերը, որոնք դարերի ընթացքում ներթափանցել էին Աղբբեջան, թվով փոքր էին, մշակութային առումով՝ ավելի

7 Տե՛ս նույն տեղում:

8 Տե՛ս նույն տեղում:

9 Տե՛ս նույն տեղում, 105:

10 Տե՛ս նույն տեղում:

հետամնաց, ուստի արագ ձուլվել էին տեղացիների հետ՝ առանց նրանց վրա էական ազդեցություն թողնելու: Այլ կերպ ասած՝ ադրբեջանցիները նույնացվում էին շրջանի ամենահին բնակչության հետ որպես ժողովուրդ, որը գրեթե չէր փոխվել դարերի ընթացքում, և այդպիսով նրանց շնորհվում էր «հավերժական գոյության» երաշխիք¹¹:

Բայց ովքեր էին հենց այդ «նախաադրբեջանցի» նախնիները: Հեղինակները նրանց նույնացնում էին «մարերի, կասպերի, աղվանների և այլ ցեղերի հետ, որոնք ապրել են Ադրբեջանի տարածքում մոտ երեք հազար տարի առաջ»¹²: Նրանք պնդում էին, որ վաղ ադրբեջանցիներն իրենց զարգացման մակարդակով գերազանցում էին պարսիկներին և գրեթե չէին տարբերվում հայերից ու վրացիներից: Մասնավորապես 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցի (մոտ 350-439/440) ստեղծած աղվանական այբուբենը ներկայացվում էր որպես իրապես ադրբեջանական գրավոր համակարգ¹³: Այդպիսով ադրբեջանցիներին վերագրվում էր վաղ գրավոր մշակույթի ավանդույթ, որը կարող էր մրցել թե՛ վրացական, թե՛ հայկական մշակույթների հետ¹⁴:

Դասագրքի հիմնական ուղերձներն էին. նախ՝ խորհրդային ադրբեջանցիները ոչինչ չունեն սովորելու պարսիկներից և որևէ պատճառ չունեն ավստսալու իրանական մշակույթի կորստի համար: Ընդհակառակը՝ «վաղ ադրբեջանա-մարական մշակույթն ուժեղ և դրական ազդեցություն է ունեցել պարսկական, այսպես կոչված, Աքեմենյան մշակույթի ձևավորման վրա», իսկ իրանական պետությունը, ըստ հեղինակների, հետագայում զբաղվել է միայն ադրբեջանական մշակույթի կործանմամբ¹⁵:

Երկրորդ՝ ներկայացվում էր, որ ադրբեջանցիները պատճառ չէին ունեցել զգալու սեփական «անլիարժեքությունը» հայերի և վրացիների համեմատ: Դասագրքում նշվում էր, որ ադրբեջանական պետությունը ձևավորվել է վաղ ադրբեջանցիների շրջանում, իսկ Պարսկաստանը ներկայացվել է որպես ամենավնասակար գործոնը, որը համառորեն փորձել է հպատակեցնել Ադրբեջանը: Սակայն միացումը Ռուսաստանին համարվել է «չարյաց փոքրագույնը», որն այն ստանդարտ ձևակերպումն էր, որն այդ ժամանակ ընդունված էր բոլոր խորհրդային պատմագրքերում:

Դասագրքի կարևոր թեմաներից էր տարբեր նվաճողների դեմ ադրբեջանցի ժողովրդի դարավոր պայքարը ներկայացնելը: Այս միտումը հատկապես ընդգծվել է Ադրբեջանի պատմագրության մեջ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, երբ պատմաբանները պարտավոր էին նպաստել խորհրդային ժողովրդի հայրենասիրական դաստիարակությանը¹⁶: Նախքան պատերազմը Բաբեկի (9-րդ դար) շարժումն ընկալվել է դասակարգային պայքարի տեսանկյունից՝ որպես ադրբեջանցի ժողովրդի պայքար ֆեոդալիզմի դեմ¹⁷: Բայց այդուհետ անհրաժեշտություն առաջացավ

11 Տե՛ս *История Азербайджана* (краткий очерк) (Баку: Азербайджанский филиал АН СССР, 1941), 17-18:

12 Նույն տեղում, 17:

13 Տե՛ս նույն տեղում, 42:

14 Տե՛ս Shnirelman, *The Value of the Past*, 105:

15 Տե՛ս *История Азербайджана* (краткий очерк), 21-27:

16 Տե՛ս Ибрагимов, Токаржевский, «Развитие советской исторической науки в Азербайджане», 35-36:

17 Տե՛ս *История Азербайджана* (краткий очерк), 59-66:

այն ներկայացնելու որպես ազգային-ազատագրական շարժում արար նվաճողների դեմ¹⁸:

Ինչ վերաբերում է Լեոնային Ղարաբաղին, նրանք ընդգծում էին վերջինիս տնտեսական խոր կապերն Ադրբեջանի որոշ ցեղերի հետ¹⁹, այսպիսով վերարտադրելով այնկետը, որը մեծ դեր է ունեցել 1920-ականների սկզբին Լեոնային Ղարաբաղի՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում ներառվելու հիմնավորման մեջ:

Ադրբեջանի պատմությունը հաջորդիվ փորձել են խմբագրել 1945-1946 թվականներին: Ըստ դրա՝ նախ՝ ադրբեջանցիները կազմավորվել են Արևելյան Անդրկովկասի և Հյուսիսարևմտյան Իրանի վաղ բնակիչներից, և երկրորդ՝ չնայած նրանք ենթարկվել են որոշ ավելի նոր նվաճողների (սկյութներ և այլք) ազդեցությանը, սակայն այդ ազդեցությունը երկրորդական նշանակություն է ունեցել: Այս գրքում նորույթն այն էր, որ փորձ էր արվում ադրբեջանցիների պատմությունը հասցնելու ավելի հին ժամանակներ՝ այս անգամ ադրբեջանցիների նախնիներին՝ նույնացնելով ադրբեջանական տարածքում բրոնզեդարյան մշակույթների կրողների հետ²⁰:

Իրականում քննարկվող երկու հատորներն էլ հիմնականում կենտրոնացած էին քաղաքական պատմության վրա, իսկ տնտեսական և մշակութային խնդիրները մակերեսայնորեն էին քննարկվում. էթնիկ պատմությունն ընդհանրապես ներառված չէր, և Ադրբեջանի տարածքում երբևէ բնակված բոլոր մարդիկ անխտիր հաշվվում էին որպես ադրբեջանցիներ և իրանցիների հանդեպ հակադրության մեջ էին ներկայացվում: Եվրոպայում տարածքային նվաճումներին զուգահեռ՝ Ստալինը լրջորեն մտածում էր Խորհրդային Միության հարավային տարածքների ընդլայնման մասին: Խոսքը միայն Միջերկրական ծով հասնելու անցուղիների հին խնդրի մասին չէր. այն նաև Իրանի հաշվին տարածքների ձեռքբերման նպատակ էր հետապնդում:

Խորհրդային իշխանություններն արեցին ամեն հնարավորը՝ «գիտականորեն» հիմնավորելու իրենց զավթողական նկրտումները տարածաշրջանում: Այնուամենայնիվ, ակադեմիական հիմքեր չկային Կովկասյան Աղվանքի և Հարավային Ադրբեջանի (Ատրպատական) վաղ պատմությունը նույնը համարելու համար: Վաղ ժամանակներում, ինչպես նաև Վաղ միջնադարում այնտեղ ապրում էին միմյանցից ամբողջովին տարբերվող ժողովուրդներ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին, լինի դա մշակույթը, թե լեզուն:

1941-1946 թվականներին՝ խորհրդային զորքերի կողմից Հյուսիսային Իրանի օկուպացիայի ընթացքում, այնտեղ սկսվում է հակաիրանական բուռն քարոզչություն, որով փորձեր արվեցին զարգացնելու ադրբեջանցիների ինքնագիտակցությունը և ձևավորելու մեկ ու ընդհանուր ադրբեջանական ինքնություն: Օրակարգում էր իրանական Ադրբեջանի միացումը Խորհրդային Ադրբեջանին, ինչը նշանակում էր ԽՍՀՄ-ի կողմից Իրանի զգալի հատվածի յուրացում: Քարոզչությունն ավելի արդյունավետ դարձնելու համար խորհրդային զորքերն Իրանում հիմնականում կազմավորվում էին

18 St'u Зейнал Ибрагимов, *Писатели и историки о мужестве и доблести азербайджанцев*. Азерб. фил. ИМЭЛ при ЦК ВКП(б), Ин-т истории партии им. Ст. Шаумяна (Баку: Азенешпр, 1943), 20-27:

19 St'u *История Азербайджана* (краткий очерк), 38:

20 St'u Shnirelman, *The Value of the Past*, 105:

ադրբեջանցիներից, որոնք իրենց ընտանիքներով տեղափոխվում էին այնտեղ: Թվում էր, թե մոտ է «բոլոր ադրբեջանցիների միությունը», իսկ «Մեծ Ադրբեջան» տերմինը դարձավ ժողովրդական: Սակայն իրավիճակն սկսվեց փոխվել աշխարհաքաղաքական համապատասխան փոփոխությունների համատեքստում:

1954 թվականին անցկացվեց կոնֆերանս Ադրբեջանի ԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, որի ընթացքում դատապարտվեցին Բաղիրովի ժամանակաշրջանի պատմության խեղաթյուրումները²¹: Սա հատկապես ժամանակին էր, քանի որ Բաքվի պատմության ինստիտուտի համար Իգոր Դյակոնովի իրականացրած մարական պատմության լայն ուսումնասիրությունը ցույց տվեց ադրբեջանցիների նախնիների և մարերի միջև մտացածին սերտ կապերի կասկածելիությունը²²:

Ի վերջո, պատմաբաններին տրվեց նոր հրաման՝ վերախմբագրելու «Ադրբեջանի պատմությունը»: Այս եռահատորյակը լույս տեսավ Բաքվում 1958-1962 թթ.: Առաջին հատորը վերաբերում էր վաղ ժամանակաշրջաններին՝ հասնելով մինչև Ադրբեջանի միացումը Ռուսաստանին: Հատորը կազմողների թվում հնագետներ չկային, չնայած այն սկսվում էր պալեոլիթյան դարաշրջանով: Միևնույն ժամանակ ընթերցողը տեղեկացվում էր, որ հատորը քննվել է ԽՍՀՄ բոլոր հիմնական հետազոտական կենտրոններում, որտեղ ուսումնասիրում էին Կովկասի պատմությունը, և խորհրդային լավագույն պատմաբանները մասնակցել են հատորի շուրջ ծավալված քննարկումներին:

Հատորում շեշտվում էր, որ Ադրբեջանը վաղ ժամանակներից ունեցել է բարձր մշակույթ: Հյուսիսային և Հարավային Ադրբեջանները դիտվում էին էությունակից, իսկ հյուսիսի միացումը Ռուսաստանին որակվում էր պատմական առաջադիմական գործընթաց²³: Հատորը կենտրոնանում էր հիմնականում Հյուսիսային Ադրբեջանի վրա՝ իբրև այն տարածքի, որը ներկայացվում էր որպես հիմք Ադրբեջանական ԽՍՀ-ի համար: Հարավային Ադրբեջանը հետաքրքիր էր միայն նրանով, որ մ.թ.ա. 1-ին հազարամյակում այնտեղ զարգացել էին վաղ պետություններ: Ադրբեջանի անվանումը կապվում էր հարավային Ադրբեջանում գոյություն ունեցող պետության անվան հետ, և հեղինակներն այս վաղ քաղաքական միավորները դիտարկել են որպես ադրբեջանական պետականության զարգացման հաջորդական փուլեր²⁴: Ըստ նրանց՝ Ատրպատականի տարածքում կազմավորվել է նոր ժողովուրդ, որը դարձել է ապագա ադրբեջանական ազգի էթնոգենեզի հիմքը²⁵:

Աղվանքը կամ Կովկասյան Ալբանիան վաղ շրջանի ևս մեկ պետություն էր, որ գրավեց հեղինակների ուշադրությունը: Հատորում չեն քննարկվել այդ պետության սահմանները. դրա տարածքը ներկայացվել է շատ լայն՝ Թերեք գետից հյուսիս մինչև Կուրի և Արաքսի ստորին հոսքերը: Կովկասյան Ալբանիան ներկայացվել է որպես հարուստ շրջան, որտեղ մ.թ.ա. 1-ին դարում ստեղծվել է պետություն, որը շարունա-

21 St' u Shnirelman, *The Value of the Past*, 109:

22 St' u Дьяконов, *Книга воспоминаний*, 731:

23 St' u *История Азербайджана* в 3 т., Акад. наук Азерб. ССР. Ин-т истории. Под ред. чл.-кор. Акад. наук Азерб. ССР Игара Гусейнова [и др.] (Баку: Изд-во Акад. наук АзССР, 1958), VII:

24 St' u նույն տեղում, 44:

25 St' u նույն տեղում, 49:

կարար զարգացել է մինչև 4-րդ դարի վերջը, երբ Սասանյան Իրանը նվաճեց այն: Հատորի հեղինակները Կուր գետի աջափնյա տարածքները (Ուտիք, Արցախ, Փայտակարան) առանց վարանելու ներառել են Աղվանքի կազմում: Նրա ենթակայությունը հայկական թագավորությանը նշվել է միայն հպանցիկ: Այս ամենին զուգահեռ՝ 1950-ականների վերջից թյուրքական լեզվի, էթնոգենեզի հարցերով զբաղվող գիտնականներն սկսեցին ավելի շատ հետաքրքրվել իրենց մայրենիով: 1960-ական թվականներից սկսած՝ ավելի շատ աղբյուրների գիտնականներ սկսեցին պնդել, որ Արևելյան Ասիայի վրա թուրքացումը կապված էր հոների հետ²⁶:

1950-1960-ական թվականներին Աղբյուրներում նկատելի էր աղբյուրների հինքության ամրապնդման երևույթը՝ պայմանավորված աղբյուրների բնակչության արագ աճով, քաղաքաշինության զարգացմամբ և ռուսականացմանը դիմադրությամբ: Այս գործընթացները ոգեշնչում էին ոչ միայն պատմաբաններին, այլև գրողներին: Պատմաբանները գրողների ուշադրությունը հրավիրում էին նոր թեմաների ու պատմական նոր հերոսների վրա, և գրողները կարող էին ներկայացնել դրանք առանց գիտական հիմնավորվածության, ինչը պատմաբանների համար դեռ վտանգավոր էր գիտական գրաքննության պատճառով: Վաղ թուրքերի պատմությունը հատկապես բուռն երևակայության արդյունք էր²⁷:

Արդեն 1960-1970-ական թթ. աղբյուրների գիտնականները բաժանվեցին երեք խմբի: Ընդհանուր առմամբ բոլորն ընդունում էին աղբյուրների տեղաբնիկության գաղափարը: Նրանց մի մասը շարունակում էր աղբյուրների նախնիներին նույնացնել Աղբյուրների նախաթուրքական բնակչության հետ («Աղվանական գաղափար») և պնդում էր, որ բուռն թուրքացումը տեղի է ունեցել միայն 11-12-րդ դարերում: Մյուս խումբը համաձայն էր այս մոտեցման առաջին մասի հետ և փորձում էր թուրքացման գործընթացը տանել ավելի վաղ ժամանակներ: Երրորդները պնդում էին, որ աղբյուրների նախնիները թուրքախոս էին հենց սկզբից: Երեք խմբերն էլ ձգտում էին աղբյուրներին ներկայացնելու որպես տեղաբնիկ կամ արքայի գերմանական ժողովուրդ և հակադրելու նրանց այդ ազգի մեջ մեծ ներկայություն ունեցող իրանական սուրբ-տրատին, հատկապես՝ աղբյուրների թյուրքական ծագման տեսությամբ, ինչը հետստալինյան շրջանում արդեն դադարել էր արգելված լինելուց:

20-րդ դարի աղբյուրների հայտնի պատմաբաններ ակադեմիկոս Զիա Բունիաթովը և մեռած լեզուների մասնագետ Իգոր Ալիևը «աղվանական» տեսակետի առաջնորդներն էին: Իգոր Ալիևը (1924-2004) 1945 թ. ավարտել է Աղբյուրների պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1949 թ.՝ պաշտպանել իր թեկնածուական թեզը Մարաստանի պատմության մասին, այնուհետ՝ 1940-ական թթ. վերջին, նշանակվել է Բաքվի պատմության ինստիտուտի վաղ պատմության բաժնի ղեկավար՝ պաշտոնը զբաղեցնելով 40 տարի: Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում ակադեմիկոս Վասիլի Ստրուվեի ղեկավարությամբ չորս տարվա ասպիրանտական կրթության ընթացքում Ալիևը 1960 թ. Մոսկվայի արևելագիտության ինստիտուտում

26 St' u Ryzvan Guseynov, «О тюрках IV-VII вв. в зоне Кавказской Албании», в кн.: Алиев И. (ред.), *Вопросы истории Кавказской Албании* (Баку: Изд-во Акад. наук Азерб. ССР, 1962):

27 St' u Shnirelman, *The Value of the Past*, 109:

պաշտպանեց իր դոկտորական թեզը՝ «Մարաստանի պատմություն» վերնագրով: Պետք է նշել, որ ակադեմիկոս Ստրուվեն նույնպես, հավանաբար կրելով ժամանակի քաղաքական իրավիճակի որոշ հանգամանքների հետևանքները ու անկախ դրանից, քննադատական մոտեցում ուներ Ալիևի «գիտական» հայացքների նկատմամբ: Այսպես՝ նա ատենախոսության վերաբերյալ իր կարծիքում գրել է. «.... 172-187-րդ էջերը զբաղեցնում է փորձը՝ լուծելու ադրբեջանական ազգության էթնոգենեզի բարդ խնդիրը: Այս խնդիրը հեղինակի ուշադրությունը կենտրոնացնում է «türk» տերմինի և դրան առնչվող այլ հարցերի վերլուծության վրա: Քանի որ ընկեր Ալիևի հետազոտությունը տվյալ հարցում որոշ կասկածներ է հարուցում իմ մեջ, կթույլատրեմ ինձ տալ այդ գնահատականը փոքր-ինչ ներքևում, երբ կխոսեմ Ի. Ալիևի աշխատանքի այն հատվածներին մասին, որոնց շուրջ ես որոշ կասկածներ ունեմ»²⁸:

Ալիևը, կենտրոնանալով Մարաստանի պատմության վրա, կարևոր դերակատարում է հատկացրել մարերին ադրբեջանական էթնոգենեզում: Նրա այդ մենագրությունը պատասխան էր ադրբեջանական իշխանության ցանկությանը՝ հիմնավորելով ադրբեջանցիների տեղաբնիկության տեսությունը: Չնայած մարական պատմության՝ մեզ հասած սկզբնաղբյուրները խիստ սակավ են, նա բավական հաջող կատարեց այդ քաղաքական առաջադրանքը: Նրա տեսակետները հիմնված էին այն գաղափարի վրա, որ Ադրբեջանի տարածքում սկզբից մինչև հետագա դարերը բնակչության և մշակույթի անընդհատականություն է եղել²⁹:

Ադրբեջանցի հայտնի մյուս պատմաբանը ակադեմիկոս Զիա Բունիաթովն էր (1921-1997), ով առավել հետևողական պաշտպանն էր «աղվանական գաղափարի»: Նա սկսեց ուսումնասիրել ադրբեջանցիների նախնիների ծագումն այն ժամանակ, երբ «մարական գաղափարը» արդեն անկում էր ապրում: Այդ պատճառով էլ, լինելով տեղաբնիկ մոտեցման կողմնակից, Բունիաթովն անմիջականորեն կապեց ադրբեջանցիների նախնիներին Աղվանքի բնակիչների հետ³⁰: Նրա այս տեսակետներն ազդեցին ադրբեջանական պատմագիտական ոլորտի վրա հետագա տասնամյակներում:

Բունիաթովը վաղմիջնադարյան շրջանի մասնագետ էր, որի նպատակն էր ապացուցել, որ ադրբեջանցիների արմատներն աղվանական են, ինչը նա հետևողականորեն փորձում էր անել իր մենագրություններում ու հոդվածներում: Ներկայումս նկատվում է այս բոլոր տեսությունների յուրահատուկ մի միախառնում. ադրբեջանական ժողովրդի էթնոգենեզի մեջ, ըստ ադրբեջանցի հեղինակների, մասնակցել են և՛ մարերը, և՛ աղվանները, որոնք իրենց հերթին ներկայացվում են որպես թյուրքեր³¹: Թերևս

28 Иггар Алиев, *История Мидии*, т. I. Введение в историю Мидии. Кандидатская диссертация (1948), Выпуск 4 (Баку: Институт истории и этнологии Национальной академии наук Азербайджана, 2025), 7.

29 Ավելի մանրամասն տե՛ս Иггар Алиев, *Очерк истории Атропатены* (Баку: Азернешр, 1989):

30 Ավելի մանրամասն տե՛ս Зия Буниятов, «Ещё раз о неизданных страницах “Истории Агван” Моисея Каганкатваци», *Известия Академии наук Азербайджанской ССР. Серия истории*, 4 (1961): 3-9; Зия Буниятов, *Азербайджан в VII-IX вв.* (Баку: Изд-во Академии наук Азерб. ССР, 1965); Зия Буниятов, «О хронологическом несоответствии глав “Истории Агван” Моисея Каганкатваци», *Доклады Академии наук Азербайджанской ССР*, 4 (1965): 65-67:

31 Վերագրյալը հստակ նկատելի է ադրբեջանական հատկապես վերջին շրջանի հրատարակություններում, մասնավորապես՝ Ադրբեջանի նախագահի աշխատակազմում բարձր պաշտոն զբաղեց-

«աղվանական տեսության» այժմեականությունը պայմանավորված է նաև նրանով, որ իրանական ուղղությամբ էքսպանսիան ներկայումս նպատակահարմար չէ, բայց արդիական է ու շարունակում է օրակարգային մնալ Արցախի ու Արցախի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության յուրացման քաղաքականությունը, որում միանգամայն ձեռնադրվում է աղվանական տեսությունը:

Քանի որ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքների հիմնական մասը տարբեր ժամանակաշրջաններում ներառված է եղել կովկասյան հնագույն պետություններից մեկի՝ Աղվանքի կազմում, որը տարածաշրջանում Հայաստանից հետո երկրորդն էր, որ ընդունել է քրիստոնեություն³², և կովկասյան ազգերը եղել են Աղվանքի հավաքական ինքնության գունապնակի բաղկացուցիչ մաս³³, ուստի աղվանական ինքնությունը դառնում է ցանկալի «շինանյութ» ոչ միայն ադրբեջանական ինքնության, այլև լեզգիական, ռուստուլական և կովկասյան այլ ազգերի ինքնության ձևավորման համար³⁴: Այդ պատմաշարերում մենք հաճախ բախվում ենք մի երևույթի, որը կարելի է անվանել անցյալի ոչ ուղղակի յուրացում, երբ «օտար» ինքնությանն առնչվող ցանկացած նյութ գրկվում է ներկա հակառակորդների պատմության մաս լինելու իրավունքից, տվյալ դեպքում՝ հայկական մշակույթի մաս լինելուց: Մշակութային օբյեկտների օտարումը տեղի է ունենում բազմաթիվ հուշարձանների վերամեկնաբանման, վերագրման միջոցով, մասնավորապես և առաջին հերթին՝ եկեղեցիների ու գերեզմանաքարերի պարագայում, քանի որ անցյալի այդ «վկաները» այն ապացույցներն են, որոնք խանգարում են վերոհիշյալ տիրապետող դիսկուրսին: Դրանք ոչ միայն անցյալի հետքեր են, այլև պաշտվող, սուրբ վայրեր՝ հանդիսանալով հավաքական «հիշողության հիմնաքարեր»³⁵, ինքնության խորհրդանիշներ: Նմանատիպ տիրապետող հիշողությունից տարբերվող և այդ տիրույթում արմատացած հիշողությունները կարելի է բնութագրել որպես այլընտրանքային «պատմողական» մոդել, որն ուղղակի հակադրվում է ընդհանուր և տիրող, վաղուց հաստատված «պատմողական» կառուցվածքին և գոյություն ունի ի հեճուկս վերջինիս անվերապահ գերազանցության³⁶: Պարզ է, որ այդ դիսկուրսն առկա է ադրբեջանական հանրույթի ու նաև

րած Ֆուադ Ախունդովի գրքերում (տե՛ս Բуад Ахундов, *Разрушители фальсификаций*, т. 1 (Баку: Издательство «Azer-Globe», 2012), т. 2 (Баку: CBS, 2014), Բуад Ахундов, *О причинах исчезновения книги Иосифа Орбели*, сост. Р. Гусейнов, пер. с древнеарм. З. Алексидзе [и др.] (Баку: Центр истории Кавказа при Институте общественно-политических исследований «Azer-Globe», 2018):

32 St'u Jost Gippert und Jasmine Dum-Tragut, *Caucasian Albania, An International Handbook* (Berlin/Boston, 2023), 288:

33 St'u Jost Gippert, Wolfgang Schulze, Zaza Aleksidze, Jan-Pier Mahé (eds.), *The Caucasian Albanian Palimpsests of Mt. Sinai*, 2 vols. (Turnhout, 2009), I, II-1-84:

34 St'u Гаджи Абдурагимов, *Кавказская Албания-Лезгистан: история и современность* (СПб.; Махачкала: Изд-во Даг. гос. пед. ун-та, 1995), 11:

35 St'u Ян Ассман, *Культурная память: Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности*, пер. с нем. М. М. Сокольской (Москва: Языки славянской культуры, 2004), 40:

36 St'u Яель Зерубавель, *Динамика коллективной памяти. Империя и нация в зеркале исторической памяти* (Москва: Новое издательство, 2011), 22-23:

Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների շրջանում, ինչը, գիտության մեջ ընդունված տեսակետներին զուգորդելով, կարելի է համարել հակահիշողություն (անգլ.՝ counter-memory):

Ուսումնասիրվող խնդրի համատեքստում պատմական հուշարձանների վերաիմաստավորման ընթացքում քրիստոնեական հուշարձանները, մասնավորապես՝ տապանաքարերը և դրանց վրա առկա տապանագրերը, սկսում են դիտարկվել որպես աղվանական, իսկ բուն աղվանականը վերագրվում է, օրինակ, լեզգիական համայնքին, ինչը հավանաբար խրախուսվում է նաև ադրբեջանական իշխանությունների կողմից կամ առնվազն ստանում է նրանց լուռ համաձայնությունը: Կեղծ գիտական տեսակետներ են հորինում ոչ միայն ադրբեջանցի գիտնականները, այլև վերոնշյալ ազգային փոքրամասնությունների առանձին ներկայացուցիչներ: Այսպես՝ արդեն հետխորհրդային շրջանում ադրբեջանական հակազիտական տեսակետներին համահունչ սկսեցին հորինվել կեղծ ձեռագրեր, որոնց վերծանությունը նույնպես կատարվում էր լեզգիերենի միջոցով, կամ կեղծ արձանագրություններ, որոնք իբր հայտնաբերվել են ռուսուկական արեալում³⁷: Իհարկե, սա պայմանավորված է նրանով, որ հիշյալ ժողովուրդները, ի տարբերություն հին մշակույթ ունեցող հայերի ու վրացիների, քարակերտ հուշարձաններ չեն թողել՝ բացի մզկիթներից ու սրբերի դամբարաններից, որոնք կոնկրետ ազգային պատկանելություն չունեն. դրանք ընդհանուր մուսուլմանական կառույցներ են, և իսլամադավան յուրաքանչյուր ազգ կարող է հավակնել լինելու դրանց ստեղծողը, այդ թվում և հատկապես՝ տիտղոսակիր ժողովուրդը³⁸: Խոսքը, իհարկե, պարսկերեն կամ արաբերեն արձանագրություններ ունեցող բերդերի և այլ շինությունների մասին չէ, որոնք պարսկական տիրապետության շրջանի հուշարձաններ են:

Եզրակացություններ

Ադրբեջանական պատմագրության ձևավորումը 1930-ական թթ. վերջերից ի վեր ինքնության կառուցման և պատմական հիշողության մանիպուլյացիայի պետականորեն ուղղորդված հետևողական գործընթաց է: Սկսած Միքիուսեյն Բաղիրովի նախաձեռնություններից՝ Խորհրդային Ադրբեջանի պատմաբանները պարտավորվեցին մշակել «նոր» ազգային պատմություն, որը կկտրեր ադրբեջանցիներին իրենց իրական՝ իրանական արմատներից ու կներկայացներ նրանց որպես այս տարածքի բնիկ ժողովուրդ: Այս «տեղաբնիկության խոսույթը» հետագայում դարձավ պետական ինքնության հիմքերից մեկը: Այն իր զարգացման ընթացքում անցավ մի քանի փուլ. սկզբում՝ մարական տեսությունը, այնուհետև՝ աղվանական, հետագայում՝ թյուրքական, ապա՝ վերջին երկուսի համակցությամբ: Եթե «մարական» վարկածը նպատակ ուներ հիմնավորելու ադրբեջանցիների կապը հնագույն Իրանի մշակույթի

37 Ավելի մանրամասն տե՛ս Hayk Hakobyan, Karen Hovhannisyan, “Pseudo-Albanica. Fake Caucasian Albanian “Inscriptions” and “Manuscripts” in the Discourse of Modern Inter-Caucasian Identity Search,” *III мѣдуи по кавказско-каспийской словестности* 4 (2) (2023): 147-154:

38 Մասնագիտական քննարկում բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Գառնիկ Ասատրյանի հետ, 15.05.2023:

հետ և նույնիսկ իրանականի վրա «ադրբեջանականի» ազդեցությունը, ապա «ադ-վանական տեսությունը» առավել շահավետ եղավ քաղաքական առումով, քանի որ հնարավորություն էր տալիս յուրացնելու Ադվանքի՝ քրիստոնյա պետության մշակու-թային ժառանգությունը, այդ թվում՝ նրա նյութական և հոգևոր արժեքները, և հա-վակնելու նաև Արցախի մշակութային ժառանգությանը: Հետագա տասնամյակների ընթացքում այս գաղափարական մոդելն ընդլայնվեց՝ ներգրավելով ոչ միայն պատ-մաբաններին, այլև գրողներին, արվեստագետներին և հնագետներին, վերջերս՝ նաև ուղղափառ հոգևորականներին: Խորհրդային շրջանում ձևավորված պատմաշարը, ըստ էության, պահպանվեց նաև հետխորհրդային Ադրբեջանի գաղափարախոսու-թյան մեջ՝ ստանալով նոր՝ առավել ագրեսիվ ձևեր: Այն, ինչ սկզբում ներկայացվում էր որպես պատմական ինքնության վերականգնում, իրականում վերածվեց անցյալի «վերափոխման» քաղաքականության: Հայկական, վրացական և իրանական մշա-կութային ժառանգությունն սկսեց դիտարկվել որպես «ադվանական», իսկ այնու-հետև՝ «թյուրք-ադրբեջանական»:

Այս գործընթացում ակնհայտ է ոչ միայն պատմական փաստերի միտումնավոր խեղաթյուրումը, այլև գիտական քողով իրականացվող մշակութային յուրացումը: Հատկանշական է, որ նույն մոդելներն այսօր որդեգրում են նաև Ադրբեջանում ապ-րող ազգային փոքրամասնությունները՝ լեզգիները, ռուտուլները և ուրիշներ: Հաճախ Ադրբեջանի իշխանությունների լուռ կամ բացահայտ աջակցությամբ նրանք սկսում են կառուցել սեփական «հին պետականության» պատմությունները՝ օգտագործելով նույն մեթոդները, որոնք ժամանակին կիրառվեցին ադրբեջանական ազգային ինք-նության ձևավորման համար: Այս երևույթը կարելի է բնորոշել որպես «էթնոգենե-տիկ» միֆերի շղթայական տարածում, երբ մի ժողովրդի մշակած ազգային-պատ-մական հայեցակարգը դառնում է նախադեպ մյուսների համար: Որպես արդյունք՝ ձևավորվում է միասնական քաղաքական խոսույթ, որտեղ տարբեր էթնիկ հանրույթ-ներ, առաջնորդվելով նույն գաղափարական մոդելով, հավակնում են տիրելու տա-րածաշրջանի քրիստոնեական և նախաթուրքական ժառանգությանը: Այս «հավաքա-կան յուրացման» գործընթացը կարելի է դիտարկել որպես հակահիշողության ձև՝ ուղղված ոչ թե սեփական անցյալի բացահայտմանը, այլ տարածաշրջանի իրական պատմական հիշողության ջնջմանը և դրա փոխարինմանը պետականորեն ընդու-նելի մտացածին պատմությամբ: Այսինքն՝ Ադրբեջանի և նրա ազգային փոքրամաս-նությունների կողմից կիրառվող պատմաշարերի վերակառուցումը գիտական հետա-գոտության արդյունք չէ, այլ քաղաքական, գաղափարախոսական գործիք՝ ուղղված տարածքային հավակնությունների և մշակութային գերակայության արդարացմանը: Այս միտումը, որն սկիզբ առավ խորհրդային գաղափարական դաշտում, այսօր վե-րածվել է տարածաշրջանի պատմական գիտակցության մանիպուլյացիայի վտան-գավոր գործոնի՝ ազդելով ինչպես գիտական հարթության, այնպես էլ աշխարհաքա-ղաքական, միջազգային քաղաքականության, միջկրոնական փոխհարաբերություն-ների վրա:

THE MEDIAN AND ALBANIAN THEORIES OF AZERBAIJANI ETHNOGENESIS
IN THE CONTEXT OF POLITICAL TRANSFORMATIONS
OF THE 20TH CENTURY

Hayk Hakobyan,

Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Matenadaran – Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts Research

Institute of Oriental Studies, Russian-Armenian (Slavonic) University, Armenia

SUMMARY

The article examines the ideological formation of Azerbaijani historiography from the 1930s to the present day, focusing on the mechanisms through which the discourse of “autochthony” was constructed to present Azerbaijanis as an ancient people indigenous to the South Caucasus. It analyzes the emergence and development of the Median and Albanian theories as historical-political constructs shaped within the Soviet ideological framework and later adopted by the independent Azerbaijani state. The study demonstrates that these narratives have served primarily political rather than scholarly purposes, particularly in legitimizing the appropriation of Armenian cultural and historical heritage. Furthermore, it highlights how, in recent decades, similar ethno-genetic models have been adopted by Azerbaijan’s national minorities, who have begun constructing their own myths of “ancient statehood.” This phenomenon is interpreted as a process of “collective appropriation” aimed at replacing the region’s authentic historical memory with an artificial, politically advantageous mythology. Consequently, the article offers a critical perspective on the reconstruction of historical consciousness and the mechanisms of cultural memory manipulation in modern Azerbaijani historiography.

Key words: Azerbaijani historiography, discourse of indigeneity, theory of “Median origin,” theory of “Albanian origin,” manipulation of historical memory, cultural appropriation.

МИДИЙСКАЯ И АЛБАНСКАЯ ТЕОРИИ ЭТНОГЕНЕЗА АЗЕРБАЙДЖАНЦЕВ В КОНТЕКСТЕ ПОЛИТИЧЕСКИХ ТРАНСФОРМАЦИЙ XX ВЕКА

Айк Акопян,

Институт археологии и этнографии НАН РА,

*Матенадаран – Научно-исследовательский институт древних рукописей имени
Месропа Маштоца,*

*Институт востоковедения, Российско-армянский (славянский) университет,
Армения*

РЕЗЮМЕ

Статья посвящена идеологическому формированию азербайджанской историографии с 1930-х годов до наших дней. Основное внимание уделяется механизмам, посредством которых был сконструирован дискурс “автохтонности,” призванный представить азербайджанцев как древний народ, исконно принадлежащий Южному Кавказу. Анализируется происхождение и развитие “мидийской” и “албанской” теорий как историко-политических конструкторов, сформированных в рамках советской идеологии и впоследствии унаследованных государственной идеологией независимого Азербайджана. Показано, что данные нарративы служили не научным, а политическим целям — в частности, для легитимации присвоения армянского культурного и исторического наследия. Отдельное внимание уделено тому, что в последние десятилетия аналогичные этногенетические модели усваиваются и национальными меньшинствами Азербайджана, которые начинают конструировать собственные мифы о «древней государственности». Этот феномен интерпретируется как процесс «коллективного присвоения», направленный на подмену подлинной исторической памяти региона искусственной, политически, идеологически выгодной мифологией. Таким образом, статья предлагает критический взгляд на реконструкцию исторического сознания и механизмы манипуляции культурной памятью в современной азербайджанской историографии.

Ключевые слова: Азербайджанская историография, дискурс автохтонности, теория “мидийского происхождения,” теория “албанского происхождения,” манипуляция исторической памятью, культурная апроприация.

REFERENCES

Abduragimov, Gadzi A. *Кавказская Албания-Лезгистан: история и современность* [Caucasian Albania-Lezgistan: History and Modernity]. Makhachkala: Publishing House of Dagestan State Pedagogical University, 1995;

Akhundov, Fuad *Օ պրիչինախ Իսոսիֆի Օրբելի քննարկումներ* [On the Causes of the Disappearance of Iosif Orbeli's Book], compiled by R. Huseynov; translated from Classical Armenian by Z. Aleksidze [et al.], Center for Caucasian History at the Institute of Socio-Political Studies “Azer-Globe.” Baku, 2018;

Akhundov, Fuad *Разрушители фальсификаций*. Т. 1. [Destroyers of Falsifications, vol. 1]. Baku: Azer-Globe Publishing House, 2012;

Akhundov, Fuad *Разрушители фальсификаций*. Т. 2 [Destroyers of Falsifications, vol. 2]. Baku: CBS Publishing House, 2014;

Aliyev, Igrar. *История Мидии*. Т. I. *Введение в историю Мидии. Кандидатская диссертация (1948)* [History of Media. Vol. I: Introduction to the History of Media. Candidate Dissertation, No. 4]. Baku: Institute of History and Ethnology, National Academy of Sciences of Azerbaijan, 2025;

Aliyev, Igrar. *Очерк истории Атропатены* [Outline of the History of Atropatena]. Baku: Azerneshr, 1989;

Aliyev, Said. “К вопросу об этногенезе азербайджанских тюрков” [On the Question of the Ethnogenesis of Azerbaijani Turks] in M. N. Guboglo (ed.), *III Конгресс этнографов и антропологов России, 8-11 июня 1999 г., Москва. Тезисы докладов* [Proceedings of the III Congress of Ethnographers and Anthropologists of Russia, June 8–11, 1999, Moscow: Abstracts of Presentations]. Moscow: Institute of Ethnology and Anthropology, Russian Academy of Sciences, 1999, 388;

Assmann, Jan. *Культурная память: Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности* [Cultural Memory: Writing, Remembrance of the Past, and Political Identity in High Cultures of Antiquity], translated from German by M. M. Sokolskaya. Moscow: Languages of Slavic Culture, 2004;

Baghirov, Mirhuseyn. *Об очередных задачах интеллигенции Азербайджана* [On the Current Tasks of the Azerbaijani Intelligentsia]. Baku: Azerneshr, 1950;

Buniatov, Zia. “Ещё раз о не изданных страницах “Истории Агван” Моисея Каганкатваци” [Once Again on the Unpublished Pages of ‘The History of Agvan’ by Moses of Kaghankatvatsi]. *Известия Академии наук Азербайджанской ССР. Серия истории* [Izvestiya of the Academy of Sciences of the Azerbaijani SSR, Series of History] 4 (1961): 3-9;

Buniatov, Zia. “О хронологическом несоответствии глав “Истории Агван” Моисея Каганкатваци” [On the Chronological Inconsistency of the Chapters of ‘The History of Agvan’ by Moses of Kaghankatvatsi]. *Доклады Академии наук Азербайджанской ССР* [Proceedings of the Academy of Sciences of the Azerbaijani SSR] 4 (1965): 65-67.

Buniatov, Zia. *Азербайджан в VII–IX вв.* [Azerbaijan in the 7th–9th Centuries]. Baku: Publishing House of the Academy of Sciences of the Azerbaijani SSR, 1965;

Dyakonov, Igor. *Книга воспоминаний* [Book of Memories]. Saint Petersburg: Evropeyskiy Dom, 1995;

Guseinov, Rizvan. “О тюрках IV–VII вв. в зоне Кавказской Албании” [On the Turks of the 4th–7th Centuries in the Zone of Caucasian Albania]. In I. Aliev (ed.), *Вопросы истории Кавказской Албании* [Questions of the History of Caucasian Albania]. Baku: Publishing House of the Academy of Sciences of the Azerbaijani SSR, 1962, 171-190;

Hakobyan Hayk, Hovhannisyan Karen. «نوشتہ‌ها» و «نسخه‌های خطی» جعلی. آلبانیای قفقازی ساختگی. «Inscriptions» and «Manuscripts» in the Discourse of Modern Inter-Caucasian Identity Search], *Штудии по кавказско-каспийской словестности* [Studies in Caucasian-Caspian Literature] 4 (2) (2023): 147-154;

Ibragimov, Zejnal. *Писатели и историки о мужестве и доблести азербайджанцев* [Writers and Historians on the Courage and Valor of Azerbaijanis], Party History Institute named after S. Shahumyan. Baku: Azerneshr, 1943;

Ibragimov, Zejnal, Tokarzhevsky, Evgenij. *Развитие советской исторической науки в Азербайджане* [The Development of Soviet Historical Science in Azerbaijan]. Baku, 1964;

Klimov, Alexander, Djafarzade, I., Yampol'sky, Z. “Об итогах изучения территории Азербайджана за 20 лет” [On the Results of the Study of the Territory of Azerbaijan over 20 Years], *Известия Азербайджанского филиала Академии наук СССР* [Izvestiya of the Azerbaijani Branch of the Academy of Sciences of the USSR] 2 (1940): 65-71;

Sumbatzade, Aga. *Азербайджанская историография XIX-XX вв.* [Azerbaijani Historiography of the 19th–20th Centuries]. Baku: Elm, 1987;

Yampol'sky, Zinovij. *Атропатена и Кавказская Албания в I в. до н. э. – III в. н. э.* [Atropatena and Caucasian Albania from the 1st century B.C. to the 3rd century A.D.]. Baku, 1952;

Zerubavel, Yael, “Динамика коллективной памяти” [The Dynamics of Collective Memory] in *Империя и нация в зеркале исторической памяти. Сборник статей* [Empire and Nation in the Mirror of Historical Memory]. Moscow: Novoe Izdatelstvo, 2011, 10-29;

История Азербайджана (краткий очерк) [History of Azerbaijan (A Short Outline)]. Baku: Azerbaijani Branch of the Academy of Sciences of the USSR, 1941;

История Азербайджана в 3 томах [History of Azerbaijan. 3 vols], edited by Igrar Guseinov et al. Baku: Publishing House of the Academy of Sciences of the Azerbaijani SSR, 1958.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Հայկ Հակոբյան, պատմական գիտությունների թեկնածու, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ միջնադարագիտություն, հայագիտություն, պատմական աստվածաբանություն, կովկասագիտություն:

Էլ. փոստի հասցե՝ haykhakobyan913@gmail.com

Hayk Hakobyan, PhD in History, Senior Researcher at the Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts (Matenadaran) and at the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia.

Research fields: Medieval and Armenian Studies, Historical Theology, Caucasian Studies.

Email: haykhakobyan913@gmail.com

Айк Акопян, кандидат исторических наук, старший научный сотрудник Института древних рукописей имени Месропа Маштоца (Матенадаран), а также Института археологии и этнографии Национальной академии наук Армении.

Область исследований: медиевистика, арменоведение, историческое богословие, кавказоведение.

Эл. почта: haykhakobyan913@gmail.com

**ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ.
ԲԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԻ «ԱՐԾԻՎ» ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՎԵՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Գոհար Խանումյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում ներկայացվում է Խորհրդային Ադրբեջանում հակահայկական քաղաքականությունը մշակութային ժառանգության ոչնչացման կոնկրետ դեպքի՝ Բանանց գյուղի «Արծիվ» հուշարձանի օրինակով: Հիմնվելով արխիվային նյութերի, մասնավորապես՝ բանանցցի Սերգեյ Տերյանի անձնական հավաքածուի վրա՝ հոդվածում քննում ենք հուշարձանի ստեղծման ու քանդման պատմությունը՝ բացահայտելով Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից վարվող հայկական մշակութային ժառանգության դեմ ուղղված համակարգված քաղաքականության դրսևորումները: Հուշարձանը, որի հեղինակներն էին հայտնի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը և քանդակագործ Արա Հարությունյանը, նվիրված էր Հայրենական մեծ պատերազմում զոհված 600 հայ բանանցցեցիների հիշատակին: Դրա ոչնչացումը՝ իրագործված Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես՝ կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Հեյդար Ալիևի գիտությամբ և վերահսկողությամբ, ներկայացվում է որպես մշակութային հուշարձանի ոչնչացման կանխամտածված ակտ՝ Խորհրդային ազգային քաղաքականության և պետականորեն ուղղորդված հայատյացության համատեքստում: Հոդվածում վերլուծվում են նաև հուշարձանի քանդումն արդարացնելու ադրբեջանական պատմագիտական մոտեցումները, և քննարկվում են այդ իրադարձության քաղաքական հետևանքները՝ հայատյացության, հայերի հայրենագրկման և մշակութային հուշարձանի կորստի դիտանկյունից:

Բանալի բառեր՝ Բանանց, «Արծիվ» հուշարձան, հուշարձանի ոչնչացում, մշակութային ժառանգություն, հակահայկական քաղաքականություն, Հեյդար Ալիև:

Հոդվածը ներկայացվել է՝ 06.08.2025: Ընդունվել է տպագրության 10.09.2025:

The article was submitted on 06.08. 2025 and accepted for publication on 10.09.2025.

Статья поступила 06.08.2025 и была принята к публикации 10.09.2025.

Ինչպես հղել՝ Գոհար Խանումյան, «Հակահայկականությունը Խորհրդային Ադրբեջանում. Բանանց գյուղի «Արծիվ» հուշարձանի ավերման պատմությունը», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 146-167:

How to cite: Gohar Khanumyan, “Anti-Armenianism in Soviet Azerbaijan: the Story of the Destruction of the Monument ‘Eagle’ in the Village of Banants,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025), 146-167.

Как ссылаться: Гоар Ханумян, “Антиармянская политика в Советском Азербайджане: история уничтожения памятника «Орёл» в селе Бананц,” *Цехаспанagitakan андес* 13, no. 2 (2025), 146-167.

Ներածություն

ԽՍՀՄ տարիներին ձևավորված՝ ազգերի հանդեպ վարվող քաղաքականությունը միութենական տարբեր հանրապետություններում տարբեր կերպ էր դրսևորվում: Ադրբեջանական ԽՍՀ-ում այդ քաղաքականությունն առանձին դեպքերում ստանում

էր ընդգծված հակահայկական ուղղվածություն, որը հետագայում՝ արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո, վերածվեց մշակութային ժառանգության վերացման ծրագրված քաղաքականության: Դրա ցայտուն վկայություններից է Ադրբեջանի Դաշքեսանի շրջանում գտնվող հայկական Բանանց գյուղում 1969 թվականին «Արծիվ» հուշարձանի ոչնչացումը: 1969 թ. հուլիսի 26-ին՝ ուշ գիշերին գյուղում, Դաշքեսանի շրջկոմի առաջին քարտուղար Հասան Սուլեյմանովի հրամանով, ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ բուլդոզերով քանդվում է Հայրենական մեծ պատերազմում զոհված վեց հարյուր բանանցեցիների հիշատակին նվիրված «Արծիվ» հուշարձանը, որի պաշտոնական բացումը պետք է տեղի ունենար երկու օր անց՝ հունիսի 28-ին¹:

Նվիրված լինելով Հայրենական մեծ պատերազմում զոհված բանանցեցի հայ զինվորների հիշատակին՝ այս հուշարձանը ներկայացված էր հայկական ազգային խորհրդանիշներով, մասնավորապես՝ արծվի կերպարով, ինչը, պաշտոնական Բաքվի գնահատմամբ, «չէր բացահայտում Բայան գյուղի խորհրդային զինվորների հիշատակի թեման»²:

Հոդվածի համար սկզբնաղբյուր է ծառայել բանանցեցի գյուտարար, հուշարձանի կառուցման նախաձեռնողներից Սերգեյ Տերյանի անձնական արխիվը, որը նա Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին է հանձնել 2019 թվականին (նկ. 1): Նրա արխիվը բաղկացած է անձնական փաստաթղթերից (պատվոգրեր, իր գյուտերի հավաստագրման վկայականներ, տեղեկանքներ), ձեռագիր հուշագրությունից, Բանանցի «Արծիվ» հուշարձանի կառուցման և քանդման վերաբերյալ նյութերից՝ ընդհանուր մոտ 100 միավոր: Քանի որ ադրբեջանական արխիվներին հասանելություն չունենք, հոդվածում օգտագործվում է թեմային վերաբերող ադրբեջանական այն տեղեկատվությունը, որը հասանելի է Հայաստանի Հանրապետության տարածքում: Մասնավորապես, հայկական Բանանց գյուղում «Արծիվ» հուշարձանի



Նկ. 1. Սերգեյ Համբարձումի Տերյան

1 Հուշարձանի պաշտոնական բացման առնչությամբ հայկական աղբյուրներում տարբեր օրեր են շրջանառվում: Օրինակ՝ Լևոն Մելիք-Շահնազարյանը նշում է 1969 թ. հուլիսի 28-ը (տե՛ս Լևոն Մելիք-Շահնազարյան, *Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ* (Երևան, ՀՅԹԻ, 1998), 13): Սերգեյ Տերյանը հիշատակում է սեպտեմբերի 15-ը (տե՛ս Սերգեյ Տերյան, «Ադրբեջանական վանդալիզմ», անտիպ հուշեր, ՀՅԹԻ ԳՕՖ, 2): Սեպտեմբեր ամիսն է հիշատակում նաև ադրբեջանցի պատմաբան Իլգար Նիֆթալիևը (տե՛ս *Ильгар Нифталиев*, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам в селении Баян Дашкесанского района Азербайджана,” *Tarix və mədəniyyət. Faktlar və dəyərlər. Akademik Nailə Vəlixanlının yubileyinə həsr olunmuş məqalələr toplusu*, Məsul redaktor F. R. Cabbarov (Bakı: “Nurlar” Nəşriyyat-Poliqrafiya Mərkəzi, 2020), 306):

2 Ильгар Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам в селении Баян Дашкесанского района Азербайджана,” 306:

կառուցման, ապա ոչնչացման պատմությանը զուգահեռ, քննարկվում է նաև հուշարձանը քանդելու ադրբեջանական տեսակետը՝ ներկայացված ադրբեջանցի պատմաբան Իլգար Նիֆտալիևի «1969 թ. ինչպես է Երևանը, շրջանցելով Բաքվին, ցանկացել տեղադրել հայ զինվորների հուշարձանն Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Բայան գյուղում» (ռուսերեն) հոդվածում³, որում հեղինակն առաջ է քաշում վիճահարույց, երբեմն նաև՝ գիտական հիմնավորումից զուրկ թեզեր:

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի վերականգնելու «Արծիվ» հուշարձանի պատմությունը, վերլուծելու դրա քանդման հանգամանքները՝ դիտարկելով այդ իրողությունը մշակութային ժառանգության, նաև պատմական հիշողության ոչնչացման համատեքստում:

Բանանց գյուղը. պատմական ակնարկ

Բանանց գյուղը գտնվում է ներկայիս Ադրբեջանի Դաշքեսանի շրջանում, Գյանջա (նախկինում՝ Գանձակ, Ելիզավետպոլ, Կիրովաբադ) քաղաքից հարավարևմուտք, Դաշքեսանից 7 կմ (ուղիղ գծով) հյուսիս-արևելք՝ Արթինաջուր գետի ձախ կողմում: Պատմականորեն եղել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառի կազմում: Ծովի մակարդակից բարձր է 1000-1100 մ⁴: Գյուղը մի կողմից շրջապատված է բավական բարձր անտառապատ սարերով, մյուս կողմից՝ մերկ, մացառներով ծածկված բլրակների շարքերով⁵: *Բանանց* անվանումը ստուգաբանվում է որպես «բանանոց», այսինքն՝ «աշխատելու վայր»: Բանանցի դամբարաններից հայտնաբերված հնագիտական իրերը վկայում են, որ գյուղն արդեն մ. թ. ա. IV-III հազարամյակներում բնակեցված է եղել: Չնայած իր հնամյա պատմությանը՝ Բանանցի մասին գրավոր հիշատակումները քիչ են: Առաջին անգամ գյուղը գրավոր հիշատակվել է 1625 թ.⁶: Գյուղն ունի խիստ տաք կլիմա և փարթամ բուսականություն: Բանանցը կանոնավոր հատակագծով և բարեկարգ տներով գեղեցիկ գյուղ էր: Բանանցից 1.5 կմ հեռավորության վրա գտնվում էր Փոքր Բանանցը: Այստեղ գործվել է մեզ հասած հայկական հնագույն գորգերից մեկը՝ Եռախորան գորգը, որն այժմ պահվում է Վիեննայի արդյունաբերության և արվեստի թանգարանում⁷: Բնակիչների գլխավոր զբաղմունքը այգեգործությունն ու երկրագործությունն էին⁸: Գյուղը հայտնի էր իր «Բայան-շիրե» գինու տեսակով⁹:

3 Տե՛ս նույն տեղում, 305-312:

4 Տե՛ս Սամվել Կարապետյան, *Հյուսիսային Արցախ* (Երևան, «Գիտություն», 2004), 138:

5 Տե՛ս Ե[րուանդ] Համամչեան, «Բանանց գիղի կուրգանները», *Ազգագրական հանդես*, հատոր Բ (Թիֆլիս, 1897), 308:

6 Տե՛ս Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, 138, 140:

7 Տե՛ս *Հայաստանի և հարակից շրջանների պեղանումների բառարան*, հատոր 1, կազմ.՝ Թ. Խ. Հակոբյան, Սո. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1986), 593:

8 Տե՛ս Համամչեան, «Բանանց գիղի կուրգանները», 308: Բանանցում իրականացված հնագիտական պեղումների մասին մանրամասն տե՛ս նաև Անժելա Տերյան, Վալերի Գրիգորյան, *Բանանց. Գարդման Ուտիքի հնագույն բնակավայր* (Երևան, «Ոսկան Երևանցի» տպագրատուն-հրատարակչություն, 2022), 11-18:

9 Տե՛ս Ռուբեն Գրիգորյան, «Հայերի ցեղասպանության ադրբեջանական դրսևորումները. արծվաբույն Բանանց», *Գարդմանք* ամսաթերթ, թիվ 3 (11), ապրիլ, 1998, 5:

Ներկայումս Բանանցի «Ծեր ու Պահապան» Ավետարանը կամ «Վեհամոր Ավետարանը» համարվում է մեզ հասած հայերեն հնագույն ամբողջական ձեռագիրը, որը, ըստ հնագրական տվյալների, կարող է ստեղծված լինել 7-րդ դարում¹⁰: Ավետարանը 1974 թ. Բանանց գյուղի բնակչուհի Այա Գրիգորյանը փոխանցել է Հայ առաքելական եկեղեցու Ադրբեջանի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տերյանին, որը 1975 թ. հունվարի 1-ին այն նվիրել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին՝ ի հիշատակ նրա մոր՝ Սիրանուշ Պալճյանի, որի համար էլ մատյանն անվանվել է «Վեհամոր Ավետարան»: Պայմանավորված իր հնությամբ՝ հենց այս ձեռագիրն է ընտրվել որպես ՀՀ նախագահների երդմնակալության արարողության ժամանակ կիրառվող Ավետարան: «Վեհամոր Ավետարանի» վրա են երդվել ՀՀ բոլոր նախագահները:

19-րդ դարասկզբից մինչև խորհրդային կարգերի հաստատումը Բայան գյուղն ընդգրկված է եղել Ռուսաստանի Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլի գավառի կազմում: Բանանցում գործում էր Սուրբ Աստվածածին եկեղեցին, որն առանձնանում էր իր պատերի մեջ ներդրված բազմաթիվ խաչքարերով ու տապանաքարերով¹¹: Այդ եկեղեցու հարևանությամբ 1863-1866 թթ. կառուցվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին¹²:

Պատմական այս գյուղը մինչև վերջնական հայաթափումը¹³ 1989 թ. հուլիսը, մշտապես բնակեցված է եղել միայն հայերով¹⁴: Բռնագաղթի ենթարկված բանանցեցիները հիմնականում բնակություն հաստատեցին Հայաստանի Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում¹⁵:

Հուշարձանի ստեղծման պատմությունը. նախապատրաստական աշխատանքներ

1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին Բանանց գյուղի 4500-հոգանոց բնակչությունից¹⁶ մասնակցել է զորակոչային տարիքի շուրջ 1200 հայ, այդ թվում նաև՝ կա-

10 Ավետարանը Բանանցում է պահպանվել 16-րդ դարից սկսած: Ձեռագրի գրչության ստույգ տեղն ու ժամանակը հայտնի չեն: Համաձայն պահպանված հիշատակարանների՝ 13-րդ դարում այն պահվելիս է եղել Կոտայք գավառի Հավուց թառի վանքում, 15-րդ դարում՝ Մաքենյաց վանքում, 16-րդ դարից սկսած՝ Արցախի Գարդման գավառի Մեծ Բանանց գյուղում, որտեղ այն կոչում էին «Ծեր Ավետարան» կամ «Պահապան Ավետարան» (մանրամասն տե՛ս Արտաշես Մաթևոսյան, «Վեհափառական երկու Ավետարան», *Էջմիածին* 9-10 (1994), 32-34):

11 Տե՛ս Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, 159:

12 Տե՛ս նույն տեղում, 171:

13 Բանանցի հայաթափման մասին տե՛ս Անուշավան Դանիելյան, «Բանանցն աչքի առաջ դառարկվեց. ականատեսի վկայություն», *Գարդմանք*, թիվ 3, նոյեմբեր-դեկտեմբեր, 1996, 16:

14 Գյուղի բնակչության թվակազմի վերաբերյալ վիճակագրական տվյալներ է հաղորդում 1839 թ. կազմված ցուցակը, որում ներկայացվում է Բանանցի 49 ընտանիքների անվանացանկը (տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 1, գ. 3800, թթ. 33-34, տե՛ս նաև Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, 141-146): 1908 թ. տվյալներով՝ Բանանցում ապրում էր 2070 հայ (տե՛ս *Кавказский календарь на 1910 годъ, часть I* (Тифлисъ: Либерман и Ко, 1909), 201): Խորհրդային Ադրբեջանի կազմում Բանանցում 1932 թ. տվյալներով ապրում էր 3507 հայ (ընդհանուր բնակչության 99,7 %-ը) (տե՛ս *ASSÇ inzibati bolyunyşy; Административное деление АССР (Бақы=Баку: Az.XTU neşrijaty=Издание АЗУНХУ, 1933)*, 54):

15 Տե՛ս Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, 146:

16 Տե՛ս Տերյան, Գրիգորյան, *Բանանց. Գարդման-Ուրիքի հնագույն բնակավայր*, 25:

նայք: Օրինակ՝ նրանց շարքերում էր առաջին հայ կին օդաչուն՝ Թագուհի Վանյանը¹⁷: Ցավոք, պատերազմ գորակոչվածների կեսը՝ 600 մարդ՝ գրեթե բոլորն էլ ազգությամբ հայ, հերոսաբար զոհվեց պատերազմի ժամանակ:

Զոհված համազյուղացիների հիշատակը հավերժացնելու համար բանանցեցի Սերգեյ Տերյանի նախաձեռնությամբ 1966 թ. սկզբներին սկսվում են հուշարձանի կառուցման նախապատրաստական աշխատանքները¹⁸: Այդ շրջանում՝ Բաքվում գործողման ընթացքում, նա հանդիպում է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Յուսուֆ Ախունդովին¹⁹, ներկայացնում նրան հուշարձանը կառուցելու իր գաղափարը: Ախունդովը, որը ևս Հայրենական մեծ պատերազմի մասնակից էր, հավանություն է տալիս նրա առաջարկին²⁰:

Ս. Տերյանը նշում է, որ նախապատրաստական աշխատանքներն սկսելու համար ինքը և իր համազյուղացի, Հայրենական մեծ պատերազմի մասնակից Փառանձեմ Ավետիքյանը²¹ հանդիպում են Դաշքեսանի շրջկոմի առաջին քարտուղար Հասան Սուլեյմանովին²² հետ և նրանից ստանում բանավոր համաձայնություն²³:

1966 թ. մայիսի 15-ին հուշարձանի կառուցման աշխատանքները նախապատրաստելու և համակարգելու համար տեղի է ունենում երևանաբնակ բանանցեցիների առաջին ժողովը²⁴, իսկ հունիսի 20-ին՝ երկրորդ ժողովը, որի ժամանակ ձևավորվում է հուշարձանի կազմկոմիտեն՝ բաղկացած 20 անձից (նախագահ՝ Սերգեյ Տերյան, առաջին տեղակալ և գանձապահ՝ Փառանձեմ Ավետիքյան): Այն իրավասու էր իրականացնելու դրամահավաք՝ նվիրատվությունների կարգով: Նվիրատվության նվազագույն չափ է սահմանվում յուրաքանչյուր անձի համար 15 ռուբլին: Գումարը հավաքվելու էր տարբեր բնակավայրերում ապրող բանանցեցիներից կազմված հանձնաժողովների միջոցով և հանձնվելու էր գանձապահ Փ. Ավետիքյանին: Նվիրատվություն կատարած յուրաքանչյուր բանանցեցու տրվելու էր անդորրագիր²⁵:

17 Թագուհի Վանյանի մասին մանրամասն տե՛ս Սերգեյ Կարապետյան, «Մեր լեռնաշխարհի նշանավոր հայդուստրերը և հայորդիները», *Գարդմանք* ամսաթերթ, թիվ 7 (15), օգոստոս, 1998, 7-8:

18 Տե՛ս Տերյան, «Ադրբեջանական վանդալիզմ», 1:

19 Վելի Յուսուֆ օղլու Ախունդով (1916-1986), խորհրդային պետական և քաղաքական գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս, Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ (1958-1959), Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար (1959-1969):

20 Տե՛ս Տերյան, «Ադրբեջանական վանդալիզմ», 2:

21 Փառանձեմ Ավետիքյանի մասին մանրամասն տե՛ս Լ. Գևորգյան, «Ուոքով մինչև Բեռլին», *Հայաստանի աշխարհագրորդի* 5 (1966), 6-7: Ի դեպ, Փառանձեմ Ավետիքյանը Ի. Նիֆթալիևի հողվածում ներկայացվում է որպես Ս. Աветикян և իբրև տղամարդ (տե՛ս Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам,” 306):

22 Հասան Սուլեյմանովը Դաշքեսանի շրջկոմի առաջին քարտուղար է նշանակվել 1962 թ.: Այդ մասին տե՛ս “Первый памятник Андранику в Азербайджане сброшен в ров,” <https://fedai.az/?p=483>, դիտվել է՝ 24.06.2025 թ.:

23 Տե՛ս Տերյան, «Ադրբեջանական վանդալիզմ», 2:

24 Տե՛ս «Արձանագրություն N 1 երևանաբնակ բանանցեցիների ավագների խորհրդի ժողովի», 15.06.1969 թ., ՀՅԺԻ ԳՕՖ, Բ-61, հ. 3 (9):

25 Տե՛ս «Արձանագրություն N 2 երևանաբնակ բանանցեցիների ավագների խորհրդի ժողովի», 20.06.1969 թ., ՀՅԺԻ ԳՕՖ, Բ-61, հ. 3 (9):

Սեպտեմբերի 10-ին երևանաբնակ բանանցեցիների ընդհանուր ժողովում որոշվում է այլ քաղաքներից ևս՝ Կիրովաբադից, Բաքվից, Խանլարից, Մոսկվայից, Լենինգրադից, ինչպես նաև Բանանցից նշանակել լիազորներ²⁶ և հիշյալ բնակավայրերում ապրող իրենց հայրենակիցների շրջանում լիազորների միջոցով իրականացնել դրամահավաք՝ 1966 թ. հոկտեմբերի 20-ից սկսած²⁷։ Դրամահավաքի միջոցով ընդհանուր առմամբ հավաքվում է 20 903 ռուբլի²⁸։ Ի դեպ, այս երևույթն ուներ իր պատմական նախադեպերը. համայնքային միջոցներով Բանանցում 1928 թ. բացվել էր երկհարկանի դպրոց, որի շինարարությանը մասնակցել էին (ֆինանսապես կամ ֆիզիկական աշխատանքով) անխտիր բոլոր բանանցեցիները²⁹։ Ավելի վաղ՝ 1886 թ., տանուտեր Ստեփան Հովհաննիսյանցի ջանքերով և գյուղացիների կազմակերպած դրամական նվիրատվությունների շնորհիվ (2000 ռուբլի) մեկ տարվա ընթացքում Արթինաջուր գետի վրա կառուցվել էր Բանանցի քարե կամուրջը³⁰։ Վերհիշելով հուշարձանի կառուցման պատմությունը՝ գյուղի դպրոցի երիտասարդ ուսուցիչ Ռուբեն Գրիգորյանը գրում է. «Հուշարձանի կառուցումը, հիրավի, համաբանանցյան բնույթ էր ստացել։ Բացի նրանցից, ովքեր, այսպես ասած, ի պաշտոնե աշխատում էին Դիմաց կոչվող վայրում, ամեն օր իրենց անվճար աշխատանքով վերջիններիս կամավոր օգնում էին բազմաթիվ համագյուղացիներ, ինչպես և Բանանցի Մելիք Մելիքյանի (Դեղուշկա) անվան միջնակարգ դպրոցի բարձր դասարանների աշակերտները, որոնց հետ նաև տողերիս հեղինակը՝ որպես այդ կրթօջախի կոմերիտական կազմակերպության քարտուղար։ Հայոց լեզվի և գրականության երիտասարդ ուսուցիչ էի»³¹։

Հուշարձանի կառուցման հարցը քննարկվում է նաև Բանանցի բնակիչների ընդհանուր ժողովում 1966 թ. հոկտեմբերի 23-ին (նախագահ՝ Ն. Օգանով), որին մասնակցում էին 400 բանանցեցի։ Ժողովում որոշվում է հավանություն տալ զոհված բանանցեցիների հիշատակին նվիրված հուշարձանի կառուցմանը, որի համար հատկացվում է «Դիմաց տեղ» կոչվող վայրը։ Որոշվում է նաև, որ «Ժդանով»-ի այդ կոլտնտեսության տարածքում, որտեղից հուշարձանի կառուցման համար հատկացվել էր հողակտոր, մի քանի բանանցեցու պատկանող հողակտորների դիմաց գյուղի այլ վայրերում հատկացվեն համապատասխան տարածքով տնամերձ հողամասեր³²։

26 Տե՛ս «Արձանագրություն N 3 երևանաբնակ բանանցեցիների ավագների խորհրդի ժողովի», 10.09.1969 թ., ՀՅԹԻ ԳՕՖ, Բ-61, հհ. 3 (9), 1:

27 Տե՛ս «Բանանց գյուղից Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հիշատակը հավերժացնող հանձնաժողովի արձանագրություն», 02.10.1966 թ., ՀՅԹԻ ԳՕՖ, Բ-61, հհ. 3 (9), 1:

28 Տե՛ս “Краткая история разрушения памятника в селе Бананц,” ՀՅԹԻ ԳՕՖ, Բ-61, հհ. 3 (20), 4: Գրեթե նույնքան զույմար (22 000 ռուբլի) է ներկայացնում Նիֆթալիևը (տե՛ս Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам,” 306):

29 Տե՛ս Միքայել Տերյան (Mikael Teryan), «Բանանց» ֆեյսբուքյան փակ խմբի գրառում, 27 հունիսի 2025 թ., <https://www.facebook.com/groups/527700970591366/user/100006596131649>, դիտվել է՝ 04.07.2025 թ.:

30 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5901, թ. 48:

31 Ռուբեն Գրիգորյան, «Արծվի չկայացած թռիչքը», <http://www.hayzinvor.am/27110.html>, դիտվել է՝ 30.07.2025 թ.:

32 Տե՛ս «Արձանագրություն Բանանց գյուղի ընդհանուր հասարակության ժողովի», 23 հոկտեմբերի 1966 թ., ՀՅԹԻ ԳՕՖ, Բ-61, հհ. 3 (9), 1:

Հուշարձանի հեղինակները. արծվի կերպարը

«Արծիվ» հուշարձանի ճարտարապետն էր Ռաֆայել Իսրայելյանը, քանդակագործը՝ Արա Հարությունյանը (նկ. 2)³³: Նշենք, որ նրանք արդեն հանդես էին գալիս համատեղ նախագծերով. Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշարձանի ճարտարապետն ու քանդակագործն էին (մյուս քանդակագործներն էին Սամվել Մանասյանը և Արշամ Շիրինյանը), որի բացումը տեղի ունեցավ 1968 թ. մայիսի 28-ին՝ Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակին (նկ. 3): Կարմիր տուֆից կառուցված հուշահամալիրը Հայաստանի ամենախոշոր և մասշտաբային համալիրներից է, որի շինարարությունը տևել է շուրջ հինգ տարի: Հուշահամալիրը, ինչպես Ռ. Իսրայելյանի մյուս աշխատանքները, առանձնանում է իր խորհրդաբանությամբ: Լայն կանաչապատ ճեմուղու երկայնքով դասավորված վեց մետր բարձրություն ունեցող հինգ արծիվները խորհրդանշում են վճռական ճակատամարտում հաղթանակ տարած մարտիկների քաջությունը և հայ ժողովրդի անպարտ ոգին:

Ավելի վաղ՝ 1965 թ., Ռ. Իսրայելյանի և Ա. Հարությունյանի համագործակցությամբ Երևանում³⁴ կառուցվել է Հայոց մեծ եղեռնի 50-րդ տարելիցին նվիրված հուշարձան: Հորինվածքը ներառում է սալապատված հարթակին տեղադրված 2.4 մ բարձրություն ունեցող բազալտե կոթողը, որի վերին կեսում հավերժության նշանով արծվի հարթաքանդակն է՝ վերածնված և հարատևող Հայաստանի խորհրդանիշը, և ցայտաղբյուրը (նկ. 4)³⁵:

Հարկ է նշել, որ քննարկվող ժամանակահատվածում Երևանում, Ծիծեռնակաբերդի բլուրի վրա կառուցվում է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը: Հուշարձանի մրցութային նախագծերից էր նաև ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի և քանդակագործ Արա Հարությունյանի՝ «Մուշ» ծածկանունով նախագիծը, որը, սակայն, հանձնաժողովի որոշմամբ, հաղթող չի ճանաչվում (նկ. 5)³⁶: Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի էսքիզում նույնպես առանձնանում է արծվի հորինվածքով քանդակը:

Երևան քաղաքի այցեքարտը համարվող «Մայր Հայաստան» (1967) սրբատաշ սև տուֆից կառուցված հուշարձանը ևս այս տաղանդավոր արվեստագետների համագործակցությամբ է ստեղծվել (նկ. 6): Իսրայելյան-Հարությունյան ճարտարապետ-քանդակագործ համագործակցության շնորհիվ 1976 թ. ՀԽՍՀ Միսավեռ գյուղում տեղադրվեց Միսա լեռան հերոսամարտի հուշարձանը (նկ. 7): Այն նույնպես ստեղծվել է արծվի պատկերով բերդի հորինվածքով:


Քննարկվող հուշարձանների օրինակով կարելի է փաստել, որ արծվի մոտիվը Ռ. Իսրայելյանի ստեղծագործություններում ամենից հաճախ է հանդիպում և ար-

33 Ռաֆայել Իսրայելյանը 1961 թ. արժանացել էր ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչի, իսկ 1968 թ.՝ ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետի կոչման, Արա Հարությունյանը 1964 թ. արժանացել էր ՀԽՍՀ վաստակավոր նկարչի կոչման:

34 Երևանի Գաջեգործների և Նուբարաշենի փողոցների հատման անկյունում:


35 Տե՛ս «Հուշարձան Մեծ եղեռնի զոհերին», <https://www.visiterevan.am/places/details/433/am/>, դիտվել է՝ 21.06.2025 թ.:

36 Տե՛ս Карен Бальян, *Мемориал Езерн* (Екатеринбург: Tatlin, 2015), 25:




Նկ. 2. Ռաֆայել
Իսրայելյանը՝ ձախից և
Արա Հարությունյանը՝
աջից

Նկ. 3. Սարգսրապատի
հուշահամալիր.
աջ կողմում արծվի
քանդակն է



Նկ. 4. Հայոց
ցեղասպանության
50-ամյակին նվիրված
հուշարձան Երևանում



Նկ. 5. Հայոց ցեղասպանության հուշահամալիրի էսքիզ

տահայտվում է տարբեր ձևերով՝ որպես հարթաքանդակ, ինքնուրույն հուշարձան, դեկորի տարր (նկ. 8): Արծիվը համարվում էր հայկական նշանավոր Արծրունյաց նախարարական տոհմի նախնին: Հայկական ժողովրդական պատկերացումներում արծիվը մարդուն (հերոսին) մի աշխարհից (անդրաշխարհից) տեղափոխում է մյուսը³⁷: Հետևաբար անհիմն է շահարկել արծվի քանդակված կերպարը Բանանց գյուղի հուշարձանի քանդման համատեքստում՝ այն դիտարկելով իբրև «Հայաստանի խորհրդանիշ»³⁸:

Հուշարձանի շինարարությունը և ոչնչացումը

Բանանցում հուշարձանի կերտման համար հուշարձանի կառուցման կազմկոմիտեի անդամները՝ Ս. Տերյանը և Փ. Ավետիքյանը, 1968 թ. հունվարի 14-ին քանդակագործ Արա Հարությունյանի հետ ստորագրում են համաձայնագիր³⁹:

Հուշարձանի շինարարությունն ավարտվում է 1969 թ. հունիսին: Հորինվածքը ներառում էր բետոնի հիմքի վրա վեր հառնող 12-մետրանոց սյուն և պատվանդանի վրա գտնվող 3-մետրանոց, 3-տոննայանոց բազալտե արծիվ՝ զոհվածների նկարներով և

37 Այս մասին մանրամասն տե՛ս Արամ Ղանալանյան, «Արծվի մոտիվը Ռաֆայել Իսրայելյանի ստեղծագործություններում», <https://risraelyan.com/arcvi-motiv/>, դիտվել է՝ 28.06.2025 թ.:

38 Տե՛ս Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам,” 308:

39 Տե՛ս «Համաձայնագիր», 14 հունվարի 1968 թ., ՀՅԹԻ ԳՕՖ, հ. 3 (10), 1-2:



Նկ. 6. «Մայր Հայաստան» հուշարձան



Նկ. 7. Մոսկվայի հերոսամարտի հուշարձան



Նկ. 8. Ռ. Իսրայելյանը
Սարդարապատի հուշահամալիրի
արձիվների քանդակների մոտ

առանձին պատերազմական դրվագներով (նկ. 9): Սյունը խորհրդանշում էր կորստի ցավից հառնող հայ ժողովրդին, որի ստորին հատվածում բարելիեֆով քանդակված էր սգացող մայրը, իսկ արձիվը՝ «արծվաբույն Բանանցից թռած և այլևս չվերադարձած պատերազմի հերոս զինվորներին»⁴⁰: Ի դեպ, հուշարձանի կառուցման համար բազալտը բերվել էր Հայաստանից: Շինարարական աշխատանքներին մեծապես մասնակցել են Բանանցի գյուղացիները:

Բանանցի հուշարձանի էսքիզի լուսանկարից ակնհայտ երևում է արծվի իսրայելյանական ձեռագիրը կոմպոզիցիայի կառուցման և սիմվոլիկայի ընտրության հարցում: Քանի որ պատերազմից չվերադարձած հերոսներն ազգությամբ հայեր էին, նրանց խորհրդանշում էր հայկական ճարտարապետության մեջ հաճախ հանդիպող արծիվը (նկ. 10):

Ռ. Իսրայելյանն արծիվը որպես զոհվածների խորհրդանիշ ընտրելը բացատրում է հետևյալ կերպ. «Սգացող մայրերին մխիթարելու համար երկար մտորումներից հետո մենք կանգ առանք հետևյալ նախագծի վրա. օբելիսկ, որի վրա բարձրանում է արծվի հուշարձանային կերպարանքը, որի մեջ յուրաքանչյուր մայր, կին և որդի կարող է տեսնել իր վաղաժամ զոհված զինվորին, որը քաջաբար նետվում է կատաղի մարտի մեջ և հերոսի մահով ընկնում: Այս գաղափարին նպաստել է նաև գյուղի գեղատե-

40 Գրիգորյան, «Հայերի ցեղասպանության աղբյուրագրական դրսևորումները. արծվաբույն Բանանցը», 5:

սիլ դիրքը, որը հպարտորեն վեր է խոյանում լեռներից, ինչպես արծվի բույն, որտեղից ինչպես լեռնային արծիվներ թռան այս փոքրիկ հայկական գյուղի որդիները՝ պաշտպանելու հայրենիքը»⁴¹։ Սյան վրա գրված էին հայ պատմիչ Եղիշեի խոսքերը՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»⁴²։ Բնութագրական է, որ այս խոսքերը քանդակված են նաև Արցախյան պատերազմում զոհված հերոսների «Եռաբլուր» զինվորական պանթեոնի մուտքի կամարին։

1969 թ. հուլիսի 25-ի լույս 26-ի գիշերը, հոսանքազրկելով գյուղը, հուշարձանը բուլդոզերով գաղտնի քանդում են։ Հուլիսի 28-ին գյուղի բնակիչների՝ Մոսկվա ուղարկած բողոք-դիմումի մեջ նշվում է, որ հուլիսի 26-ի գիշերը՝ ժամը 2-ին, Դաշքեսանի շրջկոմի առաջին քարտուղարի հրամանով քանդվել է հուշարձանի «Արծիվ» քանդակը։ Նույն գրությունից տեղեկանում ենք, որ այդ օրը Հ. Սուլեյմանովն իր մոտ է կանչել Բանանց գյուղի կոլխոզի նախագահ Ս. Մկրտչյանին և կուսքարտուղար Օ. Միրզոյանին ու ստիպել նրանց ներկա գտնվել քանդակի ոչնչացման վանդալիզմի ակտին։ Քանդմանը ներկա են եղել Սուլեյմանովը, շրջկոմի երկրորդ քարտուղար Ջաֆարովը, շրջգործկոմի նախագահ Ա. Խոջոյանը և միլիցիայի ղեկավարն իր քարտուղարի հետ⁴³։

Հաջորդ օրը՝ առավոտյան, երբ բնակիչներն իրազեկվում են կատարվածի մասին,

41 “Председателю Комиссии по расследованию фактов разрушения памятников воинам, павшим в Великой Отечественной войне,” ՀՅԹԻ ԳՕՖ, Բ-61, հ. 3 (18), 1:

42 Գրիգորյան, «Հայերի ցեղասպանության աղբյուրական դրսևորումները. արժվարույն Բանանցը», 5:

43 Տե՛ս “Заявление-жалоба,” 28 июля, 1969, ՀՅԹԻ ԳՕՖ, Բ 61, հ. 3 (17), 1: Բանանցի գյուղացիներն իրենց դիմում-բողոքն ուղարկել են նաև ԽՍՀՄ ԿԿ օրգան «Правда» թերթի խմբագրությանը։ Այս մասին տե՛ս նաև Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам,” 308:



Նկ. 9. «Արծիվ» հուշարձանի էսքիզը

Նկ. 10. Էսքիզ, Արա Հարությունյան



Դաշքեսանի ղեկավարության իրականացրած գործողություններից դժգոհ՝ որպես բողոքի նշան նրանք ցույց են կազմակերպում, ապա՝ գործադուլ անում: Ականատես Ռ. Դարբինյանը հիշում է այդ օրվա մանրամասները. «Հուլարձանից միայն սյունն էր կանգուն, իսկ արծիվը չկար: Պատվանդանի մոտ թափված էին քանդակի ջարդված բեկորները» (նկ. 11, 12):⁴⁴: Այդ ընթացքում գյուղի բնակիչներից չորս թռչակառու կին՝ որպես պատվիրակ, գնում են կատարվածի մասին պարզաբանումներ ստանալու անձամբ Հ. Սուլեյմանովից: Վերջինս, կանանց վրա բղավելով, ասել է. «.... *հրամանը տրված է վերևից, իսկ արծիվը Հայաստանի խորհրդանիշն է, նրա վրա հավերժության նշանը՝ Դաշնակցության կուսակցության նշանը* [ընդգծումը մերն է – Գ. Խ.]»⁴⁵:

Հուլարձանի կազմկոմիտեն բողոքի բազմաթիվ հեռագրեր է հղում Մոսկվա և Բաքու⁴⁶: Հուլարձանի ճարտարապետ Ռ. Իսրայելյանը և քանդակագործ Ա. Հարությունյանը, ստեղծված իրավիճակից վրդովված, հուլարձանի ոչնչացման փաստերի հետաքննության հանձնաժողովի նախագահին ուղղված գրության մեջ նշում են. «Բայց այստեղ տեղի է ունեցել անհավանական, անընդունելի, աղաղակող անօրինություն: Շրջանի ղեկավարությունն իր անգիտության, անբարյացակամության, թյուրըմբռնման կամ հուլարձանի խորհրդանիշը հասկանալու չկամության պատճառով, սխալ մեկնաբանելով դրանում ներկայացած գաղափարը, գիշերով դավաճանաբար, գողի պես, օպերատիվ կերպով ոչնչացնում է հուլարձանը, արծվի քանդակը կտոր-կտոր է անում՝ դրանով իսկ պղծելով գյուղի աշխատավորների հույզերը և զոհվածների հիշատակը»⁴⁷: Ըստ էության, ճարտարապետն ու քանդակագործն այս դիմում-բողոքում արձանագրում են Ադրբեջանի պետական ղեկավարության կամայականությունն ու որոշման անօրինականությունը:

Հուլարձանի ճակատագիրը, ըստ Ի. Նիֆթալիևի, վերջնականապես որոշվեց 1969 թ. օգոստոսի 12-ին, երբ Ադրբեջանական ՍՍՀ կոմկուսի կենտկոմի՝ գյուղ այցելած ներկայացուցիչների՝ Ա. Ամիրովի և Թ. Բագիրովի տեղեկանքի հիման վրա Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևը մակագրեց. «Քննարկման ներկայացնել Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի բյուրոյին»⁴⁸: Հինգ կետից բաղկացած որոշման համաձայն՝ խիստ նկատողություն էր տրվում Դաշքեսանի շրջանային կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար Գ. Սուլեյմանովին և Դաշքեսանի շրջանային գործադիր կոմիտեի նախագահ Ա. Խոջալանին՝ գրանցման քարտում գրառում կատարելով քաղաքական անհասունության և շրջանի ղեկավարների կոպիտ սխալներ թույլ տալու մասին: Նրանց նաև հանձնարարվում է շրջանի բնակիչների հետ քաղաքական և բացատրական աշխատանքներ

44 Գրիգորյան, «Արծվի չկայացած թռիչքը»:

45 Գրիգորյան, «Հայերի ցեղասպանության ադրբեջանական դրսևորումները. արծվաբույն Բանանցը», 6: Այս մասին տե՛ս նաև Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам,” 308:

46 Տե՛ս Տերյան, «Ադրբեջանական վանդալիզմ», 5:

47 “Председателю Комиссии по расследованию фактов разрушения памятников воинам, павшим в Великой Отечественной войне,” 1.

48 Նույն տեղում, 1-2:



Նկ. 11. Որդեկորույս մայրերը՝ քանդված հուշարձանի ավերակների մոտ



Նկ. 12. Հուշարձանի ավերակները

տանել քանդակը նորով փոխարինելու անհրաժեշտության վերաբերյալ, որի կառուցման ծախսերը հոգալու էր պետությունը: Ադրբեջանի նկարիչների միությանը, համաձայնեցված Դաշքեսանի շրջանի ղեկավարության հետ, հանձնարարվում է Բանանց գյուղում պատրաստել և տեղադրել մի քանդակ, որը նվիրված կլիներ Հայրենական մեծ պատերազմի տարիներին զոհված զինվորների հիշատակին⁴⁹:

Հետագայում հուշարձանի մոտ կառուցվեց թանգարան, որտեղ տեղադրվեցին զոհվածների լուսանկարները: Արծվի փոխարեն պատվանդանին դրվեցին խոնարհված դրոշներ, իսկ այան մեջտեղում՝ զինվորի սաղավարտ⁵⁰: Նոր հուշարձանը տեղադրվեց առանց հաշվի առնելու բանանցեցիների առաջարկությունները, անգամ շրջանցվեցին զոհերի հարազատների ցանկությունները:

Ադրբեջանական թեզերն ու գեղծարարությունը

Ըստ ադրբեջանական տեսակետի՝ Գ. Սուլեյմանովը և Դաշքեսանի շրջկոմի նախագահ Ա. Խոջայանը տեղյակ չեն եղել հուշարձանի շինարարական աշխատանքներից, չեն ստացել կառուցվող հուշարձանի էսքիզը կամ մակետը⁵¹: Կառուցման թույլտվության համար ադրբեջանցի պատմաբան Իլգար Նիֆթալիևը հղում է անում ԽՄԿԿ ԿԿ-ի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1966 թ. հուլիսի 24-ի որոշմանը, որը վերաբերում էր միութենական և հանրապետական նշանակության քանդակների, հուշարձանների կառուցմանը: Ըստ այդ որոշման՝ կարևորվում էր հուշարձանների գեղարվեստագաղափարական արժեքը, որին համապատասխան միութենական հանրապետությունների բյուջեից հատկացվում էին միջոցներ (կետ 2): Սակայն հարկ է նշել, որ Ադրբեջանական ՍՍՀ-ն ֆինանսական միջոցներ չի հատկացրել այս հուշարձանի շինարարության համար: Պահպանվում են հուշարձանի կառուցման համար ստեղծված ֆոնդից կատարված ծախսերի անդորրագրերը, հաշվետվությունները և ստացականները⁵²:

Ադրբեջանցի պատմաբանը նշում է նաև, որ հուշարձանի կառուցման ընթացքում ԽՍՀՄ մշակույթի նախարարության «բոլոր պահանջները կոպտորեն խախտվել են»: Սակայն հեղինակը չի նշում, թե կոնկրետ ինչ չափորոշիչներ կամ պահանջներ են խախտվել⁵³: Հուշարձանի շուրջ բարձրացած հակասությունների հետևախորքին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Մամեդ Իսկենդերովի հարցին, թե ում հետ է համաձայնեցրել Սուլեյմանովը, երբ տվել է հուշարձանը քանդելու թույլտվությունը, վերջինս պատասխանել է, թե որևէ մեկի հետ չի համաձայնեցրել: Մինչ այդ

49 St'u Нифталиев, "1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам," 308:

50 St'u Գրիգորյան, «Հայերի ցեղասպանության ադրբեջանական դրսևորումները. արժվարույն Բանանցը», 5:

51 St'u Нифталиев, "1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам," 307:

52 St'u ՀՅԹԻ ԳՕՖ, Բ-61, հ. 4 (6):

53 St'u Нифталиев, "1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам," 306:

Հեյդար Ալիևին ներկայացրած համառոտ զեկույցում Իսկենդերովը նույնպես գրել է, որ այդ որոշումը Սուլեյմանովն իրագործել է միանձնյա⁵⁴։ Այս կապակցությամբ Նիֆթալիևը կասկած է հայտնում, որ Սուլեյմանովը, ով հուշարձանի կոմպոզիցիային ծանոթ է եղել կառուցման սկզբից, շինարարական աշխատանքների համար հատկացրել է տեխնիկա և վերամբարձ կռունկ՝ արծվի քանդակը տեղադրելու համար, դժվար թե միանձնյա նման որոշում կայացներ⁵⁵։

Բացի այդ՝ ադրբեջանցի հետազոտողը նշում է, որ, Ադրբեջանի նկարիչների միության նախագահ Օ. Էլդարովի և Ազպետնախագիծ («Азотпроект») ինստիտուտի գլխավոր ճարտարագետ Օ. Իսաևի տված եզրակացության⁵⁶ համաձայն, «... նստած արծվի արխայիկ քանդակը չի բացահայտում Բայան [Բանանց – Գ. Խ.] գյուղի խորհրդային հերոսների հիշատակը, հատկապես Հայրենական մեծ պատերազմի ժամանակ զոհվածներինը։ Ճարտարապետական լուծումներով մեծապես համընկնելով 1968 թ. Երևանում Սարդարապատի ճակատամարտի 50-ամյակին նվիրված հուշարձանի տարրերին՝ այն ավելի է հեռավացում Հայրենական մեծ պատերազմի տարիներին խորհրդային մարդկանց սխրանքի և զոհողության պատկերը»⁵⁷։ Այսինքն, այս եզրակացության տրամաբանությամբ, միութենական մեկ այլ հանրապետությունում՝ Հայկական ՍՍՀ-ում, Սարդարապատի հուշահամալիրի կառուցումը ևս խնդրահարույց էր։ Տեղին է հիշել, որ հետագայում՝ 1982 թ., Հեյդար Ալիևն այցելել է Սարդարապատի հուշահամալիր (նկ. 13)։

Հատկանշական է, որ Սուլեյմանովն այդ որոշումը կայացրել է նորանշանակ Հ. Ալիևի հետ Բաքվում ունեցած հանդիպումից անմիջապես հետո։ Նիֆթալիևը պնդում է, որ Հ. Ալիևը, նախկինում լինելով Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահը, ունեցել է փաստեր, որ Բանանց գյուղում կառուցվող հուշարձանը պարունակում է նույն տարրերը, ինչ Սարդարապատի հուշահամալիրը, այն է՝ արծվի քանդակը, ինչը հետևանք է «հայ ազգայնականների սադրանքների»⁵⁸։ Նման վարկածի համար հիմք է ծառայել նաև քանդակի վրա առկա հավերժության նշանը։ Քանդակի կառուցումը, ըստ ադրբեջանական թեզի, Ալիևը համարել է Հայաստանի կողմից միջամտություն Ադրբեջանի ներքին գործերին⁵⁹։

Այն, որ արծվի քանդակը քանդելու հրահանգը տվել է անձամբ Հեյդար Ալիևը, հիմնավորվում է նաև Սերգեյ Տերյանի վկայությամբ։ Նա Փ. Ավետիքյանի հետ Անտոն Քոչինյանի միջնորդությամբ 1969 թ. աշնանը մեկնել է Բաքու և հանդիպել Հեյդար Ալիևի հետ։ Վերջինս հայկական կողմին մեղադրել է «ազգայնականության և

54 Տե՛ս նույն տեղում, 309։ Այն, որ հուշարձանը քանդելու որոշումը Սուլեյմանովը կայացրել է միանձնյա, նշվում է ադրբեջանական այլ աղբյուրում ևս (տե՛ս «Первый памятник Андранику в Азербайджане сброшен в ров»)։

55 Տե՛ս Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам,” 310։

56 Ի. Նիֆթալիևը եզրակացությունն ուղղակի մեջբերմամբ չի ներկայացնում։

57 Нифталиев, “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам,” 307։

58 Նույն տեղում, 310։

59 Տե՛ս նույն տեղում։



Նկ. 13. Չախից աջ՝ Էդուարդ Շևարդնաձեն, Կարեն Դեմիրճյանը և Հեյդար Ալիևը՝ Սարդարապատի հուշահամալիրում, 1981/1982 թ.

Անդրանիկին՝ Սովետական Միության թշնամուն հերոսացնելու մեջ։ Նա պնդում է, որ եթե անգամ քանդակը նորից տեղադրվի, ապա հնարավոր է մի ադրբեջանցի այն պայթեցնի, ինչը կհանգեցնի միջերևիկ բախման, ինչն իրեն ձեռնտու չէ»⁶⁰։ Հարկ ենք համարում նշել, որ հուշարձանի կառուցման առնչությամբ որևէ փաստաթղթում չի հիշատակվում Զորավար Անդրանիկի անունը, և այս թեզը նույնպես անհիմն շահարկվում է ադրբեջանցիների կողմից։ Մյուս կողմից՝ «Արծիվ» հուշարձանի վրա չի եղել Հայաստանի առաջին հանրապետության զինանշանից որևէ ատրիբուտ։ Սուլեյմանովն ասելոսներին, շրջակա գյուղերի ադրբեջանցիների պատմություններից⁶¹ եզրակացություններ է արել և դրանցով հիմնավորել հուշարձանը քանդելու որոշումը։

Բաքվի խորհրդային իշխանությունների իրականացրած այս գործողության նպատակը, ըստ Ս. Տեյյանի, հազարամյա հայաբնակ գյուղի հայաթափումն էր⁶²։ Գյուղի

60 Սերգեյ Տեյյան, «Իմ անցած ուղին. հուշեր», 95-97։

61 Ադրբեջանական վարկածներից մեկի համաձայն՝ հունիսի 26-ի երեկոյան Հ. Սուլեյմանովի տուն է գնացել մի ադրբեջանցի հուզված տարեց կին և ասել, որ հուշարձանը նվիրված է հայերի հերոս Անդրանիկին, որից հետո Սուլեյմանովը, վազքով դուրս թռչելով տնից, բուլդոզեր է գտել ու քանդել արձանը (տե՛ս «Первый памятник Андранику в Азербайджане сброшен в ров»)։

62 Տե՛ս Տեյյան, «Իմ անցած ուղին. հուշեր», 95-97։

այլ բնակիչների վկայությամբ ևս՝ հուշարձանի ավերումից հետո սկսվեց տեղի հայության արտագաղթը: 1989 թ. հուլիսի 27-ին ծննդավայր Բանանցը լքեց վերջին հայը Հեյդար Ալիևի որդեգրած հայատյաց քաղաքականության հետևանքով: 1980-ական թթ. վերջին – 1990-ական թթ. սկզբին հայաթափվեցին ողջ Հյուսիսային Արցախը և Նախիջևանը նույն հալածանքների ու քաղաքականության հետևանքով:

Այժմ էլ Ադրբեջանի Հանրապետությունը՝ հանձին այդ երկրի քաղաքական ղեկավարության, վարում է հետևողական հակահայկական քաղաքականություն, որի առանցքային ուղղություններից է իր տարածքում գտնվող հայկական մշակութային ժառանգության համակարգված վերացումը, ինչի հետևանքով ոչնչացվում կամ ինքնության վերափոխման են ենթարկվում՝ «ալքանացվում» են հայկական բազմադարյան եկեղեցիները, խաչքարերը և գերեզմանոցները, և դեռ ավելին՝ հողին են հավասարեցվում խորհրդային ժամանակաշրջանում կառուցված հուշարձանները⁶³, նվիրված Հայրենական մեծ պատերազմում զոհված հայ զինվորներին: Այդ դեպքերը դարձան համընդհանուր հատկապես Արցախի բռնի հայաթափումից՝ 2023 թ. սեպտեմբերից ի վեր: Սակայն հարկ է նշել, որ այդ քաղաքականությունը խորհրդային տարիներին Ադրբեջանի իշխանությունների որդեգրած հակահայկական քաղաքականության ավելի ագրեսիվ շարունակությունն է: Բանանց գյուղում «Արծիվ» հուշարձանի ոչնչացումն այդ քաղաքականության հետևանքներից է:

63 Օրինակ՝ Կիրովաբադում (այժմ՝ Գյանջա), 1988 թ. արդրբեջանցիների կողմից հայերի ջարդերի ժամանակ ոչնչացվել է Սովետական Միության կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանի բրոնզե կիսանդրին, իսկ Շուշիում՝ Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի արձանը: Այդ մասին տե՛ս՝ Է. Փ. Кринко, “Советское прошлое в мемориальной культуре Азербайджана: от отрицания к использованию,” *Новое прошлое / The New Past* 3 (2023): 173–187, DOI 10.18522/2500-3224-2023-3-173-187.

ANTI-ARMENIANISM IN SOVIET AZERBAIJAN:
THE STORY OF THE DESTRUCTION OF THE MONUMENT “EAGLE”
IN THE VILLAGE OF BANANTS

Gohar Khanumyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

This study examines the destruction of the “Eagle” monument in the Armenian-populated village of Banants in Soviet Azerbaijan as a revealing case of state-driven anti-Armenian policy during the Soviet period. Erected in memory of 600 Armenian villagers who were killed in Great Patriotic war/World War II, the monument was designed by renowned Armenian architect Rafael Israelyan and sculptor Ara Harutyunyan. Despite being a community-funded initiative, the monument was secretly demolished in July 1969 under the directive of Azerbaijani officials, reportedly influenced by newly appointed First Secretary of the Central Committee of the Communist Party of Azerbaijan Heydar Aliyev.

Drawing on archival materials from Sergey Teryan's personal archive, the article argues that the demolition was not an isolated incident but part of a broader policy of cultural erasure targeting Armenian heritage. It analyzes both Armenian and Azerbaijani narratives surrounding the event, situating it within the larger context of Soviet nationalities policy and the long-standing erasure of Armenian presence in Azerbaijan.

Key words: Banants, the monument ‘Artsiv,’ monument destruction, anti-Armenian policy, Soviet Azerbaijan, cultural erasure, Heydar Aliyev.

АНТИАРМЯНСКАЯ ПОЛИТИКА В СОВЕТСКОМ АЗЕРБАЙДЖАНЕ:
ИСТОРИЯ УНИЧТОЖЕНИЯ ПАМЯТНИКА “ОРЁЛ” В СЕЛЕ БАНАНЦ

Гоар Ханумян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

В статье рассматривается уничтожение памятника “Орёл” в армянском селе Бананц в Советском Азербайджане как показательный случай государственной антиармянской политики в советский период. Памятник, воздвигнутый в память о 600 армянских жителях деревни, погибших в Великой Отечественной/Второй мировой войне, был создан известным армянским архитектором Рафаэлем Израеляном и скульптором Ара Арутюняном. Несмотря на то, что проект был реализован на средства местного сообщества, памятник был тайно снесён в июле 1969 года по указанию азербайджанских властей, предположительно, по инициативе новоназначенного первого секретаря ЦК Компартии Азербайджана Гейдара Алиева.

Опираясь на материалы из личного архива Сергея Теряна, в статье утверждается, что снос памятника не был единичным случаем, а являлся частью более широкой политики уничтожения армянского культурного наследия. Анализируются как армянские, так и азербайджанские нарративы, связанные с этим событием, в более широком контексте национальной политики Советского Союза и давнего процесса политики стирания армянского присутствия в Азербайджане.

Ключевые слова: Бананц, памятник “Орёл,” уничтожение памятников, антиармянская политика, Советский Азербайджан, Гейдар Алиев.

REFERENCES

«Արձանագրություն N1 երևանաբնակ բնակեցեցիների ավագների խորհրդի ժողովի» 15.06.1966 թ. [Protocol No. 1 of the Meeting of the Council of Elders of the Banants Residents Living in Yerevan]. 15.06.1966, AGMI collection;

«Արձանագրություն N2 երևանաբնակ բնակեցեցիների ավագների խորհրդի ժողովի» [Protocol No. 2 of the Meeting of the Council of Elders of the Banants Residents Living in Yerevan]. 20.06.1966, AGMI collection;

«Արձանագրություն N3 երևանաբնակ բնակեցեցիների ավագների խորհրդի ժողովի» [Protocol No. 3 of the Meeting of the Council of Elders of the Banants Residents Living in Yerevan]. 10.09.1966, AGMI collection;

«Արձանագրություն Բանանց գյուղի ընդհանուր հասարակության ժողովի» [Protocol of the General Community Assembly of Banants Village, October 23, 1966], AGMI collection;

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան [Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Regions, vol I] (compiled by Hakobyan, Tadik, Melik-Bakhshyan, Stepan, Barseghyan Hovhannes). Yerevan, 1986;

«Հուշարձան Մեծ եղեռնի զոհերին» [Monument to the Victims of the Armenian Genocide] <https://www.visiterevan.am/places/details/433/am/>;

“Заявление-жалоба,” 28 июля, 1969 [“Statement-Complaint”, July 28, 1969];

Кавказский календарь на 1910 годъ, изданъ по распоряженію наместника Его Императорскаго Величества на Кавказе канцеляріей наместника, под редакціей вице-директора канцеляріи В. В. Стратонова, часть I [Kavkazskii' kalendar' na 1910 god]. Tiflis, 1909;

“Краткая история разрушения памятника в селе Бананц” [A Brief History of the Destruction of the Monument in the Village of Banants], AGMI collection;

“Первый памятник Андранику в Азербайджане сброшен в ров” [The First Monument to Andranik in Azerbaijan has been Thrown Into a Ditch], <https://fedai.az/?p=483>;

“Председателю Комиссии по расследованию фактов разрушения памятников воинам павшим в Великой Отечественной войне” [To the Chairman of the Commission for the Investigation of the Facts of Destruction of Monuments to Soldiers Fallen in the Great Patriotic War], AGMI collection;

ԱՏՏՀ *inzibati bolynyşy*; *Административное деление АССР* [Administrative Division of the A.S.S.R. (Azerbaijan Soviet Socialist Republic)]. Baku, 1933;

Balyan, Karen. *Мемориал Егерн* [Memorial Egern], Ekaterinburg: Tatlin, 2015;

Danielyan, Anushavan. «Բանանցն աչքիս առաջ դատարկվեց. ականատեսի վկայություն» [Banants Emptied Before My Eyes: an Eyewitness Testimony], *Gardmanq monthly*, No 3, November-December, 1996, 16;

Gevorgyan, L. «Ուրոսով մինչև Բեռլին» [On Foot to Berlin]. *Hayastani ashkhatavoruhi* 5 (1966), 6-7;

Ghanalanyan, Aram. «Արծվի մոտիվը Ռաֆայել Իսրայելյանի ստեղծագործություններում» [The Eagle Motif in the Works of Rafael Israyelyan"] <https://risraelyan.com/arcv-motiv/>;

Grigoryan, Ruben, «Արծվի չկայացած թռիչքը», [The Eagle's Failed Flight]. <http://www.hayzinvor.am/27110.html>;

Grigoryan, Ruben. «Հայերի ցեղասպանության աղբրեջանական դրսևորումները. արծվարույն Բանանց», [Azerbaijani Manifestations of the Armenian Genocide: the Eagle's Nest Banants"]. *Gardmanq monthly*, No 3 (11), April, 1998, 5-6;

Hamamchean Y[eruan] «Բանանց գիղի կուրգանները» [The Burial Mounds of the Village of Banants]. *Azghagrakan handes* II (1897), 308-315;

Karapetyan, Samvel. *Հյուսիսային Արցախ* [Northern Artsakh]. Yerevan, 2004;

Karapetyan, Sergey. «Մեր լեռնաշխարհի նշանավոր հայդուստրերը և հայորդիները», [The Renowned Daughters and Sons of Our Mountainous Homeland"]. *Gardmanq monthly* 7(15), August, 1998, 5-6;

Matevosyan, Artashes. «Վեհափառական երկու Ավետարան» [Two Holy Gospels of the Catholicos] *Etchmiadzin* 9-10 (1994), 32-34;

Meliq-Shahnazaryan, Levon. *Աղբրեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի հանրապետության խաղաղ բնակչության դեմ* [Azerbaijani War Crimes Against the Civilian Population of the Nagorno-Karabakh Republic]. Yerevan: AGMI, 1998;

Teryan, Mikael. «Banants» Facebook closed group post, June 27, 2025;

Niftaliev, Ilgar. “1969 г. Как Ереван в обход Баку хотел установить памятник армянским воинам в селении Баян Дашкесанского района Азербайджана” [How Yerevan in 1969, Bypassing Baku, Wanted to Erect a Monument to Armenian Soldiers in the Village of Bayan in the Dashkesan region of Azerbaijan]. *Tarix və mədəniyyət. Faktlar və dəyərlər. Akademik Nailə Vəlixanlının yubileyinə həsr olunmuş məqalələr toplusu*, Məsul redaktor F. R. Cabbarov. Bakı: “Nurlar” Nəşriyyat-Poliqrafiya Mərkəzi, 2020;

Teryan, Anzhela; Grigoryan, Valeri. *Բանանց. Գարդման Ուտիքի հնագույն բնակավայր* [Banants: Ancient Settlement of Gardaman-Utiq]. Yerevan, 2022;

Teryan, Mikael. «Banants» Facebook closed group post, June 27, 2025; <https://www.facebook.com/groups/527700970591366/user/100006596131649>

Teryan, Sergey. «Աղբրեջանական վանդալիզմ», անտիպ հուշեր [“Azerbaijani vandalism”. unpublished memoirs].

Հեղինակի մասին
About the author
Об авторе

Գոհար Խանումյան, պատմաբան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գլխավոր ֆոնդապահ, Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտը՝ որբահավաք աշխատանքներն Օսմանյան կայսրությունում, հայկական և օտարերկրյա նպաստամատույց կազմակերպություններ, Սողոմոն Թեհլիրյան, Նեմեսիս գործողություն:

Էլ. փոստի հասցե՝ khanumyan.gohar@genocide-museum.am

Gohar Khanumyan, Historian, chief-registrar at the Armenian Genocide Museum-Institute Foundation, Junior researcher at the Department of the Armenian Genocide Source Studies.

Research fields: Orphan collecting efforts in the Ottoman Empire, Armenian and foreign relief organizations, Soghomon Tehlirian, Operation Nemesis.

E-mail: khanumyan.gohar@genocide-museum.am

Гоар Ханумян, историк, главный хранитель музейных фондов Фонда “Музей-институт Геноцида армян,” младший научный сотрудник Отдела источниковедческих исследований Геноцида армян.

Область исследований: спасение сирот в Османской империи, армянские и зарубежные благотворительные организации, Согомон Тейлирян, операция “Немезис.”

Эл. почта: khanumyan.gohar@genocide-museum.am

**ՎԵՐԱԳՐԵԼՈՎ ՍՈՒՄԳԱՅԻԹԸ.
ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋԱՐԴԵՐԸ ԱԿԱՆԱՏԵՄՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ**

Գայանե Հովհաննիսյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Սույն հոդվածի նպատակն է ականատեսների վկայությունների և բանավոր պատմությունների հիման վրա բացահայտել 1988 թ. փետրվարի 27-29-ը Ադրբեջանական ԽՍՀ Սումգայիթ քաղաքում իրականացված հայ բնակչության ջարդերի մի շարք կարևոր դիտանկյուններ: Վերլուծելով վերապրածների բանավոր պատմությունները՝ հետազոտությունը ձգտում է բացահայտելու ջարդերին նախորդած ժամանակաշրջանում ձևավորված հակահայ ատելության խոսքը և ապամարդկայնացման դրսևորումները, ինչպես նաև բռնության կազմակերպական գործողությունների օրինաչափությունները: Հոդվածը ցույց է տալիս բանավոր պատմության կարևորությունը Սումգայիթի ջարդերի փաստագրման գործում և նպաստում դրանց գիտական առավել խորքային ուսումնասիրությանը:

Հետազոտության համար հիմնական սկզբնաղբյուր են հանդիսացել Սումգայիթի ջարդերը վերապրածների հրատարակված վկայությունները, որոնք բովանդակում են կարևոր տեղեկություններ ջարդերի նախապատրաստական աշխատանքների, դրանց բնույթի և առանձնահատկությունների մասին: Հոդվածում վերլուծվել են ջարդերի այն օրինաչափ բնութագրիչները, որոնք բազմիցս արձանագրվել են տարբեր վկայություններում՝ ընդգծելով դրանց կառուցվածքային և կազմակերպական ընդհանրությունները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ ջարդերին նախորդել են համակարգված հակահայկական քարոզչություն և ատելության խոսքի լայն տարածում: Այդ գործընթացում որոշիչ դեր են ունեցել Խորհրդային Հայաստանից Սումգայիթ տեղափոխված ադրբեջանցիները: Այդ օրերին հայերի ապամարդկայնացումը դրսևորվում էր նրանց տարբեր կենդանիների հետ համեմատելով և նվաստացուցիչ բնորոշումներով: Ականատեսների վկայությունների համադրումը թույլ է տալիս արձանագրել նաև ջարդերին նախորդած ժամանակաշրջանում որոշակի կազմակերպական գործողությունների իրականացումը, մասնավորապես՝ հայերի բնակության հասցեների ցուցակների կազմումը, հարձակումների համար անհրաժեշտ գործիքների պատրաստումը, ջարդարարներին ոգելից խմիչքների և հոգեմետ նյութերի բաժանումը, ադրբեջանցիների կողմից հատուկ պայմանանշանների կիրառումը: Վերապրածների պատմությունները վերահաստատում են, որ ջարդերի օրերին տեղական ոստիկանությունը և շտապ բուժօգնությունը դրսևորել են հանցավոր անգործություն, իսկ որոշ դեպքերում աջակցել են ջարդարարներին:

Բանալի բառեր՝ հայատյացություն, Սումգայիթի ջարդեր, ականատեսներ, վկայություններ, բանավոր պատմություններ:

Հոդվածը ներկայացվել է՝ 14.10.2025: Ընդունվել է տպագրության՝ 15.11.2025:

The article was submitted on 14.10.2025 and accepted for publication on 15.11.2025.

Статья поступила 14.10.2025 и была принята к публикации 15.11.2025.

Ինչպես հղել՝ Գայանե Հովհաննիսյան, «Վերապրելով Սումգայիթը. հայ բնակչության ջարդերը ականատեսների աչքերով», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 2 (2025), 168-189:

How to cite: Gayane Hovhannisyan, “Surviving Sumgait: The Pogrom of the Armenian Population Through the Eyes of Witnesses,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 2 (2025), 168-189.

Как ссылаться: Гаяне Оганнисян, “Пережив Сумгаит: погромы армянского населения глазами очевидцев,” *Цехаспанagitakan андес* 13, no. 2 (2025), 168-189.

Ներածություն

Մարդկության դեմ իրականացված հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունները հիմնականում պահպանվում են արխիվային վավերագրերում, պաշտոնական փաստաթղթերում և մամուլի հաղորդագրություններում: Դրանց զուգահեռ գոյություն ունի տեղեկությունների հավաքագրման մեկ այլ կարևոր աղբյուր՝ վերապրածների և ականատեսների վկայությունները, որոնք արձանագրվում են բանավոր պատմությունների, հարցազրույցների, ինչպես նաև հուշագրությունների և օրագրային գրառումների միջոցով: Այս առումով կարելի է նշել Հոլոքոստը¹ և Հայոց ցեղասպանությունը վերապրածների վկայությունները², որոնք արժեքավոր տեղեկություններ են հաղորդում այդ իրադարձությունների բազմաշերտ ուսումնասիրության համար: Բանավոր պատմությունները հանդես են գալիս որպես կարևորագույն սկզբնաղբյուրներ՝ հնարավորություն ընձեռելով բացահայտելու մարդկության դեմ կատարված հանցագործությունների բազմաթիվ մանրամասներ, մասնավորապես՝ բռնությունների նախադրյալները, զոհ խմբի ապամարդկայնացման գործընթացը, գործողությունների կազմակերպված բնույթը, իրականացման եղանակները և գործիքակազմը, ինչպես նաև դրանց օրինաչափությունները և կերպափոխումները: Բանավոր պատմության փոխանցած գիտելիքը եզակի է նաև այն առումով, որ արտացոլում է գրուցակցի անհատական մտածողությունը, ընկալումները և փորձառությունը՝ իր նախնական և անմիջական ձևով³:

Միաժամանակ բանավոր պատմության հետ աշխատանքը ենթադրում է մի շարք առանձնահատկություններ, որոնք վերաբերում են փոխանցվող տեղեկությունների ամբողջականությանը և օբյեկտիվության աստիճանի գնահատմանը: Բանավոր

1 St’u Lawrence L. Langer, *Holocaust Testimonies: The Ruins of Memory* (New Haven: Yale University Press, 1991); Ronald J. Diller, *From Darkness to Light: Testimonies of Six Holocaust Survivors* (Boston: Academic Studies Press, 2020); Josey G. Fisher, *The Persistence of Youth: Oral Testimonies of the Holocaust* (New York: Greenwood Press, 1991); Petra M. Schweitzer, *Gendered Testimonies of the Holocaust: Writing Life* (Lanham: Lexington Books, 2016):

2 St’u Donald E. Miller, Lorna Touryan Miller, *Survivors: An Oral History of the Armenian Genocide* (Berkeley: University of California Press, 1999); Վերծինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն: Ականաչներ վերապրողների վկայություններ* (Երևան, «Գիտություն», 2000): Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ծողովածու, հայրոր I. Վանի նահանգ, հայրոր II. Բիթլիսի նահանգ, հայրոր III. Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, կազմողներ՝ Ամատունի Վիրաբյան և Գոհար Ավագյան, խմբ.՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012):

3 St’u Nkala Gugulethu, David Rodreck, “Oral History Sources as Learning Materials: A Case Study of Zimbabwe’s National University of Science and Technology,” *Oral History Journal of South Africa* 3, no. 2 (2015): 82:

պատմությունը պետք է դիտարկվի ոչ միայն որպես անձնական և ինքնակենսագրական նյութ, այլև որպես գործընթաց, որի ընթացքում անհատական փորձառությունը վերակերպվում է գիտական նյութի՝ հնարավորություն տալով այն համադրելու այլ սկզբնաղբյուրների հետ: Բանավոր պատմությունների մասնագետներն առանձնացնում են անձնական հիշողության ընտրողական կամ հատվածական բնույթը, անձնային և հանրային հիշողության «թուլացումը», փաստական անճշտությունները⁴: Ամերիկացի հետազոտող Յան Թ. Գրոսսն ընդգծում է, որ անձնական գրառումներն անհրաժեշտ է դիտարկել որպես փաստական նյութ, եթե դրանց հավաստիությունը հերքող համոզիչ փաստարկներ չկան: Նա այս մոտեցումը համարում է առավել հիմնավոր, քան բանավոր պատմության ուսումնասիրության մեջ կիրառվող այն սկզբունքը, որը ենթադրում է զգուշավոր թերահավատություն ցուցաբերել յուրաքանչյուր վկայության նկատմամբ մինչև դրա բովանդակության անկախ հաստատումը⁵: Նման մոտեցումն առավել կիրառելի է հատկապես այն դեպքերում, երբ ուսումնասիրվում են անցյալի ողբերգական իրադարձությունները, բռնությունների դրսևորումները, միկրոպատմությունները, այնպիսի երևույթներ, որոնց գիտական ըմբռնումը պահանջում է խորքային վերլուծություն մարդկանց կյանքի, փորձառության և ընկալումների վրա թողած ազդեցության տեսանկյունից: Բռնությունների հիշողությունները վկաների գիտակցության մեջ ավելի կայուն են, քան առօրյա հիշողությունները, և կարող են վերականգնվել նույնիսկ նկարագրված իրադարձություններից տասնամյակներ անց: Այս առումով բանավոր պատմությունը հանդես է գալիս որպես արժեքավոր հավելում պատմական սկզբնաղբյուրներին՝ հարստացնելով դրանց վերլուծական ներուժը⁶:

Պատմական ակնարկ

1988 թ. փետրվարի 20-ին Լեոնային Ղարաբաղի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում է ընդունում Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանի կազմից հանելու և Խորհրդային Հայաստանին միավորելու խնդրանքով դիմելու Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին և միջնորդելու ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ այդ հարցի դրական լուծման համար⁷: Այս որոշմանն Ադրբեջանում հաջորդեց հայկական ջարդերի ալիք: Հայերի և ադրբեջանցիների միջև առաջին խոշոր բախումը տեղի ունեցավ 1988 թ. փետրվարի 22-ին: Ի պատասխան ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշման՝ ադրբեջանցիների բազմահազարանոց ամբոխն Ադդամ քաղաքից շարժվեց

4 St' u Jehanne M. Gheith, Katherine R. Jolluck, "Introduction," in *Gulag Voices: Oral Histories of Soviet Incarceration and Exile* (New York: Palgrave Macmillan, 2011), 8-9; Glenn Whitman, *Dialogue with the Past: Engaging Students and Meeting Standards through Oral History* (Walnut Creek, CA: AltaMira Press, 2004), 23; Valerie Raleigh Yow, *Recording Oral History: A Guide for the Humanities and Social Sciences*, 2nd ed. (Lanham: AltaMira Press, 2005), 6:

5 St' u Jan T. Gross, "New Approaches to Sources" in *Neighbors: The Destruction of the Jewish Community in Jedwabne, Poland* (Princeton: Princeton University Press, 2001), 139-140:

6 St' u Jeffrey Veidlinger, "Conclusion," in *In the Shadow of the Shtetl: Small-Town Jewish Life in Soviet Ukraine* (Bloomington: Indiana University Press, 2013), 281:

7 St' u *Մոկկրական Ղարաբաղ օրաթերթ* (Մոկկանակերտ), 21 փետրվարի 1988, 1:

դեպի Ստեփանակերտ: Ասկերանի մոտ ոստիկանության ստորաբաժանումներին և հայ բնակիչներին հաջողվեց կանգնեցնել զայրացած ամբոխին, սակայն բախման հետևանքով վիրավորվեցին տասնյակ հայեր, և զոհվեց երկու աղբրեջանցի⁸:

Փետրվարի 26-ից Բաքվից մոտ 30 կմ հեռավորության վրա գտնվող արդյունաբերական Սումգայիթ քաղաքում սկիզբ առան հակահայկական ցույցեր: Սադրիչ ազդեցություն ունեցավ փետրվարի 27-ին ազգային հեռուստատեսությամբ և Բաքվի ռադիոյով ԽՍՀՄ գլխավոր զինվորական դատախազ Ալեքսանդր Կատուսևի ելույթը, որում հաղորդվում էր Ասկերանում տեղի ունեցած հայ-աղբրեջանական բախման հետևանքով երկու աղբրեջանցի զոհի մասին⁹: Փետրվարի 27-ի երեկոյան սկսվեցին բռնի գործողությունները քաղաքի հայ բնակչության նկատմամբ: Ջարդարարների հատուկ խմբերը ներխուժում էին նախապես նշանառված հայկական բնակարանները՝ իրականացնելով հայերի սպանություններ, խոշտանգումներ, ողջակիզումներ և բռնաբարություններ:

Փետրվարի 28-ի երեկոյան խորհրդային բանակային ստորաբաժանումները մտան Սումգայիթ՝ սկզբնապես չունենալով ջարդարարների հանդեպ զենք կիրառելու հրաման: Աղբրեջանական կողմից արձանագրվեցին հարձակումներ խորհրդային զինվորական ստորաբաժանումների վրա, որոնց հետևանքով վիրավորվեց 140 խորհրդային զինծառայող¹⁰: Միայն փետրվարի 29-ի երեկոյան բանակային ստորաբաժանումները դիմեցին վճռական գործողությունների, որոնց հետևանքով ջարդերը դադարեցին:

Սումգայիթյան ջարդերը լայն արձագանք գտան հայ իրականության մեջ՝ առաջին հերթին կապվելով 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության հետ¹¹: Դրանք դարձան 1988-1990 թթ. Աղբրեջանական ԽՍՀ-ում հայերի դեմ ուղղված զանգվածային և լայնածավալ հանցագործությունների շղթայի առաջին դրվագը: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները համարժեք իրավական և քաղաքական գնահատական չտվեցին Սումգայիթի ջարդերին՝ դրանք ներկայացնելով և որակելով որպես հասարակության «խուլիգանական տարրերի» իրականացրած գործողություններ, զանգվածային անկարգություններ: Պաշտոնական նման խոսույթը դրսևորվեց նաև սումգայիթյան ջարդերի դատավարական գործընթացում, ինչի հետևանքով ջարդերի կազմակերպիչները չբացահայտվեցին և չպատժվեցին: Նման դիրքորոշումը և անպատժելության մթնոլորտը խթանեցին Աղբրեջանում հակահայկական բռնությունների հետագա ծավալումը և շարունակականությունը:

8 Տե՛ս Գրայր Սլուբաբյան, Սյուն Զոլյան, Ագասի Արշակյան, *Сумгаит... Геноцид... Гласность?* (Երևան: Общество Знание, 1989), 11:

9 Ասկերանի մոտ տեղի ունեցած փոխհրաձգության հետևանքով զոհվածներից առնվազն մեկը սպանվել է աղբրեջանցի ոստիկանի կողմից (տե՛ս Александр Василевский, «Туча в горах», *Аврора* 10 (1988): 12):

10 Տե՛ս Владимир Гуров, «Вооруженные силы СССР в армяно-азербайджанском (Карабахском) вооружённом конфликте (1988-1991 гг.),» *Известия Самарского научного центра Российской академии наук* 14, no. 3 (2012): 110:

11 Տե՛ս Հարություն Մարության, *Հայ ինքնության պայքարագրությունը: Հայրոր 1. Ցեղասպանության իշխողությունը և Հարաբառյան շարժումը* (Երևան, «Գիտություն», 2009), 126-133:

Ատելության խոսքն ու հայերի ապամարդկայնացումը Սումգայիթի ջարդերին նախորդած ժամանակահատվածում

Ցեղասպանագիտական ուսումնասիրություններում ապամարդկայնացումը դիտվում է որպես զանգվածային սպանությունների կամ էթնիկ բռնությունների ուղղված նախապատրաստական գործընթաց: Ապամարդկայնացման դեպքում մարդկանց մի խումբ մյուս խմբին ընկալում, դիտարկում կամ վերաբերվում է որպես «ոչ մարդ» կամ «ավելի քիչ մարդ»¹²: Նման պատկերացումն առավել հնարավոր է դարձնում բռնությունը: Ապամարդկայնացումը հնարավորություն է տալիս առավելություն ունեցող խմբերին (advantaged groups) «բարոյապես տարանջատվելու» առավելություն չունեցող խմբերից (disadvantaged group), օտարելու նրանց՝ նպաստելով միջխմբային ազդեցիկ գործողություններին¹³:

«Genocide Watch»-ի առաջարկած հայտնի մոդելում ապամարդկայնացումը ցեղասպանության տասը փուլերից չորրորդն է¹⁴: Ըստ Գ. Սթենթոնի՝ ապամարդկայնացման փուլում մի խումբը մերժում է մյուս խմբի անդամների մարդկայնությունը և նրանց նույնացնում կենդանիների, վնասատուների, միջատների, վիրուսների կամ հիվանդությունների հետ: Ապամարդկայնացումը «հաղթահարում» է մարդասպանության նկատմամբ սովորական հակակրանքը¹⁵: Այն բռնության «նախերգանքն է», դեռ ավելին՝ խթանում է բռնի գործողություններն իրագործման ժամանակ և արդարացնում կամ ժխտում է բռնությունն այն գործադրելուց հետո¹⁶:

Բանավոր պատմությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հայերի դեմ ատելության խոսքը¹⁷ լայնորեն տարածված էր Սումգայիթի ջարդերին նախորդող շրջանում: Ականատես Ալեքսանդր Սարգսյանը¹⁸, խոսելով փետրվարի 28-ի հանրահավաքի մասին, վերհիշել է Սումգայիթի թատրոնի արտիստուհիներից մեկի խոսքերը.

12 Տե՛ս *The Routledge Handbook of Dehumanization*, edited by Maria Kronfelder (New York: Routledge, 2021), XVI:

13 Տե՛ս Emile Bruneau, Nour Kteily, “The Enemy as Animal: Symmetric Dehumanization during Asymmetric Warfare,” *PLoS ONE* 12 (7) (2017): 1:

14 Տե՛ս “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <https://www.genocidewatch.com/tenstages>, դիտվել է՝ 12.10.2025:

15 Տե՛ս նույն տեղում:

16 Տե՛ս Nick Haslam, “The Many Roles of Dehumanization in Genocide,” in *Confronting Humanity at its Worst: Social Psychological Perspectives on Genocide* (New York: Oxford University Press, 2019), 132:

17 «Ատելության խոսք» եզրույթի համապարփակ սահմանում չկա՝ պայմանավորված խոսքի ազատության իրավունքի և «ատելության խոսքի» սահմանազատման դժվարությամբ: Եվրախորհրդի Նախարարների խորհրդի 1997 թ. սահմանմամբ՝ «ատելության խոսքը» վերաբերում է այն բոլոր արտահայտություններին, որոնք տարածում, սաղորտ կամ խրախուսում են ռասայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմականությունը կամ ատելության այլ տեսակներ՝ հիմնված անհանդուրժողականության վրա (տե՛ս Council of Europe, “Committee of Ministers Recommendation 97 (20) of the Committee of Ministers to Member States on “Hate Speech” Adopted on 30 October 1997,” 107, https://www.coe.int/en/web/freedom-expression/committee-of-ministers-adopted-texts/-/asset_publisher/aDXmrol0vvsU/content/recommendation-no-r-97-20-of-the-committee-of-ministers-to-member-states-on-hate-speech-, դիտվել է՝ 12.10.2025):

18 Ծանոթյան տարեթիվը նշված չէ:

«....գլուխ կտրեցնք, գլուխ, արյուն թափեցնք: Մեր պապենական թշնամիները հայերն են»¹⁹: Նա նաև վկայել է, որ 1988 թ. փետրվարի 24-ին Ադրբեջանի հեռուստատեսությամբ ցուցադրված հաղորդման ժամանակ ադրբեջանցի մտավորականները հայերին անվանել են կապիկներ և ագռավներ²⁰: Վերապրող Ռոման Ղամբարյանը (ծնվ. 1954 թ.) պատմել է, որ ջարդերի ժամանակ իրենց տուն ներխուժել փորձող ջարդարարները դիմել են իրենց «հեռացնք այստեղից, հայ շներ» արտահայտությամբ²¹:

Հայերի նկատմամբ էթնիկ ատելության քարոզչությամբ աչքի են ընկել հատկապես Կապանի շրջանից Սումգայիթ տեղափոխված ադրբեջանցիները, որոնց ներկայությունն անմիջական կապ ունի սումգայիթյան ջարդերի կազմակերպական գործընթացի հետ: Համբարձում Գալստյանը²² իր հոդվածում փաստում է, որ 1988 թ. փետրվարի 15-25-ն ընկած ժամանակահատվածում Մեղրիի և Կապանի շրջաններից հարյուրավոր ադրբեջանցիներ կազմակերպված ձևով տեղափոխվել են Ադրբեջան²³: Հեղինակի տրամադրության տակ եղած նյութերից պարզվել է, որ Հայաստանից ժամանած ադրբեջանցիների ճնշող մեծամասնությանը հանրապետության ղեկավարությունը տեղավորել է Սումգայիթ քաղաքում, և հենց նրանք էլ դարձել են ջարդերի հիմնական հրահրողներն ու իրականացնողները²⁴: Այս առումով հատկանշական է 1988 թ. Բաքվի քաղկոմի առաջին քարտուղար Ֆուադ Մուսաևի վկայությունը, որը մեջբերված է Զարդուշտ Ալիզադեի²⁵ հուշագրությունում: Ֆ. Մուսաևը մասնավորապես նշել է. «Փետրվարի կեսերից Հայաստանից հարյուրավոր փախստականներ սկսեցին ժամանել Բաքու: Նրանք տեղաբաշխվեցին Ապշերոնի թերակղզու այն ավաններում, որոնք բնակեցված էին Հայաստանից եկած վերաբնակիչներով²⁶: Առավոտյան ավտոբուսներ ուղարկվեցին այնտեղ, փախստականներն ուղևորվեցին քաղաք, բայց նրանք գնացին բողոքելու ոչ թե Կենտրոնական կոմիտե, Նախարարների խորհուրդ և այլ մարմիններ, այլ բանվորական և ուսանողական հանրակացարաններ: Հայաստանում հայերի կողմից ճնշումների ու վիրավորանքների մասին նրանց պատմությունները մեծապես գրգռեցին ամբոլիսին: Ավտոբուսները տրամադրել էր Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղար Ջոհրաբ Մամեդովը, ով ինքը Հայաստանից վերաբնակեցված էր, Հեյդար Ալիևի կադրերից: Ես հասկացա, որ գործը տանում է դեպի ջարդ, և հրա-

19 Ալեքսանդր Սարգսյան, *Հին ու նոր վերքեր* (Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2013), 11-12:

20 Տե՛ս նույն տեղում, 5:

21 Տե՛ս *Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Книга первая*, отв. ред. Самвел Шахмурадян (Ереван: Армянский Фонд Культуры, 1989), 203:

22 Պատմաբան, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, 1990-1992 թթ.՝ Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:

23 Տե՛ս Համբարձում Գալստյան, *Հողվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ*, կազմող՝ Հարություն Մարության (Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2002), 446:

24 Տե՛ս նույն տեղում:

25 Ադրբեջանի 1988-1989 թթ. հասարակական-քաղաքական կյանքի ակտիվիստներից, «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության համահիմնադիր:

26 Ամենայն հավանականությամբ, խոսքը 1948-1953 թթ. Խորհրդային Հայաստանից Ադրբեջանում վերաբնակեցված ադրբեջանցիների մասին է:

մայեցի փակել այս գյուղերից դեպի քաղաք տանող բոլոր ճանապարհները: Հրամանը կատարվեց: Ավտոբուսները շարժվեցին դեպի Սումգայիթ՝ քիմիկոսների քաղաք՝ Բաքվից 25 կմ հեռավորության վրա: Փետրվարի 26-ին այնտեղ սկսվեց ջարդը»²⁷: Հետագոտող Արսեն Հակոբյանի կարծիքով՝ Կապանի ադրբեջանցիների թեման ուներ հստակ գաղափարախոսական և քաղաքական նպատակ, այն է՝ Սումգայիթի հայ բնակչության ջարդերից առաջ Կապանի՝ որպես Ղարաբաղյան շարժման քաղաքական հակակշռի ներկայացումը: Կապանի ադրբեջանցիներից «փախստականներ կերտելու միջոցով» այն վերածվեց նաև «երևակայական բռնության» օջախի՝ հանդես գալով որպես հակակշիռ Սումգայիթի ջարդերին²⁸:

Հայաստանի Կապանի շրջանից Սումգայիթ տեղափոխված ադրբեջանցիները ջարդերին նախորդած հանրահավաքների ժամանակ պատմել են Կապանում ադրբեջանցիների նկատմամբ իբրև թե գործադրված բռնությունների մասին²⁹: Ականատեսների վկայությամբ՝ հանրահավաքների ժամանակ նման պատմություններից հետո հայերի դեմ հնչող հիմնական կարգախոսներն էին՝ «Մահ հայերին», «Վռնդել հայերին ադրբեջանական հողերից», «Հայեր, հեռացե՛ք», «Սպանել հայերին», «Այրել հայերին», «Հայերն այստեղ չեն ապրի, այստեղ հայերին տեղ չկա», «Ողջո՛յն Ադրբեջան» և «Ողջո՛յն ադրբեջանցի սումգայիթցիներ»³⁰:

Սումգայիթի ջարդերից առաջ Կապանի ադրբեջանցիների սադրիչ դերակատարման մասին տեղեկություններ են պահպանվել ականատես վերապրողների վկայություններում: Իվան (Վանիկ) Վանյանը (ծնվ. 1940 թ.) պատմել է. «Ես միանշանակ վստահ եմ, որ սումգայիթյան ցեղասպանությունը կազմակերպված էր: Նախորդ օրը քաղաքում այս մասին շատ էին խոսում: Աշխատանքի ժամանակ խոսակցություններ լսեցի, որ մի քանի հարյուր ադրբեջանցիներ Կապանից եկել են Այշերոն, որի առաջին քարտուղարը Կապանից էր: Հարցին, թե ինչու են եկել, նրանք պատասխանեցին, թե իբր հայերն են վռնդել: Նրանց երկու ավտոբուսով ուղարկել են Սումգայիթ: Նրանք հասան քաղկոմիտե, առաջին քարտուղար Մուսլիմգադեն դուրս եկավ նրանց մոտ և հարցրեց, թե ինչ են ուզում:Նրանք Մուսլիմգադենին ասացին, որ ուզում են հանրահավաքներ կազմակերպել և հայտարարել, որ Ղարաբաղը պատկանում է ադրբեջանցիներին, և իրենք չեն հրաժարվի դրանից:Նրանք խաբելով իրենց ետևից տարան երիտասարդների, ուղղակի փող տվեցին նրանց, Ադրբեջանի դրոշը

27 Зардушт Ализаде, “Азербайджанская элита и массы в период распада СССР (Статья-мемуары о бурном времени),” https://web.archive.org/web/20131030014402/http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_0055.htm, դիտվել է՝ 12.10.2025:

28 Տե՛ս Արսեն Հակոբյան, ««Ղափանի դեպքերի» առասպելը նախասումգայիթյան, սումգայիթյան և հետսումգայիթյան զարգացումներում», *Լրաբեր հասարակական գիտությունների* 2 (2024), 63-95:

29 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга первая*, 103-104, 154, 186, 384: Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1159, ց. 8, գ. 12, թ. 18:

30 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга первая*, 103, 186, 225, 227, 294, 312, 386, 399, 417; *Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Книга вторая* (Երևան: Центр общественных связей и информации аппарата президента РА, 2015), 7, 30, 55, 67, 71, 103, 108, 109, 111, 112, 113, 118, 130, 146, 156; ՀԱԱ, ֆ. 1159, ց. 8, գ. 12, թթ. 18, 20, 26, 31; *Сумгаит. Говорят свидетели-азербайджанцы* (Երևան: Центр общественных связей и информации аппарата президента РА, 2018), 16, 29, 41, 55:

տվեցին և սկսեցին հանրահավաքներ ու ցույցեր կազմակերպել ամբողջ քաղաքում: Հետո սկսվեց ցեղասպանությունը: Ամեն ինչ նախապես պատրաստված էր»³¹:

Սումգայիթի նախկին բնակիչներից Ա. Ղ.-ն (ծնվ. 1973 թ.) հարցազրույցի ժամանակ նշել է իր՝ ազգությամբ լեզգի ուսուցչուհու մասին, ով պատմել է Կապանից վերափոխվող տեսքով մի քանի աղբյուրներից աղբյուրների մասին: Վերջիններս հայտարարում էին, որ հայերը Կապանում սպանել են աղբյուրներից, իրենք մի կերպ են փրկվել, մինչդեռ Սումգայիթում հայերն ապրում են բարեկեցիկ կյանքով³²: Ազգությամբ վրացի Կոնստանտին Պխակադեն (ծնվ. 1957 թ.) փետրվարի 26-ին անձամբ ներկա է եղել Սումգայիթի Լենինի անվան հրապարակում կազմակերպված հանրահավաքին: Վերջինս պատմել է. «Ելույթ ունեցողների մեջ առանձնացրի մեկին, որին ինձ համար պայմանականորեն կոչում էի Առաջնորդ: Նա ելույթ էր ունենում աղբյուրներից: Ելույթի իմաստը հետևյալն էր. «Մուսուլմաններ, ես եկել եմ Կապանից, ինձ հետ եկել են իմ հայրենակիցները: Կապանում սպանվել են կոնցս եղբայրը, կոնցս հայրը, մայրս և իմ ընկերներից ու հարազատներից մի քանիսը»: Նա այնտեղ էլ ինչ-որ բան թվարկեց.... Նա ասում էր. «Ընկերներ, մենք մնացել ենք առանց տան, առանց տանիքի»: Նրա ելույթներից կարելի էր անել հետևյալ եզրակացությունը՝ վոնդել հայերին աղբյուրներից հողից, որպեսզի ազատվեն բնակարաններ»³³: Պխակադենի հաղորդմամբ՝ հաջորդ օրը՝ փետրվարի 27-ին՝ հանրահավաքի ժամանակ, նույն աղբյուրներից ելույթ է ունեցել՝ այս անգամ հայտարարելով, որ Կապանում հայերը ներխուժել են աղբյուրներից աղբյուրների հանրակացարան, բռնաբարել աղբյուրներին և կտրել նրանց կրծքերը: Պխակադեն այդ տեղեկություններն արժանահավատ չի համարել, քանի որ, ըստ նրա, անբարո կանանց կրծքերը կտրելը «մաքուր մուսուլմանական տարրերակ է»³⁴: Այդ օրը Կապանից եկած աղբյուրներից իր ելույթն ավարտել էր «վոնդել հայերին աղբյուրներից հողերից», «մահ հայերին» կոչելով: Նրա ելույթում հնչել է նաև «արյուն՝ արյան դիմաց» արտահայտությունը³⁵:

Ականատես Լյուդմիլա Գրիգորյան (ծնվ. 1959 թ.), ով նույնպես ներկա է եղել փետրվարի 27-ի հանրահավաքին, վերհիշել է, որ հրապարակում «բարձրախոսներով հայտարարում էին, թե ինչ էր կատարվում այդ օրերին Կապանում, թե ինչպես են վերջերս ինչ-որ մի շրջան գնացող ավտոբուսից դուրս նետել փոքրիկ աղբյուրներից երեխայի»³⁶: Այս մի կին, որը ներկայացել է որպես Կապանի բնակչուհի, հայտարարել է, որ հայերը կտրել են իր աղբյուրների կրծքերը, և կոչ արել վրեժխնդիր լինելու նրանց համար. «Դա բավական էր: Հրապարակում գտնվողների մի մասը ճիշերով վազեց

31 *Сумгаитская трагедия, Книга вторая*, 22-23.

32 Ա. Ղ., բնակվող պատմության հարցազրույց, 2024 թ. փետրվարի 11, Երասխ գյուղ. հարցազրույցավարներ՝ Շուշան Խաչատրյան և Գայանե Հովհաննիսյան, տպագրված բնակվող պատմություն, հետազոտական ծրագիր № 22YR-6A033, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, Հայաստան:

33 *Сумгаитская трагедия, Книга первая*, 101.

34 Նույն տեղում, 103:

35 Տե՛ս նույն տեղում:

36 Նույն տեղում, 185:

դեպի գործարանները, որտեղ սկսվում է Լենինի փողոցը»³⁷: Լյուդմիլա Գրիգորյանն ասն շեշտել է, որ իրենց տուն ներխուժած ադրբեջանցիների մեջ եղել են Հայաստանից եկած ադրբեջանցիներ, որոնք շատ լավ տիրապետում էին հայերենին³⁸:

Սումգայիթ տեղափոխված ադրբեջանցիների՝ Խորհրդային Հայաստանում իրենց նկատմամբ իբրև թե գործադրված բռնությունների մասին պատումների համատեքստում հատկանշական է Բորիս Համբարձումյանի (ծնվ. 1953 թ.) վկայությունը: Վերջինս վերհիշում է Կապանի շրջանի Ձագեձոր գյուղից Իսմայիլ անունով մի ադրբեջանցու պատմությունը, որը, հայրենակիցներից լսելով իր կնոջ գերեզմանի պղծման լուրը, անձամբ այցելել է Հայաստան՝ ստուգելու դրա հավաստիությունը: Տեղում համոզվելով, որ գերեզմանը պահպանվել է, և վանդալիզմի որևէ դրսևորում չի արձանագրվել, նա հրապարակայնորեն արտահայտել է իր վրդովմունքը և բարձրաձայնել իր մտադրությունը՝ պատժելու Ադրբեջանում նման կեղծ ու սադրիչ լուրեր տարածողներին³⁹:

Այսպիսով՝ Սումգայիթի ջարդերը վերապրած ականատեսների վկայություններից պարզ է դառնում, որ Հայաստանի Կապանի շրջանից Սումգայիթ տեղափոխված ադրբեջանցիները Կապանում իրենց նկատմամբ իբրև թե գործադրված բռնությունների վերաբերյալ կեղծ լուրերով սերմանել են էթնիկ ատելություն քաղաքի հայ բնակչության նկատմամբ:

Ջարդերի նախապատրաստական աշխատանքները. հայերի բնակության վայրերի ցուցակների կազմումը

ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների կողմից սումգայիթյան ջարդերը ներկայացվեցին և որակվեցին որպես «մի խումբ խուլիգանական տարրերի իրագործած զանգվածային անկարգություններ»⁴⁰: Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստում, պատասխանելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, Խորհրդային Հայաստանի գրողների միության վարչության նախագահ Վարդգես Պետրոսյանին, հայտարարեց. «Սումգայիթում վայրագություններ են կատարել հասարակության թափափուկները: Պարզվել է, թե ովքեր են դրանք: Ցեղասպանությունը որևէ ժողովրդի կամ փոքրամասնության նկատմամբ գիտակցաբար վարվող ոչնչացման քաղաքականություն է: Ինչո՞ւ եք Դուք ուզում հանցագործների արարքը վերագրել ամբողջ Ադրբեջանին: Ի՞նչ ցեղասպանության մասին կարելի է խոսել»⁴¹: Այսպիսով՝ Գորբաչովը մերժում էր

37 Նույն տեղում:

38 Տե՛ս նույն տեղում, 154:

39 Բորիս Համբարձումյան, բանավոր պատմության հարցազրույց, 2024 թ. հուլիսի 30, Լեոնաձոր գյուղ. հարցազրույցավարներ՝ Հայկ Հակոբյան, Շուշան Խաչատրյան, տեսագրություն 6 մասից (տեսանյութ № 1066), հետազոտական ծրագիր № 22YR-6A033, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, Հայաստան:

40 “Сообщение,” *Известия* (Москва), 1 марта 1988, 2.

41 «ՄՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը», *Գրական թերթ* շաբաթաթերթ, 22 հուլիսի 1988, 1:

ջարդերի ցեղասպանական բնույթի որակումները՝ շեշտադրելով դրա համար անհրաժեշտ նախապես կազմակերպված և ծրագրված գործողությունների բացակայությունը:

Սումգայիթի ջարդերի ականատեսների և վերապրածների վկայություններում պահպանվել են տեղեկություններ ջարդերին նախորդած շրջանում որոշակի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Վկայություններում ուրվագծվում են նաև այդ աշխատանքների հիմնական ուղղությունները: Դրանցից առաջինը քաղաքի հայերի բնակության վայրերի ցուցակների կազմումն էր: Իվան (Վանիկ) Վանյանը, որը ջարդերից հետո երեք ամիս ապրել է Սումգայիթում, հաղորդում է, որ նախապես պատրաստվել էր հայերի բնակության հասցեների ցուցակը, և այդ մասին իրեն պատմել են Սումգայիթի աղբրեջանցիները⁴²: Ականատեսներից ոմանք վկայել են ջարդերից առաջ իրենց բնակարաններ տնային կառավարչության աշխատակիցների այցերի մասին: Մասնավորապես Վրեժ Հայրյանը (ծնվ. 1964 թ.) վերհիշում է. «Մի օր ես տուն եկա՝ ճաշելու: Դուռը թակեցին, մայրս (նա հիվանդ է, թոշակառու) դուռը բացեց, ես էլ նստած ճաշում էի: Մի երիտասարդ տղա, կարծես փոքր-ինչ ամաչելով, հարցնում է. «Ձեր ծխնելույզն աշխատո՞ւմ է, թե՞ ոչ. ես տնային կառավարչությունից եմ, ստուգում ենք»: Մայրս ասաց. «Այո՛, աշխատում է, բայց ի՞նչ է պատահել»: Նա ասում է. «Ոչինչ: Ասե՛ք Ձեր ազգանունը, անունը, հասցեն, և վերջ»:Արդեն դեպքերից հետո բազմաթիվ հայեր ակումբում կիսվեցին միմյանց հետ, և պարզվեց, որ իրենց մոտ էլ են եկել, պարզել, հարցրել: Կային մարդիկ, ովքեր բնակարանային գրասենյակներում տեսել էին պատրաստի ցուցակներ»⁴³: Լուսիկ Հարությունյանը (ծնվ. 1952 թ.), խոսելով ջարդերի նախապես կազմակերպված լինելու հարցի շուրջ, նույնպես վկայել է քաղաքի հայերի բնակության վայրերի ցուցակների կազմման մասին: Ըստ նրա՝ այցերը հիմնականում իրականացվել են աշխատավարձից բնակարանի վարձավճարի պլանային նվազեցման պատրվակով: Նրա վկայությամբ՝ ջարդերից 10-15 օր առաջ որպես տնային կառավարչության աշխատակից ներկայացած երիտասարդը հայտնել է, թե իբր աշխատավարձի վարձավճարների առաջիկա պահումների առնչությամբ կազմում են վարձակալների ցուցակներ: Լուսիկը տվել է իր ամուսնու ազգանունը և տան հասցեն⁴⁴: Նույն պատճառաբանությամբ տնային կառավարչության աշխատակիցներն այցելել են նաև այլ հայերի բնակարաններ⁴⁵: Այսպես՝ Դանիելյան Յուրին (ծնվ. 1930 թ.) հիշում է. «Ջարդերից մեկուկես ամիս առաջ մեր տուն եկան երկու երիտասարդ՝ ցուցակը ձեռքներին: Նրանք գրանցեցին ընտանիքի բոլոր անդամներին՝ ասելով, որ դա անհրաժեշտ է ընտրությունների համար: Մենք նրանց կասկածեցինք միայն գողության առումով: Այդ տղաների գնալուց հետո մենք հարևաններին հարցրինք՝ արդյոք այս տղաները գնացել են իրենց տներ: Պարզվեց, որ աղբրեջանցիների մոտ ոչ ոք չի գնացել ու չի գրանցել, իսկ ասիա բոլոր հայերին գրանցել էին: Բայց ոչ

42 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга вторая*, 23:

43 Նույն տեղում, 26:

44 Տե՛ս նույն տեղում, 69:

45 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1159, ց. 8, գ. 12, թ. 35:

մի ընտրություն ոչ եղել էր և ոչ էլ նախատեսված էր: Արդյոք սա հարձակման մանրակրկիտ պատրաստության փա՛ստ չէ»⁴⁶:

Ականատես Էլմիրա Բարսեղյանը (ծնվ. 1939 թ.) վկայում է. «Ես ինքս լսել եմ, թե ինչպես է թիվ 2 տնային կառավարչության անձնագրային բաժնի աշխատակից Արևհատը պատմում, որ փետրվարի 28-ին՝ կիրակի, իրեն կանչել են աշխատանքի, և իր ղեկավարը հանձնարարել է գրել այդ տարածքում ապրող հայերի հասցեներն ու անունները: Նա դա կատարել է և տվել է ցուցակները: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ»⁴⁷: Վերապրող Վլադիմիր Բալույանը (ծնվ. 1958 թ.) հիշում է, որ ջարդարարներն ունեին հայերի բնակության հասցեների ցուցակը և, ըստ դրա, ներխուժում էին բնակարաններ. «Ես անձամբ տեսել եմ, թե ինչպես էր նրանցից մեկը նման ցուցակով առջևից քայլում և կարդում՝ ահա այսինչ մուտքի այսինչ հարկում հայ է ապրում: Այնուհետև բաժանվում էին մուտքերով, օրինակ՝ իմանալով, որ երկրորդ հարկում հայկական բնակարան կա, այնտեղ ուղարկում էին 20-25-հոգանոց խումբ»⁴⁸:

Այսպիսով՝ ականատեսների վկայությունները փաստում են, որ Սումգայիթի ջարդերին նախորդած շրջանում տարբեր պատրվակներով (աշխատավարձից բնակարանի վարձավճարի պլանային նվազեցում, տնային կառավարչությունների «ստուգացեր») իրականացվել է քաղաքի հայերի բնակության վայրերի ցուցակների կազմումը: Այդ ցուցակները ջարդերի ժամանակ օգտագործվել են հայերի բնակարանները հեշտությամբ հայտնաբերելու և հարձակումներ իրականացնելու համար:

Հատուկ պայմանանշանների կիրառումը սումգայիթյան ջարդերի ժամանակ

Սումգայիթյան ջարդերի մասին բանավոր պատմությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ օրերին ադրբեջանցիները կիրառել են հատուկ պայմանանշաններ, որոնցից է, օրինակ, ադրբեջանական բնակարաններում լույսը միացրած թողնելը: Ալեքսանդր Ավագյանը (ծնվ. 1959 թ.) իր վկայությունում նշել է. «Նրանք [ադրբեջանցիները – Գ. Հ.] օգտագործել են գաղտնաբառերի տեսակներ. երբ փոքրինչ մթնում էր, ադրբեջանական բնակարաններում միացնում էին լույսերը»⁴⁹: Ռոման Ղամբարյանը (ծնվ. 1954 թ.) վերհիշում է, որ իրենց տան վրա հարձակման ժամանակ իրենք անջատել էին լույսը. «Պարզվում է՝ նրանց [ադրբեջանցիների – Գ. Հ.] ազդանշանը հակառակն է եղել՝ լույսը վառելը: Սա նշանակում էր, որ այս տներում ադրբեջանցիներ են ապրում: Մենք, իհարկե, դա չգիտեինք և մտածում էինք, որ եթե լույս տեսնեն, կգան բնակարան»⁵⁰: Զինաիդա Հակոբյանը (ծնվ. 1937 թ.) պատմում է, որ հարևան ադրբեջանցիներն իրենց խորհուրդ էին տվել միացնելու բնակարանի լույսը, որպեսզի ջարդարարները կարծեն, որ այնտեղ ադրբեջանցիներ էին ապրում⁵¹:

46 *Сумгаитская трагедия, Книга вторая*, 46.

47 Նույն տեղում, 113-114:

48 Նույն տեղում, 52:

49 Նույն տեղում, 42:

50 *Сумгаитская трагедия, Книга первая*, 199.

51 Տե՛ս նույն տեղում, 264:

Ադրբեջանական հաջորդ պայմանական նշանը մեքենաների ազդանշանների միացումն էր: Այս պայմանանշանը կապված էր ճանապարհներին հայերին պատկանող ավտոմեքենաները կանգնեցնելու և նրանց բռնության ենթարկելու հետ: Արկադի Ավանեսյանը (ծնվ. 1936 թ.) վերհիշում է. «Կարող եմ ասել, որ ադրբեջանցիների գործողությունները նախապես ծրագրված էին: Մեքենաները, որոնց մեջ նստած էին ադրբեջանցիներ, փողոցներով շրջում էին ազդանշանով, և այդ մեքենաներին ջարդարարները թողնում էին անցնել»⁵²: Վլադիմիր Բալումյանը, խոսելով ջարդերի նախապատրաստական աշխատանքների մասին, պատմում է. «Նրանք ընդհանրապես տարբեր նշաններ էին մտածել: Օրինակ՝ նրանք կանգնում էին ճանապարհներին ու կանգնեցնում մեքենաները: Եթե դեկին հայ էր լինում, հասնում էին նրան մեքենայից, ծեծում, սպանում, եթե ադրբեջանցի էր, բացատրում էին, որ քաղաքում պետք է շրջել ազդանշանով, հակառակ դեպքում կարող են մտածել, որ դեկին հայ է: Նաև ձեռք էին բարձրացնում. նման նշան ևս կար»⁵³: Ավտոմեքենաների ազդանշանների մասին վկայել է նաև Ալեքսանդր Ավագյանը: Վերջինս նշում է, որ «մարդատար մեքենաների վարորդները երեք անգամ ազդանշան են տվել կամ ձեռքն են պարզել մեքենայի պատուհանից»⁵⁴:

Կարինա Դանիելյանը, ով աշխատում էր Սումգայիթի պոլիմերային գործարանում, պատմում է, որ իրեն փետրվարի 27-ին աշխատավայրից ուղարկել են տուն. «Հենց դուրս եկանք գործարանի տարածքից, նկատեցի, որ վարորդն սկսեց ազդանշան տալ. ձեռքը հանեց պատուհանից ու սկսեց թափահարել: Ես հասկացա, որ սա պայմանական նշան էր, քանի որ ջարդարարները ձեռք չտվեցին մեր մեքենային: Նրանք կանգնել էին ճանապարհներին՝ զինված բահերով, երկաթե լինգերով ու քարերով»⁵⁵: Իրինա Գուրգենի Մելքումյանը (ծնվ. 1960 թ.), որի ընտանիքի հինգ անդամներ զոհվել են ջարդերի ժամանակ, ևս հաստատում է, որ ադրբեջանցիների հատուկ պայմանանշաններից էր ձեռքը մեքենայից հանելն ու ազդանշան տալը⁵⁶: Վանյա Բազյանը (ծնվ. 1940 թ.), ով փետրվարի 29-ին ադրբեջանցու անվան ներքո գործուղումից վերադարձել էր Սումգայիթ, պատմում է. ««Կովկաս» խանութի մոտ չհասած՝ վարորդն սկսեց ձեռքը թափահարել: Եվ ահա բոլորն սկսեցին թափահարել: Ես, նրանց մեջ նստած, նույնպես սկսեցի թափահարել: Ես հասկացա՝ դա նշան է, որ մեր մեջ հայեր չկան»⁵⁷:

Էլմիրա Բարսեղյանի վկայությամբ՝ փետրվարի 29-ին աղջկան հյուր գնալիս կանգառում հանդիպել է մոտ 60 տարեկան կարճահասակ մի տղամարդու, ով հրապարակայնորեն կոչ էր անում սպանելու հայերին: Վերջինս իր քարոզչությունը շարունակել է նաև երթուղային ավտոբուսում: Կանանց այն հարցին, թե ինչպես պետք է տարբերել հայերին, տղամարդը պատասխանել է, որ կան հատուկ «գաղտնաբառեր». «Առաջին, – ասել է նա, – պետք է ունենալ անձնագիր: Երկրորդ՝ նրանք, ովքեր մեքենայով

52 *Сумгаитская трагедия, Книга вторая*, 51.

53 Նույն տեղում, 52:

54 Նույն տեղում, 42:

55 Նույն տեղում, 71:

56 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга первая*, 403:

57 Նույն տեղում, 221-222:

են, պետք է միացնեն լապտերիկները և մեկ ազդանշանին պատասխանեն երեք ազդանշանով: Երրորդ՝ հային ադրբեջանցուց կարելի է տարբերել «ֆընդըխ»⁵⁸ (ընկույզ) բառի արտասանությամբ. հայերն արտասանում են «փընդըխ»⁵⁹, իսկ ադրբեջանցիները՝ «ֆընդըխ»⁶⁰:

Այսպիսով՝ վերապրածների պատմություններից պարզ է դառնում, որ Սումգայիթի ջարդերի ընթացքում քաղաքի հայ բնակիչներին հայտնաբերելու նպատակով կիրառվել են նախապես սահմանված հատուկ պայմանանշաններ:

Հանցագործության գործիքների պատրաստումը, ոգելից խմիչքների և հոգեմետ նյութերի բաժանումը

Սումգայիթի ջարդերի նախապատրաստական աշխատանքների մասին փաստում են նաև նախապես հանցագործության գործիքների պատրաստումը, ջարդարարների շրջանում ոգելից խմիչքների և հոգեմետ նյութերի բաժանումը: Վրացի Կոնստանտին Փխակադձեն, լինելով հրապարակում՝ հայերի տարհանման կետի մոտ, խորհրդային բանակի զինվորներից հետաքրքրվել էր. «Տղաներ, ինչո՞ւ եք դուք զրահաբաճկոնով: Նրանք ինձ ասացին, որ հավաքել են մեծ քանակությամբ զենք և նույնիսկ երեք հրացան՝ «գադտի» գրառմամբ»⁶¹: Վրեժ Հայրյանը պատմում է. «....միայն մեկ խումբ չէր, որ սկսեց տներ կողոպտել ինչ-որ տեղ մի վայրում: Նման խմբեր եղել են քաղաքի շատ շրջաններում և սկսել են անմիջապես միաժամանակ:Բացի այդ՝ նրանք զինված էին, շատերը՝ ամրաններով, կացիններով, դանակներով, և նույնիսկ հրազեն ունեին»⁶²: Ալեքսանդր Ավագյանի վկայությամբ՝ ջարդարարների հիմնական զինատեսակներն էին խոհանոցային դանակները, ամրանները՝ 50-60 սմ երկարությամբ, տարբեր կազմաձևերով լինգերը, կացինները⁶³:

Ազգությամբ հույն Պանտելեյ Մելիքովը (ծնվ. 1968 թ.), ով 1988 թ. որպես զինծառայող Սումգայիթում էր, հիշում է. «Նրանք [ջարդարարները – Գ. Հ.] ունեին նույն զենքերը, ինչ մենք՝ գնդացիր, հրացան, ինչպես նաև որսորդական հրացան, ինքնաշեն զենք: Նրանք նման չէին ամբոխի, նրանց գործողություններում կազմակերպվածություն կար»⁶⁴: Ըստ Գումաշ Հարությունյանի (ծնվ. 1929 թ.)՝ ջարդարարների մեծ մասը 30-35 տարեկան տղամարդիկ էին: Նրանց շարքերում կային նաև դեռահասներ, որոնք «իրենց ակտիվությամբ հետ չէին մնում մեծերից»⁶⁵:

58 Ռուսերեն բնագրում՝ «фндых»:

59 Ռուսերեն բնագրում՝ «пндых»:

60 Ռուսերեն բնագրում՝ «фндых»: *Сумгаитская трагедия, Книга вторая*, 112.

61 *Сумгаитская трагедия, Книга первая*, 110.

62 *Сумгаитская трагедия, Книга вторая*, 27.

63 Տե՛ս նույն տեղում, 42:

64 Նույն տեղում, 47:

65 Նույն տեղում, 132:

Իրինա Վահրամովան⁶⁶ պատմում է, որ ջարդարարների ձեռքին եղել են դանակներ, կացիններ, երկաթե ձողեր, փայտեր⁶⁷: Էլմիրա Բարսեղյանը հիշում է. «....երբ ապրում էինք Նաստսի գյուղի⁶⁸ գորամասում, մեզ մոտ եկավ խողովակագլանման գործարանի ներկայացուցիչը և համոզեց մարտի 9-ին վերադառնալ աշխատանքի: Ես հարցրի այդ մարդուն. «Ո՞ր էիք դուք, երբ հայերին ծեծում էին երկաթե ամրաններով, և ընդհանրապես ինչպե՞ս են այդ ամրանները հասել ջարդարարներին»: Նա ասաց, որ ամրանները բաժանել են կոմերիտականներին, որպեսզի նրանք պաշտպանեն հայ բնակչությանը: Իր խոսքերը հաստատելու համար նա կանչեց միջին տարիքի մի տղամարդու, որն այդ օրերին ապրում էր մեզ հետ Նաստսիում.... Այս մարդն ասաց, որ, իրոք, ամրանները բաժանել են կոմերիտականներին՝ պաշտպանելու համար: Բայց ով է դրանք պատրաստել և ում հանձնարարությամբ՝ նա չկարողացավ ասել: Ոչ մի կոմերիտական այդ օրերին հայ բնակչությանը չէր պաշտպանում....»⁶⁹: Հատկանշական է, որ նախքան ջարդերը Սումգայիթում պատրաստված գործիքների մասին հիշատակվում է նաև Սումգայիթի քաղաքային կուսկոմի 1988 թ. մայիսի 10-ի նիստում: Այն դատապարտել է քաղաքի խողովակագլանվածքային գործարանի ղեկավարությանը և աշխատակազմերին այն բանի համար, որ «նրանք ծանր իրավիճակների օրերին գործարանի արտադրամասերում պատրաստել են կացիններ, դանակներ և այլ իրեր, որոնք կարող էին օգտագործվել խուլիգանական տարրերի կողմից»⁷⁰:

Ակնատեսներից ոմանք վկայում են նաև ջարդարարներին բաժանված հոգեմետ ազդեցության նյութերի մասին: Մասնավորապես Իրինա Աղապյանը (ծնվ. 1965 թ.) տեսել է ջարդարարների առջևից գնացող մի մեքենա, որում նստած մարդիկ ամբոխին բաժանում էին հարեր և թմրանյութ⁷¹: Ջարդարարներին անձամբ տեսած Անժելա Եղանյանը⁷² և Վալենտինա Շագայանցը (ծնվ. 1962 թ.) վկայում են, որ նրանց բնութագրական էր թմրանյութի ազդեցության տակ գտնվողների վարքը⁷³: Կարինե (Կարինա) Գրիգորյանն (ծնվ. 1964 թ.) նշում է, որ իրենց բնակարան ներխուժածները թմրանյութ էին ծամում⁷⁴: Ռոման Ղամբարյանը (ծնվ. 1954 թ.) պատմում է, որ ջարդերից հետո իմացել է, որ ավտոկայարանի մոտ ամբոխին անվճար օղի և թմրանյութ են բաժանել⁷⁵: Յուրի Մուսաելյանի (ծնվ. 1953 թ.) վկայությամբ՝ ջարդերի օրերին Նարիմանովի փողոցում՝ քաղկոմի հարևանությամբ, նկատվել է բեռնատար մեքենա: Մեքենայից բեռնաթափել են օղիով լի արկղեր: Մեքենայի թափքում եղել է 2, իսկ ներքևում՝ 15-20

66 Ծննդյան տարեթիվը նշված չէ:

67 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга вторая*, 55:

68 Նաստսի – գյուղ Սումգայիթ քաղաքի վարչական կազմում, այժմ կոչվում է Հաջի Զեյնալարդին:

69 *Сумгаитская трагедия, Книга вторая*, 114.

70 “Сумгаит: выдержки из публикаций в прессе,” https://karabakhrecords.info/publication_citations_pressa.html, դիտվել է՝ 12.10.2025:

71 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга вторая*, 89:

72 Ծննդյան տարեթիվը նշված չէ:

73 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга вторая*, 85, *Сумгаитская трагедия, Книга первая*, 89:

74 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга первая*, 131:

75 Տե՛ս նույն տեղում, 204:

մարդ: Անմիջապես մեքենայի կողքին մի մարդ բաժանել է թմրանյութի փաթեթներ⁷⁶:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ, ականատեսների վկայությունների համաձայն, Սումգայիթի հայ բնակչության ջարդերն իրականացնողները նախապես ունեցել են հանցագործության կատարման համար անհրաժեշտ տարբեր տեսակի գործիքներ, իսկ ջարդերի օրերին նրանց տրամադրվել են հոգեմետ նյութեր և ոգելից խմիչքներ՝ ագրեսիվ վարքագծի խթանման նպատակով:

Ոստիկանության և շտապօգնության հանցավոր անգործությունը/մասնակցությունը ջարդերին

Սումգայիթի ջարդերի ականատեսների վկայությունները թույլ են տալիս բացահայտել որոշակի օրինաչափություններ ջարդերի օրերին քաղաքի ոստիկանական և շտապ բուժօգնության ծառայության գործողությունների առումով: Ականատես Իվան Վանյանը նշում է, որ ջարդարարների առաջին հարձակումից հետո զանգահարել է ոստիկանություն, որտեղից պատասխանել են. «Մենք ամեն ինչ գիտենք: Մի փորձեք նրանց դիմադրել»⁷⁷: Պանտելեյ Մելիքովը պատմում է. «Ոստիկանությունը չէր միջամտում... Շատ ոստիկաններ քայլում էին ամբոխի հետ. դա ես անձամբ եմ տեսել»⁷⁸: Վլադիմիր Բալույանի վկայությամբ՝ իր մայրը տեսել է, թե ինչպես են ոստիկանները թալանում հարձակման ենթարկված հայի բնակարանը⁷⁹: Իրինա Աղասյանի վկայությամբ՝ ջարդարարների հետ քայլում էին նաև ոստիկանության աշխատակիցներ, որոնք ամեն կերպ աջակցում էին ցուցարարներին⁸⁰: Բարմեն Բեդյանը (ծնվ. 1935 թ.), ջարդարարների կողմից ծեծի ենթարկվելուց հետո հանդիպելով ոստիկանական մեքենայի, մտածել է, որ այն հավանաբար ցանկանում է փրկել իրեն. «Ես բռնեցի բռնակից և ուզում էի բացել, բայց մեքենան այնքան ուժեղ տեղից պոկվեց, որ ես քիչ էր մնում ընկնելի:Մեքենան գնաց, և ես նորից վազեցի»⁸¹:

Ոստիկանության գործողությունների մասին Կոնստանտին Պխակադձեն պատմում է. «Ոստիկանությունը մասնակցել է ամեն ինչին և օգնել այդ ավազակներին ու մարդասպաններին: Այդ մասին է վկայում և այս փաստը, որին ես ականատես եմ եղել Լենինի հրապարակում: Աչքերիս առաջ մայորը «շաբաշնիկներից»⁸² մեկին օձիքից բռնած տարավ: Դա մարտի 2-ն էր: Նա այս ավազակին բերեց տեղացի ոստիկանների մոտ և ասաց. «...Ես երրորդ անգամն եմ այդ սրիկային բռնում և երրորդ անգամ զինված»: Ինչ է դա նշանակում: Զինվորականները նրանց բռնում էին, իսկ ոստիկանությունը՝ ազատ արձակում. ոստիկանությունը համագործակցում էր այդ

76 Տե՛ս նույն տեղում, 226-227:

77 *Сумгаитская трагедия, Книга вторая*, 16.

78 Նույն տեղում, 48:

79 Տե՛ս նույն տեղում, 54:

80 Տե՛ս նույն տեղում, 89:

81 *Сумгаитская трагедия, Книга первая*, 51.

82 Ռուսերեն բնագրում՝ «шабашник»: Մարդիկ, ովքեր կատարում են շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ՝ հավելյալ եկամուտ ստանալու նպատակով:

«շաբաշնիկների» հետ»⁸³: Գայանե Հակոբյանի (ծնվ. 1970 թ.) վկայությամբ՝ փետրվարի 27-ի երեկոյան ամբոխը ծեծել է մի տղամարդու. «Ոստիկանները կանգնած էին հենց այնտեղ՝ կողքին, անգործունյա և ոչ մի միջոց չձեռնարկեցին ամբոխին հանգստացնելու համար»⁸⁴: Ականատես Իրինա Գուրգենի Մելքումյանը վերհիշել է, որ ինքն անձամբ երեք անգամ զանգահարել է ոստիկանություն՝ տեղեկացնելով, որ 41-րդ թաղամասում տեղի են ունեցել հարձակումներ և սպանություններ: Վերջին անգամ նրան պատասխանել են. «Դուք արդեն մեզ զգվեցրիք, այլևս մի՛ գանգեք»⁸⁵: Նրա հաջորդ հեռախոսազանգը ոստիկանություն մնացել է անպատասխան:

Հատկանշական է, որ ջարդերի օրերին քաղաքի ոստիկանության անգործությանն անդրադարձել է ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի փետրվարի 29-ի նիստում: Այդ կապակցությամբ նա ասել է. «Այնտեղ [Սումգայիթում – Գ. Հ.] արդեն մոլեգնում են ավազակային տարրերը, նրանց շարքերում կան հանցագործներ, ամբողջ փրփուրը բարձրացել է վերև, իսկ սումգայիթյան ոստիկանությունն այնտեղ կանգնած է և ոչինչ չի անում: Սա նշանակում է, որ այս գործողությունը մտածված է ի պատասխան հայերի՝ նրանց կտրուկ պատասխան տալու համար»⁸⁶: Խորհրդային բարձրագույն ղեկավարությունը կարևորում էր տեղի ունեցածի արագ «կարգավորումը» գորքերը Սումգայիթ մտցնելու և պարետային ժամ հաստատելու միջոցով⁸⁷: Գորբաչովի խոսքերից պարզ է դառնում, որ սումգայիթյան ջարդերը նա կապում էր հայ ժողովրդի կողմից արցախյան խնդրի վերաբացման հետ՝ դրանք համարելով ադրբեջանցիների՝ հայերին տված «կտրուկ պատասխան»: Վերջինս նաև արձանագրել է Սումգայիթի ոստիկանության անգործությունը՝ դա կապելով ադրբեջանական կողմի կանխամտածված գործողությունների հետ:

Ուշադրության արժանի է նաև ջարդերի օրերին քաղաքի բժշկական կազմակերպությունների և շտապ բուժօգնության ծառայության գործունեությունը: Ականատես Արսեն Առաքելյանը (ծնվ. 1966 թ.) փետրվարի 29-ին Բաքվից վերադառնալուց հետո գտնում է իր տունն ամբողջությամբ թալանված, իսկ մորը՝ փողոցում ընկած, ծեծված. «Մեքենաներ կանգնեցրի, բացատրեցի, աղաչեցի, բայց չօգնեցին: Հետո վազեցի շտապօգնության մոտ. հեռու չէր: Այնտեղ մի կին էր նստած, և ես սկսեցի աղաչել նրան, որ օգնի: Նա ասաց. «Զանգեք ոստիկանություն»։ Խնդրեցի, որ իրենք զանգեն, բայց ասացին, որ հեռախոսահամար չունեն։ Դուրս եկա ու սկսեցի կանգնեցնել շտապօգնության մեքենաները: Սակայն կրկին ոչ ոք չցանկացավ օգնել: Հետո գնացի հրշեջ կայան՝ զանգելու: Սակայն ինձ չթողեցին զանգել: Ասացին. «Զանգեք գազի գրասենյակից»։ Այնտեղից երկու անգամ զանգահարեցի ոստիկանություն, պատասխանեցին՝ սպասեք: Բայց ոչ մի օգնություն չեկավ...»⁸⁸: Իրինա Վահրամյան

83 *Сумгаитская трагедия, Книга первая*, 111.

84 Նույն տեղում, 259-260:

85 Նույն տեղում, 402-403:

86 “Заседание Политбюро ЦК КПСС (29 февраля 1988 года),” 701, https://nsarchive.gwu.edu/rus/text_files/Perestroika/1988-02-29%20Politburo%20Nagorny%20Karabakh-1.pdf, դիտվել է՝ 12.10.2025:

87 Տե՛ս նույն տեղում, 705:

88 *Сумгаитская трагедия, Книга вторая*, 45.

վայի ամուսնու հայրն սպանվել է փետրվարի 29-ին իրենց տանը: Նա վերհիշում է. «Անընդհատ զանգում էինք ոստիկանություն ու շտապօգնություն, բայց ոչ ոք չեկավ և օգնություն ցույց չտվեց: Շտապօգնությունում կամ հեռախոսը կախում էին, կամ մեղադրում ոստիկաններին, ասում՝ այնտեղ զանգեք, կամ նույնիսկ ասում էին. «Ձեզ հենց այդպես էլ պետք է»»⁸⁹: Լյուբով Ազիզբեկյանը (ծնվ. 1954 թ.) իր ծեծված հորն օգնություն ցուցաբերելու նպատակով զանգահարել է շտապօգնություն, որը խոստացել է, որ շուտով կգնա, սակայն այդպես էլ չի գնացել⁹⁰: Վիտալի Դանիելյանի (ծնվ. 1972 թ.) ծնողները ծեծի էին ենթարկվել փետրվարի 28-ի երեկոյան: Նրանց հարևանուհին շտապօգնություն է կանչել, որը գնացել է միայն հաջորդ առավոտյան, երբ վիրավորներն արդեն մահացել էին⁹¹: Կարինա Գրիգորենայի վկայությամբ՝ քաղաքային վարչությունում կային Բաքվի շտապօգնության մեքենաներ. «Շտապօգնությունը Բաքվից էր: Սումգայիթի շտապօգնությունը, ինչպես հասկացա, ընդհանրապես ոչինչ չի արել, քանի որ չի արձագանքել կանչերին: Մարդիկ զանգել են, սակայն ոստիկաններն ու շտապօգնությունը կենդանության նշաններ ցույց չեն տվել»⁹²:

Ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ, Սումգայիթի ականատեսների վկայությունների համաձայն, քաղաքի ոստիկանությունը և շտապ բուժօգնության ծառայությունն իրենց գործողություններով կամ անգործությամբ օժանդակել են ջարդարարների գործողություններին:

Վերջաբան

Սումգայիթի ջարդերի ականատեսների վկայությունները բացահայտում են մի շարք էական առանձնահատկություններ և օրինաչափություններ, որոնք հնարավորություն են տալիս հասկանալու բռնության պատճառները, կազմակերպման և իրագործման եղանակաձևերը: Վերապրածների պատմությունների համադրական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել ջարդերի վերաբերյալ հետևյալ կարևոր եզրակացությունները.

1. *Այդելության քարոզ և գաղափարական նախապայտրասարություն*. 1988 թ. փետրվարին Սումգայիթում մեկնարկած հանրահավաքների ընթացքում լայն տարածում էր գտել քաղաքի հայ բնակչության նկատմամբ ատելության քարոզչությունը: Հիմնականում տարածված էին «հայեր, հեռացեք» և «մահ հայերին» կարգախոսները: Այդ ժամանակաշրջանում հետևողականորեն իրականացվել է հայերի ապամարդկայնացում՝ նրանց համեմատելով կապիկների, ագռավների և շների հետ:
2. *Սադրանքի կիրառում*. Սումգայիթի ջարդերի կազմակերպման գործընթացում առանցքային դեր են ունեցել Խորհրդային Հայաստանի Կապանի շրջանից Սումգայիթ տեղափոխված աղբրեջանցիները: Վերջիններս նպատակային կեր-

89 Նույն տեղում, 55:

90 Տե՛ս նույն տեղում, 116:

91 Տե՛ս *Сумгаитская трагедия, Книга первая*, 22:

92 Նույն տեղում, 122:

պով քաղաքում հրահրել են հայատյացություն և խթանել քաղաքի հայ բնակչության նկատմամբ զանգվածային բռնությունների գործադրումը:

3. *Նախապատրաստական փուլ և կազմակերպված բռնություն*. ակնատեսների վկայությունները փաստում են, որ ջարդերին նախորդել են նախապատրաստական գործողություններ: Դրանց հիմնական ուղղություններն էին հայերի բնակության վայրերի ցուցակների կազմումը, հարձակման համար անհրաժեշտ գործիքների պատրաստումը, ոգելից խմիչքների և հոգեմետ նյութերի կանխամտածված բաժանումը:
4. *Ազգային հիմքով բնակչության տարբերման հայտուկ եղանակաձևեր*. ջարդերի օրերին կիրառվել են հատուկ պայմանական նշաններ՝ քաղաքի հայ և ադրբեջանցի բնակչությանը տարբերելու նպատակով: Այդ եղանակաձևերից էին ադրբեջանցիների բնակարաններում լույսի վաղ միացումը, ավտոմեքենաների պատուհաններից ձեռքը թափահարելը և ձայնային ազդանշան տալը:
5. *Պեղական կառույցների անգործություն և մեղսակցություն*. վկայությունների համադրությունը ցույց է տալիս, որ ջարդերի օրերին քաղաքի ոստիկանությունը և շտապ բուժօգնության ծառայությունը դրսևորել են հանցավոր անգործություն, իսկ առանձին դեպքերում իրենց գործողություններով օժանդակել են ջարդարարներին:

SURVIVING SUMGAIT: THE POGROM OF THE ARMENIAN POPULATION THROUGH THE EYES OF WITNESSES

Gayane Hovhannisyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

This article aims to reveal the details of the pogroms of the Armenian population in the Azerbaijani city of Sumgait from 27 to 29 February 1988, using eyewitness testimonies and oral histories. The primary sources for the study include published testimonies of survivors of the pogrom. Eyewitness accounts and narratives provide valuable information regarding the preparatory measures, nature and characteristics of the pogroms. It is important to note that the article presents the recurrent patterns of the pogrom as documented across multiple testimonies.

The research indicates that the Sumgait pogrom was preceded by large-scale anti-Armenian propaganda and incitement of hatred. The main disseminators of this campaign were Azerbaijanis who had moved to Sumgait from Soviet Armenia. During this period, the dehumanization of Armenians was manifested in comparisons of Armenians to various animals. Eyewitness testimonies attest to the existence of organized preparatory activities prior to the pogrom. These activities included the compilation of lists of Armenian residences, the preparation of instruments necessary for committing crimes, the preparation of instruments

necessary for committing crimes, and the implementation of special signals and codes used by Azerbaijanis. Survivors' accounts also confirm that during the days of massacre, the Sumgayit police and emergency medical services exhibited criminal negligence, and in some cases even facilitated the actions of perpetrators.

Key words: Armenophobia, Sumgayit pogrom, eyewitnesses, testimonies, oral history.

ПЕРЕЖИВ СУМГАИТ: ПОГРОМЫ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ГЛАЗАМИ ОЧЕВИДЦЕВ

Гаяне Оганнисян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Цель данной статьи — раскрыть детали погромов армянского населения, произошедших в азербайджанском городе Сумгаите 27-29 февраля 1988 года, на основе свидетельств очевидцев и устных историй. Основными источниками для исследования послужили опубликованные показания людей, переживших эти события. Свидетельства очевидцев предоставляют ценную информацию о подготовительных этапах, характере и особенностях погромов. В статье выявляются повторяющиеся закономерности, зафиксированные в многочисленных свидетельствах очевидцев.

В результате исследования выяснилось, что погромам предшествовала масштабная антиармянская пропаганда и систематическое разжигание ненависти. Главными распространителями этой кампании были азербайджанцы, переселившиеся в Сумгаит из Советской Армении. В то время дегуманизация армян проявлялась в их сравнении с различными животными. Свидетельства очевидцев подтверждают наличие организованных подготовительных мероприятий до начала погромов. Среди них — составление списков мест проживания армян, заготовка орудий, предназначенных для совершения преступлений, а также использование специальных сигналов и кодов среди нападавших. Показания выживших также свидетельствуют о том, что в дни погромов полиция и службы скорой медицинской помощи Сумгаита проявили преступное бездействие, а в отдельных случаях даже способствовали действиям погромщиков.

Ключевые слова: армянофобия, Сумгаитские погромы, очевидцы, свидетельства, устная история.

REFERENCES

Galstyan, Hambardzum. *Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ* [Articles, Memoirs, Interviews]. Compiled by Harutyun Marutyan. Yerevan: Noyan Tapan Publishing House, 2002;

Gh., A. *Oral History Interview*. Conducted by Shushan Khachatryan and Gayane Hovhannisyan, February 11, 2024, Eraskh village. Transcribed oral testimony. Research Project No. 22YR-6A033. Armenian Genocide Museum-Institute, Yerevan, Armenia;

Grigoryan, Marina, ed. *Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Книга вторая* [Sumgait Tragedy in Eyewitness Accounts. Volume 2]. Yerevan: Public Relations and Information Center of Staff of the President of the Republic of Armenia, 2015;

Gurov, Vladimir. “Вооруженные силы СССР в армяно-азербайджанском (Карабахском) вооружённом конфликте (1988-1991 гг.)” [Armed Forces of the USSR in the Armenian-Azerbaijani (Karabagh) Armed Conflict (1988-1991)]. *Izvestia Samarskogo nauchnogo central Rossiiskoi akademii nauk* 14, no. 3 (2012): 110-116;

Hakobyan, Arsen. ««Ղափանի դեպքերի» առասպելը նախաամուգայիթյան, ամուգայիթյան և հետամուգայիթյան զարգացումներում» [The Myth of the “Ghapan Incidents” in Pre-Sumgait, Sumgait and Post-Sumgait Developments]. *Journal of Social Sciences* 2 (2024): 63-95;

Hampartsumyan, Boris. *Oral History Interview*. Conducted by Hayk Hakobyan and Shushan Khachatryan, July 30, 2024, Lernadzor village. Video recording in six parts (Video No. 1066). Research Project No. 22YR-6A033. Armenian Genocide Museum-Institute, Yerevan, Armenia;

Marutyan, Harutyun. *Հայ ինքնության պարկերադրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը. Հիշողության ազգագրություն, 2* [Iconography of Armenian Identity. Volume 1: The Memory of Genocide and the Karabagh Movement. Anthropology of Memory, 2]. Yerevan: Gitutyun, 2009;

Sargsyan, Alexander. *Հին ու նոր վերքեր* [Old and New Wounds]. Stepanakert: Vachagan Barepasht Publishing House, 2013;

Shahmuradyan, Samvel, ed. *Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Книга первая* [Sumgait Tragedy in Eyewitness Accounts. Volume 1]. Yerevan: Armenian Cultural Foundation, 1989;

Svazlyan, Verzhine. *Հայոց ցեղասպանություն: Ականալի վերապրողների վկայություններ* [The Armenian Genocide: Testimonies of Eye-Witness Survivors]. Yerevan: Gitutyun Publishing House, 2000;

Ulubabyan, Hrayr, Suren Zolyan and Aghasi Arshakyan. *Сумгаит... Геноцид... Гласность?* [Sumgait... Genocide... Glasnost?]. Yerevan: Obshchestvo Znanie, 1989;

Vasilevskiy, Aleksander. “Туча в горах” [Cloud in the Mountains]. *Aurora* 10 (1988): 9-18;

Zardusht, Alizade. “Азербайджанская элита и массы в период распада СССР (Статья-мемуары о бурном времени)” [Azerbaijani Elite and Masses during the Collapse of the USSR (Article-Memoirs about the Turbulent Time)]. Accessed October 12, 2025. <https://>

web.archive.org/web/20131030014402/http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_0055.htm;

“Заседание Политбюро ЦК КПСС (29 февраля 1988 года)” [The Meeting of the Politburo of the Central Committee of the CPSU, 29 February 1988]. Accessed October 12, 2025. https://nsarchive.gwu.edu/rus/text_files/Perestroika/1988-02-29%20Politburo%20Nagorny%20Karabakh-1.pdf;

“Сообщение” [Message]. *Izvestia* (Moscow), March 1, 1988;

“Сумгаит: Выдержки из публикаций в прессе” [Sumgait: Excerpts from press publications]. Accessed October 12, 2025;

https://karabakhrecords.info/publication_citations_pressa.html;

Сумгаит. Говорят свидетели-азербайджанцы [The Sumgait Azerbaijani Witnesses Speak Out]. Yerevan: Public Relations and Information Center of Staff of the President of the Republic of Armenia, 2018;

Հայաստանի Ազգային Արխիվ [National Archive of Armenia], col. 1159, l. 8, doc. 12;

Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փախույթյալների ժողովածու, հայրեր I, Վանի նահանգ, հայրեր II, Բիթլիսի նահանգ, հայրեր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, [The Armenian Genocide in ottoman Turkey: Testimonies of Survivors: Document Collection, Vol. I: Van Province; Vol. II: Bitlis Province; Vol. III: Erzerum, Kharberd, Diyarbakir, Sebastia, Trapizond Provinces, Parskahayk]. Compiled by Amatuni Virabyan and Gohar Avagyan, edited by Amatuni Virabyan. Yerevan: National Archives of Armenia, 2012;

Սովետական Ղարաբաղ օրաթերթ [Sovetakan Gharabagh]. Stepanakert, February 21, 1988;

«ՍՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նիստը» [The Session of the Presidency of the USSR Supreme Council]. *Grakan t'ert'* (Yerevan), July 22, 1988.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Գայանե Հովհաննիսյան, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Արցախի, Նախիջևանի և Ադրբեջանի հայության բռնաճնշումների ուսումնասիրության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական գործընթացները խորհրդային շրջանում, հայ բնակչության ջարդերը Խորհրդային Ադրբեջանում 1988-1990 թթ.:

Էլ. փոստի հասցե՝ gayane.hovhannisyan@genocide-museum.am

Gayane Hovhannisyan, PhD in History, Researcher at the Department of Studies on the Repressions of Armenians in Artsakh, Nakhichevan, and Azerbaijan, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: demographic processes in Nagorno-Karabakh during the Soviet period; massacres of the Armenian population in Soviet Azerbaijan, 1988–1990.

E-mail: gayane.hovhannisyan@genocide-museum.am

Гаяне Оганнисян, кандидат исторических наук, научный сотрудник Отдела изучения репрессий против армян Арцаха, Нахиджевана и Азербайджана Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований: демографические процессы в Нагорном Карабахе в советский период; погромы армянского населения в Советском Азербайджане, 1988–1990 гг.

Эл. почта: gayane.hovhannisyan@genocide-museum.am

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(երեւոյթով Է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Յեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորոյթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Յեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվագն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Յեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, դրական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր – » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marutyan, Harutyun. *Հայ ինքնության պարկերագրությունը: Հայրոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալներ», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i Mahsusa)”

in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարաւորութիւններ Հայաստան-Սփիւք յարաբերութիւնների համատեքստում», *Սփիւք եւ ինքնութիւն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքս. Ալթունյան» [Dr. Alt'unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. *Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոպյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը,

գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանեղից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.

2. Վերժինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հոդվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:

3. Сурен Манукян, “Наказание за верность.” От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Dadrian, “*Ottoman Archives*,” 471.

2. Սվազյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:

3. Манукян, “*Наказание за верность*,” 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև՝ DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.

Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>

3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.

4. Շուշան Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտականեր, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.

2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.

6. Խաչատրյան, «Զիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ.կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
 Բ բ - B b
 Գ գ - G g
 Դ դ - D d
 Ե ե - E e
 Չ զ - Z z
 Է է - E' e'
 Ը ը - Ë ë
 Թ թ - T' t'
 Ժ ժ - Zh zh
 Ի ի - I i
 Լ լ - L l
 Խ խ - Kh kh
 Ծ ծ - Ts ts
 Կ կ - K k
 Հ հ - H h
 Ձ ձ - Dz dz
 Դ դ - Gh gh
 Ճ ճ - Ch ch
 Մ մ - M m
 Յ յ - Y y
 Ն ն - N n
 Շ շ - Sh sh
 Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
 Չ չ - Ch' ch'
 Պ պ - P p
 Զ ն - J j
 Ռ ռ - R' r'
 Ս ս - S s
 Վ վ - V v
 Տ տ - T t
 Բ բ - R r
 Յ գ - Ts' ts'
 Ու ու - U u
 Փ փ - P'p'
 Ք կ - Q q
 Եվ է Ev ev
 Օ օ - O' o'
 Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
 Б б - B b
 В в - V v
 Г г - G g
 Д д - D d
 Е е - E e
 Ё ё - Io io
 Ж ж - Zh zh
 З з - Z z
 И и - I i
 Й й - Ĭ ĭ
 К к - K k
 Л л - L l
 М м - M m
 Н н - N n
 О о - O o
 П п - P p
 Р р - R r
 С с - S s
 Т т - T t
 У у - U u
 Ф ф - F f
 Х х - Kh kh
 Ц ц - Ts ts
 Ч ч - Ch ch
 Ш ш - Sh sh
 Щ щ - Shch shch
 Ъ ъ - “
 Ы ы - Y y
 Ь ь - ‘
 Э э - E' e'
 Ю ю - Iu iu
 Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթ՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 100:

Կազմի ձևավորումը՝ Քրիստինե Վարդանյանի
Համակարգչային ձևավորումը՝ Արաքս Ալեքսանյանի

Տպագրությունը՝